


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆԴԸ
ՄԵՏԱՔՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ



ЦИВИЛИЗАЦИОННЫЙ ВКЛАД АРМЕНИИ
В ИСТОРИЮ ШЕЛКОВОГО ПУТИ



CIVILIZATIONAL CONTRIBUTION OF ARMENIA
IN THE HISTORY OF THE SILK ROAD



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆՂԸ
ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ
Միջազգային գիտաժողովի նյութեր, 21–23 նոյեմբերի 2011 թ.**

**ЦИВИЛИЗАЦИОННЫЙ ВКЛАД АРМЕНИИ
В ИСТОРИЮ ШЕЛКОВОГО ПУТИ**

Материалы международной научной конференции, 21–23 ноября 2011 г.

**CIVILIZATIONAL CONTRIBUTION OF ARMENIA
IN THE HISTORY OF THE SILK ROAD**

International Scientific Conference, 21–23 November 2011

**ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԵՅԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ**

88



**ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES**

88

**ԵՐԵՎԱՆ
Պատմության ինստիտուտ
2012**

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտաժողովի կազմակերպումը և հետազոտություններ իրականացվել են
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝
№ 11-6a634 «Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրումը թուրք-
ադրբեջանական պատմագրության մեջ» գիտական թեմայի շրջանակներում:

Խմբագրական խորհուրդ՝

Ա.Ա. Մելքոնյան, պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Ա.Ա. Խառատյան, պ.գ.դ. ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Է.Լ. Դանիելյան, պ.գ.դ., Հայոց փիլիսոփայական ակադեմիայի
խկական անդամ
Գ.Ս. Ստեփանյան, պ.գ.դ.
Կ.Հ. Խաչատրյան, պ.գ.թ., դոցենտ

Редакционная коллегия

Ա.Ա. Мелконян, д.и.н., член-корреспондент НАН РА
Ա.Ա. Харатян, д.и.н., член-корреспондент НАН РА
Ճ.Լ. Դանիելյան, д.и.н., действительный член Армянской
философской академии
Դ.Տ. Степанян, д.и.н.
Կ.Դ. Хачатрян, к.и.н., доцент

Editorial Board

A.A. Melkonyan, Doctor of History, Corresponding Member of NAS RA
A.A. Kharatyan, Doctor of History, Corresponding Member of NAS RA
E.L. Danielyan, Doctor of History, Member of the Armenian
Philosophical Academy
G.S. Stepanyan, Doctor of History
K.H. Khachatryan, PhD in History, Associate Professor

Հ247 Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի
պատմության մեջ. Միջազգային գիտաժողովի նյութեր, 2011 թ. նոյեմբերի
21–23 / խմբ. խորհուրդ. – Եր.: Պատմության ինստիտուտ, 2012. – 423 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

СТАТЬИ

ARTICLES

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎՍՈՒՏՔ
ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ**

Հայ ժողովրդի հայրենիքը՝ ամբողջական Հայաստանը (Արևմտյան և Արևելյան Հայաստանը, ներառելով Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը), գտնվելով Փոքր Ասիան Միջագետքի և Իրանի հետ կապող նշանավոր առևտրական ուղիների վրա, հազարամյակներ շարունակ քաղաքակրթական հարաբերությունների կենտրոններից էր:

Հայաստանով է անցել Չինաստանից Եվրոպա տանող հնուց հայտնի Մետաքսի ճանապարհի մի երթուղին, որը մինչև XI դարի երկրորդ կեսին տեղի ունեցած՝ սելջուկ-թուրքերի ավերիչ ներխուժումները գրեթե անխափան գործել է՝ մեծ նպաստ բերելով համաշխարհային տնտեսական կյանքում: Խորապես գիտակցելով Մետաքսի ճանապարհի բացառիկ կարևորությունը՝ Արևելքի երկրներում իրենց գերիշխանությունը հաստատած մոնղոլները, որոշ ընդմիջումից հետո, կրկին վերականգնեցին Միջերկրական ծովի առափնյա շրջաններից՝ Հայաստանի վրայով մինչև իրենց հսկայածավալ տերության արևելյան սահմանները՝ Չինաստան ու Խաղաղ օվկիանոս ընթացող միջազգային առևտրական երթուղիները: 1254 թ. մոնղոլական Մանգու մեծ խանի և Կիլիկյան հայկական թագավոր Հեթում II-ի միջև կնքված դաշնագրով հայերին արտոնյալ պայմաններով՝ առանց մաքսավճարի իրավունք տրվեց աշխույժ առևտուր անել ողջ մոնղոլական տերության տարածքում: Սակայն մոնղոլական ծանր տիրապետության պայմաններում նախկին առևտրական հուսալի երթուղիները վերականգնելու փորձերը ցանկալի արդյունք չտվեցին: Արևելքից քոչվոր ցեղերի նոր հարձակումները լիովին քայքայեցին Հայաստանի ու հպատակ մյուս երկրների տնտեսական կյանքը: Բայց տարածաշրջանի տնտեսական փլուզումը, անապահով քաղաքական վիճակն ավելի խորացավ օսմանյան թուրքերի ներխուժումների հետևանքով: XIV դարի ընթացքում կատարելով մի շարք նվաճումներ Փոքր

Ասիայի արևմտյան ծովափնյա շրջաններում, Բալկաններում և 1453 թ. Կոստանդնուպոլսի գրավումով վերջ տալով Բյուզանդական կայսրությանը՝ Օսմանյան սուլթանությունն ակտիվացրեց իր զավթողական քաղաքականությունը նաև արևելյան ուղղությամբ, և 1473 թ. Դերջանի ճակատամարտում հաղթելով ակկոյունլու թուրքմենական ցեղերին, ներխուժեց Հայաստանի արևմտյան գավառներ: XVI դարի սկզբից Հայաստանի ու Անդրկովկասի համար կատաղի մրցակցություն սկսվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև: 1555 թ. Ամասիայում կնքված պարսկա-թուրքական հաշտությամբ Հայաստանը բաժանվեց աշխարհակալ երկու երկրների միջև: Արևելյան Հայաստանն անցավ Սեֆյան Պարսկաստանին, իսկ Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրությանը: Հայ ժողովրդի համար սկսվեց մի երկարատև ու մղձավանջային ժամանակաշրջան:

1578 թ. վերսկսված թուրք-պարսկական պատերազմը, որի գլխավոր թատերաբեմ մնաց Հայաստանը, նորանոր ավերածություններ ու կոտորածներ բերեց հայ ժողովրդին: Երկրի տնտեսությունը հասավ լիակատար անկման: Սկսվեց զանգվածային արտագաղթ: Վերահսկելով Եվրոպայից Ասիա տանող ցամաքային առևտրական ճանապարհները՝ սուլթանական կառավարությունը մեծ շահույթներ էր ստանում: Սակայն Եվրոպայում շուկայական հարաբերությունների հետագա զարգացմանը զուգընթաց, Թուրքիայի հետամնաց ռազմավատատիրական համակարգն սկսեց հետզհետե խոչընդոտ դառնալ Արևելք-Արևմուտք տնտեսական հարաբերություններին: Եվրոպացի առևտրականները նախընտրեցին շրջանցել Օսմանյան կայսրության տարածքը և Արևելքի երկրների, հատկապես Հնդկաստանի, Չինաստանի հետ առևտուրն իրականացնել ավելի հեռավոր, բայց անհամեմատ ապահով ու շահավետ ծովային ճանապարհներով:

Շարունակվում էր Օսմանյան սուլթանության հետագա թուլացումը: Կառավարման ոլորտում միապետական, բռնատիրական համակարգի, իսկ տնտեսության մեջ՝ ռազմավատատիրական կացութաձևի առկայությունն արգելակում էին երկրի զարգացումը, օրեցօր խորացնում ընդհանուր ճգնաժամը: Մի կողմից՝ ծովային

ուղիների հանդես գալով տնտեսական շահույթի նվազումը, մյուս կողմից՝ արդեն միայն պարտություններ բերող երկարատև պատերազմները Օսմանյան կայսրությանը կանգնեցրին տարածքային կորուստների իրողության առջև:

Օսմանյան կայսրության ենթակա երկրներն ու ժողովուրդները գտնվում էին քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման տարբեր մակարդակների վրա: Տերության գանազան մասերը միմյանց հետ կապված չէին ամուր տնտեսական կապերով: Նվաճված ժողովուրդների վրա սուլթանական իշխանությունը պահպանվում էր բացառապես ռազմական ուժի շնորհիվ: Ճգնաժամն առավել ցայտունորեն արտահայտվում էր ազգային շրջաններում: Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդները գտնվում էին ազգային հալածանքների ու արժանապատվության ոտնահարման, մարդկային տարրական իրավունքների անտեսման պայմաններում: Նրանց մշտապես սպառնում էր ֆիզիկական բնաջնջման վտանգը: Օգտվելով երկրում տիրող խառնակ իրավիճակից՝ ծայրամասային նահանգների կառավարիչները, քրդական ցեղերը՝ աշիրեթներն, հրաժարվում էին օրեցօր թուլացող կենտրոնական իշխանության ենթակայությունից և ձեռք բերում կիսանկախություն: Նրանց հպատակեցնելու կառավարության ձեռնարկումներն անցնում էին ապարդյուն: Միայն 1639 թ. Կասրե-Շիրիմում կնքված թուրք-պարսկական հաշտությամբ ընձեռված խաղաղությունից հետո, ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ՝ կայսրության թուրքահպատակ այլ երկրներում, դանդաղորեն նկատվեց տնտեսական որոշ առաջընթաց, որի մեջ իրենց ծանրակշիռ դերն ունեցան հատկապես հայերը, հույները, հրեաները, ասորիներն ու բուլղարները:

XVII դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանը, որ տակավին հայաբնակ էր, զբաղեցնում էր Օսմանյան կայսրության արևելյան հատվածը և վարչականորեն բաժանվում էր Էրզրումի (Կարին), Վանի, Սեբաստիայի (Սվազ), Ախալցխայի, Կարսի և Դիարբեքիի էյալեթների՝ նահանգների: Որքան էլ տարօրինակ է թվում, Օսմանյան կայսրության կողմից զավթված Արևմտյան Հայաստանը, նման քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայման-

ներում 1639 թ. հաշտությունից հետո ինչ-որ չափով վերականգնեց Եվրոպա-Ասիա առևտրական միջնորդի երբեմնի դերակատարությունը: Տնտեսական ճգնաժամը հաղթահարելու նպատակով օսմանյան սուլթանները հարկադրված եղան պարբերաբար ձեռներեց հպատակ առևտրականներին օժտել որոշակի արտոնություններով, հնարավորինս հովանավորել միջազգային առևտուրը: Թեև մինչև XIX դարի կեսերը ձեռնարկվող միջոցառումները մասնակի արդյունք տվեցին, և կայսրությունը շարունակեց մնալ հետամնաց, ագրարային բռնատիրություն, այնուամենայնիվ, միջազգային առևտուրը, շնորհիվ հայերի, հույների ու հրեաների զգալի առաջընթաց ապրեց:

XVII դարի վերջերից Արևմտյան Հայաստանի վրայով Եվրոպա-Կենտրոնական Ասիա ու Հնդկաչին առևտրական հարաբերություններում աճեց արևմտահայ քաղաքների, մասնավորապես՝ Էրզրումի, Վանի, Արաբկիրի, Թոխաթի, Ակնի, Կարսի, Բայազետի, ավելի ուշ՝ Սուշի, Բաղեշի (Բիթլիսի) նշանակությունը: Ի տարբերություն գյուղական կյանքի, որը շարունակեց մնալ ծայրագույն հետամնացության պայմաններում, քաղաքային կյանքը նկատելիորեն աշխուժացավ: Հատկանշական է, որ օսմանյան տիրապետության սկզբնական շրջանում՝ XVI–XVII դարերում Արևմտյան Հայաստանի, և՛ քաղաքները և՛ գյուղերը գերազանցապես հայաբնակ էին:

Հատկապես կարևոր դեր ստանձնեց Արևմտյան Հայաստանի կենտրոնական քաղաք Էրզրումը, որը գտնվում էր միջազգային առևտրական ճանապարհի վրա: Զանազան ապրանքներով բեռնավորված եվրոպական նավերը ժամանում էին Տրապիզոն նավահանգիստ, ապա առևտրական ուղին շարունակվում էր ցամաքային ճանապարհով՝ Բաբերդ քաղաքի վրայով հասնում Էրզրում, այնտեղից էլ՝ Պարսկաստան ու Հնդկաստան: Ցամաքային առևտուրը կատարվում էր Կոստանդնուպոլսի վրայով, անցնում Անկարա-Սեբաստիա-Էրզրում ուղիով: Միջերկրական ծովի արևելյան առափնյա շրջաններից, մասնավորապես Կիլիկիայից Մալաթիայով եկող առևտրական ուղին ևս անցնում էր Էրզրումով: Այն ամհամեմատ ապահով էր, քանի որ քաղաքական անկայունությա-

մբ աչքի ընկնող մի երկրի համար, որպիսին Օսմանյան տերությունն էր, նախընտրելի էր մշտապես ռազմական ուժեր ունեցող քաղաքներով անցնող առևտուրը, տվյալ դեպքում՝ Էրզրումը: Այդ մասին վկայում են Արևելք ժամանած եվրոպացի ուղեգիրները: Արդեն XVII դարի երկրորդ կեսի ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն հավաստում էր, որ Էրզրումը Օսմանյան կայսրության տարանցիկ առևտրի խոշորագույն կետերից է¹: Մեկ այլ ֆրանսիացի՝ 18-րդ դարի սկզբի հեղինակ Պիտտոն դե Տուրնեֆորն, ուղղակիորեն հաստատում է իր հայրենակցի միտքը. «Այս քաղաքը (Էրզրումը – Ա. Մ.) Յնդկաստանից եկող ապրանքների համար տարանցիկ առևտրի կենտրոնն է և հանգստավայր...: Բոլոր ապրանքները, որոնցից գլխավորներն են Պարսկաստանի մետաքսը, բամբակը, թմրադեղերը, զանազան գույների մահուղը, անցնում էին միայն Յայաստանի վրայով...: Մենք զարմացել էինք՝ տեսնելով Էրզրում ներմուծված այդքան մեծ քանակությամբ ներկ, որ կոչվում էր բոյա և օգտագործվում կաշվե ու բրոյա գործվածքների ներկման համար»²: XVIII դարի վերջի հայ աշխարհագետ Ղուկաս Ինճիճյանի վկայությամբ՝ Էրզրումի բարգավաճ վիճակի հիմնական աղբյուրը Յնդկաստանի և Եվրոպայի միջև ընթացող ցամաքային տարանցիկ առևտրական ճանապարհների վրա գտնվելու հանգամանքն էր: Նույն հեղինակի խոսքերով այս քաղաքը զանազան ապրանքներ, հատկապես՝ մորթեղեն, դեղորայքի կենդանական հումք, Ախալցխայից ստացված չորացված մրգեղեն, ապխտած միս ու Վանա տառեխ ձուկ, Թոխաթից բերված պղնձե անոթներ, գորգեր ու կարպետներ և այլն, առաքում էր գրեթե բոլոր ուղղություներով՝ մինչև Գաղղիա (Ֆրանսիա), Ղուլանդիա, Անգլիա, Գերմանիա: Քաղաքը սերտ տնտեսական կապեր ուներ նաև Մոսկվայի, Կոստանդնուպոլսի, Բալկանների, միջինասիական Բուխարա քաղաքի, Պարսկաստանի, Յնդկաստանի ու արաբական երկրների հետ³:

¹ Tavernier J. B., Les six voyages de Jean Babtiste Tavernier en Perse et aux Indes, Paris, 1679, p. 11–12.

² Pitton de Tournefort. Relation d' un voyage du Levant, v. 2, Lyon, 1717, p. 262.

³ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս Ա, Վենետիկ,

Ուշագրավ է, որ այդ հսկայածավալ առևտուրը գերազանցապես կենտրոնացած էր հայ վաճառականների ձեռքում: Այս հարցում ևս տարբեր հեղինակների կարծիքները նույնանում են: Վկայակոչենք մի քանիսին: Կոնս Մորսիլյին գրում էր. «Թանկարժեք քարերը նույնպես դարձան առևտրի առարկա: Հայերն այդ առևտրում առաջին տեղն են գրավում. նրանք այդ քարերը ձեռք են բերում Պարսկաստանի՝ Մոնղոլիային սահմանակից տարածքներից ...բերում են Ասիայի զանազան նավահանգիստները և ամենագեղեցիկները բեռնում են Եվրոպայի համար, իսկ նվազ արժեքավորները թողնում են Կոստանդնուպոլսի համար, ուր նախկինում քարերը գնահատվում էին միայն ըստ մեծության: Այժմ արդեն քրիստոնյաները սովորեցրել են թուրքերին ճաշակ՝ քարերը գնահատելու համար»⁴: Հատկանշական է, որ արևմտահայ վաճառականները ոչ միայն աշխույժ մասնակցություն էին բերում Արևմուտքի երկրների հետ տարվող առևտրի կազմակերպմանը, այլև հաճախ, բնակություն հաստատելով Եվրոպայում, իրենց ձեռքն էին վերցնում բուն եվրոպական երկրների տնտեսության որոշ բնագավառներ և իրականացնում այնտեղ արտադրվող ապրանքների առաքումն ասիական երկրներ: «Ասիայում, - գրում է Տուրնեֆորը, - Վենետիկի, Ֆրանսիայի և Գերմանիայի զանազան ապրանքների վաճառքով հայերն են զբաղվում»⁵:

Հայերի՝ որպես ճանաչված առևտրականների մասին ավելորդ չենք համարում մեջբերել նաև Օսմանյան կայսրության պատմության հայտնի մասնագետ Մ. դը Օսոնի խոսքերը. «Հայերը փոքրասիական նավահանգիստներում շատ հաճախ են իրենց նվիրում վաճառականությանը: Այդ նրանք են, և ոչ թե մուսուլմանները, որ կազմում են այդ հարուստ քարավանները, որոնք յուրաքանչյուր տարի գնում են Ասիայի տարբեր շրջանները, որպեսզի այնտեղ տարածեն աշխարհի չորս մասերի արտադրությունը»⁶: «Են ի նմա (Էրզրումում – Ա. Մ.),- հաստատում է նույն միտքը հայ հեղինակը,-

1806, էջ 63–64:

⁴ Le comte de Marsigli, L'état militaire ottoman, Amsterdam, 1732, p. 50–51.

⁵ Pitton de Tournefort. Relation d' un voyage du Levant, lettre XX.

⁶ d'Ohsson M., Tableau général de l'Empire ottoman, v. 4, Paris, 1820, p. 207.

և բազմութիւն վաճառականաց, մանաւանդ յազգէս Զայոց, որոց հաճախութիւն դասէ գերգիրուն ի կարգս վաճառաշահ քաղաքաց օսմանեան տերութեան»⁷:

Արևմտյան Զայաստանի տարանցիկ առևտրի մյուս նշանավոր կենտրոնը Թոխաթն էր՝ պատմական Փոքր Զայքի երբեմնի Եվդոկիա քաղաքը: Այն մեծ համարում ուներ արդեն XVII դարի երկրորդ կեսին: Տավերնիեն գրում էր. «Հատկապես նկատելին Թոխաթում այն է, որ այս քաղաքն Արևելք տանող տարանցիկ կայաններից մեկն է: Այնտեղ անվերջ քարավաններ են գալիս Պարսկաստանից, Դիարբեքիից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից, Ջնուռնիայից, Սինոպից և այլ վայրերից»⁸: Ըստ Ղ. Ինճիճյանի՝ նույն իրավիճակն էր Թոխաթում նաև XVIII դարում. «Ի Թօգատ գտան յառաջագոյն և գտանին ևս վաճառականք, զորոց մման սակաւ ունի տերութիւն օսմանեան ընդ ամենայն սահմանս իւր, որ յԱսիա, անդ յաճախեն երթևեկութիւն կարաւանաց յամենայն կողմանց, նաև վաճառականք հնդկաց ընդ Մոսուլ, Մոյնպէս և վաճառականք պարսից...»⁹: Զակոբ Դիվրիկեցի տարեգիրը, հատատելով քաղաքի բարգավաճ վիճակի մասին նույն միտքը՝ 1777 թ. գրված մի ժամանակագրութեան մեջ այն համեմատում է բազմաթիվ վաճառատներ, աշխույժ առևտուր ունեցող վաճառաշահ Կոստանդնուպոլսի հետ¹⁰:

Այսպիսով՝ Արևմտյան Զայաստանը, հայտնվելով օսմանյան հետամնաց ռազմաավատատիրական համակարգի ճիրաններում, տնտեսապես հետընթաց ապրեց և դուրս մղվեց բնականոն տնտեսական զարգացման հունից, միաժամանակ, XVII դ. կեսին հաստատված համեմատական խաղաղության պայմաններում, կրկին ի հայտ բերեց քաղաքային կյանքի աշխուժացման նշաններ: Տնտեսական անկում ապրող կայսրության գանձարանը լցնելու նպատակով սուլթանները ստիպված եղան վերականգնել հպատակ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի ավանդական առևտրա-

⁷ Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 71:

⁸ Tavernier J. B., Les six voyages de Jean Baptiste Tavernier en Perse et aux Indes, Paris, 1679, p. 11–12.

⁹ Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 292:

¹⁰ Մանր ժամանակագրություններ, կազմեց Վ. Զակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 459:

կան գործունեությունը՝ առանձին դեպքերում նրանց շնորհելով նաև որոշակի արտոնություններ: Կայսրության մայրաքաղաքում հայերի ձեռքում հայտնվեց նաև արքունի ճարտարապետությունը (Պալանների գերդաստան), զինագործությունը, դրամահատությունը, նավաշինությունը (Տատյաններ, Տյուզյաններ, Գավաֆյաններ և այլք): «Ռ՞վ է առևտուր անում Թուրքիայում,- գրում է տնտեսագետ Ֆ. Էնգելը,- համենայն դեպս ոչ թուրքերը...: Օռվային խոշոր նավահանգիստներում հաստատված հույները, հայերը, սլավոնները և արևմտաեվրոպացիներն իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը...: Հեռացրեք Եվրոպայից բոլոր թուրքերին, առևտուրը դրանից բնավ չի տուժի»¹¹:

Ասիա-Եվրոպա առևտրական ուղիների վերագործարկումը շարժեց Ռուսական կայսրության հետաքրքրությունն Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Ցարական արքունիքը, հատկապես թագուհի Եկատերինա II-ը (1762–1796 թթ.) և սկսեց շահագրգռել թուրքահպատակ հայ առևտրականներին՝ ասիական երկրների հետ ռուսական առևտուրն ավելի աշխուժացնելու նպատակով:

Միջազգային տարանցիկ առևտրի առաքելությունն արևմտահայ վաճառականները ստանձնեցին հատկապես XIX դարում, երբ սրվեց Արևելքի, մասնավորապես օրեցօր թուլացող Օսմանյան կայսրության նկատմամբ իրենց հսկողությունը հաստատելու եվրոպական խոշոր տերությունների պայքարը: Տարածաշրջան, հատկապես Արևմտյան Հայաստան այցելեցին բազմաթիվ եվրոպացի ճանապարհորդներ, հոգևոր քարոզիչներ ու քաղաքական գործիչներ՝ ելնելով իրենց հետաքրքրություններից և իրենց երկրների շահերից: Ղուկաս Ինճիճյանի մի հիշատակությունից հետևում է, որ XIX դարի սկզբին հայ առևտրականների գործունեության աշխարհագրությունը խիստ ընդլայնվել էր՝ ընդգրկելով Անգլիայից մինչև Ինդոնեզիա հսկայածավալ տարածքը. «Հայք կարի իմն անձնատուր են վաճառականութեան և ամեն մտադրութեամբ պարապին ի մնա որում՝ են ընդունակ, սորանք են արուեստապետք ոչ միայն վաճառականութենէ արևելից, այլ նաև ձեռն-

¹¹ Энгельс Ф., Турецкий вопрос, К. Маркс и Ф. Энгельс, сочинения, том 9, стр. 25.

տուրք մեծապես վաճառականութենէ առաւել մեծամեծ քաղաքացն եւրոպայոյ: Տեսանենք զսոսա գալ ի խորոց Պարսկաստանաեայց մինչ ի Լիվոնո. չեն բազում ժամանակս յորմէնտէ բնակութիւն կալան ի Մառսիլիա, գտանին ի Յոլանտա, յԱնգղիա, ի Վենետիկ, ճանապարհորդեն ի Մոդոլ, ի Շիամ որ է ի Զնդիկս, ի Ճեաւա, Ի Փիլիպպեան կղզիս և ընդ ամէն արևելս բաց ի շինաց»¹²: Ասվածից հետևում է, որ 19-րդ դարում զգալիորեն վերականգնվել էր միջագային առևտրում թե՛ Արևմտյան Հայաստանի տեղը, և թե՛ հայ վաճառականների երբեմնի դերը: Ռուս նշանավոր հայագետ Սերգեյ Գլինկան նկատել է, որ այդ ժամանակ արդեն «Հայաստանն իր աշխարհագրական դիրքով Եվրոպան Արևելքի հետ կապող ցամաքային միակ հաղորդակցությունն է»¹³: XIX դարում Եվրոպայից Հնդկաստան տանող Թոխաթ-Կարին-Բասեն-Դարույնք և Տրապիզոն-Բաբերդ-Կարին-Դարույնք (Բայազետ) առևտրական ուղիների կողքին հետզհետե կենդանացավ հնագույն ժամանակներից հայտնի հարավային երթուղին՝ Միջերկրականի առափնյա շրջաններ (Նախկին Լևանտի երկրներ), Մալաթիա, Ամիդ (Դիարբեքիր)-Մուշ-Բաղեշ-Վան, այստեղից էլ՝ Պարսկաստան ու Զինաստան: Կարին-Էրզրումը շարունակում էր պահպանել արևմտահայ գլխավոր վարչատնտեսական կենտրոնի դերը, որի բնակչության թիվը հասնում էր մոտ 110 հազ. մարդու¹⁴: 1811–1812 թթ. այստեղ ժամանած գերմանացի ուղեգիր Ֆրեյզանի վկայությամբ՝ «Էրզրումը Հայաստանի արևմտյան մայրաքաղաքն է, նմանապես պահեստը թուրքական առևտրի, որ այստեղից անցնում է Հնդկաստան»¹⁵:

XIX դարասկզբին նույն բարգավաճ վիճակն է արձանագրում Նապոլեոն Բոնապարտի կողմից Արևելք ուղարկված զենեռալ Գարդանը Թոխաթ քաղաքում. «Հազար կաթոլիկ հայեր կան այդտեղ: Պատրաստում են կտավեղեն, սակայն առևտրի գլխավոր նյութերն են 500000 օխա անագ և խոշոր քանակությամբ պղինձ: Այս քաղաքը մի պահեստ է Իզմիրի ապրանքների համար, որոնք

¹² Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 47:

¹³ Глинка С. Н., Обозрение истории армянского народа, Москва, 1832, ч. 1, стр. 35.

¹⁴ Մելքոնյան Ա., Էրզրում, Երևան, 1994, էջ 40–41:

¹⁵ Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. 6, Երևան, 1934, էջ 410:

հետո տարածվում են դեպի Երզրում, Կեսարիա և Մոսուլ»¹⁶: Նույն հեղինակը նկատել է, որ այս տարածաշրջանը մեծապես ներքաշվել է իր հայրենիքի հետ իրականացվող առևտրի ուղիով: Ֆրանսիայից բերվում են պերճանքի զանազան առարկաներ, անագ, կապար, զենք, ժամացույցներ, որոնց դիմաց փոխադարձաբար կարելի է ակնկալել պարսկական մետաքս, ծխախոտ, բուրդ, դեղորայք, ադամանդ, մարգարիտ և այլն: «Արևելքի մեր առևտրի մի մասն է կազմում դա,- ոգևորությամբ գրում է ֆրանսիացի զինվորականը,- որ տարեկան Ֆրանսիային բերում է վաթսուն միլիոնի զուտ շահույթ: Մարսելյն այդ առևտրի գլխավոր քաղաքն է: Թող ինձ թույլ տրվի հիշատակել այդ, հայրենիքից հազար հինգհարյուր մղոն հեռավորության վրա»¹⁷: Մեկ այլ տեղ Գարդանն ավելացնում է, որ այդ առևտրի մեջ, հատկապես ասիական երկրներում, ամենամեծ դերակատարը հայերն են¹⁸:

Ինչպես նշվեց, XIX դարում որոշակիորեն աշխուժացավ Եվրոպայի միջերկրածովյան երկրների հետ Ասիա տանող ճանապարհներից Արևմտյան Հայաստանի հարավային շրջաններով անցնող առևտրական ուղին, որի վրա գտնվող նշանավոր քաղաքներից էր համանուն լճի արևելյան ափին ընկած հինավուրց Վան քաղաքը: Ուշագրավ է, որ առևտուրն ընթանում էր ոչ միայն ցամաքով, այլ նաև լճի վրայով՝ նավակներով՝ Դատվան-Վան գծով: «Վանն ունի տասնհինգից մինչև քսան հազար բնակիչ, մեծ մասամբ հայ..., կարողում ենք նշանավոր ֆրանսիսացի դիվանագետ, Նապոլեոն I-ի կողմից հնդկական արշավանքի նախապատրաստման նպատակով Արևելք ժամանած Պիեր Ամեդե ժոբերը (Pierre-Amedee Emilien-Probe Jaubert): Լճի միջով Մուշի և Բիթլիսի հետ կատարվող առևտուրը, և Բաղդադից, Մոսուլից, Կարա Զիոլանից (Qara-Tchiolan), Մարդինից և Դիարբեքիից Թիֆլիս և Պարսկաստանի հյուսիսային մասը գնացող կարավանները մեծ առավելություններ են ընձայում Վանի բնակիչներին: Լճում կատարվող ձկնորսությու-

¹⁶ Նույն տեղում, էջ 91, հմմտ. "Journal d'un voyage dans la Turquie d'Asie et la Perse, fait en 1807 et 1808", Paris, 1809.

¹⁷ Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, էջ 125:

¹⁸ Նույն տեղում, էջ 203:

ընդ տարեկան նրանց հիսունից վաթսուն հազար ղուրուշ եկամուտ է տալիս»¹⁹: Ուշագրավ է, որ նույն ժամանակ այդ տարանցիկ ճանապարհի վրա ընկած պարսկական քաղաքները ոչ միայն աչքի չէին ընկնում տնտեսական վերելքով, այլև քայքայման ուղի էին բռնել: Այդ հանգամանքը նկատել են տարածաշրջան այցելած շատ եվրոպացիներ: Այսպես, ըստ անգլիացի դիվանագետ Ուիլյամ Աուզլեյի (1812 թ.)՝ անհամեմատելի են քայքայվող ու կիսամայի պարսկական քաղաքները աշխույժ առևտուր ունեցող և մշտապես եռուզեռի մեջ գտնվող Էրզրումի հետ²⁰:

Խոսելով Արևելք-Արևմուտք տնտեսական հարաբերությունների սերտացման և դրանում Արևմտյան Հայաստանի ու առհասարակ հայության դերի մասին՝ միաժամանակ չի կարելի մոռանալ, որ այդ զարգացումները որքան էլ նկատելի լինեին, պայմանավորված Օսմանյան կայսրության ընդհանուր ճգնաժամային իրավիճակով, կայուն բնույթ չէին կրում և ի վերջո դատապարտված էին անհաջողության: Պատահական չէ, որ 1820-ական թվականներին՝ պարսկա-թուրքական և ռուս-թուրքական պատերազմների ընթացքում կայսրության արևելյան նահանգներում տիրող առանց այն էլ անկայուն քաղաքական իրավիճակն ավելի սրվեց, առևտրատնտեսական առաջընթացը լիովին դադարեց և այստեղով անցնող միջազգային տարանցիկ ուղիներն անգործության մատնվեցին: Նման անկման գլխավոր պատճառներից մեկը եղավ 1829–1830 թթ. Արևմտյան Հայաստանի զանազան գավառներից, հատկապես Կարինից, Կարսից, Դարույնքից (Բայազետ) ու Ալաշկերտից շուրջ 74 հազար հայերի (որոնց թվում՝ հազարավոր վաճառականներ ու արհեստավորներ) արտագաղթը դեպի Ռուսական կայսրության սահմաններ²¹:

Ամբողջ XIX դարի ընթացքում կրկնվող ռուս-թուրքական պատերազմների (1828–1829, 1853–1856, 1877–1878 թթ.) ու արևմ-

¹⁹ Նույն տեղում, էջ 220, հմմտ. P. Am. Jaubert, Voyage en Arménie et en Perse, fait dans les années 1805 et 1806, Paris, 1859.

²⁰ Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, էջ 485: Հմմտ. Travels in various Countres of the East more particularly Persia, By Sir William Ouseley, knight, L L. D. London.

²¹ Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 138–154:

տահայերի նոր արտագաղթերի, 1890-ական թվականներին սուլթան Համիդ II-ի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով քաղաքական ու տնտեսական ճգնաժամն ավելի խորացավ: Նման պայմաններում Եվրոպայի հետ առևտուրը հայ վաճառականները ստիպված եղան էրզրումից ու արևմտահայ այլ քաղաքներից տեղափոխել համեմատաբար ավելի ապահով Կոստանդնուպոլիս ու Ջնյունիա քաղաքներ:

1878 թ. Բեռլինի վեհաժողովից հետո, երբ հայկական հարցը, այն է՝ Եվրոպական մեծ տերությունների հսկողությամբ սուլթանական կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու խնդիրը, դարձավ միջազգային դիվանագիտության հարց, որոշակիորեն նկատվեց առևտրի ոլորտից հայերին դուրս մղելու միտում: Նախ, սուլթան Համիդ II-ը, հաստատելով արյունալի բռնատիրական ռեժիմ, ոչ միայն փորձեց հայերին միջազգային տնտեսական կյանքից դուրս մղել, այլև իրականացնել զանգվածային կոտորածներ, որոնց արդյունքում 1894–1896 թթ. զոհվեց շուրջ 300 հազար հայ: Երկրորդ, Եվրոպական տերությունները, մասնավորապես Անգլիան, Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան և Ֆրանսիան իրենց ազդեցությունը տարածելով Օսմանյան կայսրության վրա, իրենց հերթին լուրջ մրցակիցներ դարձան թուրքահպատակ ժողովուրդների առևտրական դասին: Բավական է նշել, որ XIX դարի վերջին թուրքական տերության տնտեսությունն այնքան էր ընկել Եվրոպական կապիտալի ազդեցության տակ, որ տեղական դրամական միավորը՝ արժեզրկված թուրքական լիրան, գրեթե լիովին դուրս էր մղվել լայն շրջանառություն ապահովող ֆրանկի (նապոլեոն ոսկե դրամներ) ավստրիական դուկատի, ռուսական ռուբլու կողմից²²:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ առևտրական դասի հետ թուրք գործարարների մրցակցելու անկարողությունը դարձավ 1915–1916 թթ. հայոց ցեղասպանության գլխավոր տնտեսական շարժառիթը: Արևմտյան Հայաստանում երիտասարդ թուրքերի կազմակերպած հայոց ցեղասպանությունը, որի հետևանքով

²² Համբարյան Ա., Ազրաբային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965, էջ 298–300:

հայ ժողովուրդը զրկվեց իր Հայրենիքի արևմտյան մասից, անդառնալի հարված հասցրեց նաև Արևելք-Արևմուտք տնտեսական զարգացմունքներին ու առհասարակ՝ համաշխարհային քաղաքակրթությանը:

А. МЕЛКОНЯН

ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В СФЕРЕ ТОРГОВЫХ ОТНОШЕНИЙ ВОСТОК-ЗАПАД

Армянское нагорье (Западная и Восточная Армения) - Родина армянского народа, находясь на торговых путях, связывавших Малую Азию и Месопотамию с Иранским плоскогорьем, на протяжении тысячелетий было одним из центров цивилизационных отношений. Одна из магистралей известного издревле Шелкового пути, связывавшего Китай с Европой проходила через Армению. Эта магистраль, привнеся весомый вклад в мировую экономическую жизнь, почти без перерыва действовала до второй половины XI века, когда сельджуки-тюрки начали свои опустошительные вторжения.

В дальнейшем, в конце XIX в. и первых десятилетиях XX в. антиармянская политика Османской империи и Геноцид армян, организованный младотурками в Западной Армении, в результате которого армянский народ был лишен западной части своей родины, нанесли непоправимый урон экономическим отношениям Восток-Запад и, в целом, мировой цивилизации.

**WESTERN ARMENIA IN THE SPHERE
OF THE EAST-WEST TRADE RELATIONS**

The Armenian Highland (Western and Eastern Armenia) – the Motherland of the Armenian people, being on the trade routs connecting Asia Minor, Mesopotamia and the Iranian plateau, during millennia was one of the centres of civilizational relations. One of the main routs of the famous ancient Silk Road, connecting China with Europe crossed Armenia. This rout, contributing greatly to the world economic life, functioned almost without interruption until the second half of XI century, when started the Seljuk-Turks' devastating invasions.

Later, at the end of XIX and first decades of XX centuries anti-Armenian policy of the Ottoman Empire and the Armenian Genocide organized by the Young Turks in Western Armenia (as a result of which the Armenian people was deprived of the western part of its Motherland), had an irreparable impact on the economic relations between East and West, and in its whole entity on world civilization.

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ
ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ԴԱՐՈՒՄ**

Ընդունված տեսակետի համաձայն, Հին Արևելքում քաղաքակրթության ձևավորմանը զուգընթաց՝ հանդես է գալիս առևտուրը: Ավելի ճիշտ՝ քաղաքակրթության կարևոր հատկանիշներից էր առևտուրը, մասնավորապես միջազգային առևտուրը, դրանից բխող բոլոր երևույթներով: Առաջին գրավոր աղբյուրները՝ շումերական, աքքադական, էլամական, էբլայի (Ասորիք/Սիրիա) և Փոքր Ասիայի սեպագիր ու հիերոգլիֆ հնագույն արձանագրությունները վկայում են Բ.ա. IV–II հազարամյակներում Առաջավոր Ասիայում ձևավորված առևտրական հարաբերությունների և դրանց մեխանիզմների մասին¹: Այդ ժամանակաշրջանի զարգացած երկրների տնտեսական փոխառնչությունների հիմքում ընկած էր միջազգային առևտուրը, որի ձևավորման նախապայմանը տեղական հումքի վրա խարսխված և ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերություններով պայմանավորված նյութական բարիքների վերարտադրությունն էր: Հանածոներով աղքատ երկրամասերը կարիք էին զգում իրենց չունեցած արտադրական հումքի՝ վանակատ, կայծքար, պղինձ և այլն, լեռնային շրջանները՝ երկրագործական, իսկ հովտային շրջանները՝ անասնապահական բնամթերքի: Այս երևույթի հետևանքները, մասնավորապես հումքի արտահանումը և ներմուծումը, դիտվում է հնագույն ժամանակներից:

Հնագիտության բնագավառում կուտակված վիթխարի տեղեկատվությունը, մասնավորապես վերջին տասնամյակի կարևորագույն հայտնագործությունները ստեղծել են ընդգրկում փաստագրական բազա, որը հիմք է հանդիսանում անդրադառնալու հին Հայաստանի առևտրական հարաբերություններին: Պատմական սկզբնաղբյուրները մեծապես լրացվում և համալրվում են, երբ խն-

¹ Оппенгейм А. Л., Торговля на Ближнем Востоке в древности // Международный конгресс антропологических и этнографических наук, Москва, 1970. с. 7.

դիրը բացահայտելուն ներգրավվում են բնական ու ճշգրիտ գիտությունների մեթոդներով կատարված հնագիտական գտածոների լաբորատոր հետազոտությունների արդյունքները: Այսպես, ռադիոածխածնային տարրալուծումների շնորհիվ այժմ ունենք հուշարձանների ճշգրիտ թվագրման տասնյակ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում երևույթներն ընկալել իրենց պատմական կոնտեքստում, Հայաստանի հուշարձանները և առանձին արտեֆակտները ճշգրտորեն համադրել հին արևելյան հուշարձանների հետ: Բացարձակ թվագրումը վճռական նշանակություն ունի պատմական երևույթների վերակազմության և առանձին գտածոների տեղական կամ ներմուծված լինելը բացահայտելու գործում:

Առևտրական հարաբերությունների բացահայտման գործընթացում խիստ կարևոր է պարզաբանել գտածոների տեղական կամ ներմուծված լինելը: Սա հնագիտության առանցքային հարցերից է, քանզի բացահայտում է, արդյո՞ք քննարկվող երկիրն ի վիճակի էր արտադրել միջազգային առևտրին բավարարող և նոր ձևավորվող շուկայում մրցունակ ապրանք, թե՞ լոկ հետամնաց տարանցիկ երկրամաս կամ հումք մատակարարող շրջան էր: Ուղղակի վկայությունների բացակայության դեպքում խնդիրը պարզաբանելու համար անհրաժեշտ է վերլուծել գտածոների ոճական առանձնահատկությունները, պատրաստման տեխնոլոգիան, ինչպես նաև այդ ժամանակի տեղական արտադրությանը բնորոշ տնտեսական հարաբերությունների մակարդակը, հասարակության սոցիալական կառուցվածքը, անհրաժեշտ հումքի և հանքավայրերի առկայությունը, նորագույն տեխնոլոգիաների տիրապետումը և այլն: Թանկարժեք իրերի, իշխանության խորհրդանիշների և արվեստի նմուշների պատրաստման վայրերը բացահայտելուն մեծապես կարող են նպաստել նաև մետաղե գտածոների սպեկտրալ և իզոտոպային տարրալուծումները, որոնք հնարավորություն են ընձեռում ի հայտ բերել հանքավայր – արտեֆակտ ուղղակի կապը:

ԱՌԵՎՏՈՒՐԸ ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ԴԱՐՈՒՄ

Ավելի ու ավելի խորացող աշխատանքի բաժանումն Առաջավոր Ասիայի բնապատմական տարբեր միջավայրերում ձևավոր-

ված էթնոմշակութային տարածաշրջանների միջև՝ դառնում է Հին Արևելքի հասարակությունների զարգացման նախապայմաններից մեկը²։ Եփրատի ստորին և միջին հոսանքի արագ զարգացող պետություններն ավելի ու ավելի էին զգում մետաղների ու շինափայտի կարիք, որոնք ներմուծվում էին հյուսիսից, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհի անտառներից և հանքավայրերից։ Հետզհետե այս երևույթներն ավելի են արմատանում և տարբեր բնապատմական միջավայրերում ապրող հասարակությունների միջև ստեղծվում են ամուր առևտրա-արտադրական փոխհարաբերություններ³։ Առևտրի միջոցով դեպի Հարավային Միջագետք առաքվում էին մետաղներ և շինափայտ, փոխարենն արտահանվում էր գործվածքեղեն և հացահատիկ։

Ըստ հարավային Միջագետքի գրավոր աղբյուրների Ք.ա. IV–III հազարամյակներում Առաջավոր Ասիայի ընդարձակ տարածաշրջանը ծածկված էր միջազգային և ներքին առևտրական ճանապարհների խիտ ցանցով, որոնք ներառում էին հեռագնա և դժվար հաղթահարելի ցամաքային, ինչպես նաև գետային և ծովային ուղիները։ Վաղ բրոնզի դարում շահագործվող ճանապարհներից առավել հայտնի էին. 1) հարավային ծովային ճանապարհը, որը կարևոր նշանակություն ուներ Պարսից ծոցով դեպի հարավ-արևմուտք և հարավ-արևելք ընկած, մետաղներով ու շինափայտով հարուստ երկրամասեր նավարկելու՝ պղինձ և թանկարժեք փայտ ներկրելու համար, 2) արևելյան գետա-ցամաքային ճանապարհը Տիգրիսով, սրա վտակներ Դիալայով և Ադենով դեպի վեր, ապա Մեծ և Փոքր Զաբ գետերի միջակայքի լեռնանցքներով դեպի Իրանական բարձրավանդակ՝ պղինձ և շինափայտ, ապա մինչև Աֆղանստան և Միջին Ասիա՝ անագ և լազուրիտ ձեռք բերելու համար, 3) հյուսիսային գետա-ցամաքային ճանապարհը Տիգրիս և Եփրատ գետերով դեպի վեր, դեպի պղնձի և արծաթի հանքերով հարուստ Տավրոսյան լեռները և ապա ցամաքային ճանապարհով դեպի Փոքր Ասիա, 4) արևմտյան գետացամաքային ճանապարհը՝

² История Древнего Востока, 1988. Часть вторая, Москва, с. 23.

³ Նույն տեղում։

Եփրատով դեպի վեր, ապա ցամաքով դեպի արևմուտք՝ Ասորիք-Փյունիկյան նավահանգիստներ և այնտեղից ծովային ճանապարհով դեպի պղնձահանքերով հարուստ Կիպրոս կղզի, Էգեյան ծովի երկրներ, ապա նաև դեպի Փոքր Ասիա, դեպի Տավրոսի և Անտի-տավրոսի (Հայկական լեռնաշխարհ) հանքավայրերը⁴: Այս ճանապարհներից մի քանիսը հասնում էին Հայկական լեռնաշխարհ, շարունակվելով դեպի հյուսիս՝ հասնում մինչև Անդրկովկաս, ապա այստեղից անցնում Հյուսիսային Կովկաս⁵:

Ամենայն հավանականությամբ ոչ բոլոր դեպքերում էր, որ մեկ քարավանը սկիզբ առնելով Ելակետից հասնում էր մինչև առևտրի նպատակակետը: Ավելի շատ գործում էր առևտրական հարաբերությունների միջնորդավորված շղթան, երբ ապրանքը մեկ օղակից փոխանցվում էր մյուսին և այդպես շարունակվելով հասնում մինչև նպատակակետը: Տարածված է այն տեսակետը, որ միջազգային առևտրական փոխհարաբերություններում հիմնական միջնորդի դերը կատարում էին անասնապահ շարժունակ ցեղերը:

Կենտրոնացված պետությունները, մասնավորապես նյութական բարիքները վերահսկող և վերաբաժանող արքան ու նրան շրջապատող վերնախավը խիստ շահագրգռված էին միջազգային առևտրով, որը եկամտի և հարստացման կարևորագույն աղբյուր էր: Հին քաղաքակրթություններին հատուկ կենտրոնացված տնտեսությունը պահանջում էր ամենօրյա վերահսկողություն, որը կարող էր իրականացվել միայն ձևավորված պետական ապարատի գոյության պայմաններում⁶: Վաղ պետական կազմավորումները միջազգային առևտրական հարաբերություններում առավել նպաստավոր պայմաններ ձեռք բերելու համար կազմակերպում էին նաև զինված արշավանքներ: Նոր ձևավորված բռնապետությունների ռազմական ներուժն ապահովում էր թալանչիական հաջող ռազմերթեր դեպի հանքավայրերով հարուստ լեռնային շրջ-

⁴ Նույն տեղում, էջ 24. Мелларт Дж. 1985. Торговля и торговые пути между Северной Сирией и Анатолией // В кн. «Древняя Элба», Москва, с. 20–33.

⁵ Кушнарева К. Х., Южный Кавказ в IX–II тыс. до н.э. Этапы культурного и социально-экономического развития, Санкт-Петербург, 1993. с. 236–237.

⁶ Woolley C. L., 1958. Excavations at Ur, London-Bonn.

ջանները: Այս արշավանքների սարսափը հող էր նախապատրաստում միջազգային առևտրական հարաբերություններում պարտադրված գործընկերության և հարկահավաքման համար: Այսինքն ուժի դիրքից թելադրվում էին առևտրի պայմանները՝ կենտրոնացված իշխանությունից զուրկ և ռազմաքաղաքական առումով թույլ երկրների արտադրանքն ու հանքային հարստությունը Միջագետք ներկրելու համար: Առևտրական կանոնավոր հարաբերությունները պահպանելու համար նվաճված, ինչպես նաև հզոր պետությունների քաղաքական կամ տնտեսական գերակայությունն ընդունած երկրներում հիմնվում էին գաղութներ, իսկ պահանջարկ վայելող հումքի և ապրանքների կուտակումը, ապա Միջագետք ներկրումը հանձնարարվում էր առևտրական միջնորդներին՝ համքարներին:

Հանրահայտ է, որ Հայկական լեռնաշխարհը հնուց ի վեր ակտիվ մասնակցություն է ունեցել Առաջավոր Ասիայի տարբեր երկրներ վանակատի արտահանման գործընթացում⁷, որն առանձնապես բացահայտ է դառնում նոր քարի դարի վաղ երկրագործական հասարակությունների փոխառնչություններում⁸: Ք.ա. IV-III հազարամյակներում ռազմավարական կարևորագույն հումքի դերակատարումը ստանձնում է պղինձը և սրա հիմքի վրա բրոնզի արտադրությունը, որոնցից պատրաստված զենքերը և գործիքները կանխորոշում էին երկրամասերի զարգացման մակարդակը, նորաստեղծ պետությունների առաջընթացը, իսկ բրոնզից, արծաթից և ոսկուց պատրաստված զարդերը և պերճանքի առարկաները խորհրդանշում էին անհատների սոցիալական դիրքը:

Վաղ բրոնզի դարում պղնձի և բրոնզի արտադրության ու արտահանման հիմնական նախապայմաններն էին.

1. Լեռնային հարուստ հանքավայրերի առկայությունը: Հայկական լեռնաշխարհի պղնձահանքերի առատության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար նշենք, որ ըստ Ռուսաստանի 1917 թ. պաշտոնական տվյալների՝ Անդրկովկասում,

⁷ Dixon J., Cann J. and Renfrew C. Obsidian and the Origins of Trade. // "Scientific America", 1968. N 218, p. 46.

⁸ Янковская Н. Б., Новые данные к вопросу о межобластном разделении труда в древнем Двуречье // Культурное наследие Востока, Ленинград. 1985.

այսինքն Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջաններում և Կուր գետից հյուսիս ընկած տարածքներում վկայագրված էր 300⁹, իսկ ըստ 1970-ականների տվյալների միայն ՀԽՍՀ-ի տարածքում հայտնի էր ավելի քան 40 պղնձահանք¹⁰: Վաղ բրոնզի դարում հիմնականում օգտագործվում էին կարբոնատային և օքսիդացված, մակերեսային ելքերով, բազմամետաղ պղնձահանքերը¹¹, որոնց հումքը վերականգնվում էր և հալվում համեմատաբար ցածր՝ 800–900⁰ ջերմաստիճանում¹²: Հայկական լեռնաշխարհը Հին Արևելքի հանքարդյունաբերության կարևորագույն կենտրոններից էր: Այդ ժամանակ շահագործվող պղնձահանքերից առավել հիշարժան են Արղանայի (Էրզանի Մադեն), Կաղզվանի, Քաջարանի և Մանասգոմի (Ալավերդի) հանքավայրերը¹³:

2. Հանքավայրերը շահագործելու, հանքաքարից մետաղներ ձուլելու կարողունակ հասարակության, արհեստա-արտադրական ձևավորված խավի առկայություն, աշխատանքի բաժանում հանքափորների և պղնձագործների միջև:

Ենթադրվում է, որ արդեն Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին մետաղագործությունն առանձնացել էր որպես արտադրության առանձին ճյուղ, որի ներսում զատորոշվել էին հանքափորների և պղնձագործների մասնագիտությունները¹⁴: Դրա հիմնավորումներից է հանքահորերի մշակման համար նախատեսված բարդ գործիքների առկայությունը: Հայաստանի մի շարք հնավայրերում

⁹ Иессен А. А., К вопросу о древнейшей металлургии меди на Кавказе // Известия Государственной академии истории материальной культуры. Вып. 120, Ленинград, 1935. с. 32.

¹⁰ Геворкян А. Ц., Из истории древнейшей металлургии Армянского нагорья, Ереван, 1980. с. 23.

¹¹ Тавадзе Ф. Н., Сакварелидзе Т. Н., Инанишвили Г. В. Этапы развития металлургии Грузии // Кавказ в системе палеометаллических культур Евразии. Тбилиси, 1987. с. 44–50.

¹² Кушнарева К. Х., *Ուշվ. աշխ.*, 1993, с. 232.

¹³ Черных Е. Н., Кавказ в системе металлургических провинций бронзового века // Тезисы докладов, Башкапсарский полевой археологический семинар “Медные рудники Западного Кавказа III–I тыс. до н.э. и их роль в горно-металлургическом производстве древнего населения”, Сухуми, 1988; Геворкян А. Ц., *Ուշվ. աշխ.*, с. 2; Кушнарева К. Х., *Ուշվ. աշխ.*, с. 232.

¹⁴ Кушнарева К. Х., *Ուշվ. աշխ.*, с. 232.

(Բերդաձոր, Մանասագոմ, Գյումրի, Դմանիս, Երևան՝ «մերձերևանյան գանձ») հայտնաբերվել են պղնձահանքերի շահագործման հատուկ գործիքներ՝ բրոնզե կտցավոր կացիներ:

Մասնագիտացված մետաղագործության վկայություններից է նաև այն, որ Շենգավիթյան մշակույթի մի շարք բնակավայրերում, որոնք գտնվում են հանքավայրերից մեծ հեռավորությամբ, հայտնաբերվել են պղնձագործության հետքեր՝ արհեստանոցներ, ծուլման վառարաններ, թթվածին ներարկելու փուքսերի ծայրերի կավե խողովակիկներ, կթխաներ, կաղապարներ, խարամ, պղնձի ծուլակտորներ և այլն¹⁵: Այսպես, Շենգավիթում հայտնաբերվել է կացին ծուլելու քարե կաղապարի հատված¹⁶, Ախալցխայի Ամիրանիս-գորա¹⁷ բնակատեղիի առաջին շինարարական հորիզոնում բացվել է մետաղագործի արհեստանոց՝ ծուլման քարաշար վառարան և փայտածուխ¹⁸, Գառնիում՝ արհեստանոց՝ ծուլման վառարանով, խարամ, կաղապար¹⁹, Աղստևի ավազանի բնակատեղիներից մեկի արվարձանում՝ պղնձի ծուլման երեք վառարանի մնացորդներ: Մի շարք բնակատեղիներում մետաղ հալելու հնոցների մասին են վկայում հնոցների մեջ օդ մղելու փուքսերի ծայրի կավե խողովակիկները՝ փքսափողերը: Հավված մետաղը կաղապարների մեջ լցնելու կավե կթղաներ և շերտփիկներ հայտնաբերվել են Նախիջևանի Մոխրաբլուր II, բրոնզե զենքերի, զարդերի և գործիքների ծուլման կավե ու քարե կաղապարներ՝ Գառնի, Շենգավիթ,

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Байбуртян Е. А. 2011 (1938). Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Ереван, Издательство «Музей истории Армении», с. 43, 45, рис. 106.

¹⁷ Հնավայրը գտնվում է Ջավախքի Թավշանկա լեռան տարածքում: Ինչպես նշել է «Միտք» վերլուծական կենտրոնի փորձագետ Վահե Սարգսյանը՝ «Ջավախքում տեղանունների փոփոխություններ են տեղի ունենում: Ամբողջապես փոխվում են լեռների, գետերի և այլ աշխարհագրական անունները: Օրինակ, Թավշանկա լեռը այժմ կոչվում է Ամիրանիս (Багь Саргсян. Власти Грузии меняют топонимы Джавахка.

<http://www.javakhk.net/forum/index.php?s=5fe40cd0ba697d299f50c1cc303f0119&showtopic=928&st=100&p=12920&#entry12920>) (խմբ.):

¹⁸ Чубинишвили Т. , К древней истории Южного Кавказа. Т. 1., Тбилиси, 1971, с. 57.

¹⁹ Խանգաղյան Է. Վ., Գառնի IV, Երևան, 1969:

Հառիճ և այլ բնակատեղիներում և Ջողազի N 1 դամբարանում²⁰: Հանքահորերից հեռու գետեղված բնակատեղիներում պղնձագործության այս վկայությունները հիմնավորում են այն տեսակետը, որ վաղ բրոզնի դարի սոցիալ-տնտեսական հարաբերություններում արդեն հստակ զատորոշված էին հանքափորների և մետաղագործների մասնագիտությունները:

3. Տեղական պղնձագործության վկայություններ: Կաղապարները և հնագիտական արտեֆակտները վկայում են վաղ բրոնզի դարում պղնձե և բրոնզե զենքերի, գործիքների և զարդերի՝ տապարներ, դաշույններ, գեղարդներ, կտցավոր կացիներ, սվիններ, ուրագներ, մանգաղներ, ասեղներ, քորոցներ, բզեր, ապարանջաններ, կախիկներ, քունքազարդեր և այլ իրերի հաշվարկված արտադրության մասին: Մետաղե գտածոների համալիրում հստակ զատորոշվում են զուտ տեղական մշակույթին բնորոշ կիսագնդաձև և մրձաձև գլխիկներով քորոցները, խոյաձև գլխիկով շքասեղները, խողովակաձև կախկոթառ կացիները, զարդանախշ դաստակով դաշույնները, տարաբնույթ կախիկները և այլն²¹: Պղնձե և բրոնզե իրերի տեղական արտադրության մյուս կարևոր հիմնավորումը դրանց տեղական հումքով պատրաստված լինելն է: Մետաղե իրերի սպեկտրալ և իզոտոպային տարրալուծման արդյունքները վկայում են, որ դրանք պատրաստվել են Հայկական լեռնաշխարհի պղնձի հանքավայրերի պղնձով:

4. Բարձր տեխնոլոգիաների տիրապետում: Առևտուրը խթանող կարևոր նախապայմաններից էր նաև բարձր տեխնոլոգիաների և բնության մեջ չհանդիպող նոր նյութերի կիրառումը: Ի տարբերություն պղնձի սառը կոփման նախնական փուլի, որը վկայված է դեռևս նոր քարի դարում, պղնձի ձուլման բացահայտումը հսկայական թռիչք էր մարդկության զարգացման գործընթացում: Վաղ

²⁰ Кушнарева К. Х., Гзվ. աշխ., с. 232; Арешян Г. Е., Симонян А. Е., Работы в Иджеванском районе // Археологические открытия 1986 года, Москва, 1988, с. 469.

²¹ Кушнарева К. Х., Чубинишвили Т. Н., Гзվ. աշխ., с. 112–137; Мунчаев Р. М. Кавказ на заре бронзового века, Москва, 1975, с. 391–408; Геворкян А. Ц., Гзվ. աշխ., Тавадзе Ф. Н., Сакварелидзе Т. Н., Инанишвили Г. В., Гзվ. աշխ., с. 44–50; Абесадзе Ц. Н., Бахтадзе Р. А. Из истории древнейшей металлургии Грузии // Кавказ в системе палеометаллических культур Евразии. Тбилиси, 1987.

բրոնզի դարում Հայկական լեռնաշխարհում մետաղագործության զարգացման և գործնական տարբեր նշանակություն ունեցող մետաղե իրերի մասնագիտացված արտադրության մյուս վկայությունը մետաղական տարբեր բաղադրիչների միջոցով նոր մետաղի՝ բրոնզի արտադրությունն էր: Հայկական լեռնաշխարհի և Կովկասի շենգավիթյան մշակույթի հուշարձաններից հայտնաբերված 1000-ից ավելի մետաղե գտածոների քիմիական տարրալուծման արդյունքների համաձայն, բրոնզ ստանալու համար օգտագործում էին տեղական պղնձը, որպես բաղադրիչներ կիրառելով մկնդեղ, անագ, արծաթ, նիկել, սուրմա: Տարրալուծման արդյունքները բացահայտում են մկնդեղային, անագային, անագա-մկնդեղային, անագա-արծճային, արծճա-մկնդեղային, արծճա-սուրմային, արծաթե, նիկելային, սուրմային, մկնդեղա-սուրմային բրոնզի բարդ համաձուլվածքների մասին²²:

Մետաղամշակման բարձր մակարդակի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ գտածոների կիրառական նշակության և դրանց քիմիական կազմի միջև դիտվում է որոշակի կապ: Կոնկրետ նշանակության իրեր պատրաստելիս հին մետաղագործները հաշվի էին առնում բրոնզի հոսունությունը, որը պայմանավորում էր կաղապարի բոլոր հատվածները լցնելու ծուլվածքի հատկությունը, ստացված արտադրանքի ամրությունը, կարծրությունը, կոփվելու հնրավորությունը և այլն: Հավաստված է, որ այն զարդե-

²² Абесадзе Ц. Н. 1969. Производство металла в Закавказье в III тыс. до н.э., Тбилиси, табл. I-VII (на груз. яз.); Геворкян А. Ц. 1980, прилож. I, табл. I-IV, прилож. II, табл. I-IV; Meliksetian Kh., Pernicka E., Avetissyan P., Simonyan H. Chemical and lead isotope characterization of middle bronze age bronzes and some iron age antimony objects /Armenia/ // International conference Archaeometallurgy in Europe, Proceedings, v. 2, Milan, 2003, p. 311-318; Kh. Meliksetian, E. Pernicka, R. Badalyan, P. Avetissyan. Geochemical characterisation of Armenian Early Bronze age metal artefacts and their relation to copper ores // International conference, Archaeometallurgy in Europe, Proceedings, Vol. 1, Milan, 2003, p. 597-606; Kh. Meliksetian, E. Pernicka, R. Badalyan. Compositions and some considerations on the provenance of Armenian Early Bronze age copper artefacts, Archaeometallurgy in Europe, 2nd International conference, Aquileia, Italy, 2007; Chačatur Meliksetyan and Ernst Pernicka. 2010. Geochemical characterisation of Armenian Early Bronze Age metal artefacts and their relation to copper ores // S. Hansen, A. Hauptmann, I. Motzenbacher, Ernst Pernicka (Hrsg.), Von Majkop bis Trialeti. Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4. - 2. Jt. v. Chr. Beiträge des Internationalen Symposiums in Berlin vom 1.-3. 2006. Bonn, p. 41-58.

որը, որոնք պատրաստվելուց հետո լրացուցիչ կոփման ու կռման կարիք չէին զգում, պատրաստվում էին մկնդեղի բարձր տոկոսայնություն ունեցող բրոնզից, որը թեև փխրուն էր, սակայն հալվում էր խիստ ցածր՝ 400⁰ ջերմաստիճանում: Դրան հակառակ ձուլումից հետո կոփվելու կարիք զգացող և ճկունություն պահանջող բրոնզե զարդերի ու գործիքների կազմում մկնդեղի տոկոսայնությունը խիստ ցածր է²³: Ձեմքերը, մասնավորապես միջին բրոնզի դարում լայնորեն տարածված սուներները պատրաստվում էին մեծ ճկունությամբ օժտված անագային բրոնզից: Մետաղների քիմիական կազմի տարրալուծման արդյունքում բացահայտված այս երևույթները վկայում են, որ բրոնզի դարի մետաղագործները դարավոր փորձի արդյունքում ձեռք էին բերել էմպիրիկ գիտելիքների հարուստ պաշար, որոնք հնարավորություն էր տալիս նրանց կոնկրետ նշանակության իրեր ձուլելիս ստանալ անհրաժեշտ բաղադրություն ունեցող բրոնզի համաձուլվածքներ:

Վաղ բրոնզի դարում այլ բնագավառներում նույնպես նկատվում են նորարարություններ: Մասնավորապես կարելի է նշել ապակե ուլունքների հայտնագործումը Շենգավիթում, որոնք հին աշխարհի ապակեգործության վաղագույն օրինակներից են:

5. Միասնական կշռային համակարգի առկայություն: Ձարգացած առևտրական, այդ թվում նաև միջազգային առևտրական հարաբերությունների մյուս կարևոր վկայությունը Շենգավիթում, Կառնուտում, Ջրահովտում և Հայաստանի վաղ բրոնզի դարի այլ հուշարձաններում հայտնաբերված կշռաքարերն են և կշռի էտալոնների կաղապարները²⁴: Ուշագրավ է, որ պղնձե կշռային էտա-

²³ Абесадзе Ц. Н., Бахтадзе Р. А., Двали Т. А., Джапаридзе О. М. К истории медно-бронзовой металлургии в Грузии, Тбилиси (на груз. яз.), 1958. с. 26; Кореневский С. Н. О металле эпохи ранней бронзы Дагестана // Материалы по археологии Дагестана. Памятники эпохи бронзы и раннего железа. Махачкала, 1978. с. 41; Кушнарева К. Х., 1924. աշխ., с. 235.

²⁴ Геворгян А. 2005. Торговля металлом в раннебронзовом веке Армении // Հին Հայաստանի մշակույթը, XIII, «Մուղնի» հրատարակչություն, Երևան, էջ 68: Симонян А. Е., Геворгян А. Ц., Бобохян А., О весовой системе эпохи ранней бронзы Армении по данным раскопок Шенгавита, 2011. Ձեկուցումը կարդացվել է “Археология, этнология, фольклористика Кавказ” միջազգային գիտաժողովում: Հանձնված է հրատարակության:

լոնների քարե և կավե կաղապարներ հայտնաբերվել են նաև Նախիջևանի Մոխրաբլուր և այլ հնավայրերում, սակայն դրանք մեկնաբանվել են որպես ծուլակոճղերի կաղապարներ²⁵: Այս կշռաչափերը համարժեք են Ք.ա. III հազարամյակում Ասորիքում և Միջագետքում գործող կշռի միավորների²⁶: Սրանք հստակ վկայում են այս ժամանակաշրջանում Հայաստանում ձևավորված միասնական կշռային համակարգի մասին, որը միջազգային առևտրի կարևորագույն նախապայմաններից էր²⁷:

6. Պղնձե ծուլակտորներ և «գանձեր»: Առևտրի նախապայմաններից է նաև կիսապատրաստուկների՝ մետաղե ծուլվածքների և «գանձերի» առկայությունը վաղ բրոնզի դարի նյութական մշակույթի համատեքստում: Հայտնի է, որ հին աշխարհում որպես դրամի համարժեք և վճարման միջոց կիրառվում էին արծաթի, ոսկու, անագի և պղնձի ծուլակտորները, իսկ մետաղի առևտուրը հիմնականում իրականացվում էր ծուլակտորների տեսքով²⁸: Եթե շենգավիթյան մշակույթը ներառված լիներ միջազգային առևտրական հարաբերություններում, ապա տրամաբանական է, որ մետաղի առևտրի հետ առնչվող որոշակի վկայություններ պետք է պահպանված լինեին:

2000 թ. Շենգավիթի ստորին հորիզոնում հայտնաբերվել են հալած պղնձի համար պահեստաման ծառայող մոտ մեկ տասնյակ կավանոթների բեկորներ²⁹: Սրանց ներքին մակերեսներն այրվել-

²⁵ Кушнарева К. X., *Աշխ.*, с. 83, рис. 31_{6,7,8}, 232–233, 268, 269.

²⁶ Геворгян А., 2005, էջ 68:

²⁷ Rahmstorf Lorentz. 2004. In search for earliest balance weights, scales and weighing system from the Eastern Mediterranean, the Near and Middle East. In: M. E. Alberti /E. Ascalone/ L. Peyronel (eds.), *Weights in Context. Bronze Age Weighing Systems of Eastern Mediterranean: chronology, typology, material and archaeological contexts. International Colloquium, Rome.*

²⁸ История Древнего Востока. Часть вторая, Москва, 1988, с. 30–31.

²⁹ Սիմոնյան Հ. Ե., Շենգավիթի շերտագրությունը, շինարարական և կառուցապատման սկզբունքները // Հայաստանի հնագույն մշակույթը, N 2, Էմմա Խանգադյանի հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 24: Կավանոթների պատերին հալված պղնձի մնացորդներ փաստագրվել են նաև Իգդիր և Գուլաբերդկա հնավայրերում՝ տես Կуфтин Б. А. 1944. Урартский «колумбарий» у подошвы Арабата и Куро-Аракской энеолит // Вестник Государственного музея Грузии, Вып. XIII-В, Издательский дом «Тавраев»,

հալվել էին շիկացած մետաղի հետ շփման արդյունքում, իսկ պատերի մեջ ներթափանցել էին պղնձի կաթիլներ: Առաջին հայացքից այս անշուք բեկորները հսկայական տեղեկատվություն են ամփոփում: Պղնձի նստվածքով կավանոթների կտորները հայտնաբերվել են մեկ վայրից՝ Շենգավիթ քաղաքատեղիի կենտրոնական թաղամասի ստորին շերտից, որտեղ բացվեցին կլոր հատակագծով սենյակի հիմնապատեր, աշխատանքային կավածեփ հարթակ և հոր՝ լի քարե գործիքներով: Սրանք, թերևս, վկայում են այստեղ գործած պղնձագործի արհեստանոցի մասին³⁰: Կավանոթների բեկորների պատերին պահպանված պղնձի նստվածքների քիմիական և իզոտոպային տարրալուծումը վկայում է, որ հանքաքարը Շենգավիթ բերվել է բավականին հեռվից՝ Մանասագոմի հանքավայրերից³¹: Որոշակի է, որ հանքաքարը հարստացնելուց և ձուլելուց հետո ստացված մետաղը կիսապատրաստուկների տեսքով պահպանել են կավանոթներում՝ դրանցից հետագայում պղնձե և բրոնզե իրեր պատրաստելու համար: Այսինքն ցանկացած պահի մետաղագործը կարող էր ջարդել պահեստավորված պղնձով լի կավանոթները, ձեռքի տակ ունենալ ձուլակտորներ և դրանից վերածուլման, կոփման կամ կռման տեխնիկայով պատրաստել զենքեր, գործիքներ և զարդեր: Սա աշխատանքի բաժանման և մասնագիտացման հնագույն վկայություններից է, որի կիրառումն անկասկած էապես բարձրացնում էր աշխատանքի արտադրողակա-

Махачкала, 2012, с. 74–75, табл. XIX/7; Кушнарева К. Х. 1993, с. 232.

³⁰ Սիմոնյան Յ. Ե., Շենգավիթի 2000 թ. պեղումները // Հայաստանի հնագույն մշակույթը, Հարություն Մարտիրոսյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուլոնմների հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 33–34; Սիմոնյան Յ. Ե., Շենգավիթի շերտագրությունը, շինարարական և կառուցապատման սկզբունքները: // Հայաստանի հնագույն մշակույթը, 2, Էմմա Խանգադյանի հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 18–25: Նշենք նաև, որ նախքան մեր պեղումները այս հատվածն արդեն խաթարվել էր նախորդ հետազոտողների անփութ պեղումների հետևանքով, իսկ ենթադրյալ արհեստանոցի շարունակությունը հնարավոր չէր պեղել, քանի որ այն գտնվում է ամրակայված և պահպանության տակ առնված վերին շերտի կառույցի տակ:

³¹ Meliksetian Kh., Pernicka E., Avetissyan P., Simonyan H., Chemical and lead isotope characterization of middle bronze age bronzes and some iron age antimony objects /Armenia // International conference Archaeometallurgy in Europe, Milan, Italy, Proceedings, 2003, v. 2, p. 311–318.

նությունը: Շենգավիթից հայտնաբերված պղնձե նստվածքներով կավանոթների բեկորների վերակազմությունը (յուրաքանչյուր անոթ կարող էր պարունակել 1-3 լ հեղուկ) և դրանց ծավալների զուգադրումը պղնձի տեսակարար կշռի հետ ($1-3 \text{ լիտր} \times 10 \times 8,9 / \text{խտությունը} = 89-267 \text{ կգ}$), վկայում է, որ այս անոթներում պահեստավորված է եղել մի քանի հարյուր կգ պղինձ: Ի տարբերություն ընդունված տեսակետի, ըստ որի, վաղ բրոնզի դարում փոքրիկ արհեստանոցներում գործող պղնձագործ արհեստավորները բավարարում էին լոկ համայնքի կարիքները³², մեր կարծիքով արտահանման լայնածավալ շուկան և պղնձի արտադրության մեծ ծավալները վկայում են շուկայական պահանջարկը բավարարելու համար ձևավորված կայուն արտադրական հարաբերությունների մասին: Պղնձագործության բարդ գործընթացը ենթադրում է, որ պղնձահանքերից հանքաքարը կորզում էին այդ վտանգավոր գործում հմտացած հանքափորները: Այնուհետև հանքաքարը տեղափոխում էին քաղաքատիպ բնակավայրեր, որտեղ կենտրոնացված էր հասարակության առավել ձեռներեց և փորձառու խավը՝ ժամանակի նորագույն տեխնոլոգիաներին տիրապետող արհեստավորները՝ դարբիններն ու ձուլող վարպետները: Մեծարժեք հանքաքարի ապահով տեղափոխումը հարյուրավոր կմ հեռու գտնվող արհեստագործական կենտրոններ կարող էր իրականացվել միայն զինված ջոկատների ուղեկցությամբ, որն էլ իր հերթին մատնանշում է կենտրոնացված իշխանության առկայության մասին: Այս երևույթներն առանձնապես հստակ դիտվում են Շենգավիթում: Կավանոթների մեջ լցված պղնձի ձուլակտորների կուտակումը մեկ սենյակ-պահեստում վկայում է, որ այն առևտրի համար նախատեսված պաշար էր: Այն փաստը, որ դրանք հայտնաբերվել են բնակատեղիի կենտրոնական հատվածում, ավելի հավանական է դարձնում դրանց առևտրական նպատակներով այստեղ կուտակելը, քանզի թունավոր գազեր արձակող պղնձի ձուլումը սովորաբար իրականացվում էր բնակատեղիներից զգալի հեռավորությամբ կամ դրանց արվարձաններում: Ընդունված տեսակետը, ըստ

³² Кушнарева К. Х., *Աշխ.*, с. 233, 268, 269:

որի առևտրականների հետ կապված արհեստավորները մաքրում էին մետաղը և պատրաստում մաքուր ձուլակտորներ, որոնց որակն ընդունելի պետք է լիներ միջազգային առևտրի համար³³, իր հիմնավորումն է ստանում Շենգավիթից հայտնաբերված պղնձի ձուլակտորներ ամփոփած կավանոթների բեկորների գյուտով: Այս խեցատները հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ վաղ բրոնզի դարում Հայաստանում ձևավորված է եղել խիստ զարգացած մետաղամշակություն և մետաղագործության մասնաբաժանման առնվազն երեք փուլ. ա/ հանքի շահագործում և հանքաքարի տեղափոխում, բ/ հանքաքարի հարստացում, ձուլում և դրանք կավանոթների մեջ կիսապատրաստուկների տեսքով պահպանում, գ/ անոթների մեջ լցված պղնձի մաքրում և միջազգային առևտրական նորմերին համապատասխան մետաղի մաքուր ձուլակտորների ստացում, կամ կոփման և կռման տեխնիկայով պղնձե իրերի պատրաստում: Նշված փաստերը վկայում են Հայաստանում վաղ բրոնզի դարում մետաղագործության զարգացման և հանքափորների ու պղնձագործների միջև արդեն հստակ ձևավորված աշխատանքի բաժանման նախին:

Միջազգային առևտրի համար նախապատրաստած պղնձե կուտակումներից է նաև «մերձերևանյան» պղնձե գործիքների գանձը՝ բաղկացած կտցավոր կացիներից և հարթուրագներից: Ենթադրվում է, որ դրանք նախատեսված են եղել ապրանքափոխանակության համար³⁴: Ուշագրավ է այն հանգամանքը, որ առևտրի համար նախապատրաստված այս իրերը ձուլված են Մանասգոմի պղնձահանքերի մետաղով: Ինչպես արդեն նշեցինք, Շենգավիթի պղնձամշակությունը հիմնված էր Մանասգոմի հանքավայրերից ներկրված հանքաքարի վրա: Մերձերևանյան գանձը հայտնաբերվել է Շենգավիթ հնավայրից մի քանի կմ դեպի արևելք, իսկ «գանձի» շրջակայքի ամենամեծ քաղաքատիպ բնակավայրը, որտեղ հավաստվել են զարգացած պղնձագործության հետքեր, Շենգավիթ քաղաքատեղին է: Հետևաբար, տրամաբանա-

³³ История Древнего Востока, Часть вторая, Москва, 1988, с. 30–31.

³⁴ Мартиросян А. А., Мнацаканян А. О., Приереванский клад древней бронзы // КСИА, 1973, вып. 134; Кушнарева К. Х., նշվ. աշխ., с. 237.

կան է եզրակացնել, որ դրանք պատրաստվել են Շենգավիթում: «Գանձի» այս անբնական վայրում հայտնվելը կարելի է մեկնաբանել այսպես: Առևտրի նպատակով պատրաստված պղնձե գործիքները վաճառականները Շենգավիթից արտահանել են դեպի հարավ-արևելք: Այս թանկարժեք բեռը հափշտակելու համար նրանց դարանակալել են ավազակները: Տեղի է ունեցել կենաց ու մահվան պայքար: «Գանձը» պահպանելու համար վաճառականները դրանք թաղել են Մուշականի բլրակներից մեկում, սակայն իրենք զոհվել են դարանակալների հետ մարտնչելիս: Սա մի փորձ է հնագիտական սկզբնաղբյուրների հիման վրա վերակազմելու Հայաստանի բրոնզի դարի միջազգային առևտրական գործընթացը, մատնանշելով պղնձե ձուլակտորների արժեքը և դրա առևտրի հետ կապված վտանգը: Նշենք, որ հին աշխարհի առավել կարևոր և շահաբեր գործարքներից էր պղնձի առևտուրը: Ըստ կանիշյան տեքստերի նախնական վայրում ձեռք բերված պղինձը սպառման վայրում գնահատվում էր 200 անգամ ավելի թանկ³⁵: Մեկ անգամ ևս շեշտենք, որ հին աշխարհի պղնձի հիմնական մատակարարներից էր Հայկական լեռնաշխարհը, որտեղ կենտրոնացված էին բրոնզի դարում շահագործվող առավել հարուստ հանքավայրերը՝ Արդանա, Կաղզվան, Կապան, Մանասագոմ և այլն³⁶: Պղնձե ձուլա-

³⁵ Янковская Н. Б., Международное торговое объединение Каниша. – ВДИ, 1965, N 3.

³⁶ Մանասագոմի և այլ պղնձահանքերի մետաղից պատրաստված վաղ բրոնզի դարի իրեր հայտնաբերվել են Վրաստանում, Դաղստանում, Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային մարզերում, Մերձկուբանյան և Մերձդնեստրովյան շրջաններում, Հարավ-ռուսական տափաստաններում, Ուկրաինայում և Արևելյան Եվրոպայում՝ տե՛ս Մարտիրոսյան Ա. Ա., К предыстории древнейших этапов культуры Армении // ՊԲՀ, 1960, N 1, с. 101; он же. Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 33; Черных Е. Н., История древнейшей металлургии Восточной Европы. Москва, 1966, с. 35; Ильюков Л. С., Бронзовый тапор из Прикубанья // СА, 1981, N 2; Бодянский. Энеолитический могильник у с. Петро-Свистуново // Археология, т. 21, Киев, 1969, рис. 3/1; Ковалева И. Ф., 1979. Вытянутые погребения Днепровского ареала волгоднепровской культурной общности эпохи энеолита // Курганные древности степного Приднепровья в III–II тыс. до н.э., рис. 6; Котович В. Г., Котович В. М., Находки древних бронзовых топоров в Дагестане // Кавказ и Восточная Европа в древности, Москва, 1973; Нечитайло А. А., К вопросу взаимосвязей древнего населения Грузии с племенами Северного Кавказа и Украины // Душетская научная конференция посвященная проблемам взаимоотношений между горными и равнинными регионами, Тбилиси, 1984. с. 100; Лорджипанидзе О. Д., Мухелишвили Д. Л., Закавказье в международной торговле Востока и Запада // V

ծո կիսապատրաստուկներ հայտնաբերվել են նաև Իգդիր և Գուդաբերտկա հնավայրերում³⁷: Ընդ որում Իգդիրի բնակատեղիից հայտնաբերված ձուլակտորները և կիսապատրաստուկները, ըստ այն հետազոտող և Կովկասի թանգարան հանձնած Պ.Ֆ. Պետրովի վկայության, գտնվել են մեկ կավանոթում³⁸: Սա հիմք է եզրակացնելու, որ ձուլակտորները հավաքել են կամ որպես հարստություն՝ «զանձ», կամ ապրանքափոխանակության և առևտրի նպատակով:

Վաղ բրոնզի դարում մեծ քանակի պղնձի կուտակումները վկայում են, որ Հայաստանում եղել է. 1) խիստ զարգացած մետաղագործության, որը նախատեսում էր պղնձի ձուլակտորների պատրաստում և պահեստավորում; 2) պղնձամշակության բնագավառում աշխատանքի բաժանում ձուլող վարպետների և ձուլակտորներից իրեր պատրաստող դարբինների միջև; 3) վարպետ-արհեստավորների դաս և համքարություններ; 4) պատրաստի արտադրանքն իրացնող վաճառականների դաս, 5) պղնձի ձուլակտորների մեծ քանակ կարող էր կուտակվել միայն կենտրոնացված իշխանության պայմաններում՝ տերունական կամ տաճարական արհեստանոցներում և պահեստարաններում; 6) պղնձից և բրոնզից պատրաստված իրերի միջազգային առևտուր, քանզի փաստագրված ծավալի մետաղը զգալիորեն կարող էր գերազանցել Շենգավիթի և հարակից շրջանների բնակչության պահանջները; 7) մետաղագործության և առևտրի համար կարևոր նախապայման հանդիսացող տրանսպորտային միջոցների և լծկան կենդանիների առկայություն:

Ինչպես Շենգավիթում, այնպես էլ շենգավիթյան մշակույթի մյուս հուշարձաններում պղնձամշակության բազմաթիվ հետքեր

международный конгресс антропологических и этнографических наук, Москва, 1970, с. 1; Шапошникова О. Г., Фоменко В.Н., Довженко Н. Д., Ямная культурно-исторический область (южнобугский вариант) // Археология СССР: Свод археологических источников, Вып. ВН-3. Киев, 1986, рис. 16/18; Мунчаев Р. М., Кавказ на заре бронзового века. Москва, 1975, с. 399; Кушнарева К. Х., *նշվ. աշխ.*, с. 237–238.

³⁷ Кушнарева К. Х., *նշվ. աշխ.*, с. 83, рис. 31.

³⁸ Куфтин Б.А. 1944. Урартский “Колумбарий” у подошвы Арарата и куро-аракский энеолит // Вестник Государственного музея Грузии, XIII-В, Репринтное издание, Издательский дом “Тавраевъ”, Махачкала, 2012, с. 74–75.

վկայված են ստորին շերտերում, ինչը խոսում է մետաղամշակության հնագույն ավանդույթների մասին դեռևս շենգավթյան մշակույթի վաղագույն փուլում³⁹: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ նոր հայտնագործությունները հիմնավորում են Գորդոն Չայլդի այն հիպոթեզը, ըստ որի պղնձագործության բարդ գործընթացի հայտնագործումը, որն իր հետևից բերեց արմատական մի շարք փոփոխություններ Առաջավոր Ասիայի վաղ բրոնզի դարի հասարակական հարաբերություններում, տեղի է ունեցել Չայկական լեռնաշխարհում, Եփրատ գետից արևելք ընկած տարածքներում⁴⁰: Չայկական լեռնաշխարհի պղինձը և սրա համաձուլվածքները շենգավթյան մշակույթի ողջ ընթացքում արտահանվում էին ոչ միայն Մերձավոր Արևելք, այլև հարավուսական տափաստաններ⁴¹: Նման հսկայական շուկայի ապահովման համար Չայաստանում ձևավորվել էր մետաղամշակման մի կատարյալ արտադրական համակարգ:

Վաղ բրոնզի դարում միջազգային առևտրական հարաբերություններում Չայաստանի ներգրավվածության նախապայմաններից էր նաև արհեստավարժ վարպետների՝ բրուտների, քարագործների, դարբին-մետաղագործների դասերի առկայությունը, որը հիմնավորում են ոչ միայն պատրաստի իրերի բազմաթիվ օրինակները, այլև պեղածո աշխատանքային գործիքների բազմազանությունը և առատությունը:

Առևտրական հարաբերությունների նախապայմաններից է նաև մասնավոր սեփականությունը, որի առկայությունը փաստագրող իրեր մեջ կարևոր են կնիքները: Միայն Շենգավիթ հնավայրից հայտնաբերվել է տարբեր տիպերի մի քանի կնիքներ:

Հին աշխարհի առջ ու վաճառքի հիմնական բնագավառներից էր **պերճանքի առարկաների, մասնավորապես ոսկերչական արվեստի նմուշների առևտուրը**: Չայաստանում ոսկերչության հնա-

³⁹ Кушнарева К. Х., *Ուշվ. աշխ.*, с. 233.

⁴⁰ Чайлд Гордон. Древний Восток в свете новых раскопок, Москва, 1956, с. 64.

⁴¹ Геворкян А., Пальмиери А. Фиолетово. // Հ. Մարտիրոսյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 11–13. Геворкян А. 2005, с. 67–74.

գույն նմուշներ հայտնաբերվել են Շենգավիթ, Մեծամոր և այլ հնավայրերում: Շենգավիթից հայտնաբերված կրծքագարդի վրայի փորագրությունը խիստ բնորոշ է Հայաստանի վաղ բրոնզի դարի խեցեղենի զարդանախշին: Այս հանգամանքը վկայում է դրա տեղական արտադրանք լինելը:

7.Տեքստիլ արդյունաբերություն: Վաղ բրոնզի դարի բազմաթիվ հնավայրերից հայտնաբերվել են անվատիպ ծանրոցաքարեր և սկավառակաձև մշակած, կենտրոնում միջանցուկ անցքով խեցեղենի բեկորներ: Սրանք ամենայն հավանականությամբ օգտագործվել են տեքստիլ արդյունաբերության մեջ որպես ծանրոցաքարեր ջուլհակի դազգահի վրա թելերը ձգող: Բնակատեղիներից հայտնաբերված թելատու բույսերի սերմերը՝ վուշ, կտավատ նույնպես վկայում են զարգացած ջուլհակության մասին: Հանրահայտ է, որ հին աշխարհում միջազգային առևտրի հիմնական առարկաներից էր գործվածքը: Բրոնզի դարում Հայաստանից գործվածքի արտահանման ուղղակի վկայություններ առաժմ չունենք, սակայն զարգացած ջուլհակության վկայությունները բազմաթիվ են:

Միջազգային առևտուրը կարող էր գոյություն ունենալ միայն **կենտրոնացված իշխանության** պայմաններում: Վաղ բրոնզի դարում կենտրոնացված իշխանության իրեղեն դրսևորումներն են. գինատեսակների բազմազանությունը, իշխանության խորհրդանշանները, կոթողային արվեստն ու ճարտարապետությունը, որոնք վկայված են շենգավթյան մշակույթի բազմաթիվ հուշարձաններում:

Մերձավորարևելյան քաղաքակրթությունները լայնորեն օգտագործում էին Հայկական լեռնաշխարհի անտառանյութը:

Հսկայական տարածք զբաղեցնող շենգավիթյան մշակույթը տարածվում էր հինարևելյան տարանցիկ առևտրական ուղիների խաչմերուկում: Սա ենթադրում է ոչ միայն պղնձի արտահանում, այլև ներմուծված իրերի առկայությունը Հայկական լեռնաշխարհում: Եվ դրանք քիչ չեն: Այսպես, անկասկած ներմուծված է Առյուծաբլուր հնավայրում հայտնաբերված դժոխաքարից՝ լապիս լազուրից պատրաստված կնիքը: Շենգավիթյան մշակույթի արևմտյան շրջաններում հազվադեպ երևույթ չէ Ասորիքից և Միջագետ-

քից ներմուծված խեցեղենը: Հյուսիս-սիրիական խեցեղենը շենգավիթյան մշակույթի տարածման շրջանում ի հայտ է գալիս դեռևս Ք.ա. IV հազ. վերջից և հանդիպում է մինչև Ք.ա. III հազ. վերջը: Առևտրական կապեր են դիտարկվում նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների հետ: Հայկական լեռնաշխարհի և Էգեյան աշխարհի կապերի մասին վկայում են Կապույտ բլուրի K1-K3 հորիզոններից հայտնաբերված խեցեղենի որոշ նմուշներ, որոնք իրենց զուգահեռներն ունեն Միկենեի վաղ մինոյան II հորիզոնում:

Այսպիսով, կարող ենք ամփոփել, որ արդեն վաղ բրոնզի դարում Հայաստանում առկա էին առևտրի, այդ թվում նաև միջազգային առևտրի համար անհրաժեշտ գրեթե բոլոր նախապայմանները՝ 1. պղնձի, ոսկու, արծաթի, արճճի, աղի հարուստ հանքավայրեր, շինափայտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, 2. ներմուծված իրեր, 3. սոցիալ-տնտեսական և հասարակական բարդ հարաբերություններ, որոնց բնորոշ էին կենտրոնացված իշխանության բազմաթիվ հատկանիշներ, 4. արտադրության բնագավառում բարձր տեխնոլոգիաների և բնության մեջ չհանդիպող նոր նյութերի կիրառում, 5. մասնավոր սեփականության առկայությունը վավերացնող իրեր՝ կնիքներ, 6. արհեստավարժ վարպետների և վաճառականների ձևավորված դաս, 7. առևտրի և փոխանակության համար նախատեսված պղնձե ձուլակտորներ և «զանձեր», 8. միասնական կշռային համակարգի առկայություն՝ կշռաքարեր և կշռաչափի էտալոնների քարե կաղապարներ, 9. հանքավայրերը շահագործելու, հանքաքարից մետաղներ ձուլելու կարողունակ հասարակություն, աշխատանքի բաժանում հանքափորների և պղնձագործների միջև, և այլն: Այս ամենը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ Ք.ա. IV–III հազարամյակների սահմանագլխին Հայաստանը ընդգրկված էր նոր ձևավորված միջազգային առևտրով զբաղվող երկրների ցանկում:

A. СИМОНЯН

АРМЕНИЯ И МЕЖДУНАРОДНАЯ ТОРГОВЛЯ В ЭПОХУ РАННЕЙ БРОНЗЫ

На рубеже IV–III тыс. до н.э. Армения, благодаря богатым ресурсам Армянского нагорья, была среди стран занятых международной торговлей. В эпоху бронзового века в Армении формировались все предпосылки для развития торговли, включая международную.

H. SIMONYAN

ARMENIA AND INTERNATIONAL TRADE IN EARLY BRONZE AGE

At the end of IV and the beginning of III millennia B.C. Armenia, owing to rich resources of the Armenian Highland, was among the countries which took part in international trade. In early bronze age there were available all prerequisites for the development of trade, including international trade in Armenia.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Բ.Ա. ՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Հայկական լեռնաշխարհը, գտնվելով Առաջավոր Ասիայի հյուսիսային մասում, հնուց ի վեր բնական կամրջի դեր է խաղացել Արևելքի և Արևմուտքի միջև: Այստեղով են անցել հին աշխարհի միջազգային քարավանային առևտրի ճանապարհները: Լեռնաշխարհը հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք կտրում էին մի քանի հիմնական մայրուղիներ, որոնցից յուրաքանչյուրի նշանակությունը տարբեր ժամանակաշրջաններում փոփոխվում էր՝ կախված քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ հանգամանքներից: Միջագետքի, Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի միջև տարաբնույթ հարաբերություններ վկայված են դեռևս նորքարեդարյան շրջանից: Սակայն այդ փոխհարաբերություններն առավել հստակ և նպատակամղված բնույթ ստացան Հայկական Տավրոսից հարավ ընկած հյուսիսմիջագետքյան տարածաշրջանում վաղ պետականությունների ձևավորումից հետո՝ շումերական, աքքադական, Ուրի III հարստության և Աշշուրի պետության գոյության շրջանում¹: Արտադրողական ուժերի զարգացումը, նյութական արտադրության համեմատաբար բարձր մակարդակը, երկրի բնական հարստությունները հիմք դարձան Հայաստանի և շրջակա երկրների մշակութային ու տնտեսական հարաբերությունների ընդլայնման համար: Չունենալով պղնձի հանքավայրեր՝ հին Միջագետքի բնակիչներն օգտվում էին Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի պղնձից: Սասնո, Ռշտունյաց², Կորճալքի լեռներում պղնձի, կապարի, արծաթի մեծաքանակ հան-

¹ Առաջավոր Ասիայի գլխավոր մայրուղիների մասին տե՛ս Bobokhyan A., Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500–1500 v. Chr., Band 1, 2008, S. 130–139, 182–202.

² Հայ պատմագրության մեջ այս լեռները կոչվում են «կապարահատաց և երկաթահատաց լեռինք» (Փավստոս, Գ, Ժ) այնպես, ինչպես Կիլիկյան Տավրոսի լեռներն ասորեստանյան արձանագրություններում կոչվում են «արծաթյա»:

քավայրեր կային: Ակնհայտ է, որ Հայաստանի նշված շրջանների բնակչությունը հնուց ի վեր պետք է մասնագիտամար մետաղահանության ու մետաղաձուլության մեջ: Ք.ա. III հազարամյակի հնավայրերում հայտնաբերված մետաղաձուլական բազմաթիվ իրերի ուսումնասիրությունը մի կողմից ցույց է տալիս տեղական մետաղամշակության զարգացման բավական հասուն մակարդակ, երբ արդեն հսկայական տեխնիկական թռիչք էր կատարվել դեպի իսկական մետաղամշակությունը և մկնդեղով բրոնզի ստացումը, և, մյուս կողմից՝ այն աղերսները, որոնցով կապված էին Հայկական լեռնաշխարհի ու Միջագետքի երկրները, մասնավորապես՝ Շումերը և Աքքադը³:

Հայկական Տավրոսի բնական պատմեշը հարավից կտրում էին մի քանի լեռնանցքներ, որոնցից անհրաժեշտ է հիշատակել Ձորապահակը կամ «կղեսուրք Բաղաղեշայ»-ը, Կրերեաց լեռնանցքը Կորդվաց լեռներում և Ջարասպ լեռնանցքը Ջագրոսի լեռներում: Հայկական լեռնաշխարհի համար ոչ պակաս նշանակություն ունեին նաև գետանցքները: Հատկապես հիշատակության է արժանի Եփրատի գետանցքը Մելիտենե քաղաքի մոտ: Մի այլ կարևոր գետանցք գտնվում էր Ամիդ քաղաքի մոտ՝ Արևմտյան Տիգրիսի վրա, և նրանից ոչ հեռու՝ Թուլխանի (այժմ՝ Կարխ) մոտ: Նման գետանցքների մոտ սովորաբար աճում էին առևտրական խոշոր կենտրոններ, ինչպես Մելիտենեն, Ամիդը, Արշամաշատը (Արածանի գետի վրա) և այլն:

Հայաստանով անցնող մայրուղիներից հնագույնն է այն ճանապարհը, որը Փոքր Ասիայից գալով՝ անցնում էր Եփրատը Մելիտենե քաղաքի մոտ և Ծովք լճի մոտով մտնում Արևմտյան Տիգրիսի հովիտը՝ անցնելով Ծոփքի և Աղձնիքի տարածքներով: Այս ճանապարհը մասն էր այն մայրուղու, որն Ք.ա. V–IV դդ. Աքեմենյան տերության մայրաքաղաք Շոշը միացնում էր Լյուդիայի Սարդես

³ Ըստ մի խթական պատումի՝ աքքադական առևտրականները Փոքր Ասիայում են հայտնվել դեռևս Սարգոն Աքքադացու կառավարման տարիներին՝ Ք.ա. 2270 – 2215 թթ. (Սարգոնի օրոք Միջագետքում առևտուրը մեծ զարգացում ապրեց, մտցվեց չափ ու քանակի միասնական համակարգ, հեռավոր Մելախա երկրից (հավանաբար՝ Հնդկաստանից) առևտրականները հասնում էին Միջագետք, որտեղից նրանց ներմուծած ապրանքները կարող էին հասնել նաև Փոքր Ասիա):

քաղաքի հետ⁴: Այս մայրուղու շնորհիվ՝ Հայաստանի Արևմտյան Տիգրիսի և Արածանիի ներքին ավազաններում բնակվող բնակչությունը ներգրավված էր միջազգային առևտրի մեջ: Այս տարածաշրջանը (Հայաստանի հարավարևմտյան մասը) դեռևս բրոնզեդարյան ժամանակաշրջանում ուներ իր առանձնահատկությունները⁵ խիտ էր բնակեցված, առավել զարգացած էր Հայկական լեռնաշխարհի մյուս ծայրամասերի համեմատ և ակտիվ քաղաքական, տնտեսական և մշակութային կապերի մեջ էր Միջագետքի և Փոքր Ասիայի երկրների հետ, ինչպես նաև կատարում էր միջնորդային դեր այդ տարածաշրջանների համար:

Այս առումով Ք.ա. II հազ. I կեսի ընթացքում Աշշուրից դեպի Քանես (Նեսա՝ հնդեվրոպացի խեթերի նախնական կենտրոններից մեկը, որի անունից առաջացել է նրանց նեսիացիներ անվանումը) և Փոքր Ասիայի այլ շրջաններ միջազգային առևտուրն իր նպաստն է բերել նաև Հայաստանի հարավարևմտյան շրջանների տնտեսական զարգացմանը:

Ք.ա. XXI–XVIII դդ. մեծապես աճեց Աշշուր քաղաքի ներգրավվածությունը միջազգային առևտրում: Աշշուրն իր առևտրական գաղութները՝ «կարում»-ները, հիմնեց առևտրական մայրուղիների հանգուցակետերում՝ հումքի աղբյուրներին առավել մոտ, հատկապես՝ Փոքր Ասիայի արևելյան շրջաններում⁶: Ընդ որում, դա իրա-

⁴ «Արքայական» կոչված ճանապարհի մի հատվածը Հայաստանի միջով անցնում էր 56,5 փարսախ (300–350 կմ) երկարությամբ: Նրա ուղղությունը Հ. Մանանդյանի ենթադրությամբ, եղել է Մալաթիայից Խարբերդի դաշտի միջով դեպի Ամիդ-Դիարբեքիր և այստեղից դեպի Հյուսիսային Միջագետք: Այս ճանապարհն իր բարեկարգության ու անվտանգության պատճառով էական նշանակություն ուներ ոչ միայն փոստային և վարչական կապերի, այլ նախ և առաջ ապրանքափոխանակության ու առևտրի զարգացման համար: Այս տեսակետից «Արքայական» ճանապարհի ազդեցությունը Հայաստանի հարավարևմտյան շրջանների՝ Ծոփքի և Աղծմիքի տնտեսական զարգացման վրա զգալի է եղել (Манандян Я., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н.э. - XV в. н. э.), Ереван, 1954, с. 16–18):

⁵ Տե՛ս Bobokhyan A., Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500–1500 v. Chr., S. 22–24.

⁶ Ենթադրվում է, որ Փոքր Ասիայի արևելքում աշշուրցի առևտրականների կողմից «կարում»-ների հիմնադրումը սկսվել է դեռևս Աշշուրի արքա Էրիշում I-ի օրոք (Ք.ա. XX դ. II կես) (Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 1999, p. 23): Համաձայն «կապադովկյան տեքստերի»՝ օտարերկրյա առևտրականների կողմից

կանացվեց ոչ թե ռազմական արշավանքների, այլ խաղաղ ներթափանցման ճանապարհով՝ տեղի առաջնորդների հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելու միջոցով⁷։ Փոքր Ասիայի տարբեր շրջաններ արդեն Ք.ա. III հազ. կեսերից թևակոխեցին վաղ պետականության դարաշրջանը, առաջացան քաղաք-պետություններ, որոնք հիշատակվում են նաև միջագետքյան աղբյուրներում։ Դրանցից աչքի էին ընկնում Քանեսը կամ Նեսան (ներկայիս Բյուլ-թեփե հնավայրը (հայ.՝ Զրզորթ⁸) Կեսարիայից 21 կմ հյուսիս-արևելք), Պուրուսխանդան, Ցալպան, Կուսսարը, Անկուվան, Խաթթուսան և այլն։ Շնորհիվ Ք.ա. XX դ. վերջերից դեպի Փոքր Ասիա ուղղված աշշուրյան առևտրական գաղութային համակարգի ընդլայնման՝ վերոնշյալ քաղաքները սերտ հարաբերություններ հաստատեցին միջագետքյան աշխարհի հետ⁹։

Աշշուրցի (նաև հյուսսիրիացի) առևտրականները գլխավորապես զբաղվում էին մետաղի հումքի արտահանմամբ, ինչից Միջագետքը զուրկ էր։ Միջագետքի առևտրականները Փոքր Ասիա էին ներմուծում գերազանցապես արհեստագործական պատրաստի արտադրանք՝ գործվածքներ, կտորներ, հագուստ, կահ-կարասի, ինչպես նաև անագ, որն անհրաժեշտ էր բրոնզ ստանալու համար¹⁰։ Առևտրական գաղութների հիմնական խնդիրներից մեկն էր

Փոքր Ասիայում ստեղծվել են երկու տեսակի առևտրական բնակավայրեր՝ կարում (աքք.՝ karum) (բառացի՝ «հրվանդան», «հանգրվան»՝ օտարերկրացի առևտրականների հիմնադրած գաղութ, որը տվյալ քաղաքում ուներ որոշակի ինքնավարություն) և վաբարտում (աքք.՝ wabartum)՝ առևտրական կետ, կայան։ Բոլոր օտարերկրյա առևտրական համայնքների կենտրոնը հանդիսանում էր Քանեսի կարումը։ Stü Lewy H., Notes on the Political Organization of Asia Minor at the Time of the Old Assyrian Texts, *Orientalia*, 1964, v. 33, f. 2–3, p. 181–198.

⁷ Янковская Н. Б., Торговая община Каниша и свободный рынок (Малая Азия XIX в. до н.э.), Древняя Анатолия, Москва, 1985, с. 228–242.

⁸ Մարտիրոսեան Ն., Խաբբերդի շրջանները՝ Հայոց հնագոյն օրրանը, Խաբբերդ եւ ամոր ոսկեդէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 92։

⁹ Փոքրասիական քաղաք-պետությունների պատմության ամփոփ ուսումնասիրությունը տես Lewy H., *Anatolia in the Old Assyrian Period*, Cambridge Ancient History, I, 1965, Ch. XXIV, p. 1–29; Orlin L. L., *Assyrian Colonies in Cappadocia*, The Hague - Paris, 1970; Larsen M. T., *The Old Assyrian City-State and its Colonies*, Studies in Assyriology, 4, Mesopotamia, Copenhagen, 1976; Yakar J., *Ethnoarchaeology of Anatolia*, Tel Aviv, p. 22–26; Bryce T., *The Kingdom of Hittites*, p. 21–36 և այլն։

¹⁰ Երկար ժամանակ Փոքր Ասիայում տեղական անագի և պղնձի հումքով ստանում էին բրոնզ, սակայն անագի հանքերի մի մասի սպառման պատճառով

հանդիսանում նաև Փոքր Ասիայից արծաթի և պղնձի արտահանումը: Կատարվում էր նաև պղնձի ու բրոնզի աշխույժ առևտուր՝ հիմնականում Փոքր Ասիայի ներսում: Այդ առևտրում իր որոշակի բաժինն ուներ նաև երկաթի առևտուրը¹¹: Ապրանքների տեղափոխումը կատարվում էր ավանակների քարավաններով: Ճանապարհին առևտրականները ստիպված էին տեղի քաղաք-պետությունների կառավարիչներին որպես հարկ թողնել իրենց ապրանքի մի մասը: Այնուամենայնիվ, առևտրականները հսկայական օգուտ էին ստանում, քանի որ, օրինակ, բրոնզի ստացումը պահանջում էր մեծ քանակությամբ անագի ներկրում: Այս առևտրական կապերը հատկապես ծաղկում ապրեցին Ք.ա. XX դ. II կեսից մինչև XVIII դ. կեսերը (միջին բրոնզի դար): Սակայն Ք.ա. XVII դ. Փոքր Ասիայի արևելքում և Միջագետքում քաղաքական որոշակի զարգացումների պատճառով Աշշուրի կարումներն անկում ապրեցին¹²:

Ծոփքի և Աղձնիքի տարածքների հնավայրերի նյութերը ցույց են տալիս, որ քաղաքային մշակույթը, առնվազն Ք.ա. III հազարամյակից, ակտիվ զարգացում է ապրել և շարունակվել նաև հետագա դարերում¹³: Հնավայրերում հայտնաբերված բազմաթիվ փոքրասիական և միջագետքյան առարկաները խոսում են այն

աշշուրցի առևտրականները սկսեցին Փոքր Ասիա ներմուծել նաև անագ:

¹¹ Երկաթի հանքավայրերի տեղը գաղտնի էր պահվում, իսկ երկաթի արտահանումը մինչև Ք.ա. II հազ. վերջը արգելված էր, որը հասցնում էր նրան, որ օտարերկրյա առևտրականները զբաղվում էին նաև երկաթի մաքսանենգ արտահանմամբ: Մաքսանենգ ճանապարհով արտահանվում կամ ներմուծվում էին նաև շատ այլ ապրանքներ (Янковская Н. Б., Контрабанда в торговом объединении Каниша (архивы Кюль-тепе, Малая Азия XIX в. до. н. э.), Древний Восток, 1988, 5, с. 71–84):

¹² Ք.ա. XVIII դ. Փոքր Ասիայում քաղաք-պետությունների միջև տևական պայքարը հանգեցրեց Կուսսարի արքայատոհմի հաղթանակին: Կուսսարի արքա Անիտան՝ Պիթխանայի որդին, գրավեց Նեսան, այնուհետև՝ Ցալպուվան, Պուրուսխանդան, Սալատիվարան և Խաթթուսան: Իր պետության մայրաքաղաք նա դարձրեց Նեսան: Ժամանակավորապես Անիտայի պետությունը միավորեց թերակղզու արևելյան մասը: Ժամանակագրորեն այս իրադարձությունը համընկնում է Փոքր Ասիայում Աշշուրի առևտրական գաղութների անկման հետ, որը հետևանք էր նաև Հյուսիսային Միջագետքում խուրրիական իշխանությունների հզորացման, ինչպես նաև Համնուրապի օրոք Բաբելոնիայի վերելքի, որի գերիշխանությունը Աշշուրը ստիպված էր ընդունել:

¹³ Բոբոխյան Ա., Ծոփքը մ.թ.ա. III – II հազարամյակների սահմանին, ՊԲՀ, 1999, N 1, էջ 260–268:

մասին, որ չնայած այս կենտրոնները գտնվել են Աշշուր-Քանես հիմնական առևտրական ճանապարհից հյուսիս, սակայն նրանք նույնպես ակտիվ կերպով ներգրավված են եղել տարանցիկ միջազգային առևտրում: Առավել ևս, որ Հայաստանի այդ տարածքները հայտնի են իրենց մետաղահանքերով (հայտնի էին հատկապես Անգեղտուն գավառի Արկնիի (Էրգանի-Մադեն) պղնձահանքերը¹⁴), որոնք հնուց ի վեր շահագործվել են և, բնականաբար, չէին կարող աշշուրցի առևտրականների տեսադաշտից դուրս մնալ: Այս տարածքներում ձևավորվեցին նաև Իսուվա և Ալզի¹⁵ պետական միավորները, որոնց պատմության մեջ նույնպես կարևոր դեր են խաղացել միջազգային առևտրական ճանապարհներին մոտ գտնվելը և Հայկական Տավրոսի մետաղահանքերի շահագործումը:

Հավանական է, որ այդ կապերը չեն սահմանափակվել միայն Հայաստանի հարավարևմտյան մասերով, այլ հասել են մինչև նրա կենտրոնական և հյուսիսային շրջանները՝ իրենց մեջ ներգրավելով նաև Տուրուբերանի, Բարձր Հայքի և Այրարատի տարածքները, որտեղ հետագայում (Ք.ա. 14–13-րդ դդ.) խեթական սկզբնաղբյուրները հիշատակում են Հայասա-Ազգի թագավորությունը: Միջինբրոնզեդարյան ժամանակաշրջանում, հավանաբար, առևտրական ուղիները ընդգրկել են նաև Հայաստանի հյուսիսային շրջանները, որտեղ նույնպես կան հնուց ի վեր շահագործվող մետաղահանքեր:

Կարելի է եզրակացնել, որ Հայկական լեռնաշխարհի՝ Ք.ա. II հազ. I կեսի ակտիվ առևտրատնտեսական կապերը հարևան տարածաշրջանների (Փոքր Ասիա, Միջագետք) հետ նպաստել են Հայաստանի արևմտյան մասում՝ Հայասա-Ազգի, Ալզի, Իսուվա պետական միավորների՝ թագավորությունների առաջացմանը: Այս գործընթացներում իր կարևոր նշանակությունն է ունեցել, անշուշտ, Աշշուր-Քանես միջազգային տարանցիկ առևտրուղին:

¹⁴ Kuhrt A., The Old Assyrian Merchants, Trade, Traders and the Ancient City, London and New York, 1998, p. 25.

¹⁵ Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, N 2, էջ 33–34: Головлева Л. М., Царство Алзи во второй половине II тыс. до н.э., Древний Восток, 3, 1978, с. 71–87.

Տնտեսության հիմնական ճյուղերի, մասնավորապես՝ անասնապահության, երկրագործության ու մետաղամշակության առաջընթացը, ինչպես նաև արտադրողական ուժերի, ապրանքափոխանակության, առևտրի և մշակութային տնտեսական ներքին ու արտաքին փոխհարաբերությունների զգալի աշխուժացումը հիմք հանդիսացան Հայաստանի արևմտյան հատվածում պետականությունների ձևավորման և զարգացման համար: Հայկական լեռնաշխարհը, պահպանելով իր ավանդական մշակութային հարաբերությունները Միջագետքի ու Իրանի հետ, ստեղծված նոր իրադրության պայմաններում մշակութային-տնտեսական աշխույժ հարաբերությունների մեջ մտավ նաև Փոքր Ասիայի, Միջագետքի, Ասորիքի և այլ տարածաշրջանների հետ: Առաջավորասիական մշակութային-տնտեսական միջավայրն իր որոշակի դրոշմն է դրել միջինբրոնզեդարյան ժամանակաշրջանում ձևավորվող Հայաստանի մշակույթի վրա: Այնուհանդերձ, վերջինիս զարգացումը շարունակել է ընթանալ հիմնականում ինքնատիպ կերպով՝ ներքին օրինաչափություններով, որոնցով և պայմանավորվել են լեռնաշխարհի միջինբրոնզեդարյան մշակույթի բնույթն ու զարգացման միտումները:

**АРМЕНИЯ В СФЕРЕ МЕЖДУНАРОДНОЙ ТОРГОВЛИ В
ПЕРВОЙ ПОЛОВИНЕ II ТЫСЯЧЕЛЕТИЯ ДО Н. Э.**

Армянское нагорье, будучи расположенной на севере Ближнего Востока, было отчасти естественным мостом между Востоком и Западом с древних времен. Здесь проходили международные торговые караванные пути Древнего мира. Во времена бронзового века западная часть Армении была в активных экономических, политических и культурных отношениях со странами Малой Азии и Месопотамии. В первой половине II тысячелетия до н.э. Армения также участвует в международных торговых отношениях между Ашшуром и Канесом. Последнее внесло большой вклад в активизацию торгово-экономических процессов в царствах Хайаса-Аззи, Исува и Алзи.

R. GHAZARYAN

**ARMENIA IN THE SPHERE OF THE INTERNATIONAL
TRADE IN THE FIRST HALF OF II MILLENNIUM B.C.**

Being situated to the north of Near East the Armenian Highland was kind of a natural bridge between the East and the West since ancient times. The caravan tracks of international trade of the Ancient world passed through here. During the Bronze Age the western part of Armenia entered into active economic, political and cultural relations with the countries of Asia Minor and Mesopotamia. In the first half of II millennium B.C. Armenia was also involved in international trade relations from Assur to Kanesh. This contributed much to the activization of trade and economic processes in the kingdoms of Hayasa-Azzi, Isuwa and Alzi.

ԱՆԻՆ ԵՎ ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԸ

Երվանդ արքան՝ Հայաստանի նախկին սատրապ Օրոնտեսը, մ.թ.ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտից հետո վերականգնելով Հայաստանի անկախությունը, իրագործել էր նաև երկրի պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված շինարարական աշխատանքներ: Դրանք ծավալվել են նաև Անիում: Անիի հնությունների վերաբերյալ արտահայտված մտքերից բերենք Հ. Մանանդյանի հետևյալ տողերում ամփոփվածը. «Մեր նոր եզրակացությունները, Երվանդաշատի, Երվանդակերտի, Արմավիրի և Գառնիի հուշարձանների մասին կարող են նոր լույս սփռել նաև Անիի Կամսարականյան կոչվող պարսպի հնագույն որմածքի վրա: Այս վերջինը ևս, ինչպես և Արմավիրի վերոհիշյալ պարիսպներն ու աշտարակը, վերաբերում է, ըստ երևույթին, հայկական ճարտարապետության Երվանդյան ժամանակաշրջանին, այսինքն՝ 3-րդ դարի կամ 2-րդ դարի սկզբներին մեր թվականությունից առաջ»¹: Բնորոշ է այն հանգամանքը, որ Անիում Կամսարականների ամրոցի պարսպի մեջ կան «ծիծեռնակապոչ» կապերով քարերի երկրորդ օգտագործման դեպքեր²: Սա մեզ հուշում է, որ երկրորդ օգտագործումը եղել է Անի ամրոցի՝ Արտաշեսի (ապագա Արտաշես 1-ին, մ.թ.ա. 189–160 թթ.) զորքի կողմից ավերվելուց հետո: Այս դեպքում զուգահեռ կարելի է անցկացնել նրա և Արմավիրի տաճարի ավերման միջև: Ըստ Ժ. Խաչատրյանի, Արմավիրում որոշ «ծիծեռնակապոչ» կապերով քարերի կրկնակի օգտագործման փաստը (դրանց երկու երեսին արված փորվածքների չափերը և խորությունները տարբեր են) վկայում է, որ «հելլենիստական տաճարի շենքը (մ.թ.ա. 3-րդ դ.) գուցե Երվանդի և Արտաշեսի կռիվների ժա-

¹ Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946, էջ 33:

² Ժ. Խաչատրյան. Մոնումենտալ կառույցի մնացորդներ և ուշագրավ ծեսով թաղում Արտաշատից, ՊԲՀ, 2005, թիվ 2, էջ 229:

մանակ վնասվել է կամ քանդվել է և վերականգնվել է մ.թ.ա. 2-րդ դ., նույն տեխնիկայով»³:

Ասվածները հիմք են տալիս եզրակացնելու, որ Երվանդը նորանկախ թագավորության մայրաքաղաք Արմավիրի հետ միասին, միևնույն ժամանակ կառուցապատել է Անին, ընդ որում ելնելով ոչ միայն պաշտպանական նկատառումներից: Անին ոչ միայն հենակետ կարող էր ծառայել հյուսիսից ներխուժող բարբարոս ցեղերի դեմ, այլև կարող էր դառնալ ամառանոցային թագավորանիստ, որովհետև, ի տարբերություն շոգ Արարատյան դաշտում գտնվող և սակավաջուր Արմավիրի⁴, Անին գտնվում էր զով Շիրակում՝ ջրառատ Ախուրյան գետի ափին: Բայց միայն դրանցով չի կարելի բացատրել Անիի նկատմամբ Երվանդ թագավորի ցուցաբերած հոգատարությունը: Անին Մայր դիցուհու պաշտամունքի նշանավոր կենտրոն էր, իսկ Երվանդունի արքայատոհմի նախնիները սերված էին համարվում Մայր դիցուհու երկվորյակ որդիներից: Խոր նախնադարում ձևավորված և Երվանդունիների անկումից հետո որոշակի աղճատման ենթարկված համապատասխան առասպելը առկա է Սովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Երվանդ Վերջին թագավորի առթիվ մեր պատմահայրը գրում է. «Եւ ունին զորոյց յաղագս նորա այսպէս: Կին ոմն յագգէ Արշակունեաց, անծամբ հարստի և խոշորագեղ, վարար, զոր ոչ ոք դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանուկս յանկարգ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտաւորոս: Եւ ի զարգանալ մանկանցն՝ կոչեն անուանս Երուանդ եւ Երուագ»⁵: «Սասնա ծռեր» դյուցազնավեպի երկվորյակների մոր (Ծովինար) նման, Երվանդի և Երվագի մայրը ևս Մայր դիցուհու կերպարի մի տարբերակն է՝ պահած անգամ նախնադարից եկող և իրեն բնորոշ այնպիսի գծեր, ինչպիսիք են «անծամբ հարստի»-ն, «խոշորագեղ»-ը և «վարար»-ը:

Անի քաղաքի Մայր դիցուհու պաշտամունքի հետ ունեցած երբեմնի սերտ կապի վերաբերյալ ակնառու փաստեր կան: Վարդան

³ Նույն տեղում, էջ 228:

⁴ Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Եր., 1981, գիրք Բ, գլուխ ԼԹ:

⁵ Խորենացի, Բ, Լէ:

Բարձրաբերդցին գրում է. «գքաղաքն Անի, որ կոչի խնամք»⁶, իսկ միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում կարդում ենք. «Անիացեալ-խնամեալ, կամ խնայեալ»⁷: *խնամ(ք) բառի բացատրություններից են. «հո֊արբարձութիւն, նախահայեաց հո֊ողութիւն, պահպանութիւն, հովանաւորութիւն, դարման, ֊ուրթ, սեր»*⁸, «հոգատարություն, հոգացողություն, ջանադրություն»⁹, «ուշադրություն, հոգատարություն, հարկավոր օգնության մատակարարում, միջոցներ, որոնք ձեռք են առնվում հիվանդին օնելու՝ բժշկելու համար»¹⁰ և այլն: Ինչպես տեսնում ենք, Անի-ի բացատրությունն հանդիսացող խնամք բառի բերված բոլոր իմաստներն էլ այս կամ այն չափով վերաբերում են Մայր դիցուհուն՝ հեթանոսական Անահիտին: Անկասկած, Մայր դիցուհու պաշտամունքի հնագույն օջախներից մեկը լինելու պատճառով է, որ Անի բնակավայրը կրել է այդ անունը: Մեծավաստակ հայագետ Ղ. Ալիշանը Անի-ն համարում է Անահիտ դիցուհուն տրված անվանումներից մեկը¹¹: Սրա հետ միասին, երբ ի նկատի ենք առնում, որ Դարանաղի գավառի համանուն սրբավայրն ուներ իր անվան Զանի տարբերակը¹² և, որ հայերեն մի շարք բառեր ունեն իրենց նախաձայն հ-ով և առանց դրա տարբերակները, ապա, ամենայն իրավամբ, մեր Անի-ները կարող ենք համարել հայերեն հան//հանի «տատ, մեծ մայրե բառի տարբերակը: Դրանք սերում են հ.-ե. նախալեզվի *an-/*Han- «տատ, հոր մայրը» արմատից: Զմնտ. խեթ. hannaš «տատ» (որից կրկնաբանությամբ Hannahanna դիցուհու անունը), հրգ. ana և մյուս լեզուների համապատասխան բառերը¹³:

⁶ Մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1960, էջ 117–118:

⁷ Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Զ. Ամալյանի, Եր., 1975, էջ 21:

⁸ Նոր Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, էջ 949:

⁹ Զ. Աճառյան, Զայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 378:

¹⁰ Ստ. Մալխասյանց, Զայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 272:

¹¹ Ղ. Ալիշան, Զին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 47:

¹² Խորենացի, Բ, խը, Գ, խե:

¹³ Զ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, Եր., 1977, էջ 33: Т. Гамкрелидзе, В. Иванов, Индо-европейский язык и индоевропейцы, т. 2, Тбилиси, 1984, с. 766.

Անահիտ դիցուհու հասարակական գործառույթներից էր տնտեսական գործունեության հովանավորումը: Հիշենք դեռևս հեթանոս Տրդատ 3-րդի հրովարտակը, որտեղ նա երկրին և ժողովրդին մաղթում էր «շինութիւն դիցն օգնականութեամբ, լիութիւն պարտութեան յարոյն Արամազդայ, խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ, եւ քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ»¹⁴: Ագաթանգեղոսի երկուն Անահիտ դիցուհին որակվում է հետևյալ կերպ. «Բարերար ամենայն մարդկան բնութեան», «փառք ազգիս մերոյ եւ կեցուցիչ», «մեծն Անահիտ, որով կեայ եւ զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց»¹⁵: Ըստ այսմ, Մայր դիցուհին էր հանդես գալիս հայ հին հասարակության բարիքներ արտադրողի դասի (ներառում էր հողագործներին, անասնապահներին, ավելի ուշ նաև արհեստավորներին և առևտրականներին) հովանավոր աստվածությունների դերում¹⁶:

Հայտնի է, որ հեթանոս հայերի Անահիտ դիցուհու պաշտամունքային վայրերը, վերածվելով քրիստոնեական սրբավայրերի, ձոնվել էին Սուրբ Աստվածածնին: Անիում Սուրբ Աստվածածնի պաշտամունքի մասին է խոսում այն փաստը, որ քաղաքի ամենաբարձր շինությունը՝ Մայր տաճարը (Կաթողիկե եկեղեցին), ձոնված էր նրան¹⁷: Տաճարի կառուցումն սկսվել էր դեռևս Սմբատ 2-րդ թագավորի (977–990 թթ.) օրոք, բայց նրա կառուցումը շարունակելու և ավարտելու գործը Տրդատ ճարտարապետն իրականացրել էր Գագիկ 1-ին թագավորի (990–1020 թթ.) կնոջ՝ Կատրանիդե թագուհու հովանավորությամբ: Լեոն, նկարագրելով անմատչելի այն ժայռաբլուրը, որտեղ գտնվել է հին Անի բերդը, ենթադրում է, որ Անահիտ դիցուհու տաճարը գտնվել է այնտեղ, որտեղ հետագայում կառուցվել է «կարմիր քարերից շինված մի գեղեցիկ եկեղեցի, շրջապատված փոքրիկ մատուռներով»¹⁸: Ավելի հստակ է

¹⁴ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Եր., 1983, ԺԲ, 127:

¹⁵ Նույն տեղում, Ե, 53, Ե, 59:

¹⁶ Ս. Պետրոսյան, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 150–153, 166:

¹⁷ Լեո, Անի, Տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, Եր., 1963, էջ 153:

¹⁸ Նույն տեղում, էջ 267:

արտահայտվում անվանի ճարտարապետ Վ. Հարությունյանը: Նա գրում է, որ այսպես կոչված «Աղջկա բերդի» եկեղեցու «տեղում գտնված շինարարական մի արձանագրությունից իմանում ենք, որ այս ավանդապաշտական տեղում դեռ հայերի հեթանոսական ժամանակներից կանգնած է եղել Անահիտ աստվածուհու տաճարը: Գրիգոր Լուսավորիչը, քանդելով այն, տեղում կառուցել է եկեղեցի: Ավելի ուշ՝ Իվանե և Ջաքարե Ջաքարյան եղբայրների օրոք (12–13-րդ դդ.), վերջինի տեղում կառուցվել է նոր եկեղեցի...»¹⁹:

Սովսես Խորենացին Երվանդավանի անվանակոչությունը բացատրում է Արտաշեսի զորքի կողմից Երվանդին այդ վայրից վանելու հանգամանքով²⁰: Բայց, ինչպես Գ. Սարգսյանն է ցույց տվել, «բնակավայրը Երուանդաւան կոչվել է ավելի վաղ և կազմված է Երուանդ անվանը աւան բառի հավելումով. հմմտ. Տիգրանաւան, Վարդգեսաւան, Արշակաւան»²¹: Ճիշտ է, բնակավայրն հետագայում Երուանդաւան անվամբ չի հիշատակվում, բայց Երվանդաշատ մայրաքաղաքից 300 ասպարեզ հյուսիս, Ախուրյանի ափին գտնված Երվանդ արքայի բնակատեղին լինելու էր Անի ամրոցը: Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության տպագիր տեքստում Երվանդաշատի և Երվանդի բանակատեղիի միջև եղած հեռավորությունը ցույց է տրված «ավելի քան հարյուր ասպարեզ»²², երբ գրաբար տեքստում «ավելի քան երեք հարիւր ասպարիսաւ» է²³: Գ. Սարգսյանը ճշտում է բանակատեղիի հեռավորությունը. «Երվանդաշատից մոտ 300 ասպարեզ (=շուրջ 50կմ) դեպի հյուսիս, Ախուրյան գետի ափին»²⁴: Երվանդավանի մոտ տեղի է ունեցել մ.թ.ա. 201 թ. ճակատամարտը Հայոց թագավոր Երվանդ Վերջինի և գահի հավակնորդ Արտաշեսի բանակների միջև:

¹⁹ Վ. Հարությունյան, Անի քաղաքը. Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմությունից, Եր., 1964, էջ 58:

²⁰ Խորենացի, Բ, խզ:

²¹ Գ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Սովսես Խորենացին, Եր., 1966, էջ 217:

²² Նույն տեղում, էջ 203:

²³ Նույն տեղում, էջ 202:

²⁴ Նույն տեղում, էջ 219:

ԱՄԻ//Երվանդավանը Երվանդ Վերջինին առնչվում է նաև Բագրատունի-Երվանդունի առճակատման դրվագներից մեկում: Բագրատունի տոհմի հակաերվանդյան դիրքորոշումը ակնհայտ էր արդեն նրանով, որ լինելով Չայոց թագադիրներ, Բագրատունիները չեն թագադրել Երվանդ Վերջինին²⁵, դրանով իսկ կասկածի տակ առնելով նրա թագավորության օրինականությունը: Դրա հաջորդ քայլը եղել է գահի հավակնորդ Արտաշեսի կողմն անցնելը: Ըստ Մովսես Խորենացու, «Արդ՝ իբրեւ լսէ Սմբատ որդի Բիւրատայ զբօթն Սանատրկոյ եւ զգոյժ կոտորման որդւոց նորա՝ առեալ զերկուս դստերս իւր, զՍմբատանոյշ եւ զՍմբատուիի՝ նստուցանէ ի Բայբերդի, արս քաջս թողլով ի վերայ ամրոցին. եւ ինքն հանդերձ մինով կնաւ իւրով եւ սակաւ արամբք գայ անցանէ ի խնդիր մանկանն Արտաշիսի»²⁶: Այդ մասին հայտնի է դառնում Երվանդ արքային: Պատմահայրը ցույց է տալիս, թե ինչպես Երվանդ-Բագրատունիներ հակասությունը հետզհետե վերածվում է բացահայտ առճակատման: Նա գրում է. «Յայնժամ առաքէ Երուանդ եւ սատակէ զքաջսն ի Բայբերդի. գերեալ զդստերս Սմբատայ՝ պահէ յամրոցին յԱմի ոչ վատթարապէս»²⁷: Հիշյալ ԱՄԻ ամրոցը Դարանաղի գավառի ԱՄԻ//Յանին լինել չէր կարող, որովհետև նախ՝ վերջինս գտնվում էր ոչ թե Մեծ Չայքի՝ Երվանդ Վերջինի թագավորության, այլ Փոքր Չայքի կազմում, ապա՝ եթե ընդունենք, անգամ, որ ԱՄԻ//Յանին Երվանդ Վերջինի օրոք գտնվել էր Մեծ Չայքի կազմում (անհավանական մի ենթադրություն), ապա միևնույն է. Երվանդ Վերջինը իր բարձրաստիճան գերուիկներին կպահեր ոչ թե իր թագավորության հեռավոր ծայրամասում՝ Դարանաղիում, որն այնքան էլ հեռու չէր Բագրատունիների տիրույթ Սպերից, այլ իր մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Շիրակի ԱՄԻ ամրոցում: Թագավորական նստավայրին, լինել այն ամառանոցային թե՛ ձմեռանոցային, կից հանգստյան ընդարձակ գոտու ստեղծումը եղել է Երվանդունի թագավորների հոգներից մեկը: Ընդ որում, դրանք նաև շրջակայքի կլիմայի առողջացման և պաշտամունքային կարիքների բավարարման

²⁵ Խորենացի, Բ, ԼԷ:

²⁶ Նույն տեղում, Բ, ԼԷ:

²⁷ Նույն տեղում, Բ, ԼԸ:

նպատակներ էին հետապնդում: Վերջին դեպքում, դրանց ստեղծումը ուղղակի առնչության մեջ էր դրվում բուսական և կենդանական աշխարհի հովանավոր Մայր դիցուհու պաշտամունքի հետ: Դրանք փաստորեն վերածվում էին արքունի արգելանոց-սրբավայրերի: Այդպիսի մի արգելանոց-սրբավայր ստեղծել էր Երվանդ Վերջինը Երվանդակերտի և Անի-Երվանդավանի միջև՝ Ախուրյանի արևմտյան ափին: Ըստ Մովսես Խորենացու, Երվանդը «Տնկե եւ մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն (Արաքսի – Ս.Պ և Լ.Պ.), եւ որմովք ամրացուցանէ, արգելլով ի ներքս այծեմունս երագունս, եւ զեղանց եւ զեղջերուաց ազգ, եւ ցիռս եւ վարագս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որով ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց: Եւ անուանէ զանտառն՝ Ծննդոց»²⁸: Արագավազ ցիռերի առկայությունն արդեն վկայում է անտառին կից արծակ, խոտավետ տարածության գոյության օգտին: Իսկ դա կարող էր լինել նրան հյուսիսից հարող տարածքը՝ Անիի շրջակայքը: Արգելանոց-սրբավայրի անտառի Ծննդոց անունը վկայում է, որ պաշտամունքային տեսանկյունից գործ ունենք Մայր դիցուհուն ձոնված սրբավայրի հետ: Հայտնի է, որ Մայր դիցուհի Անահիտը հովանավորն էր ինչպես բուսական և կենդանական աշխարհի, այնպես էլ մայրության, մանկածնության և, առհասարակ, բոլոր ծնունդների:²⁹

Նման «մայրական» իմաստ ունի նաև Երվանդակերտի երկրորդ անունը՝ Մարմէտ-ը: Անանիա Շիրակացին Մարմէտը կոչում է «ոստան Կամսարականաց» և տեղադրում «յեզր գետոյն, որու Ախուրեանն կոչեն»³⁰: Ըստ Մովսես Խորենացու, Երվանդ արքայի դաստակերտի Երուանդակերտ անունը փոխվել է Արտաշեսի կողմից. «անունեցաւ դաստակերտն Մարմէտ, իբր ի կամաց Արտաշիսի՝ բառնալ զանուն Երուանդայ ի տեղւոջէն»³¹:

²⁸ Խորենացի, Բ, խա:

²⁹ «Հայ ժողովրդի պատմություն», ՀԱՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Եր., 1971, էջ 903, Դ. Вардумян, Дохристианские культы армян, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», 18, Եր., 1991, էջ 107:

³⁰ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը. ուսումնասիրություն, Եր., 1944, էջ 228:

³¹ Խորենացի, Բ, խգ:

Մար-մէտ բաղադրիչներից բաղկացած տեղանվան առաջին բաղադրիչը մայր բառն է (հմմտ. եզ. ուղղ. մայր, հոգմ. ուղղ. մարք), իսկ երկրորդը, ըստ երևույթին, նշանակում է «շեն, բնակատեղի»: Տեղանվան -մէտ բաղադրիչի հիմքում մենք տեսնում ենք հ.-ե. *mei-d(h)- «ամրացնել» նախաձևը: Վերջինիս *mei-t(h)- տարբերակից է ծագումն հայերեն մոյթ «մույթ» բառը, որը արմատակիցն է համարվում թրակերեն midne «գյուղ, շեն» (<հ.-ե. *mei-d(h)-) բառի³²: Ամենայն հավանականությամբ, նույնափսի ծագում ունեն մասնական Արտամետ<Արտամէտ և Արտիմէդ տեղանունների նույնիմաստ -մէտ/-մէդ բաղադրիչները: Սրանցից առաջինը կրած բնակավայրը գտնվում էր Վանա լճի հարավ-արևելյան ափին, իսկ երկրորդը Վաղարշապատ քաղաքի ամենահին անունն է՝ նախորդած նրա Աւան Վարդգէսի//Վարդգէսաւան անվանը³³:

Երվանդակերտ//Մարմետի առթիվ հիշարժան է նրա խորենացիական նկարագրությունը, որին անդրադառնալուց առաջ հիշենք Մ. Աբեղյանի հետևյալ խոսքերը. «Ամահիտ և Աստղիկ սկզբնապես եղել են միևնույն դիցուհու տարբեր կոչումները... Բայց կրոնի զարգացման ընթացքում այդ անուններով պաշտամունքը երկճեղվել է, և Ամահիտ ու Աստղիկ դարձել են տարբեր դիցուհիներ: Մինչ Ամահիտը դառնում է զգաստ դիցուհի, Աստղիկը մնում է իբրև սիրո և հեշտության աստվածուհի»³⁴: Իսկ ահա թե ինչ է գրում պատմահայրը Երվանդակերտի մասին. «Քաղցր է ինձ ասել եւ յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ եւ չքնաղ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց ու հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ բբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր զարտեւանանց խիտ եւ գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձեւ՝ ար-

³² Գ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 61: Թրակերեն բառը կարող էր իր հիմքում ունենալ հ.-ե. *meit(h)- «բնակատեղի» նախաձևը (նույն տեղում, էջ 61, ծան. 45):

³³ Խորենացի, Բ, կէ:

³⁴ Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Եր., 1941, էջ 75:

դարեւ գեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն: Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ գերկերթիսն նշանակէ շրթունս... Արդարեւ բերրի եւ թագաւորական դաստակերտ»³⁵: Այստեղից կարելի է ենթադրել, որ այդպիսին է ընկալվել ոչ միայն Մարմետ//Երվանդակերտը, այլ նաև հին Անիին՝ իր շրջապատը կազմող Մարանց մարզ//մայրերի մարգե-ով, մանավանդ որ, մարգ-ը նախ և առաջ «դաշտ խոտաւետ, ծաղկաւետ» է նշանակում³⁶:

Հասարակության երեք իրավահավասար դասերից բաղկացած լինելու հնդեվրոպական ավանդույթը այնքան խոր արմատներ էր նետել հայ իրականության մեջ, որ պայմանավորել էր անգամ հայկական բնակավայրերի հասարակական կառույցի եռակենտրոն համակարգը: Մեր դյուցազնավեպի առանձին պատումների համաձայն՝ Ծովինարի երկվորյակ որդիները հիմնադրել էին նախ Սասուն բնակավայրը՝ բարիքներ արտադրողների կենտրոնը, ապա Սասնա բերդը՝ զինվորական դասի կենտրոնը, ի վերջո՝ եկեղեցին կամ վանքը՝ հոգևոր դասի կենտրոնը: Ըստ ամենայնի, այս դեպքում մենք գործ ունենք եռյակ բնակավայրերի (իրենց տնտեսական, հոգևոր ու ռազմական բնույթներով) համակարգի հետ: Նույնը կարելի է ասել նաև Անիի և նրա հետ եռյակ կազմած Մաղազբերդ, Երերոյք բնակավայրերի մասին: Սրանցից Անի//Երվանդավանը եղել է Մայր դիցուհու պաշտամունքի կենտրոններից մեկը, իսկ որպես այդպիսին նա համարվելու էր նաև Մայր դիցուհու հովանավորյալ բարիքներ արտադրողների դասի կենտրոնատեղի:

Բնակավայրերի Անի-Մաղազբերդ-Երերոյք եռյակի երկրորդ անդամը Մաղազբերդն էր: Մաղազբերդի միջնադարյան ամրոցը գտնվում է Անիի ավերակներից մոտ 5կմ հարավ, Ախուրյանի արևմտյան ափին, անդնդախոր կիրճի եզրի ժայռին, որը երեք կողմից շրջապատված է Ախուրյանի ջրերով³⁷: Որ միջնադարյան

³⁵ Խորենացի, Բ, խբ:

³⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Եր., 1981, էջ 217:

³⁷ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1976, էջ 377:

այս ամրոցը ունեցել է իր նախորդը, վկայում է նրա Մաղազբերդ անունը: Նրա նախատիպը *Մաղխազաբերդ, *Մաղխազբերդ է: Մաղխազ տերմինը հայտնի է Արշակունյաց դարաշրջանից: Բայց այս տերմինի հնության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նրա հիմքում ընկած բառը կամ համարվում է ասորերենից՝ ասորեստանյան աքաղերենից, կատարված փոխառություն (<malxazu «տեր, իշխան, թագավոր»)»³⁸, կամ ասորերեն (արամեերեն) բառաբարդ է՝ «հսկողություն անող, դիտող, հետևող» իմաստով³⁹: Անկախ այն բանից, թե այս երկու կարծիքներից որն է համապատասխանում իրականությանը, մի բան պարզ է, երկու դեպքում էլ մաղխազ («թագավորական թիկնապահ գնդի հրամանատար») տերմինը նախաարշակունյան և, հավանաբար, նաև նախահելլենիստական ժագում ունի: Եթե ճիշտ են մեր արած դիտողություններն ու դատողությունները, ապա պետք է ընդունել, որ մաղխազ տերմինն իր հիմքում ունեցող Մաղխազաբերդ տեղանունը վկայությունն է այն կրած տարածքում հին բերդի, իսկ նրանում թագավորական թիկնապահ գնդի և նրա հրամանատարի առկայության: Ըստ երևույթին, թիկնապահ գունդը պատկանել է այն նույն Օրոնտես//Երվանդին, որը դիադոքոսների պայքարի ժամանակ անվտանգության նկատառումներով տեղափոխվել էր Այրարատ, կառուցապատել էր և մայրաքաղաք դարձրել Արմավիրը՝ զուգընթացաբար կառուցապատելով որպես ամառանոց-նստավայր Անի//Երվանդավանը և ամրացնելով թագավորական ապաստարան Մաղխազբերդը: Այս դեպքում կասկած չի կարող, որ Անի-Մաղազբերդ-Երերույք եռյակի երկրորդ անդամը՝ Մաղազբերդը, եղել է զինվոր-արքայի նստավայրերից և զինվորական դասի կենտրոնատեղիներից մեկը:

Բնակավայրերի այս նույն եռյակի երրորդ անդամը լինելու էր Ախուրյանի արևելյան ափին՝ Անիպենձա ավանի մոտ գտնված Երերույքը (Երերոյք, Երերուաց գիւղ): Պետք է ենթադրել, որ IV դարում Երերույքի տաճարի նման մեծ ու հոյակապ քրիստոնեական տաճար ունեցած հետագա գյուղը նախորդ դարերում ավելի

³⁸ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, с. 400.

³⁹ Դ. Մելքոնյան, Աղիաբենի պետությունը և Հայաստանը, Եր., 1980, էջ 137:

մեծ բնակավայր էր լինելու և ունենալու էր համապատասխան հեթանոսական սրբավայր: Այս տեսանկյունից ուշադրություն են գրավում Գառնիի հոյակապ հեթանոսական տաճարը և գյուղի մոտակայքում գտնվող հինավուրց գյուղատեղիի Երերոնք անունը⁴⁰: Դրանք մույնպիսի փոխադարձ կապի մեջ էին լինելու միմյանց հետ, ինչպիսի կապի մեջ էին լինելու Երերոյք անունը և Երերույքի քրիստոնեական տաճարի նախորդ հեթանոսական սրբավայրը: Երերոյք և Երերոնք տեղանունների վերջին բաղադրիչները համարժեք են, որովհետև հոգնակի-հավաքականի իմաստ ունեն և նշում են մարդկանց ինչ-ինչ խմբեր: Այսպիսով, բացառված չէ, որ *երեր <*երի-ար տերմինով հնագույն Շիրակի բնակիչները նշել են քրմերի ինչ-որ խավի, որոնց անունով է բնակավայրը կոչվել է Երերոյք: Սա լինելու էր Շիրակի տվյալ շրջանի քրմական դասի կենտրոնատեղին՝ եռյակ կազմելով բարիքներ արտադրողների դասի կենտրոնատեղի Անիի և զինվորական դասի կենտրոնատեղի Մաղազբերդի հետ: Ուշագրավ է այն հանգամանքը ևս, որ եթե Անին և Մաղազբերդը գտնվում էին Ախուրյանի արևմտյան ափին, ապա Երերույքը գտնվում էր նրա արևելյան ափին՝ Անիից և Մաղազբերդից նույն հեռավորության վրա: Իսկ արևելյան ափ//արևելք//արևաձագի վայր//աղոթարան:

Այսպիսով, Անին կենտրոնատեղին է եղել Մայր դիցուհու պաշտամունքի, Երերույքը՝ նրա արեգակնային բնույթով որդու, իսկ Մաղազբերդը՝ նրա ամպրոպային բնույթով որդու պաշտամունքների (հմմտ. Ծովինարն իր նույնաբնույթ որդիներով): Թե այս երեք աստվածությունների պաշտամունքը և նրանց ձոնված պաշտամունքային եռակենտրոն համակարգի ստեղծումն ինչքան կարևոր է եղել երկրում դասային ներդաշնակ համակարգի պահպանման տեսանկյունից, ցույց են տալիս Երվանդ Վերջինի շինարարական ձեռնարկումները: Ըստ երևույթին, Անի-Մաղազբերդ-Երերույք եռակենտրոն-եռադասյա համակարգի օրինակով էր նա կառուցել Երվանդակերտ-Երվանդաշատ-Բագարան նույնաբնույթ համակարգը Արաքսի և Ախուրյանի գետախառնի շրջանում: Սրանցից Երվան-

⁴⁰ Ա. Ասլանյան, Յ. Գրգեարյան, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., 1981, էջ 69:

դակերտը ծառայել է Մայր դիցուհու պաշտամունքի և բարիքներ արտադրողի դասի կենտրոն, Երվանդաշատը՝ ամպրոպային բնության աստվածության պաշտամունքի և զինվորական դասի կենտրոն, իսկ Բագարանը՝ արևային բնության աստվածության պաշտամունքի և քրմական դասի կենտրոն⁴¹:

С. ПЕТРОСЯН, Л. ПЕТРОСЯН

АНИ И ЕРВАНДИДЫ

В древнем Ани в эпоху Ервандидов (Оронтидов) широкое распространение имел культ языческой богоматери Анаит, которая считалась покровительницей хозяйственной деятельности и социальных сословий производителей древних армян. Ее храм в Ани, находившийся на возвышенности “Девичьей крепости”, после принятия христианства был разрушен, а на его месте была построена церковь. Имя Святой Богородицы носил анийский кафедральный собор. И богиня Анаит в Ани имела свою предшественницу. В основе топонима *Ани* лежит и.-е. корень *an-/*Hap- “бабушка” >арм. hwn, hwnj, хетт. *Hannahanna* (<*hanna-hanna) “имя богини” и т. пр. У древних армян Анаит также носила имя *Ани* (по Г.Алишану).

В Ервандидскую эпоху социальная структура древнеармянского общества обнаруживает тесное соотношение с социальным делением общества их индоевропейских предков. Трехсословность последнего дала основу далеким предкам ширакских армян основать такие поселения троицы, какими являлись предшественники средневековых поселений Ани-Ервандаван, Ереруйк, Магазберд. Из них Ани был центром социального сословия производителей, Ереруйк–жрецов, а Магазберд–воинов. Исходя из этой традиции царь Ерванд Последний (222-201 гг. до н.э.) в районе слияния рек Аракс и Ахурян построил

⁴¹ Ս. Պետրոսյան, Գշվ. աշխ., էջ 214:

три поселения: Ервандакерт (центр сословия производителей), Багаран (центр жрецов) и Ервандашат (центр воинов).

S. PETROSYAN, L. PETROSYAN

ANI AND THE ERVANDIDS

The worship of Anahit – the Goddess Mother of ancient Armenians, was widely spread in ancient Ani. Shi personifying fertility at the same time was the patroness of producers' estate. Anahit is believed to have been called *Ani*. On the ground of the above mentioned fact the authors think that it is possible to see Indo-European root **an-/*Han-* "grandmother"> Armenian *huû, huûh* (cf: the Hittite goddess *Hannahanna*<**hanna-hanna*) in the basis of the theonym *Ani* as well as the toponym *Ani*. The Indo-European society had three social estates: the producers, the priests and the soldiers. In ancient Armenia there existed the Indo-European principle of three-estate social division. The latter is reflected in the triplet settlements which existed in the Shirak district: Ani-Ervandavan, Ererouyk, Maghasberd (cf. Ervandakert, Bagaran, Ervandashat).

**ԿՐՈՆՆԵՐԸ ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆ
ՀԻՆ ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

«Մետաքսի ճանապարհի է կոչվել Չինաստանից՝ Առաջավոր Ասիայով մինչև Միջերկրականի ափերը ձգվող առևտրաքարավանային մայրուղին, որը դարեր շարունակ՝ անտիկ ժամանակներից մինչև ուշ միջնադար, կապել է Արևելքը Արևմուտքին: Փոխադրվող հիմնական ապրանքը մետաքսն էր, որի անունով էլ կոչվել է այս առևտրական ուղին, սակայն այն խթանել է ոչ միայն մետաքսի, այլև առհասարակ ապրանքաշրջանառության զարգացմանը Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի երկրների միջև, որով էլ՝ ամենատարբեր մշակույթների փոխներթափանցմանը: Այն կարևոր է եղել մշակույթի տարբեր տեսակների (երգ, պար, երաժշտություն, գեղանկարչություն, ճարտարապետություն), կրոնների (հին կրոններ, կոնֆուցիականություն, հնդուականություն, բուդդայականություն, քրիստոնեություն, մանիքեականություն, նեստորականություն, մահմեդականություն), տեխնոլոգիաների (մետաքսի, վառողի, թղթի արտադրություն) տարածման և փոխներթափանցման գործում¹:

Բազմազան են եղել Մետաքսի ճանապարհի կրոնները՝ հնագույն հավատալիքներից սկսած մինչև համաշխարհային միաստվածային, և յուրաքանչյուրն իր դերն է խաղացել առևտրա-տնտեսական հարաբերություններում: Արևելքից Արևմուտք ձգվող մայրուղին, անցնելով տարբեր երկրների կրոնա-մշակութային միջավայրերով, բնականաբար, այդ միջավայրերի կնիքն էր տանում մի

¹ Մետաքսի ճանապարհի մասին տես Richthofen F., China. Ergebnisse eigener Reisen und darauf gegründeter Studien, Bd. 1-4, Berlin, 1877–1883; Hurth F., China and Roman Orient, Leipzig-Munich-Shanghai-Hongkong, 1885; Colledge M.A.R., The Parthians, London, 1967; Бэр Адольф, История всемирной торговли (пер. с немецк.), М., 1976; Ма Юн, “Шелковый путь” с Востока на Запад,- “Курьер” ЮНЕСКО, Париж, июль, 1984; Мартиросян А., На Великом шелковом пути, Ер., 1998.

երկրից մյուսը, հաղողակից անելով տարբեր դավանաբանական համակարգերը²:

Առևտրային ուղու կրոնական բազմազանության մեջ հնագույններից են եղել մետաքսի հայրենիքի՝ Չինաստանի կրոնները: Հազարամյակների հնություն ունեցող չինական հավատալիքներում պաշտամունքի առարկա էին բնության տարրերը և երևույթները, իսկ իմացաբանությունը մարդուն ուսուցանում էր ներդաշնակություն բնության հետ: Հին հավատալիքների զարգացման արդյունքում աստիճանաբար ձևավորվել է պետական պաշտամունքային համակարգը, որն իր դրսևորումներն է գտել **դաոսականության** և **կոնֆուցիականության** (մ.թ.ա. VI-V դդ.) մեջ: Այս ուսմունքները կազմել են չինական մշակույթի և մտածողության առանցքը, դարերի ընթացքում ուրվագծելով չինացիների ապրելակերպը և հիմնական հոգևոր ուղղությունները³: Առավել հայտնի և հզոր էր Կոնֆուցիոսի բարոյախոսական-իմաստասիրական ուսմունքը, որի վարդապետության հիմնական դրույթը մարդասիրությունն էր, և որում մեծ տեղ էր հատկացվում ծեսերի խստագույն կատարմանը: Եվ եթե դաոսիզմին հատուկ էր որոշ միստիցիզմ, խորհրդապաշտություն, ապա, կոնֆուցիականության նկարագիրը, ընդհա-

² Токарев С. А., Религия в истории народов мира, М., 1964; Кривелев И. А., История религий, М., тт., 1–2, 1975–76; Мифы народов мира (МНМ), т. 1, 2, М., 1980, 1982; Ֆրեզեր Ջ. Ջ., Ոսկե ճյուղը, Եր., 1989; Религиозные верования (отв. ред. В. Н.Басилов, И.Винкельман), М., 1993; Религиозные традиции мира, тт. 1, 2, М., 1996; The Encyclopedia of World Cultures, Berkley, 1994; Encyclopedia of the World's Religions (EWR), ed. by R. C. Zaehner, N. Y., 1998; Վարդունյան Գ., Մարգարյան Ե., Կրոնների պատմություն /ուսումնական ձեռնարկ/. պրակ Ա, Հին կրոններ, Երևան, 2006:

³ Չինական կրոնի մասին տե՛ս Токарев С. А., Религия в истории народов мира, с. 224–243; Васильев Л. С., Культы, религии, традиции в Китае, М., 1970; Рифтин Б. Л., Лао-Цзы, - МНМ, т. 2, с. 38; Նոյնը՝ Китайская мифология, - МНМ, т. 1, с. 652–662; Дао и даосизм в Китае, М., 1982; Graham A. C., Confucianism, - EWR, p. 357-373; Eichhorn W., Taoism, - EWR, p. 374-392; Бодде Д., Мифы Древнего Китая, - Мифология Древнего Мира (МДМ), М., 1997; Яншина Э. М., Формирование и развитие древнекитайской мифологии, М., 1984:

⁴ Տե՛ս Մարգարյան Ե., Հին չինացիների կրոնը և բարոյախոսությունը, - Կրոնների պատմություն, էջ 85–91:

նուր առմամբ, զուսպ էր, մոլեռանդությունից զուրկ, առավելապես ուղղված մարդու կատարելագործմանը⁴:

Այս կրոնները, ազգային լինելով, գրեթե դուրս չեն եկել իրենց ծնունդ տվող երկրի սահմաններից, մինչդեռ մեկ այլ կրոն՝ բուդդայականությունը, Հնդկաստանից Չինաստան է մուտք գործել մ.թ. I-V դդ. ընթացքում՝ իր *հինայա* և *մահայա* ձևերով⁵, և հավատացյալները հաճախ երեք կրոնների ծեսերն էլ կատարում էին: Դրանց հակամարտությունն առավելապես քաղաքական բնույթ էր կրում, և, չնայած դրան, բուդդիզմը Մետաքսի ճանապարհի երկայնքով տարածվեց նաև հարևան այլ երկրներում⁶: Հետագայում, նույն ճանապարհով, բայց արդեն Արևմուտքից Արևելք, Չինաստան են հասել նաև քրիստոնեությունը և իսլամը, որոնց հետևորդների թիվը նույնպես փոքր չէր: Դարեր շարունակ այս բոլոր կրոնները հարատևել են կողք-կողքի⁷:

Չինաստանին հարակից Ծագող արևի երկրի՝ ճապոնիայի կրոնը շինտոյականությունն էր (*շին-տո*)՝ «աստվածների ուղի»), որը, ազգային լինելով, չի տարածվել այլ երկրներում: Մյուս կողմից, ճապոնիայում լայն տարածում է ունեցել (Չինաստանի միջոցով) նաև բուդդայականությունը (ճապոնացիներն այն կոչել են *բուտսու*), և այս երկու կրոնների փոխհարաբերությունը բավական բարդ է եղել դարերի ընթացքում, ի վերջո հանգեցնելով երկուսի մերձեցմանը: Արդեն VIII-IX դդ. դրանք առանձին հանդես չէին գալիս, ինչը ակնհայտ էր նույնիսկ տաճարաշինության մեջ, որտեղ երկու ավանդույթներն էլ տեսանելի են՝ շինտոյական տաճարները կառուցում էին բուդդայականի նմանողությամբ, իսկ բուդդայա-

⁵ Հինայա՝ «փոքր անվակառք» կամ նեղ ուղի և Մահայա՝ «մեծ անվակառք» կամ լայն ուղի՝ բուդդիզմի երկու ուղղություններն են, ձևավորվել են մ.թ. I դարում (Токарев С. А., նշվ. աշխ., էջ 448–450; Мясль Л. Э., Буддийская мифология, - МНМ, т. 1, с. 192–193):

⁶ Տե՛ս Мясль Л. Э., նշվ. աշխ., էջ 194; Robinson R. H., Buddhism: in China and Japan, - EWR, p. 318–341:

⁷ Չինաստանում իսլամի ազդեցության մասին տե՛ս John D. Szostak, The Spread of Islam along the Silk Route, - <http://depts.washington.edu/silkroad/exhibit/religion/islam/islam.html>.

կան տաճարում պատվարժան տեղ ունեին նաև շինտոյական աստվածները⁸: Առևտրային ուղու հարևան երկիր լինելով, ճապոնիան զարգացրել է մետաքսի իր մշակութային ավանդույթները, հատկապես գեղանկարչության և ձեռագործի ձևերով:

Մետաքսի ճանապարհի կարևոր երկրներից էր **Յնդկաստանը**, որովհետև այնտեղից ոչ միայն մետաքս ու, առհասարակ, կերպասեղեն էին արտահանվում, այլև թանկարժեք քարեր, համեմունքներ և զանազան ապրանքներ: Բացի այդ, Յնդկաստանն է այն երկիրը, որտեղ ծագել են ազգային՝ հնդուական և համաշխարհային՝ բուդդայական կրոնները:

Յնդուականությունը աչքի է ընկնում բազմաշերտությամբ⁹: Յնագույն՝ նախարիական և արիական կամ վեդայական շերտերը գալիս են մ.թ.ա. III-II հազ. և ներկայացնում են տեղի դրավիդյան և եկվոր արիական ցեղերի կրոնա-պաշտամունքային համակարգերը, որոնց միախառնման արդյունքում ստեղծվեցին սուրբ գրքերը՝ *Վեդաները* (*վեդա*՝ սանսկրիտ. գիտելիք) և ձևավորվեց գերագույն աստված Ինդրայի կերպարը¹⁰:

Մ.թ.ա. I հազ. արդեն կազմավորվեց բրահմայականությունը՝ գերագույն աստված Բրահմայի գերիշխանությամբ, որն իր հետ բերեց հնդկական հասարակության հիմքը կազմող կաստայական համակարգը, ամրապնդվելով վերնախավի իշխանությունը հաստատող կրոնա-օրենսդրական նորմերով՝ Մանուի օրենքներով, և

⁸ Ճապոնական կրոնի մասին տե՛ս Токарев С. А., նշվ. աշխ., էջ 243–249; Мещеряков А. Н., Японская мифология, - МНМ, т. 2, М., 1982, с. 685–686; Bownas G., Shinto, - EWR, p. 342–356; Мир по японски. Эстетические и этические ценности в японской культуре, СПб, 2000:

⁹ Յնդկական կրոնի մասին տե՛ս Токарев С. А., նշվ. աշխ., էջ 250–275; Эрман В. Г., Индуистская мифология, - МНМ, т. 1, с. 535–543; Basham A. L., Hinduism, - EWR, p. 217–254; Индуизм. Джайнизм. Сикхизм: Словарь /под. общ. ред. М. Ф. Альбедиль, А. М. Дубянского/, М., 1996; Վարդունյան Գ., Յնդկական կրոնները, - Կրոնների պատմություն, էջ 74–84:

¹⁰ Վեդաներից հնագույնը Ռիգվեդան (Յիմների վեդա) էր, որի հիման վրա հետագայում ստեղծվեցին Յաջուրվեդան (Չոհաբերությունների վեդա), Սամավեդան (Քաղվածք վեդայից) և Աթարվավեդան (Անեծքների վեդա), մշակելով հին հնդկական ծիսական և դիցաբանական համակարգը (Ригведа /сост. Т. Я. Елизаренкова/ М., 1984; Топоров В. Н., Ведийская мифология, МНМ, т. 1, с. 220–226; Նույնը, Индра, - МНМ, т. 1, с. 533–535):

աստվածապետական-բռնակալական կարգեր հաստատելով երկրում¹¹: Բրահմայական երկերում՝ *Ուպանիշադներում*, գերիշխում է հոգու վերածնունդի գաղափարը, որի համաձայն վերամարմնավորումը կատարվում է հատուցման՝ *կարմայի* օրենքով, ըստ այնմ, թե մարդը որքանով է կատարել իր կրոնական ու կաստայական պարտականությունները¹²: Այս շրջանում ձևավորվել են կրոնափիլիսոփայական ուղղություններ՝ յոգան, տանտրիզմը, ջայնիզմը¹³, որոնք նպաստեցին հնդուականության վերջնական կազմավորմանը՝ որպես Չնդկաստանի պետական պաշտոնական կրոն:

Չինդուիզմը հարուստ է վիպերգերով, որոնցից «Մահաբհարաթան» և «Ռամայանան»¹⁴ համաշխարհային էպիկական ժառանգության արժեքավոր նմուշներ են: Չինդուիզմը հարուստ էր նաև աստվածներով և ուղղություններով, որոնցից վիշնուիզմի՝ ստեղծարար աստված Վիշնուի հետևորդները և շիվայիզմի՝ արգասաբեր, բայց նաև կործանարար աստված Շիվայի հետևորդները բավականին մեծաքանակ էին¹⁵:

¹¹ Կաստաները 4-ն էին՝ անձեռնմխելի բրահմիններ՝ հոգևոր և աշխարհիկ ավատատերեր, կշատրիններ՝ ռազմական վերնախավ և զինվորներ, վայշաներ՝ երկրագործներ, խաշնարածներ, արհեստավորներ, շուղրաներ՝ կիսաստրուկ-կիսաճորտեր (տե՛ս Законы Ману, М., 1960; Ману, - МНМ, т. 2, с. 106–107):

¹² Տե՛ս Упанишады (пер. М. Сыркина), М., 1967; Топоров В. Н., Брахма, - МНМ, т. 1, с. 185–186.

¹³ Յոգան (սանսկր. կապ, միացում) միտված է մարդու հոգու ազատագրման և կատարելության հասնելու գաղափարին, որին ուղղված էին նաև տանտրիզմը (հիմք, հանգույց) և ջայնիզմը (տե՛ս Волкова О. Ф., Джайнская мифология, МНМ, - т. 1, с. 369–372; Basham A. L., Jainism, - EWR, p. 255–264):

¹⁴ «Ասք Մեծ Բհարաթայի մասին» պոեմը Չնդկաստանի, ինչպես և Ինդոնեզիայի, Կամպուչիայի, Շրի-Լանկայի ժողովուրդների էպոսն է, իսկ «Ասք Ռամայի մասին» վիպերգը հին հնդկական էպոսն է, որը հայտնի է եղել նաև Տիբեթում, Չինաստանում, Չարավ-Արևելյան Ասիայի մյուս երկրներում (տե՛ս Гринцер П. А., Махабхарата и Рамайана, М., 1970; Гюлյүн, Древнеиндийский эпос, М., 1971; Гюлյүн, Рама, - МНМ, т. 2, с. 366–367; Эрман В. Г., Темкин Э. Н., Три великих эпических сказания Древней Индии, М., 1978):

¹⁵ Վիշնուն անձնավորում է հավետ կենարար, ստեղծարար բնությունը, նա արևային աստված է, որը ցրում է գիշերվա ընթացքում երկիրը պաշարած խավարը: Շիվան նույնպես արևային աստված է, որն անձնավորում է բնության արգասավոր, բայց և պատժող, կործանարար ուժերը (Серебряный С. Д., Вишну, - МНМ, т. 1, с. 238–239; Гринцер П. А., Шива, - МНМ, т. 2, с. 642–644):

Հինդուական կրոնի ևս մի հզոր ուղղություն՝ *սիքհիզմը*, որը գոլրու (հոգևոր ուսուցիչ) Նանակի ուսմունքն էր, երևան եկավ ավելի ուշ՝ XV դ., մուսուլմանների դեմ ազգային պայքարում: Սիք-հերին հաջողվեց իրենց շուրջը հավաքել իսլամի հակառակորդներին և հզոր ռազմա-կրոնական ուժ դառնալ, բայց կասեցնել նոր կրոնի հետագա տարածումը երկրում՝ նրանք ի գորու չեղան¹⁶:

Հինդուիզմը, ընդհանուր առմամբ, կայուն ու կենսունակ կրոն է, քանի որ այն, նախ՝ ազգային է, և երկրորդ՝ նրա մեջ մխրճված են իրեն ծնող երկրին շատ հատուկ ու մինչ օրս գործուն կաստայա-կան համակարգի արմատները:

Հնդկական հողի վրա է սկիզբ առել նաև Արևելյան Ասիայի մի-աստվածային կրոնը՝ բուդդայականությունը (մ.թ.ա. VI դ.), որը լայնորեն տարածվել է Հնդկաստանում և հարևան երկրներում: Հնում այն Մետաքսի ճանապարհի գերիշխող կրոնն էր, քանզի բուդդայական վաճառականների ձեռքում էր գտնվում առևտրային մայրուղու ողջ տնտեսությունը: Բուդդայականությունը երեք հա-մաշխարհային կրոններից ամենահինն է և նրա ծագման մանրա-մասները մշուշոտ են: Սակայն հայտնի է, որ այս ուսմունքի հիմնա-դիրը արքայազն Սուբհոդան Գաուտամեն է եղել՝ Շաքեյ ցեղից, որը յոթնամյա ճգնակեցությունից հետո դարձել էր *բուդդա* «պայ-ծառացած, լուսավորյալ», քանզի նրան հայտնի են դարձել «չորս ազնիվ ճշմարտությունները», որոնք փրկում են մարդուն, հասցնե-լով նրան գերագույն նպատակին¹⁷: Գաուտամեի ուսմունքը Հնդ-կաստանում ձևավորվեց այն ժամանակ, երբ սկսեց սասանվել հա-վատը բրահմինների իշխանության և կաստայական համակարգի նկատմամբ: Շատ թափառական հոգևորականներ քարոզում էին նոր ուսմունքը, որի հիմնական գաղափարը սերն ու գթասրտու-թյունն էր բոլոր արարածների հանդեպ, գերագույն նպատակը՝ *նիրվանայի* (երանալետ վիճակ) հասնելը:

Բուդդայականությունը, որ սկզբում համարվում էր բրահմայա-կանության աղանդներից մեկը, հետագայում ստանում է ինքնու-

¹⁶ Ст'и Индуизм. Джайнизм. Сикхизм: Словарь, М., 1996; Nesbitt E. M., Sikhism,- EWR, p. 408–437:

¹⁷ Мялль Л. Э., Будда,- МНМ, т. 1, с. 189–190:

րույն ուսմունքի, ապա նաև՝ կրոնի նշանակություն, աստվածացնելով Բուդդա Շաքեյ Մունիին: Պետական կրոնի կարգավիճակ այն ստացել է մ.թ.ա. IV դ., Մաուրենների արքայատոհմի Աշոկա կայսեր օրոք: Կրոնի հիմնական գաղափարները փրկությունն ու ազատությունն են, քանզի կեցությունը տառապանք է, մարդու հոգեկան վիճակների՝ *դհարմաների* անվերջ փոփոխություն:

Ժամանակի ընթացքում ձևավորված բուդդայական ուղղություններից *հինայան* համարում է, որը փրկության հնարավորություն ունեն միայն նրանք, ովքեր լիովին տրվում են ուսմունքին ծառայելուն, այսինքն՝ հոգևորականները: Մյուս ուղղությունը՝ *մահայան* համարում է, որ նիրվանային հասնելու ուղին պետք է ավելի լայն ու դյուրին լինի, որպեսզի յուրաքանչյուր ոք հնարավորություն ունենա փրկվելու¹⁸:

Բուդդայականությունը տարածված էր ներկայիս Աֆղանստանի տարածքով մեկ, իսկ բուդդայական վաճառականները, առևտրով զբաղվելուց զատ, նաև հովանավորում էին իրենց տաճարները, նպաստելով այս կրոնի տարածմանը Մետաքսի ճանապարհի երկայնքով մեկ:

Բուդդիզմի տարածմանը Չինաստանում մեծապես նպաստել են միջինասիական, հատկապես՝ սոգդական, պարթևական միսսիոներ-քարոզիչներն ու աստվածաբանները: Այս կրոնի տարածումը, որ առավել աշխուժացավ մ.թ. II-III դդ., կապված էր նաև Արևելքում Քուշանական կայսրության քաղաքականության հետ, որտեղ այն պետականորեն էր ընդունված:

Բուդդիզմը ժամանակի ընթացքում տարածվել է Ինդոնեզիայում, Չինաստանում, ճապոնիայում, Կորեայում, Մոնղոլիայում, Միջին Ասիայում և այլուր, իսկ *մահայա* ուղղությունից հետագայում կազմավորվել է *լամայականությունը*, որն առավելապես լայն տարածում է գտել Տիբեթում¹⁹: Առևտրական քարավանների

¹⁸ Բուդդայականության և նրա ուղղությունների մասին տե՛ս Токарев С. А., նշվ. աշխ., էջ 435–458; Мялль Л. Э., Буддийская мифология, - МНМ, т. 1, с. 190–194; Horner I. B., Buddhism: The Theravada, - EWR, p. 263–292; Conze E., Buddhism: The Mahayana, - EWR, p. 293–317:

¹⁹ Տե՛ս Жуковская Н. Л., Ламаизм и ранние формы религии, М., 1977. Նույնի,

հետ բուդդայական հոգևորականները Հնդկաստանից գնում էին Միջին Ասիա և Չինաստան, տարածելով իրենց կրոնը: IV–VII դդ. բուդդայականությունը լայնորեն տարածվում էր Չինաստանում, հնդկական քարոզիչները գնում էին Չինաստան, իսկ չինացի հոգևորականները՝ Հնդկաստան: Այս կանոնավոր ճամփորդությունները շարունակվում էին մինչև XI դ., ինչի արդյունքում Հեռավոր Արևելքի երկրներում բուդդիզմը գտավ իր երկրորդ հայրենիքը, դառնալով չինական ավանդական կրոնական սինկրետիզմի բաղկացուցիչներից մեկը²⁰:

Յոթնագետքի հովտում բուդդիզմը բավական լայնորեն տարածված է եղել: Այդ են վկայում հատկապես բուդդայական տաճարների մնացորդները: Պատահական գտածոների մեջ հաճախ են հանդիպում ներմուծված հնդկական իրեր՝ Բուդդայի և բոդիսատների ոսկե և ոսկեջրած ու թանկարժեք քարերով նախշազարդած արծաթե արձանիկներ, բրոնզե սկավառակներ ու վահանակներ, քարի վրա բուդդայական պատկերազրեր: Սակայն արդեն VII դ. սկիզբ առած իսլամական հարձակումների արդյունքում և, մանավանդ, հետագայում՝ մոնղոլական նվաճումների ժամանականներից հետո, այս տարածաշրջանում բուդդիզմն իր դիրքերը վերջնականապես զիջեց իսլամին, քանի որ բուդդայական և մահմեդական վաճառականների մրցակցության մեջ հաղթեցին վերջինները²¹:

Մետաքսի ճանապարհի երկայնքով տարածված էին այլ կրոններ ևս, մասնավորապես՝ *զրադաշտականությունը, մանիքեականությունը, հուդայականությունը*²² (պետականորեն ընդունվեց Խագարների երկրում՝ VIII–X դդ.):

Ламаистская мифология,- МНМ, т. 2, с. 36:

²⁰ St' u Буддизм: Словарь, М., 1992; Robinson R. H., Buddhism: in China and Japan,- EWR, p. 318–341.

²¹ Jason Neelis, Buddhism and Trade; http://www.jcu.edu/faculty/nietupski/rl251/projects/n_silk_road/religion/islam.htm; Мартиросян А., նշվ. աշխ., էջ 64–69:

²² Токарев С. А., նշվ. աշխ., էջ 334–367; Аверинцев С. С., Мейлах М. Б., Иудаистическая мифология,- МНМ, т. 1, с. 581–591; Zwi Werblowsky R. J., Judaism, or the Religion of Israel, p. 3–39; http://www.jcu.edu/faculty/nietupski/rl251/projects/n_silk_road/religion/judaism.htm.

Սետաքսի ճանապարհի երկայնքով տարածված կրոններից էր նաև հին իրանական կրոնը՝ *զրադաշտականությունը*, իր տարբեր փուլերով ու ճյուղերով՝ մագդեականությունից մինչև միհրականություն: Զրադաշտական կրոնը կամ զորոաստրիզմը ծագել է մ.թ.ա. VII-VI դդ. Իրանում: Կրոնի հիմնադիրը իրանական մարգարե Զրադաշտն է (Զրդոշտ, Զարատուշտրա), որը սուրբ գրքի՝ *Ավեստայի* հնագույն հիմների՝ *աթերի* հեղինակն է: Այն վերամաստավորված ներառել է հին մագդեական կրոնի որոշ գաղափարներ ու ծեսեր, առանձին աստվածներին փառաբանող երգեր ու հիմներ²³:

Այս կրոնին հատուկ է աշխարհի երկու սկիզբների երկվական (դուալիստական) գաղափարը՝ անձնավորված Բարի ու ստեղծարար Ահուրա-մազդայի (Սպենտա Արմաիտա) և չար ու կործանարար Ահրիմանի (Անգրա Մանյու) կերպարներում: Բարու և չարի պայքարի գաղափարը հատուկ է աշխարհի բոլոր կրոններին, սակայն ոչ մի կրոնական համակարգում գոյաբանական այս սկզբունքն այնքան վառ չի արտահայտված, որքան զրադաշտականության մեջ: Ըստ Զրադաշտի՝ բոլոր մարդիկ վերջում ենթարկվելու են փորձության՝ կրակով, որի ժամանակ պարզվելու է, թե ով է ընտրել բարին, ով՝ չարը:

Զրադաշտականության ծիսակարգի հիմքում ընկած է աշխարհի չորս տարրերի՝ ջրի, կրակի, հողի և օդի պաշտամունքը: Ահուրա-Մազդայի արարչություններն են աստվածային յոթ զորությունները՝ Ամահրասպանդները (Ամեշա Սպանտա), բնաշխարհի առանձին մասերի արարիչներն ու հովանավորները, ինչպես և աստվածային էակները՝ Յազատները, որոնցից են նաև հին դիցաբանի աստվածներ Արդվի-Սուրան և Միթրան²⁴:

²³ Ավեստա անվանումը ծագումնաբանորեն կապված է Վեդա անվանմանը և նույնպես նշանակում է «գիտելիք»: Ավեստայի 21 գրքերից պահպանվել են 4-ը, որոնցից միայն Վենդիդատը (հմայական բանաձևեր չար ոգիների դեմ)՝ ամբողջովին, մյուսները՝ մասամբ (Брагинский И. С., Иранская мифология,- МНМ, т. 1, с. 560–565):

²⁴ Токарев С. А., *Узл. աշխ.*, էջ 321–333; Бонгардт-Левин Г. М., Грантовский Э. А., *От Скифии до Индии*, М., 1974; Лелеков Л. А., Заратустра,- МНМ, т. 1, с. 460–461; Брагинский И. С., Лелеков Л. А., *Иранская мифология,- Мифология Древнего мира*

Զրադաշտականացնելու փորձեր են արվել Սասանյան Իրանի գերիշխանության տակ գտնվող բոլոր ժողովուրդներին, հատկապես հայերին ու ասորիներին, սակայն ոչ միշտ արդյունավետ: Իսկ կրոնի ներսում ձևավորվել են նաև աղանդներ, որոնցից է *զրվա-նականությունը*, որը Ահուրամազդային ու Ահրիմանին համարում է նախնական աստվածային սկզբի՝ Զրվանի ծնունդներ: Զրադաշտականության այս տարբերակն է ներկայացված վաղ քրիստոնյա հեղինակների, մասնավորապես Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում²⁵:

Զրադաշտական հուշարձաններ են պահպանվել Միջին Ասիայում, Սոգդում, Սիրդարյայի քաղաքներում և Յոթնագետքի հովտում: Զրադաշտականությանն առնչվող շատ պաշտամունքներ միջինասիական քաղաքներում շարունակեցին գոյատևել նույնիսկ իսլամի հայտնվելուց հետո էլ: Այսպես, XII դ. Օթրարի տներում հայտնաբերվել են գետնի մեջ սարքած օջախ-գոհասեղաններ: Դրանք զրադաշտական կրոնի մնացուկներն էին, որոնք շարունակում էին տաքացնել քաղաքացիների տները, նույնիսկ նրանց, ովքեր ընդունել էին իսլամ և անցել արաբական գրին:

Իրանում, որտեղ այս կրոնը ծագել և զարգացում է ապրել, հետագայում իր տեղը զիջել է իսլամին, սակայն երկրի Քերման նահանգում և Ջնդկաստանի Բոմբեյ քաղաքում մինչև օրս էլ պահպանվել են զրադաշտական համայնքներ:

Մեկ այլ հին կրոն՝ *միհրականությունը* (*միթրայիզմ*), տարածված է եղել Չայաստանում, Վիրքում, բուն Աղվանքում, Փոքր Ասիայի երկրներում, Իրանում, Ջնդկաստանում: Չայաստանում Միհրի պաշտամունքը տարածված էր հնագույն ժամանակներից՝ արդեն մ.թ.ա. II հազ. կեսերից, վկայված լինելով Չայկական լեռնաշխարհի հարավում գտնվող Միտաննի երկրում: Միհրը պաշտվել է որպես հուր երկնայինի՝ Արևի ու լուսի, և հուր երկրայինի՝ կրակի ու ջերմության աստված, կրակարանի ու ընտանեկան օջախի պա-

(МДМ), М., 1997; Дрезден М., Мифология Древнего Ирана,- МДМ; Zaehner R. C., Zoroastrianism,- EWR, p. 200–216.

²⁵ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1912:

հապան, ինչպես նաև արդարության ու դաշինքի հովանավոր²⁶:

Հնդկական Վեդաներում Միթրան ցերեկվա լույսն է և գիշերվա խավարի տիրակալ Վարունայի մշտական ուղեկիցը, սակայն արդեն վեդայական շրջանում նրանց երկուսի պաշտամունքն էլ խամրում է, տեղը զիջելով կայծակ-որոտի խորհրդանիշ Ինդրային և հուրը խորհրդանշող Ագնին: Իրանական Միթրան, որը պաշտվել է որպես արևային աստված և բարեկամության ու դաշինքի հովանավոր, Ավեստայի հին տեքստերում չի հիշատակվում և միայն մ.թ.ա. V դ. է հայտարարվում պաշտոնական կրոն²⁷:

Միթրայականության տարածման գործում մեծ դեր են խաղացել Մետաքսի ճանապարհով Արևելքից դեպի Արևմուտք շարժվող վաճառականները: Այն հատկապես մեծ ժողովրդականություն էր վայելում Հռոմեական կայսրությունում I-III դդ.: Քրիստոնեության մուտքից հետո Միթրայի պաշտամունքն աստիճանաբար մարել է, զիջելով Աստծո Միածին Որդու՝ Օծյալ Փրկչի պաշտամունքին:

Մետաքսի ճանապարհով տարածվում էին նաև կրոնական գաղափարներ, տարբեր միսսիոներներ իրենց դավանանքները տարածում էին անդրծովյան երկրներ: *Քրիստոնեությունն* իր փրկչական *մեսիայի* գալստյան, ահեղ դատաստանի և երկնային թագավորության գաղափարներով արագորեն տարածվեց Հին Աշխարհի շատ երկրներում: Ուսմունքի հիմնադիրը Աստծո Որդին էր: Առաջին քրիստոնյա համայնքները ձևավորվեցին Փոքր Ասիայում և Պաղեստինում I-III դդ. ընթացքում, I դ. հիմնադրվեց Հայ Առաքելական եկեղեցին, իսկ IV դ. սկզբներին քրիստոնեությունը պետականորեն առաջինը՝ 301թ. ընդունվեց Հայաստանում, այնուհետև՝

²⁶ Միհրի մասին տե՛ս Арутюнян С. Б., Михр,- МНМ, т. 2, с. 160; Вардумян Г. Д., Дохристианские культы армян,- Армянская этнография и фольклор, т. 18, с. 116–119; Վարդումյան Գ., Հին հայոց կրոնը և դիցաբանությունը,- Կրոնների պատմություն, էջ 55–56; Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, 452–477; Արծրունի Գ., Դիցարան հայոց /հանրագիտարանային բառարան/, Եր., 2003, էջ 150–152:

²⁷ Токарев С. А., Религия в истории народов мира, с. 332; Топоров В. Н., Митра,- МНМ, т. 2, с. 154–157; Դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 157–158; Юланси Дейвид, Загадки митраизма (Ulansey David, The Mythraic Mysteries),- <http://ancientrome.ru/publik/ulansey/ulan01.htm>

Հռոմում, հետագայում դառնալով համաշխարհային ամենատարածված կրոնը²⁸:

Մետաքսի ճանապարհին դեպի արևելք ուղղությամբ տարածվող քրիստոնեությունը հանդես էր գալիս իր տարբեր ուղղություններով: Դեռևս V դ. առաջին կեսին Բյուզանդիայում Արևելյան Հռոմեական կայսրությունում, ձևավորվեց **Նեստորականությունը**՝ Նեստոր անունով հոգևորականի «հերետիկոսյան» աղանդը²⁹:

Հնագիտական և ազգագրական տվյալները, միջնադարյան աղբյուրներով հանդերձ, վկայում են քրիստոնեության տարածման մասին Մետաքսի ճանապարհի արևելյան հատվածում նույնպես: XIII-XIV դդ. քրիստոնեության նոր ալիք հասավ Արևելք՝ կաթոլիկ միսիոներների գործունեության շնորհիվ, որոնք, օգտվելով մոնղոլ կառավարիչների հանդուրժողականությունից, փորձում էին նոր կրոնը տարածել Ասիայի արևելքում³⁰: Հռոմի պապի հանձնարարականով ֆրանցիսկյան հոգևորական Ջովաննի Սոնտեկորվինոն 1290 թ. խանբալիկում (Զինաստանի մայրաքաղաքը մոնղոլների օրոք) հիմնադրեց մշտական ներկայացուցչություն, որը գործեց մի քանի տասնյակ տարի: Սակայն մոնղոլ-չինգիզականների պետության անկումը XIV դ. կեսերին հանգեցրեց քրիստոնեության մուտքի ավարտին Ասիայում: Փաստորեն, քրիստոնեության քարոզչության արդյունքները շատ համեստ եղան Արևելքում³¹: Փոքրաթիվ համայնքներ մնացին միայն Մերձավոր Արևելքի երկրներում³²:

²⁸ Виппер Р. Ю., Рим и раннее христианство, М., 1954; Ковалев С. И., Основные вопросы происхождения христианства, М.-Л., 1964; Davies J. G., Christianity: Early Church, - EWR, p. 40-76; Католицизм /Словарь атеиста/, М., 1991: Քրիստոնեության մասին Մետաքսի ճանապարհին տե՛ս http://www.jcu.edu/faculty /nietupski/rl251/projects/n_silk_road/religion/christianity.htm:

²⁹ Նեստորի և նրա ուսմունքի մասին տե՛ս Davies J. G., Christianity: Early Church, - EWR, p. 60-63; Ярхо В. Н., Нестор, - МНМ, т. 2, с. 213; http://en.wikipedia.org/wiki/Silk_Road;

³⁰ Мартиросян А., На Великом шелковом пути, էջ 102:

³¹ Քրիստոնեության վերաբերյալ Մետաքսի ճանապարհին տե՛ս <http://ru.wikipedia.org/wiki/>:

³² Мартиросян А., նշվ. աշխ., էջ 103:

Մանիքեականությունը, որը ծագել է III դ. Իրանում և ուղղված էր Սասանյան տերության դեմ, շատ արագ մեծաքանակ հետևորդներ էր գտել Հռոմից և նրա ծայրագավառներից մինչև Չինաստան, Հնդկաստան, ներառյալ Միջին Ասիան, Մերձավոր Արևելքը, ներթափանցելով նաև Հայաստան և Վրաստան: Եզնիկ Կողբացին «Եղծ աղանդոց»-ում մերժում է այս ուսմունքը, այն համարելով երկվական (դուալիստական. ինքն ընդունում էր նորալատոնականության մոնիստական ուսմունքը): Հետագայում Մանիի ուսմունքը զգալի ազդեցություն է թողել բողոքական շարժումների վրա:

Ըստ Մանիի, իր ուսմունքը պետք է փոխարիներ աշխարհի մյուս բոլոր կրոններին, քանի որ ներառում էր քրիստոնեության, զրադաշտականության և բուդդայականության տարրեր: Քրիստոնեությունից մանիքեականությունը վերցրել էր մեսիայի փրկչական գաղափարը, իսկ զրադաշտականությունից՝ երկվական չարի ու բարու, լույսի ու խավարի պայքարի գաղափարը, բուդդայականությունից՝ ճգնակեցության, մսակերությունից հրաժարվելու, կենդանիներ չսպանելու գաղափարները³³:

Մանիքեական գաղափարների տարածման գործում զգալի դեր խաղացին սոգդերը: VIII դ. մանիքեականների գերագույն առաջնորդը նստավայր ուներ Սամարղանդում: Միջին Ասիայում մանիքեականությունը բուդդիզմին զուգահեռ երկար ժամանակ գոյատևում էր: Մանիքեականության հետևորդներ կային նաև Յոթնագետքի հովտում, հատկապես՝ նստակյաց բնակչության մեջ: Հայտնի է, որ մանիքեական մենաստաններ են եղել Յոթնագետքի հովտի այլ քաղաքներում նույնպես:

Սակայն ավելի ու ավելի տարածվող իսլամն աստիճանաբար դուրս էր մղելու թե՛ զրադաշտականությունը, թե՛ բուդդայականությունը, և թե՛ մանիքեականությունը: Նոր կրոնը հաստատվեց շատ երկրներում Մետաքսի ճանապարհի երկայնքով մեկ:

Մետաքսի ճանապարհը և Հայաստանը. Մետաքսի ճանապարհի հարավային ուղին Առաջավոր Ասիայում անցնում էր Ան-

³³ Մանիքեականության մասին տե՛ս Топоров В. Н., Мани.- МНМ, т. 2, с. 103–105;
<http://depts.washington.edu/silkroad/exhibit/religion/manichaeism/manichaeism.html>:

տիոք – Ձևա – Խառան (Եդեսայից արևելք) – Մծբին – Ասսուր – Արբելա – Բեհիսթուն – Էկբատան – Ռագա (Ռեյ) – Յեկատոմպիլ – Մերվ – Բակտրա (Բալք) – Մարաքանդ (Սամարղանդ) – Կաշգար – դեպի Չինաստանի խորքերը³⁴:

Համաշխարհային առևտրի այս ուղիների ու կենտրոնների յուրացումը Տիգրան Մեծի նվաճումների նպատակներից մեկն էր: Նվաճելով Էկբատանը նա, Պլուտարքոսի վկայմամբ, հպատակեցրեց նաև Մծբինը, Եդեսիան, Ձևան, Անտիոքը դարձրեց իր նստավայրը և այնտեղ մեծ թվով հայեր բնակեցրեց, քշելով այդ տարածքներից քոչվոր ցեղերին (արաբներ)³⁵:

Հետագայում Տիգրանը Հռոմին զիջեց Միջագետքը, պահպանելով միայն Հայկական Միջագետքը (որն այնուհետ նվաճվեց Պարթևստանի կողմից): Այնուհանդերձ, առևտրային ուղիներն անցնում էին Հայաստանի միջով: Էկբատանից հյուսիս-արևմուտք գնացող ճյուղն անցնում էր Արտաշատով, կտրելով Երասխը (Արաքս)՝ նաև Ջուղայով: Արտաշատից ու Կարինով ճանապարհներ էին գնում պոնտական ափերով դեպի արևմուտք և հյուսիս: Արտաշատը՝ դեռ Լուկուլլոսի արշավանքի ժամանակ (մ.թ.ա. 69–68 թթ.), մեծ ու հարուստ քաղաքի համբավ ուներ և Պլուտարքոսի կողմից հիշատակվել է իբրև «Հայաստանի Կարթագեն»³⁶:

Ենթադրվում է, որ հռոմեացիները մետաքսի, ինչպես նաև մարգարիտի ու մյուս թանկարժեք քարերի մասին իմացան այն ժամանակ, երբ Պոմպեոսը հարձակվեց Փոքր Ասիայի վրա³⁷:

Տիգրանի պետական և քաղաքակրթական գործունեության ժամանակ³⁸, երբ Տիգրանակերտը դարձավ Հայոց տերության մայրաքաղաքը, այստեղից դեպի Արտաշատ ճանապարհը կոչվեց *Արքայական ճանապարհ*, որն էլ ընդգրկվեց Հայաստանով անցնող առևտրական ուղիների համակարգի մեջ:

³⁴ Мартиросян А., На Великом шелковом пути, тз 4–5:

³⁵ Մանանդյան Հ., Տիգրան Բ-ը և Հռոմը, Եր., 1972, էջ 66–70:

³⁶ Манандян Я., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ер., 1954, с. 53.

³⁷ Риттер К., История землеведения и открытий по этому предмету, СПб, 1854, с. 80.

³⁸ Դանիելյան Է. Լ., Տիգրան Մեծի քաղաքակրթական գործունեության ռազմավարությունը, ՊԲՀ, 2006, N 2, էջ 3–12:

Առաջին գրավոր հիշատակությունը Հայաստանում մետաքսի մասին պատկանում է Մովսես Խորենացուն: Արտաշես արքայի հուղարկավորման ծեսը նկարագրելիս (մահ. մ.թ.ա. 20 թ.) Պատմահայրը հիշատակում է, որ նրա «դագաղքն էին... ոսկեղէնք, գահոյքն եւ անկողինք բեհեզեայ. եւ պատմուճամն, որ զմարմնովն՝ ոսկեթել»³⁹:

Հայոց Աբգար թագավորի հետ կապված դրվագում Մովսես Խորենացին հիշատակում է Սբ. Թադեոսի կողմից մկրտված մետաքսագործի մասին՝ «ոմն մետաքսագործ մկրտեալ, եւ անուն կոչեցեալ Ադդէ»⁴⁰: Պատմահոր պատմածներից ակնհայտ է, որ արքայի և ազնվականների գլխի հարդարանքի և արդուզարդի շատ մասեր մետաքսից էին:

Զիրավի ճակատամարտի ժամանակ, ինչպես նկարագրում է Մովսես Խորենացին, պարսկական զորքի դեմ կռվող Հայոց զորքին օգնության եկած հռոմեական զինվորների հագուստին մետաքսե կրծքանշաններ կային, վիշապի պատկերով: Հռոմեական զինվորները պարթևներից էին փոխառել մետաքսե կրծքանշաններ կրելը, իսկ վերջիններս նման կրծքանշաններ կրում էին դեռևս մ.թ.ա. II դ.: Հռոմեացիները առաջին անգամ մետաքս տեսել էին պարթևա-հռոմեական ընդհարումների ժամանակ, իսկ հրեշա-վիշապակերպ պատկերները որոշակի հոգեբանական ազդեցություն էին գործում հակառակորդի վրա⁴¹:

Քրիստոնեության տարածման վերաբերյալ Արևելքում, մասնավորապես Միջին Ասիայում՝ Ամուդարյա գետի հովտում, առավել վաղ տեղեկություններ են պահպանվել 196 թ. ասորական մի փաստաթղթում: Դեռևս Վաղարշ Ա-ից սկսած պարթևական տիրակալները, հետո էլ՝ Սասանյանները, խթանում էին ոչ-հունական տարրերի՝ քրիստոնյաների գործունեությանը Արևելքում: Այսպես,

³⁹ Մովսես Խորենացի, Բ, 60: Հմ. Մարտիրոսյանը ենթադրել է, որ «բեհեզ» կոչված նուրբ գործվածքը, ամենայն հավանականությամբ՝ մետաքսն է: Սակայն Ստ. Մալխասյանցի բառարանում «բեհեզը» վուշի բարակ թելն է կամ դրանից գործված նուրբ կտորը (Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, եր., 1944, Ա-Ե):

⁴⁰ Մովսես Խորենացի, Բ, 33:

⁴¹ St'e u Martirosyan A., На Великом шелковом пути, էջ 31:

նեստորականները, հալածանքների ենթարկվելով Բյուզանդիայում, հովանավորություն գտան Սասանյան Իրանում: Միջագետքում քրիստոնեությունը գերիշխում էր մինչև Սասանյանների անկումը:

Սասանյանները, որպեսզի իրենց ազդեցությունը պահպանեին Արևելքում, խրախուսում էին քրիստոնյա քարոզիչների գործունեությունը (այս քաղաքականության հիմքում ընկած էր Հռոմի՝ որպես ստրկատիրության պատվարի հանդեպ ատելությունը): Առևտրական քարավանների կազմում ճամփորդելով դեպի արևելյան երկրներ, քրիստոնյա հոգևորականները ապրանքի հետ միասին վերցնում էին հոգևոր գրականություն և քարոզում իրենց ուսմունքը: Տիգրանի ժողովին տեղի ունեցած քննարկումներից հետո, ըստ Սեբեոսի՝ խոսքովը հրաման է արձակում. «Եթե ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»: Հայ եկեղեցին հակադրվում էր բյուզանդական եկեղեցու դավանանքին, ուստի խոսքովը հանդես եկավ ի պաշտպանություն Հայ եկեղեցու⁴²:

Հիշատակություններ կան V–VI դդ. քրիստոնյաների քարոզչական աշխատանքի մասին Միջին Ասիայի բնակչության միջավայրում⁴³:

Երբ IV–V դդ. Հարավային ուղին կորցրեց իր գերիշխող դիրքը Առաջավոր Ասիայում, կարևոր դեր ստանձնեց նոր մայրուղին, որն անցնում էր Էկբատանից Արտաշատ, այնտեղից էլ Կոստանդնուպոլիս: Պեյտինգերյան քարտեզում (IV դ.) զգացվում է այս փոփոխությունը. նրանում արտացոլված են Էկբատանից Հայաստան, այնտեղից դեպի արևմուտք տանող ուղիները: Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատից այն ճյուղավորվում էր դեպի երկրի տարբեր մասերում գտնվող մյուս քաղաքները:

Զինական աղբյուրներում հիշատակվում է Արևմուտքից, Իրանի միջով Զինաստան հասած քրիստոնյա քարոզիչների մասին,

⁴² Դանիելյան Է. Լ., Հայ եկեղեցու նկատմամբ խոսքով վարած քաղաքականությունը. ՊԲՀ, 1981, N 4, էջ 195–200:

⁴³ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8. Ասորական աղբյուրներ, 1, Եր., 1976, 314–317:

որոնք հիմնականում ասորի նեստորականներ էին: Արշակ Ալպոյա-
ճյանը, վկայակոչելով Պոլ Պելիոյին, ենթադրում է, որ նեստորա-
կան-ասորիների հետ միասին հայերը վաղուց ի վեր բնակվում էին
Քաջգարի շրջանում⁴⁴:

Հետազոտողները հաստատում են նաև, որ VII–VIII դդ. Իսիկ-
Կուլ լճի ափին հայ քարոզիչները կառուցել են Սբ. Մատթեոս եկե-
ղեցին, որի մասին վկայում է նաև «Կատալանյան քարտեզը», հի-
շատակելով «հայ եղբայրների» կառուցած վանքի մասին Իսիկ-
Կուլի ափին⁴⁵:

Սեբեոս պատմիչն էլ է հաստատում, որ հայկական գաղթա-
վայր կար Վրկանից երկրում⁴⁶: Հայկական գորգերը այս համայնք-
ների միջոցով մինչև Չինաստան էին հասնում: Կային նաև Ասորի-
քից և Բյուզանդիայից գաղթածների համայնքներ, և դրանք բոլորը
Մետաքսի ճանապարհի մշակութային փոխազդեցությունների
ոլորտում էին:

Հայաստանից արևմուտք արդեն Միջերկրածովքի երկրներն
են՝ Հունաստանը և Հռոմը: Հին հունական կրոնը պայմանականո-
րեն բաժանում են երեք փուլի՝ արխայիկ կամ վաղնջական, ան-
տիկ դասական կամ օլիմպոսյան, հելլենիստական: Հունական
մշակույթը, այդ թվում և կրոնն ու դիցաբանությունը, մեծապես
ազդվել են արևելյան կրոններից: Մյուս կողմից, Ալեքսանդր Մակե-
դոնացու քաղաքականությամբ Արևելքում իր ազդեցությունը գոր-
ծեց հելլենական քաղաքակրթությունը:

Վաղ միջնադարում Հայ առաքելական եկեղեցու գործունեու-
թյան շնորհիվ քրիստոնեությունը մուտք էր գործել Վիրք և բուն
Աղվանք:

Ինչ վերաբերում է Հռոմին, ապա մինչև քրիստոնեությունը հռո-
մեական մշակույթը, մանավանդ կրոնն ու դիցաբանությունը, հու-

⁴⁴ Ալպոյաճեան Ա., Հայ գաղթականութեան պատմութիւն, Գահիրէ, 1955, հ. 2, էջ 317:

⁴⁵ Мартиросян А., *Ուշվ. աշխ.*, էջ 80; տե՛ս նաև Март Н. Я., Надгробный камень из Семиречья с армяно-сирийской надписью 1323 г., ЗВОАО, т. 8, с. 344–349; Бартольд Б., Сочинения, т. 9, М., 1977, с. 278;

⁴⁶ Սեբեոս, էջ 96–97:

նականի ուժեղ ազդեցության տակ էին: Եվ Հռոմեական կայսրությունը այդ մշակույթը տարածում էր իր գերիշխանության տակ գտնվող երկրներում: Քրիստոնեությունն ընդունելուց հետո Հռոմի ազդեցությունն առավել հզորացավ, խթան համդիսանալով Եվրոպայի երկրների, ինչպես նաև Ռուսաստանի քրիստոնեացմանը: Վերջինս Մետաքսի ճանապարհում ընդգրկված էր իր հարավային երկրամասերով:

Այսպիսով, Մետաքսի մեծ ճանապարհը հին և միջին դարերում մշանակալի դեր է խաղացել Միջերկրածովքի, Առաջավոր Ասիայի, Միջին Ասիայի, Հարավային և Հարավ-Արևելյան Ասիայի երկրների տնտեսական ու մշակութային կապերի զարգացման գործում: Հետագայում ճանապարհի անցուդարձը նվազեց արևելյան վաճկատուն ցեղերի հարձակումների հետևանքով: XV դ. սկսեց վերելք ապրել՝ ծովային ուղիներով կատարվող առևտուրը: Այս ամենով հանդերձ, Մետաքսի ճանապարհը քաղաքակրթական շատ արժեքներ փոխանցելով մի տարածաշրջանից, մի երկրից մյուսը, մեծապես ազդել է այն ժամանակվա համաշխարհային տնտեսական և մշակութային զարգացումների վրա:

Դ. ВАРДУМЯН

РЕЛИГИИ НА ШЕЛКОВОМ ПУТИ В ДРЕВНОСТИ И В РАННЕМ СРЕДНЕВЕКОВЬЕ

Великий Шелковый путь в течение длительного времени — начиная со II в. до н.э. и вплоть до XV в.н.э., играл важную роль не только в процессе товарооборота между Востоком и Западом, но и был дорогой для передвижения разных культур и конфессий. Здесь скрещивались пути таких религий, как конфуцианство, индуизм, буддизм, зороастризм, митраизм, христианство, несторианство, манихейство, ислам и др. Этот торговый путь, проходя через многие страны от Китая до Европы, через различные религиозно-культурные ареалы, естественно, проносил из одной среды в другую характерные черты своего времени.

Международные торговые пути в древности и средневековые проходили через Армению. Одна из магистралей Шелкового пути проходила через Арташат и Тигранакерт – знаменитые древние столицы Великой Армении, а во времена Тиграна Великого (95-55) эта дорога называлась “царской”; она тянулась к понтийским берегам на запад и на юг – к странам Средиземноморья. Первое известное упоминание о шелке в Армении относится к I в. до н.э. Отец армянской историографии Мовсес Хоренаци упоминает о некоем мастере по шелковым головным уборам по имени Аддэ.

Уже в период христианства армянские, сирийские священники путешествовали в составе торговых караванов, проповедуя новую веру в странах Востока.

Великий Шелковый путь сыграл значительную роль в истории стран, начиная от Китая до Средиземноморья. Движение на этом торговом пути заметно сократилось с вторжением восточных кочевников, на смену пришло торговое мореплавание. Тем не менее, Шелковый путь был транзитом для многих культурных ценностей и сыграл огромную роль в процессе развития мировой цивилизации, в которой Армения имеет свой внушительный вклад.

G.VARDUMYAN

RELIGIONS ALONG THE SILK ROAD IN ANCIENT AND EARLY MEDIEVAL TIMES

The Silk Road, during a long period of time – beginning from the II c. BC up to the XV c. AD, played important role not only in the process of trade between East and West, but also served as route for interrelations between various cultures and religions. Here, for many centuries, came across such religious denominations as Confucianism, Hinduism, Buddhism, Zoroastrianism, Christianity, Nestorianism, Manichaeism, Islam and others. This trade road, crossing many countries from China to Europe and North Africa, through different cultural-religious areals, naturally,

used to take the air and temper of the time from one environment to the other.

In ancient and medieval times international trade roots crossed Armenia. One of the branches of the Silk Road passed through Artashat and Tigranakert – the two famous capitals of Great Armenia , and during the times of Tigran the Great (95-55) this way was known as "Royal"; it stretched to the Pontic sea-shores to west and north to the countries of the Mediterranean Basin. The first mention about silk in Armenia refers to the I century BC. The father of Armenian historiography Movses Khorenatsi (V c. AD) mentions about a skilled craftsman of silk head-dresses named Addee.

During the Christian period Armenian, Syrian monks used to travel with trade caravans and preached the new religion in eastern countries.

The Silk Road, thus, was very important for economic and cultural processes in ancient and medieval times in the history of the countries from China to Mediterranean basin. The movement along this trade route noticeably reduced with invasions eastern nomads and was replaced by trade navigation. Nevertheless, the Silk Road had been a significant transit way for many cultural values between East and West, and played an immense role in the development of the world civilization and Armenia has a great contribution to it.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՄԵՐՁԵՓՐԱՏՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՈՏՈՒՄ**

Քաղաքակրթությունը բազմաչափ հասկացություն է և կարող է արտահայտվել երկու մակարդակում՝ տեմպորալ (տարածական-ժամանակային) և հոգևոր (NOMOS¹, PAX): Սակայն նշված հարթությունները միշտ չէ որ նույնական են: Երկու կամ մի քանի քաղաքակրթությունների միջև, ու նաև քաղաքակիրթ և այսպես կոչված բարբարոսական աշխարհների միջև գոյություն ունի հստակ սահման, բնագիծ: Շփման գոտու մեկ այլ բնորոշ օրինակներից է հռոմեական լիմեսը²: Լիմեսի միջոցով կապ էր հաստատվում ինչպես արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների, այնպես էլ քաղաքակրթության և «բարբարոսական աշխարհի» միջև³:

Հռոմի պաշտպանական համակարգում հատուկ տեղ էր զբաղեցնում Մերձեփրատյան լիմեսը, որը գտնվում էր կայսրության հեռավոր արևելյան սահմանի վրա: Հարյուրամյակներ շարունակ այդ սահմանային գոտու շառավղով լարվածությունն անընդհատ մեծանում էր: Դա վկայում է արևելյան սահմանի հատվածում հռոմեական զինված ուժերի աճը⁴: Կայսրության ռազմավարությունը

¹ Տվյալ դեպքում Նոմոսը, նախևառաջ, պետք է հասկանալ որպես քաղաքակրթական հարացույց, աշխարհակարգ: Նորագույն պատմության մեջ այդ իմաստով «նոմոս» տերմինը առաջինն օգտագործել է աշխարհաքաղաքականության «հայրը»՝ հայտնի գերմանական իրավաբան Կարլ Շմիդտը (1888–1985):

² Լիմես (լատ. Limes՝ բաժանարար գիծ, եզրագիծ, սահման, մարգ) Հռոմում հողաբաժան սահմանագիծ համայնքի անդամներին հատկացված հողամասերի միջև: Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում լիմես սկսեց կոչվել նաև պետության ամրացված սահմանագիծը՝ պահակային աշտարակներով ամրացված բնագիծը, որը պաշտպանում էին սահմանապահ-լեգեոներները: Լիմեսի համակարգի մեջ մտնում էր բարեկարգված ճանապարհների, զինվորական ճամբարների և ազդանշանային պահակակետերի ցանցը:

³ Колосовская Ю. К., Рим и мир племен на Дунае I – IV в. н. э. М.: Наука, 2000, с. 158–185.

⁴ Ле Боэк Я. Стратегия римской армии. Постоянный лагерь / Римская армия эпохи Ранней Империи. Перевод: М. Н. Челинцева. М.: Российская политическая

արևելյան ուղղության վրա ավելի քան որևէ այլ տեղ պայմանավորված էր տեղանքի ռելիեֆի և մարդկային գործոնով⁵։ Մերձեփրատյան լիմեսից դեպի հյուսիս-արևելք գտնվում էր Մեծ Հայքի թագավորությունը։ Փառավոր անցյալ ունեցող Հայոց պետությունը Արշակունիների գլխավորությամբ վարում էր դեռևս նախորդ՝ Արտաշեսյան արքայատան կողմից մշակած՝ Հռոմի և Պարթևստանի միջև ուժային հաշվեկշռի պահպանման քաղաքականությունը։ Թեև Պոմպեոսի ժամանակներից Հայաստանը «հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամն» էր, սակայն հայկական տոհմիկ ավագանին, ժամանակ առ ժամանակ, կազմակերպում էր հակահռոմեական ընդվզումներ, երկրից Հռոմի դրածոներին և գործակալներին վտարելու նպատակով։ Այսպիսով, հայոց մեծամեծները արտահայտում էին իրենց կողմնակցությունը ավանդական արժեքներին։

Լիմեսի հարավային եզրագիծն անցնում էր Պաղեստինը, Սիրիան և Փյունիկիան իրարից անջատող անապատով, որոնց սրտում գտնվում էր քարավանային քաղաք Պալմիրան⁶։ Այն վերահսկում էր տարածաշրջանի բոլոր ռազմական և քաղաքական շփումները։ Հնարավորություն չունենալով Եփրատի ամբողջ երկայնքով ձեռնարկել լիմեսի շինարարությունը՝ հռոմեացիները տեղակայեցին իրենց զորամասերը ռազմավարության առումով անենախոցելի և առավել կարևոր շրջաններում⁷։ Ռազմական կազմակերպության գլխավոր առանցքը կազմում էր ճանապարհների

энциклопедия, 2001. 400 с./ <http://www.roman-glory.com/le-bohec-vvedenie>. 08.01.2012.

⁵ Isaac B. *The Limits of Empire: The Roman Army in the East*. Oxford: Clarendon Press, 1990; Dodgeon M. H., Lieu N. S. *The Roman Eastern frontier and the Persian wars: a documentary history*. [Pt. I], AD 22–363. London [etc.]: Routledge 1991; Greatrex G., Lieu S. *The Roman Eastern Frontier and the Persian Wars*: [Pt. II], AD 363 – 630: a narrative sourcebook. Routledge. 2002 – 373 p.; Sartre M. *The Middle East under Rome*. Cambridge MA/London: Harvard University Press, 2005. p. 20–28.

⁶ Parker S., *The Roman Frontier in Central Jordan*. // *Interim Report on the Limes Arabicus Project, 1980–1985*. BAR International Series, 340. Oxford: British Archaeological Reports, 1987; Keith G. Young. *Rome's eastern trade: international commerce and imperial policy, 31 BC-AD 305*. Routledge, London, New York, 2001. 209 p., p. 169–173, 223, 224; Dr. McLaughlin R. *Rome Distant East: Trade Routes to the Ancient Lands of Arabia, India and China*. London & New York: Continuum, 2010. 236 p., p. 95–97.

⁷ Wheeler E. L. *The Army and the Limes in the East*. // *A Companion to the Roman Army*. Edited by Paul Erdkamp. Blackwheel Publishing Ltd., 2007, 574 p., p. 235.

վրա դիրքավորված, իրարից մեկ օրվա հեռավորության վրա գտնվող ճամբարակների և տարատեսակ այլ զորակայանների ցանց: Նույնիսկ ամենամեծ ճամբարը հաշվվում էր ոչ ավելի, քան երեք լեգեոն⁸: Այդ բոլոր զորամասերին հանձնարարված էր վերահսկել ռազմավարական կարևորություն ունեցող ճանապարհները, կամուրջները, գետանցումները, ջրհորները: Ահա թե ինչու ամենուրեք հռոմեական զինվորները կառուցում էին դիրքապահ ամրություններ, դիտակալ աշտարակներ և ինժեներական այլ օբյեկտներ: Եվ, ըստ ընդունված կարգի, ընտիր ճանապարհների խիտ ցանցը միավորում էր այդ պաշտպանական համակարգի տարբեր բաղադրամասերը:

Լիմեսը մի կողմից անթափանց պաշտպանական շարասյուն էր, մյուս կողմից՝ բավական ընդարձակ ինտերակտիվ միջավայր: Այդ միջաշխարհային տարածքում իրար էին հանդիպում տարբեր քաղաքակրթություններ, անցկացվում տոնավաճառներ, կատարվում ապրանքների և գաղափարների փոխանակում: Հռոմի ողջ պատմության ընթացքում սահմանամերձ գոտում քաղաքակրթական հիմնական գործակալները լեգեոններն էին, իսկ տեղական և կայսերական քաղաքակրթական արժեքների մերձեցման գլխավոր օջախները՝ հռոմեական ռազմական ճամբարներն ու բնակավայրերը: Հայտնի է, որ հռոմեական ռազմական ճամբարը⁹, ինչպես և հռոմեական բանակը¹⁰, հռոմեական համակեցության յուրօրինակ մանրակերտն էին¹¹: Իրենց հերթին, հռոմեական սահմանային պահակակետերը (*vicus*) կառուցապատվում էին նույն սկզբունքով՝ վերարտադրելով ավանդական հռոմեական ռազմական ճամբարի տեսքը. ամրոցի կենտրոնում հրամանատարի նստավայրն էր (*officium*), նրանից ոչ հեռու գտնվում էր սրբավայրը

⁸ Ibid. Chapter: Collapse and Reorganization: The Northern Theatre. p. 247.

⁹ Ստեփանյան Ա. Ա. Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Հայքում..., էջ 52:

¹⁰ Macmullen R., Roman Legion as Society. // Historia. 1984. Bd. 33, s. 440–456; Томаков В. Н. Армия и государство в Риме: от эпохи царей до пунических войн. М.: КДУ-264 с., 2007, с. 242.

¹¹ Woolf G., "Roman peace" in J. Rich and G. Shipley, eds. *War and society in the Roman world*. London and New York. 1993. p 171–194.

(sacellum - սովորաբար նվիրված Յուպիտերին կամ Միթրային և իհարկե՝ կայսերական պաշտամունքին, շարժական կամ անշարժ գոհասեղանով): Սրանց հետևում շառավղով դասավորված էին արխիվը (tabularium), զինանոցը (arsenal), ցորենի ամբարները և մթերային պահեստները (horreum), արհեստանոցները (fabrica) և զինվորական բուժարանը (valetudinarium), հրամանատարի վրանի (praetorium) երկու կողմում գտնվում էին բարձրաստիճան սպաների տները և զինվորական զորանոցները (scamnum): Իսկ ճամբարի պարսպից այն կողմ՝ աղաղակում էր խառնիճաղանջ կանաքը¹² (canabae)՝ մանր առևտրական կրպակների, տաղավարների ու պանդոկների բավիղներում, կազմակերպված ճամբարի հակապատկերը, որն անխուսափելիորեն պալարում էր յուրաքանչյուր ամրոց¹³:

PAX ROMANA-ի առանցքային տարրերից էր սահմանամերձ զինվորական ավանների խայտաբղետ բնակչությունը: Այդ մարզինալային և կիսամարզինալային տարրերը (Ձոմբարտը նրանց անվանում էր «բացառվածներ»)՝¹⁴ օժտված ադապտացման յուրահատուկ ունակություններով, կազմում էին սահմանային առևտրական դասի միջուկը: Անշուշտ, ձեռներեցությունը խորթ չէր նաև բուն հռոմեացիներին, բայց այն ուներ մակաբույծ բնույթ և ուղղված էր բռնագավթված և «բարեկամական» երկրների հարստության ու ռեսուրսների շորթմանը: Այդ կարգի գործարարությամբ զբաղվելը համարվում էր պատվավոր ոչ միայն հեծյալների դասի, այլև՝ պատրիկների համար (mercatura magna, mercatura navicularia et oneria)¹⁵: Բարբարոսների և այլազգիների հետ առևտուրը, հատկապես՝ մանրածախ և մակույքային (mercatura tenuis կամ

¹² Hanel N. Canabae, and vici. The Archeological Evidence. // A Companion to the Roman Army... p. 395–415.

¹³ Macmullen R., Soldier and Civilian in the Late Roman Empire. Cambridge (Mass.), 1963; Davies K.W. Service in the Roman Army / Ed. by D. Breeze and V. A. Maxfield. New York: Colombia UP, 1989.

¹⁴ Зомбарт В. Буржуа: Этюды по истории духовного развития современного экономического человека. Пер. с нем./ Ин-т социологии. М.: Наука, 2005. 443 с. (Серия “Социологическое наследие”). с. 357.

¹⁵ Այդ կարգի գործարարներից էին օրինակ Կրասոսը և Կիկերոնը:

mercatura institoria), հռոմեացիների աշխարհընկալման տեսանկյունից ավանդաբար համարվում էր ոչ պատվաբեր¹⁶: Հռոմեացիների վերաբերմունքը առևտրի և մանր գործարարության նկատմամբ շատ պատկերավոր արտահայտել է Կիկերոնը. «Իմ կարծիքով, առևտուրը եթե չարչիսկան է (այսինքն՝ մանրածախ, Ե.Ս.), ապա □ռեհիկ է, սակայն խոշոր առևտուրը, որն ընդ□րկում է բոլոր երկրները և համաշխարհային շուկայից ապրանքներ է հասցնում, որպեսզի առանց խաբելու և աչքին թոզ փչելու այն բաշխի բնակիչների մեջ, բնավ չպետք է բոլորովին բացառել» (*"Mercatura autem, si tenuis est, sordida putanda est, sin magna et copiosa, multa undique apportans, multaque sine vanitate impertiens, non est admodum vituperanda"* (Cicero De Officiis, I. 151): Մեկնաբանելով այս դրվագը՝ Ջոնբարտը հեզմունք է. «Իմ տերմինաբանությանը՝ լինել ձեռնարկատեր-աշխարհակալ դա դեռ ոչինչ, սակայն լինել ձեռնարկատեր-առևտրական՝ իրեն գոնե մի քիչ հարգող մարդու համար ուղղակի անընդունելի է»¹⁷:

Այդ պատճառով մամնօրինակ գործարարություն իրականացնելու իրավունքը հռոմեացիները, առանց ափսոսանքի, վարձակալության էին հանձնում այլերկրացիներին: Վերջիններս, ամենից հաճախ, հռոմեական քաղաքացիություն ունեցող օտարերկրացիներ կամ պերեգրիններ էին (*peregrinos, quibus commercium datum est* Ulp. Fr. XIX. 4), ազատված ստրուկներ և այլք, որոնք վարձակալել կամ գնել էին բանակում առևտուր վարելու և ուրիշ գործունեություն ծավալելու իրավունք: Ճիշտ է, որպես օրենք, այդ ստորակարգ ձեռներեցներն իրենց գործունեությունն իրականացնում էին պատրոնների՝ ազնվատոհմ և ազդեցիկ հռոմեացիների հովանավորության ներքո:

Այնուամենայնիվ, հռոմեական և ոչ հռոմեական աշխարհների միջև մանրածախ մակույքային առևտուրը ծաղկում էր: Սահմանաբնակ առևտրականները, անկախ ծագումից, օգտվում էին յու-

¹⁶ Van Houdt T., *Myricae: essays on neo-Latin literature in memory of Jozef IJsewijn*. Edited by Sacré D., Tournoy G. // *Supplementa Humanistica Lovaniensia* 16. Leuven University Press, 2000. p. 98.

¹⁷ Зомбарт В., *ук. соч.*, с. 163.

որինակ անձեռնմխելիության արտոնությունից, ինչպես հռոմեական զինվորների, այնպես էլ նրանց թշնամիների կողմից: Վաճառականներն ազատ դեգերում էին թե՛ հռոմեական մշտական բանակատեղիներում, թե՛ պատերազմող հակառակորդների ճամբարներում: Նրանք գնում էին զինվորներից ռազմավարը, և, ամենակարևորը՝ ռազմագերիներին, որոնց, մինչև ազգականներից համապատասխան գլխագին ստանալը, պահում էին հատուկ արգելաճամբարներում: Փրկագին չստանալու դեպքում գերիներին վաճառում էին ստրուկների շուկաներում կամ, նրանց ոչ պիտանելիության դեպքում, ազատ արձակում: Անարգել առևտուր իրականացնելու համար վաճառականները հաճախ կնքում էին հյուրընկալության նախնական համաձայնագրեր, որոնք ամրապնդելու համար պայմանավորվող կողմերը փոխանակվում էին հմայիլներով և տեսներաներով:

Դեռևս հին ժամանակներից առևտուրը միշտ զուգընթաց էր պատերազմին, և հաճախ հենց պատերազմներն էին խթանում առևտրի զարգացումը ժողովուրդների միջև: Հները շատ լավ էին հասկանում առևտրի և պատերազմի այս կապը: Չկարողանալով կռվով նվաճել և հռոմեական պրովինցիայի վերածել որևէ երկիր, հռոմեացիները գործի էին դնում դիվանագիտությունը. նրանք, առաջին հերթին, հակառակորդին ստիպում էին կնքել իրենց համար նպաստավոր առևտրային պայմանագրեր, որոնք զանազան արտոնություններ էին նախատեսում իրենց գործարարների համար (*Romani duces semper in bellis commercium habuere curram*՝ **Plin.** NH. XXVI. 9): Առևտուրը հռոմեացիները դիտարկում էին որպես կիսանկախ երկիրն իրենց ենթակայության տակ առնելու երկարաժամկետ, բայց արդյունավետ միջոց: Հռոմի արտաքին քաղաքականության թիրախ երկիրն առևտրի միջոցով, աստիճանաբար, ներքաշվում էր հռոմեական համընդգրկուն տնտեսական շահերի և իրավական դաշտի համաժրի մեջ¹⁸: Հաճախ պետության լիակատար բռնազավթմանը նախորդում էր վերջինիս շուկաների նվաճումը: Ուստի հռոմեական գործարարների և վաճառականների

¹⁸ Young G. K., *Rome's Eastern Trade: International Commerce and Imperial Policy*, 31 BC – AD 305. London: Routledge, 2001.

րի նկատմամբ ատելությունը պայմանավորված էր հռոմեական գործունյա մարդկանց կողմից «բարեկամական» երկրների շուկաների ագրեսիվ նվաճմամբ և տեղական գործարարներին շուկայից դուրս մղելու նկրտումներով:

Ինչ խոսք, լիմեսի վրա և հատկապես լիմեսից այն կողմ առևտուրը կապված էր մեծ ռիսկերի հետ և համարվում էր վտանգավոր: Հռոմեական վաճառականներն իրենց անվտանգության երաշխիքները հայցում էին ոչ միայն և ոչ այնքան երկրի իշխանություններից ու զինված ուժերից, այլ, միգուցե ավելի հուսալի ու քաղաքական համավիճակից (կոնյունկտուրա) անկախ մեհենական ուժերից: Ահա թե ինչու միջազգային առևտուրը լիմեսի վրա իրականացվում էր հատուկ աստվածների հովանու ներքո:

Հյուրընկալ Յուպիտերը և Միթրան՝ որպես Արևելյան լիմեսի հյուրընկալության ինստիտուտի պաշտպան: Գործարարների և առևտրականների անվտանգության ապահովման կարևոր երաշխիքներից էր հյուրընկալության ինստիտուտը, վերջինս, սովորաբար պատերազմի հետևանք էր: Հյուրընկալության ուխտ կնքելու համար անհրաժեշտ էր պարտադիր աստվածների և պենատների վկայված երդման արտասանումը: Հյուրընկալությունը գործում էր խաղաղ ժամանակ, բայց, օրինակ, ինչպես երևում է Մարկիանոսի հաղորդումից¹⁹, նույնիսկ պատերազմի ժամանակ «օտարական» միջնորդ-առևտրականները նույն ավյունով շարունակում էին իրենց գործունեությունը:

Հնագիտության տվյալներով հավաստված՝ անտիկ հեղինակների բազմաթիվ հաղորդումները վկայում են, որ հանրապետական շրջանում և պրինցիպատի օրոք հյուրընկալության ինստիտուտը գտնվում էր հռոմեական համայնքի գլխավոր աստված Յուպիտերի (Juppiter Hospitalis)²⁰ հովանավորության ներքո: Հյու-

¹⁹ «Մինչ օրերս ասորիների մեջ ապրում է գործի հանդեպ այնպիսի բնածին եռանդ, որ հանուն շահի նրանք շրջում են բոլոր երկրները, և առևտրի հանդեպ նրանց ունեցած մոլուցքն այնքան մեծ է, որ նրանք ամեն տեղ՝ Հռոմեական կայսրության ներսում, և՛ պատերազմի, և՛ կոտորածի, և՛ սպանության ժամանակ ձգտում են հարստանալ» (տե՛ս Зомбарт В. ук. соч., с. 141).

²⁰ Richmond I. Roman Legionaries at Corbridge, their Supply-base, Temples, and Religious cults // Archaeologia Aeliana. 1943. 21. 4th series. p. 149–214; Idem. The Roman Army and

ըընկալության մերժումը հավասարազոր էր «Հավատարմության» երդման դրժմանը, որը սովորաբար տալիս էին հյուրընկալության ուխտ կնքելիս: Երդմնագանցությունը պատժվում էր հռոմեական համայնքի կողմից, քանի որ համարվում էր «սրբազան օրենքի» խախտում: Հռոմեական ընկալումների համաձայն «աստվածային իրավունքը» (*Fas*) անքակտելի է, նախևառաջ, իր սրբազան, մեհենական բնույթի պատճառով, քանզի այն ներշնչված էր աստվածների կողմից և նրանց կամքի արտահայտությունն է, մինչդեռ քաղաքացիական օրենքները (*Jus*) սահմանել են մարդիկ և անհրաժեշտության դեպքում կարող են փոփոխության ենթարկվել: Այդ գաղափարն ամփոփ արտահայտվել է Օրիգենոսի հետևյալ դրույթի մեջ. "*Fas lex divina, jus lex humana est*" (**Isidor.** Orig. V. 2):

Հռոմեացիների կրոնական պատկերացումների համաձայն, ուխտի սրբությունն ու անդրժեհությունը կապված էր Ֆիդես (*Fides*) հասկացության աստվածային բնույթի հետ²¹: Այն ծագում է նախնիների կրոնական սովորույթներից (*mos majorum, consuetudo*): Այս երդման հավատարմության աստվածությունը հնագույն ծագում ուներ և երկրպագվում էր դեռ այն ժամանակներում, երբ Հռոմում իբրև օրենք գործում էին նախնյաց սովորույթները (*iure eam legibus ac moribus de integro condere parat*) (**Liv.** 1.19.1)²²: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ հյուրընկալությու-

Roman Religion // Bulletin of the John Rylands Library. Manchester, 1963. 45. p. 185–197; Speidel M. The Religion of Juppiter Dolichenus in the Roman Army. Leiden, 1977, etc.

²¹ Ֆիդես (Հավատարմություն) դիցուիին համարվում էր Հռոմի կրոնաբարոյական հիմունքների և համակեցական սկզբունքների պահապան: Պիետասի (աստվածների, հայրենիքի և ծնողների առջև պարտքին հավատարմության աստվածություն) հետ միասին Ֆիդեսը համարվում էր երդման պահապան, նախնյաց օրենքների և ավանդական առաքինությունների զորավիզ (*Polyb.* VI 56, 14): Ֆիդեսը սերտ կապված էր երդմնապահ Յուպիտեր Դոլիքենի և վերջինիս կերպարի հետ միաձուլված հավատարմության դից Դիոս Ֆիդիուսի (*Dius Fidius, Dius Fidus*), ինչպես նաև՝ *foedus* («դաշինք», «ուխտ») հասկացության հետ: Այն մեծ հանդիսավորությամբ կնքվում էր ֆեցիալների (*լատ՝ fetiales*, հռոմեական քրմական խորհուրդ) ավագի և աստվածների միջև ուղեկցվում արյունոտ զոհաբերություններով (*Liv.* I 24, 6): Հռոմում, Ֆիդեսի տաճարում, Կապիտոլիումի վրա, պահվում էին միջազգային պայմանագրեր և փաստաթղթեր: Կայսրության ժամանակաշրջանում Ֆիդեսը հաճախ պատկերվում էր դրամների վրա օրինակ՝ Օգոստոսի Ֆիդես, զորաբանակի Ֆիդես, հեծելազորի Ֆիդես և այլն:

²² Колосовская Ю. К. Гостеприимство как право народов древнего Рима // Закон и

ընդ լինելով ժողովուրդների հարաբերման իրավական նորմ, սկիզբ է առնում արխայիկ նահապետական ինստիտուտներից²³: Հյուրընկալության ուխտը կնքելուց շեշտը, առաջին հերթին, դրվում էր վստահության և դաշինքի պայմանների ճշգրիտ և բարեխիղճ կատարման վրա. դա ավելի շատ առնչվում էր բարոյական, քան իրավական նորմերին:

Սակայն, արդեն պրինցիպատի դարաշրջանում, հռոմեական ավանդական կրոնաբարոյական ընկալումների քայքայմանը զուգընթաց՝ Ֆիդեսի և արխայիկ այլ աստվածների պաշտամունքը սկսում է դուրս մղվել նմանօրինակ գործառույթներն ունեցող արևելահելլենիստական աստվածների պաշտամունքի կողմից: Հելլենիստական աստվածները, լինելով ոչ պակաս հին, քան հռոմեականը միաժամանակ ավելի բարդ էին և համադրական, քանի որ ավելի զարգացած քաղաքակրթությունների և մշակույթների համաձուլման արգասիք էին²⁴: Իհարկե, նույնիսկ դրանից հետո հռոմեական կրոնական պատկերացումները վերապրուկային ձևով շարունակում էին գոյատևել, այն էլ բավական երկար, ընդհուպ մինչև քրիստոնեության հաղթանակը Հռոմում: Ավելին՝ որոշ ավանդական հռոմեական դիցերի պաշտամունքը պահպանում է արդիականությունը և նույնիսկ սկսում է ակտիվ դեր խաղալ ողջ

обычай гостеприимства в античном мире. Доклады конференции. М.: ИВИ РАН. – 1999, с. 56.

²³ «Հավատարմության» պատվին տոնակատարությունը սահմանել էր Նուման: Փլամինոսները Ֆիդեսին զոհաբերություններ մատուցելու համար, ժամանում էին փակ ծիսակառքով: Զոհաբերությունը կատարվում էր մինչև մատները պարուրած աջ ձեռքով (Serv. Verg. Aen. III 608), ի նշան այն բանի, որ հավատարմությունը պետք է պահպանվի, այն սուրբ է և շարունակում է սուրբ մնալ նույնիսկ ձեռք սեղմելու ժամանակ (Liv. 1.21.4): Աջ ձեռքերի միացումը (որ հաճախ կարելի է տեսնել Ֆիդեսը պատկերող դրամների վրա) խորհրդանշում էր հավատարմություն կնքված ուխտին, դաշնագրին:

²⁴ Dumézil G. *Mithra-Varuṇa. Essai sur deux représentations indo-européennes de lasouveraineté*. Paris, 1940; Schmidt H.-P. *Indo-Iranian Mitra Studies: The State of the Central Problem* // *Études Mithriaques. Acta Iranica 17* (далее: ÉM). Leiden, 1978. p. 345–93; Gonda J. *The Vedic God Mitra* (Orientalia Rheno-Traiectina, Vol. XIII). viii, 147pp. Leiden: E. J. Brill, 1972; Idem *Mitra and Mitra, the Idea of "Friendship" in Ancient India* // *Indologica Taurinensia* 1, 1973. P. 71–107; Thieme P. *Mithra in the Avesta* // *Études Mithriaques* (այնուհետև՝ ÉM) (*Acta Iranica 17*). Leiden, 1978. p. 501–510; Маргарян Е. Г. Трансформация митразма в эллинистическую эпоху (Иран, Армения, Коммагена, Рим) // Иран-наме Научный востоковедческий журнал. № 3 (19), 2011. с. 78–110.

կայսրության տարածքում: Բայց դա իհարկե հնարավոր դարձավ այդ ավանդական հռոմեական պաշտամունքների էութենական փոխակերպման և հելլենիստական բնույթ ստանալու շնորհիվ: Եվ իրոք, հելլենիզմի ազդեցության շնորհիվ առանձին հին հռոմեական աստվածների «արյունը նորացավ»: Առանձին հռոմեական աստվածների պաշտամունքներն ուղղակի ձուլվեցին արևելյան պաշտամունքների հետ, որոնք հռոմեական միջավայր էին թափանցել Արևելքից:

Ինչպես և կարելի էր սպասել, այդ երևույթները, մախևառաջ, կապված էին մերձեփրատյան սահմանային գոտու ազդեցությունների հետ: Այստեղ, ինչպես և բոլոր հռոմեական լիմեսներում, հյուրընկալության ինստիտուտն ուներ կարևոր դերակատարություն և կապված էր Հյուրընկալ Յուպիտերի ավանդական պաշտամունքի հետ²⁵: Սակայն այդ պաշտամունքը տեղում ձուլվել էր նույնանման գործառույթ ունեցող արիական և սեմական աստվածների երկրպագության հետ: Առաջին հերթին դա վերաբերում է երդմնապահ աստված Միհրի և Դոլիխեյան Բաալի²⁶ պաշտամունքներին: Համաձուլման ընթացքում ձևավորվեցին երկու նոր ու միաժամանակ շատ հին աստվածների կերպարներ՝ Յուպիտեր-Դոլիխենուսի (լատ.՝ Dolichenus) և նրա օգնական Միթրա-Հերմեսի կերպարները, որոնք հետևում և պատժում են հյուրընկալության օրենքները խախտած մարդկանց: Ողջ հռոմեական կայսրության տարածքում երկու աստվածների պաշտամունքների տարածման գործում մեծ

²⁵ Cumont F. The Oriental Religions in Roman Paganism. Chicago: The Open Court Publishing Company, 1911; Liebeschuetz W. Continuity and Change in Roman Religion. Oxford: Oxford University Press, 1979; Isaac B. The Limits of Empire: The Roman Army in the East. Oxford: Clarendon Press, 1990.

²⁶ Այդ աստծո հռչակավոր սրբավայրը գտնվում էր Կոմմագենեում՝ ջերմուկների բուժիչ ջրերով հարուստ Դոլիխե վայրում: Հելլենիստական շրջանում այն հայտնի էր որպես Դոլիխեյան Ջևս-Բաալի սրբատեղի: Ինչպես հավաստում են աղբյուրները, սրբավայրում երկրպագում էին կոպիտ քանդակած Ջևս-Բաալի վիթխարի արձանը: Այդ աստվածը պատկերված էր հաղթամարմին տղամարդու տեսքով՝ կանգնած աիռելի ցլի մեջքին: Նրա մի ձեռքում կար երկաայր տապար, իսկ մյուսով նա խրճով շանթեր էր տեղում: Համարյա նույն տեսքը, բայց ավելի հղկված և ավելի համեստ չափերով, ուներ Յուպիտերի-Դոլիխենուսի քանդակը Հռոմի Կապիտոլիոնի տաճարում: Այն պետք է բերված լիներ Փոքր Ասիայից կամ Ասորիքից:

դեր խաղացին Կոմնագենեում և հարևան մերձեփրատյան երկրամասերում զորագրված կամ այստեղ երկար տարիներ ծառայած սահմանապահ զինվորները:

Օրինաչափ է, որ ժամանակի ընթացքում Միթրայի և Կոմնագենյան Յուպիտեր-Դոլիխսենուսի (հայտնի նաև որպես Յելիոպոլյան²⁷ Յուպիտեր) կերպարները միաձուլվեցին: Կոմնագենեում հռոմեական լեգեոներների կողմից երկրպագվող²⁸ այդ համադրական բազմադեմ հելլենիստական աստվածը նույնացվում էր նաև Ապոլլոն-Յելիոսին և Յերմեսին: Հատկանշական է, որ Հայաստանում Միհրը երբեք չի նույնացվել պատերազմի աստծուն. այստեղ ռազմի գործառույթը պատկանում էր նրա զույգին՝ Վահագն-Յերակլեսին: Պատկերը փոխվում է, երբ այստեղ են հայտնվում հռոմեական լեգեոներները. նրանք իրենց հետ են բերում հռոմեական կրոնական պատկերացումները և դրանցով հարստացնում Միհր-Միթրայի կերպարը: Այսպես է առաջանում նաև քաջարի և պատվախնդիր Միթրա՝ ռազմիկի, Միթրա-Մարսի կերպարը: Հանրագումարելով ասվածը թվենք Միհր-Միթրայի բազմորոշյունները. Միթրա-Այոն-Ժամանակ-ճակատագիր, Միթրա-Ջևս-Յուպիտեր-Բաալ, Միթրա-Ապոլլոն-Յելիոս, Միթրա-Մերկուրի-Յերմես, Միթրա-Արտագնես-Յերակլես-Մարս:

Ըստ էության, այս համադրական հելլենիստական-հռոմեական աստվածը դարձավ մի տեսակ քաղաքակրթական թարգման, որը նպաստել է գաղափարների և մշակութային արժեքների փոխ-

²⁷ Յելիոպոլիս վայրը, հնուց հայտնի՝ որպես Բաալբեկ՝ Արևի և Լուսիս պաշտամունքի կենտրոնն էր, որտեղ հնագույն սրբավայրերի հիմքի վրա հելլենիստական շրջանի շինարարները կառուցել են Ջևս-Բաալի վեհակերտ տաճարը: Հռոմեա-հելլենիստական շրջանում այստեղ հելլենիստական ոճով կառուցվել և վերակառուցվել են մեհենական բազմաթիվ շինություններ:

²⁸ Vermaseren M. J., The New Mithraic Temple in London. // Numen 2, 1955. p. 139–145; Daniels Ch. M. The role of the Roman army in the spread and practice of Mithraism", in Hinnels, John R. // Mithraic Studies: Proceedings of the First International Congress of Mithraic Studies, Manchester UP, 1975, pp. II.459–474; Clauss M. Mithras und Christus // Historische Zeitschrift. 1986. 243. Bd. S. 268; Spiedel M. Mithras-Orion, Greek Hero and Roman Army God. Leiden: E. J. Brill, 1980; Beck R. The Mithras Cult as Association // Studies in Religion, 21, 1992. p. 3–13. Бонгард-Левин Г. М., Ганблов В. А., Кошеленко Г. А. Открытие митреума в Дуре-Европос и современная митраистика // Вестник древней истории. Наука. 2004. с. 145.

ներթափանցմանը Արևելքից Արևմուտք, և՛ հակառակը: Բնավ պատահական չէ, որ այդ աստվածը հավասարապես երկրպագվել է արևելյան Մերձեփրատյան լիմեսի երկու կողմերում՝ Եփրատից հեռու դեպի արևելք և արևմուտք: Դա, անկասկած, միթրայականության՝ իբրև կրոնահոգևոր համակարգի արդիականության և հարաշխատության, լավագույն վկայությունն է: Միթրայականությունն երկար ժամանակով դարձավ այն սրբազան միջուկը, որը համաբերեց հռոմեացիների և Հռոմեական կայսրության ժողովուրդների մշակույթը, հասարակական պրակտիկան, աշխարհաքաղաքականությունը տրանսցենդենտ բարձր իրականության հետ²⁹:

Ամփոփում: Հռոմեական արևելյան լիմեսը պատմագիտության մեջ հայտնի է որպես երկու աշխարհների՝ PAX ROMANA-ի և PAX IRANICA-ի ջրբաժանը: Այստեղ անտիկ շրջանում և վաղ միջնադարում հռոմեական սահմանապահ զինվորների ու սպաների միջավայրում ձևավորվել է յուրօրինակ կրոնահոգևոր համակարգ, որը բելգիացի հայտնի պատմաբան Ֆրանց Կյունդնի թեթև ձեռքով ստացավ միթրայականություն անվանումը³⁰: Դա համապարփակ հելլենիստական կրոնաբարոյախոսական համակարգ էր, որը կարող էր ձևավորվել միայն հատուկ պայմաններում և հատուկ միջավայրում: Մեր համոզմամբ դա պետք է լիներ մարգինալային, բաց և անկաշկանդ միջավայր, որը պարարտ հող էր ստեղծում նորարական գաղափարների և կենսաձևերի համար: Տարերայնորեն նման միջավայր գոյացավ սահմանամերձ զինվորական ավաններում՝ այսպես կոչված կանաբներում³¹, իր բազմազգ³² և ոչ շերտա-

²⁹ Cumont F. Textes et Monuments figures aux mysteres de Mithra. Bruxelles, 1896–1899. T. 1–2; Tudor D. Corpus Equitum Donaviarum. Leiden, 1969–1976. T.1–2; Jaczynowska M. Religie swiata rzymskiego. Warszawa, 1990, etc.; Маргарян Е. Г. Роль Армении и Коммагены в глобализационных процессах эллинистической эпохи // Сборник статей. По материалам международной конференции “Армения в диалоге цивилизаций”. Н. Новгород: Деком, 2011. с. 159–171.

³⁰ Кюмон Ф. Мистерии Митры. Распространение митраизма в Римской империи. Пер. с франц. С. О. Цветковой. СПб.: Евразия, 2000.

³¹ Frontier Province. Ed. T. F. C. Blagg, A. C. King. BAR British series. N 136. London, 1984. p. 227–248; Штаерман Е. М. Социальные основы религии Древнего Рима. М.: Наука, 1987; Birley E. The Deities of Roman Britain // Aufstieg und Niedergang der römischen Welt, II, 18; Solway P. Roman Britain. Oxford, 1982; Frere S. Britannia. A History of a Roman Britain. London: Pimlico, 1991; Махлаюк А. В. Римские войны. Под

վորված քաղաքացիական բնակչությամբ³³: Վերջինս սահմանի երկու կողմում ունենալով ազգականներ և յուրայիններ, անարգել առևտուր էր անում, սփռելով կայսրության ողջ տարածքով տարաբնույթ ապրանքներ և քաղաքակրթական արժեքներ: Դա մեզ իրավունք է վերապահում այս սահմանաբաժան տարածքն անվանել Մերձեփրատյան շփման գոտի: Վերջինս ընդգրկում էր Կոմմագենեն, Կապադովկիան, Արևմտյան Հայաստանը և Պոնտոսը³⁴: Այստեղից է կայսրության ողջ պարագծի երկայնքով՝ մեկ լինեսից մյուսը (Բրիտանիա, Հռենոս, Հյուս. Աֆրիկա, Արաբիա և այլն), իր հաղթական երթն իրականացրել միթրայականությունը: Սակայն միթրայականությունը չսահմանափակվեց միայն կայսրության եզրագծով. միաժամանակ տեղի էր ունենում միթրայական կրոնահոգևոր գաղափարների աստիճանական ներքաշումը դեպի կայսրության կենտրոն: Այստեղ արևելյան հելլենիստական հոգևոր արժեքներն իրար հետևից աննկատ հաղթանակ էին տանում հռոմեական հանրապետական կրոնամշակութային արժեքների հանդեպ: Իր հերթին դա բերում էր աշխարհ-համակարգային տեղաշարժերի՝ սկզբում իրարից այնքան հեռու Հռոմեական կայսրության կենտրոնն ու ծայրամասերը սկսում են իրար մոտենալ, այնուհետև՝ փոխվում տեղերով: Հավերժական քաղաքը վերածվեց անցյալի փառքով ապրող ստվերի, մինչդեռ հնամենի և միաժամանակ միշտ երիտասարդ Արևելքը նայում էր վաղվա օրվան³⁵:

знаком Марса. М.: ЗАО Центрполиграф, 2005. 447 с. с. 62–63; Stoll O. The Religion of the Army: A Complex “System”. // A Companion to the Roman Army... p. 452.

³² Շփման գոտին անխուսափելիորեն բազմազգ է, բայց ոչ ամեն բազմազգ միջավայրն է շփման գոտի:

³³ Whitby M. Outsiders. Army and Society in the Late Roman World: A Context for Decline? / A Companion to the Roman Army. Blackwell Companions to the Ancient World. Oxford: Blackwell Publishing, Pp. xxvi + 574, incl. 2007. p. 519–521.

³⁴ Маргарян Е. Г., Митраизм в армяно-римской цивилизационной контактной зоне. // М.: Историческое пространство. 2011.

³⁵ Аверинцев С. С. На границе цивилизаций и эпох: вклад восточных окраин римско-византийского мира в подготовку духовной культуры европейского средневековья. // Восток-Запад. Исследования. Переводы. Публикации, М.: Наука, 1985. – с. 5–20.

E. МАРГАРЯН

**МАГИСТРАЛИ МЕЖДУНАРОДНЫХ ТОРГОВЫХ
ПУТЕЙ В ПРИЕВФРАТСКОЙ ПОГРАНИЧНОЙ ЗОНЕ**

В оборонительной системе Рима специальное место занимал Приевфратский лимес, который находился на дальнем восточном рубеже империи. В течении столетий вдоль этого рубежа напряжение постоянно нарастало.

E. MARGARYAN

**THE INTERNATIONAL TRADE ROUTS IN THE
CIS-EUPHRATE BORDER ZONE**

In the defensive system of Rome cis-Euphrate limes had a special place, which was situated at the remote eastern boundary of the Empire. During centuries the tension was increasing along that frontier zone.

**ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
IX դԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ X դԱՐԻ ՍԿԶԲԻՆ**

VII դ. կեսերից – IX դ. ընթացքում Արաբական Խալիֆայության և Բյուզանդիայի միջև շարունակվող պատերազմների և հակամարտության հետևանքով Արևելքն Արևմուտքին կապող ճանապարհները և, մասնավորապես, Մետաքսի ճանապարհը, կորցրել էին իրենց նշանակությունը: Փոքր Ասիայում երկու տերությունների միջև ձևավորված սահմանային ամրությունների գոտին, որը տարածվում էր Միջերկրական ծովի կիլիկյան ափերից մինչև Կամախ քաղաքը, պահպանում էր իր գոյությունը¹ խոչընդոտելով առևտրական ճանապարհների գործարկմանը:

IX դ. վերջից Հայ Բագրատունիների տերության ստեղծումով և 893 թ. հայ-բյուզանդական առևտրական պայմանագրի կնքումով Արևելքն Արևմուտքին կապող Մետաքսի ճանապարհը վերստին սկսեց գործել²: Դա դարակազմիկ իրադարձություն էր ինչպես Հայաստանի, այնպես էլ հարևան ու հեռավոր երկրների և ժողովուրդների համար: Երկարատև դադարից հետո նրանք հնարավորություն ստացան վերսկսելու ոչ միայն առևտրական, այլ նաև դրան զուգընթաց՝ նաև քաղաքակրթական շփումները:

Թեև Ատրպատականի ոստիկան Ափշինը 894 թ. փորձեց խոչընդոտել առևտրական մայրուղու գործարկումը՝ ներխուժելով Հայ Բագրատունիների տերություն և ժամանակավորապես գրավելով Նախիջևան ու Դվինը, սակայն հաջողություն չունեցավ: Սմբատ Ա-ին հաջողվեց պահպանել ինչպես տերության ամբողջականությունը, այնպես էլ Մետաքսի ճանապարհի անխափան գոր-

¹ Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր): «ՊԲՀ», 1981, թիվ 2, էջ 134–149:

² «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց», բնագիրը Մ. Էմինի, Ե., 1996, էջ 160–162: Տե՛ս նաև Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры – XV в. н. эры), Е., 1954, էջ 201–203, Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (885–908), (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Ե., 2011, էջ 71–80:

ծունեությունը³: Այդ շրջանում Հայ Բագրատունիների տերության մեջ առևտրական ճանապարհների հիմնական համգույցը Հայոց հիմնավորը մայրաքաղաք Դվինն էր, որն, ի տարբերություն Հայաստանի շատ քաղաքների, արաբական տիրապետության շրջանում զգալիորեն աճել էր: Մետաքսի ճանապարհը, մինչև Դվինի ամիրայության ստեղծումը, (X դ. առաջին կես) անցնում էր Դվինով: Վերջինիս ստեղծումը սկսեց կասեցնել ճանապարհի ակտիվ գործունեությունը, ուստի հետագայում այն շրջանցում էր Դվինը:

Մետաքսի ճանապարհը Հայոց տերություն էր մտնում տարբեր ուղեգծերով: Սկզբում քննության առնենք ճանապարհի ուղեգծերը մինչև Դվին: Առաջին ուղեգիծը Հայաստան էր գալիս Ատրպատականից՝ Արտավեստ քաղաքով: Այդ ճանապարհի և նրա կայանների միջև հեռավորությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ են պահպանվել արաբ հեղինակների աշխատություններում: Գնապարհը Հայաստանում անցնում էր Վարսան-Դարման-Բայլական-Յունան-Պարտավ-Կալկաթուս-Մատրիս-Դաու միս-Քիլաքունի-Սիսաջան-Դվին ուղեգծով⁴:

Արտավեստ-Վարդանակերտ-Պարտավ ճանապարհահատվածը հիշատակվում է նաև «Մղոմաչափք»-ում: Այն Արտավեստից ընթանում էր Վարդանակերտ, ապա անցնում Պարտավ⁵:

Վարսան: Համապատասխանում է Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի Վարդանակերտ գավառի համանուն կենտրոնին: Այն Երասխ գետի ափին էր⁶:

Դարման: Վարդանակերտ-Պարտավ ճանապարհահատվածը Վարդանակերտ-Դարման-Բայլական-Պարտավ երթուղով հիշատակում են միայն Իբն Խորդադբեհն ու Կուդաման: Դարմանը, ըստ Իբն Խորդադբեհի՝ գտնվում էր Վարսանից 3 փարսախ (մոտ 17 կմ) հեռավորության վրա: Դարմանի տեղադրության որևէ տարբե-

³ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 170–172:

⁴ Khordâdbeh, Kitâb al-masâlik wa'l-mamâlik.-BGA, ed. II, p. VI, Lugd. Bat., 1967, էջ 122: Տե՛ս նաև "Excerpta e Kitâb al Kharadj auctore Kudama-ibn Dja'far".-BGA, ed. II, p. VI, Lugd. Bat., 1967, էջ 213 և այլն:

⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, Ե., 1984, էջ 381:

⁶ Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 83:

րակ տալը շատ դժվար է, քանի որ սա դրա միակ հիշատակությունն է: Ն. Կարաուլովը, որը Դարմանը համարում էր Յունանի աղավաղումը, այն տեղադրել է ներկայիս Դեյրան գյուղի տեղում⁷: Դեյրանը գտնվում է Աղդամ բնակավայրից շուրջ 20 կմ դեպի արևելք: Յունանի նման տեղադրությունն ընդունելի տարբերակ է, իսկ ինչ վերաբերում է Դարմանին, ապա նշենք, որ ադրբեջանա-իրանական սահմանին, Երասխ գետից հարավ, կար Դարանյան կոչվող մի հենակետ, իսկ վերջինիս հարևանությամբ, դեպի արևելք, գտնվում էր համանուն բերդը: Կարծում ենք, որ Դարման անունը սերտորեն կապված է Դարան անվան հետ: Եթե ճիշտ է մեր ենթադրությունը, և Դարան-Դարման անվանումը վերաբերում էր Երասխից հարավ ընկած շրջանին, ապա Վարդանակերտից 3 փարսախ (մոտ 17 կմ) հեռավորության վրա գտնվող Դարման կայանը, ամենայն հավանականությամբ, պետք է նույնպես գտնվեր Երասխից հարավ: Այս երթուղով Վարդանակերտ-Բայլական ճանապարհահատվածի երկարությունը կազմում էր 12 փարսախ (շուրջ 70 կմ), ի տարբերություն Վարդանակերտից ուղղակիորեն դեպի Բայլական անցնող երթուղու, որի երկարությունը 7 փարսախ էր (շուրջ 41 կմ):

Բայլական: Ճանապարհի մի ուղեգիծը Վարդանակերտի, իսկ մյուսը՝ Դարմանի մոտ, անցնում էր Երասխը և շարժվում Բայլական: Բայլականի և Պարտավի միջև հեռավորությունը կազմում էր 14 փարսախ (մոտ 81 կմ): Այս հեռավորությունը համապատասխանում է ալ-Խսթախրիի և Իբն Հաուկալի տեղեկություններին, ըստ որոնց՝ Բայլականից Յունանով Պարտավ ընթացող ճանապարհահատվածի երկարությունը 14 փարսախ էր: Ուստի և կարծում ենք, որ Իբն Խորդադբեհի հիշատակած Բայլական-Պարտավ 14 փարսախ երկարությամբ ճանապարհահատվածը համապատասխանում է մյուս հեղինակների Բայլական-Յունան-Պարտավ ճանապարհահատվածին, միայն հանվանե բացակայում է Յունանը:

⁷ “Сборник материалов для описания местностей и племен Кавказа”, вып. 29, Тифлис, 1901, էջ 67:

Յունան: Այս կայանի մասին Յակուտը հաղորդում է, թե այն մի վայր էր Պարտավի և Բայլականի միջև՝ վերջիններիցս 7-ական փարսախ հեռավորության վրա⁸: Այն, ըստ Իբն Չաուկալի՝ գյուղ էր⁹: Սակայն, արաբ աշխարհագետների երկերում այն հազվադեպ է հիշվում՝ կապված Վարդանակերտ-Պարտավ ճանապարհահատվածի հիշատակության հետ: Յունանը պետք է գտնվելիս լիներ Պարտավից ու Բայլականից հավասարաչափ՝ 7-ական փարսախ (մոտ 41 կմ) հեռավորության վրա, ինչն էլ նախատեսում է Յունանի տեղադրությունը Բայլականից Պարտավ կեսճանապարհին: Յունանից հետո ճանապարհը շարժվում էր Պարտավ, որի ավերակները գտնվում են ներկայիս Բարդա քաղաքի մոտ:

Ճանապարհը Պարտավից Դվին էր ընթանում Կալկաթուս-Մատրիս-Դաունիս-Քիլ Քույ -Սիսաջան ուղեգծով¹⁰:

Կալկաթուս: Կալկաթուսը, ըստ Մարկվարտի և Ջ. Մանանդյանի՝ համապատասխանում է Կաղանկատույք գյուղին¹¹: Մ. Բարխուդարյանցը, որը մամրամասնորեն տվել է Արցախ աշխարհի տեղագրությունը, Կաղանկատույքը տեղադրում է Դյուտական գյուղի հարևանությամբ գտնվող ավերակների տեղում՝ Թալիշ և Մատաղիս գյուղերի միջև¹²: Կաղանկատույքի այդ տեղադրությունը քննություն չի բռնում, քանի որ, գտնվելով Դյուտական գյուղի հարևանությամբ, հիշյալ ավերակները մտնում էին Արցախի մեջ, իսկ Կաղանկատույքը գտնվում էր Ուտիքի Ուտի Առանձնակ գավառում՝ վերջինիս և Արցախի միջև սահմանին մոտ՝ Տրտու գետի ափին¹³: Այդ պատճառով ուսումնասիրողներն այժմ Կաղանկա-

⁸ Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersburg und Paris, B. IV, Leipzig, 1924, էջ 1044:

⁹ Abū 'L-Kāsim Ibn Haukal al-Nasībī, Kitāb surāt al-ard.-Bibliotheca geographorum arabicorum, ed. III, p. II, Lugd. Bat., 1967, 349:

¹⁰ Sē' u al-Istakhrī, Kitāb masālik al-mamālik.-BGA, ed. III, p. I, Lugd. Bat., 1967, չֆ 193, al-Moqaddasi, Kitāb ahsān at-tākasim fī ma'rifat al-akālim.-BGA, ed. III, p. III, Lugd. Bat., 1967, էջ 381-382:

¹¹ Ջ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պատմագրության քարտեզի, Ե., 1936, էջ 200-201:

¹² Մ. Բարխուդարյանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 31:

¹³ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 132-133, 137:

տույքը տեղադրում են Ուտիքում¹⁴, որը Դյուտականի հարևանությամբ գտնվող ավերակներից մոտ 15 կմ հեռավորության վրա է: Կարծում ենք, որ Դյուտականի հարևանությամբ գտնվող ավերակների տեղում տեղորոշվում է ոչ թե Կաղանկատույքը, այլ Կաղկատույքը, որը, ի տարբերություն Կաղանկատույքի, գտնվում էր Արցախում: Խնդիրն այն է, որ Կաղանկատույք անվանումը մինչև հիմա էլ պահպանվել է Դյուտական գյուղի շրջակայքի բնակիչների մեջ¹⁵: Քանի որ այդ ավերակների տեղում բացառվում էր Կաղանկատույքի գտնվելը, ապա կարծում ենք, որ այդտեղ գտնվել է Կաղկատույք գյուղը, որը հարյուրամյակների ընթացքում շրջակայքի բնակչության մեջ անվան մանության պատճառով աստիճանաբար սկսել է ընկալվել որպես Կաղանկատույք: Այդտեղից մինչև Պարտավ մոտ 40 կմ հեռավորությունն ավելի մոտ է արաբ հեղինակների հիշատակած հեռավորությանը:

Մատրիս: Կաղկատույքից հետո ճանապարհի հաջորդ կայանը Մատրիսն էր: Վերջինիս մասին Յակուտ ալ-Համալին հաղորդում է, որ այն փոքր քաղաք էր Առանում (իմա՝ Հայոց Արևելից կողմեր)¹⁶: Հ. Մանանդյանն այս կայանի տեղադրության հարցը լուծել է Մատրիսը սրբագրելով Հատրիսի¹⁷, որը հավանական է՝ կապված արաբերեն «մ» և «հ» տառերի հաճախակի շփոթությունների հետ: Այսպիսի սրբագրումից հետո Հատրիսը կհամապատասխանի հայկական Հաթերք (սեռ. Հաթերից) տեղանվանը: Մեր կարծիքով, Հաթերից գավառի հիշյալ «փոքր քաղաք»-ը հենց գավառի անունով պետք է կոչվեր Հաթերից ավան: Ըստ երևույթին, այն համապատասխանում է հինավուրց Հաթերք գյուղին: Սակայն, հարկ է նշել, որ կայանը պետք է գտնվելիս լիներ ոչ թե Հաթերք գյուղում, այլ դրանից դեպի հարավ՝ ճանապարհի վրա՝ Տրտու գետի ափին:

Դառնմիս: Այս անվանումը Հ. Մանանդյանը պարզաբանում է

¹⁴ Ս. Երեմյան, Հայաստանը և հարևան երկրները 855–953 թթ., քարտեզ, Ե., 1987, Բ. Հարությունյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Ե., 2001:

¹⁵ Յ. Մկրտչյան, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Е., 1988, էջ 58:

¹⁶ Jacut, IV, էջ 412:

¹⁷ Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 199:

այս անգամ արդեն արաբերենի «զ»-«դ» և «մ»-«թ» տառերի հնարավոր շփոթով, ուստի և հարկ է Ղաունիսը սրբագրել Ձաութիսի, որն էլ կհամապատասխանի հայկական Սողք անվանը (գրաբարում՝ Սաւղք, սեռ. Սաւղից)¹⁸: Ճանապարհի այս կայանի անվանումը նախորդի նման Յ. Մանանդյանը կապում է համապատասխան գավառի անվան հետ: Ուսումնասիրողն այն կարծիքին է, թե կայանը պետք է գտնվեր Սեբեոսի հիշատակած «Սաւղայ քաղաքագել»-ի¹⁹, հարակից հատուկ կարավանավայրում²⁰:

Քիւլ-Քույ (Քիւլաքունի): Յ. Մանանդյանը ճիշտ է համարում Մարկվարտին, որը, հիմնվելով ալ-Մուկադդասի տեղեկության վրա, Քիւլ Քույը սրբագրել է Գելաքունի-Գեղաքունիի²¹: Այս կայանը, ինչպես նախորդ երկու կայանները, իր անվանումը ստացել է, թերևս, համապատասխան գավառի անունից, որը գտնվում էր Սողք գավառի հարևանությամբ²²: Արգիճի գետի գետաբերանի աջ կողմում գտնվում էր Կոթ գյուղաքաղաքը, որտեղից ճանապարհի մի ճյուղը, ըստ «Մղոմաշափք»-ի, Դվին էր գնում Բերդկունքով²³, իսկ մյուս ճյուղն էլ թեքվում էր հարավ և Դվին հասնում Սիսաջան կայանով: Ուստի և հավանական է, որ հենց այստեղ՝ ճամփաբաժանի վրա, գտնվեր Գեղաքունի կայանը:

Ճանապարհը Գեղաքունիքից Սիսաջան կայան էր գնում Արգիճի գետի ափով ու Սելիմի լեռնանցքով, որի ապացույցն են հին քարավանատների ավերակները նշյալ լեռնանցքում ու նրանից հարավ²⁴: Այնուհետև, հավանաբար, ճանապարհն Արփա գետի ափով հասնում էր Երասխի հովիտ, որտեղ՝ Նախիջևանի սահմանի մոտ, պահպանվել են քարավանատան ավերակներ:

Սիսաջան: Ըստ Յ. Մանանդյանի՝ Սիսաջան կայանն իր անունը ստացել էր համապատասխան երկրանաւի՝ Սիսականի (Սյու-

¹⁸ Անդ, էջ 196–199:

¹⁹ Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 88:

²⁰ Յ. Մանանդյան, Յին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 199:

²¹ Անդ, էջ 196:

²² Անդ:

²³ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 381:

²⁴ Ղ. Ալիշան, Սիսական, Վեներտիկ, Ս. Ղազար, 1893, էջ 163–165:

նիք) անվանումնից²⁵:

Ըստ Բ. Հարությունյանի, Սիսաջան կայանը հինավուրց Վայս ամրոցի շրջակայքում էր: Վայս ամրոցի ավերակները ներկայումս կոչվում են Վեյսալի դալասի և գտնվում են Տանձիկ գյուղի մոտակայքում²⁶: Ա. Ղարազոյանի կարծիքով այն համապատասխանում էր Սյունիքի մերձակայքում՝ Շարուրի դաշտում կառուցված Մարակերտին, ինչն ավելի հավանական է:

Մետաքսի ճանապարհի երկրորդ ուղեգիծը Հայաստան էր մտնում հարավից և Մարանդով ու Նախիջևանով ընթանում Դվին²⁷:

Մարանդից Դվին ճանապարհի կայանների տեղադրությունները հայտնի են, իսկ երթուղին Երասխի հովիտ էր իջնում Մարանդ-Ջուղա ուղեգծով: Հենց այս երթուղին է հիշատակում Ղևոնդը՝ պատմելով, որ արաբական մի զորախումբ, գերեվարելով Գողթն գավառի և Նախիջևանի ժողովրդին, անցկացնում է Ջուղայի գետանցով²⁸: Մարանդ-Դվին ճանապարհը Արփա գետի ստորին հոսանքում միանում էր Պարտավ-Դվին ճանապարհին:

Մետաքսի ճանապարհի երրորդ ուղեգիծը գալով Մարաղայից, Հայաստան էր մտնում Պարսկահայքով (Որմի (Ուրմիո)-Սաղամաս-Հեր երթուղով), անցնում Կալա Յունիս և Կալա ալ-Ասաբիատ կայաններով և ընթանում Դվին²⁹:

Կալա Յունիսը, որն ալ-Մուկադդասին հիշատակում է Հայաստանի քաղաքների թվում, գտնվում էր Վասպուրականի Դերենիկ թագավորի (943–958 թթ.) թագավորության մեջ³⁰: Այն համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոզովիտ գավառի Դարյունից բերդին: Կոզովիտ գավառը Դարյունից բերդով Վաս-

²⁵ Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 194–195: Հմմտ. Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը (պատմաաշխարհագրական առումով), Ե., 1966, էջ 90–96:

²⁶ Բ. Հարությունյան, Դվին-Պարտավ ճանապարհի Sīsaǰān-Gēlakūnī գծամասը, «ՊԲՀ», 1968, թիվ 1, էջ 217–218:

²⁷ Ibn Khordadbeh, էջ 122, al-Moqaddasi, էջ 381–382:

²⁸ Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 7:

²⁹ Տե՛ս al-Moqaddasi, էջ 392:

³⁰ Տե՛ս al-Moqaddasi, էջ 377:

պուրականի թագավորությանը միացրել էր Դերենիկ թագավորի նախորդը՝ Գագիկը (908–943 թթ.)³¹:

Կարիա ալ-Ասաբիատ: Վերջինը, ըստ արաբ հեղինակի՝ գըտնվում էր Կալա Յունիսից 1 անցում հեռավորության վրա (մոտ 30–40 կմ): Կարծում ենք, որ այդ կայանը հաստատապես պետք է գտնվելիս լիներ մինչև Հայկական պար լեռնաշղթան ընկած շրջանում:

Սեբեոսի մի արժեքավոր հիշատակությունն օգնում է ճշտել այս ճանապարհի երթուղին Դարյունից բերդից հյուսիս: Նկարագրելով արաբների 647 թ. արշավանքը³²՝ պատմիչն ի մասնավորի հաղորդում է, որ Արծափում պաշարվածներն օգնություն են խընդրել Դարյունից բերդից³³: Արծափ բերդը գտնվում էր Դարյունից բերդից մոտ 17 կմ հեռավորության վրա, ինչը հնարավորություն էր տալիս նրա պաշտպաններին՝ օգնություն կանչելու այնտեղից: Ելնելով վերոհիշյալից՝ ենթադրում ենք, որ ալ-Ասաբիատ անվանումը նույնական է Արծափ անվանը: Ինչ վերաբերում է «Կարիա» բառին, ապա այն «կալա» (բերդ) բառի աղավաղված տարբերակը կարող է լինի: Այդպիսի աղավաղումը, ի դեպ, առկա է նաև Կալա Յունիսի դեպքում (Կարիա Յունիս): Սակայն, «Կարիա» բառը արաբերենից թարգմանաբար նշանակում է «գյուղ», «ավան», ինչը, թերևս, առավել հավանական տարբերակ է: Հասկանալի է, որ ճանապարհն անցնելու էր բերդի մերձակայքով, իսկ մերձակայքում գտնվող գյուղը պարզապես կոչվելու էր «գիւղն Արծափաց», որը մասամբ արաբերեն թարգմանվելու դեպքում դառնալու էր «Կարիա ալ-Արսաբատ»:

Ղևոնդի և Անանուն Ջրուցագրի հիշատակած «Արծափաց» անվանաձևը, ամենայն հավանականությամբ, գործածական էր միջնադարում: Արաբերենում «ծ» տառի բացակայության պայմաններում արաբ աշխարհագետներն օգտագործում էին «ս» տա-

³¹ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը Վ. Վարդանյանի, Ե., 1985, էջ 444:

³² Է.Լ.Դանիելյան, Արաբական 647 թ. Արշավանքը Հայաստան. ՊԲՀ., 1982, N 2, էջ 106–116:

³³ Սեբեոս, էջ 145:

ռը, ինչպես, օրինակ՝ Սամանդու-Ծամնդավ³⁴ և Սանարիա-Ծանարիա³⁵ դեպքերում, իսկ «ց» տառի բացակայության պայմաններում արաբերենում օգտագործվում է «տ» տառը: Կարծում ենք, որ արաբերենում «զգիւղն Արծափաց» բառակապակցությունը, հաշվի առնելով վերոհիշյալ պարզաբանումները, մասամբ թարգմանվելու հետևանքով հնչելու էր «Կարիա ալ-Արսաբատ», որը հետագայում աղավաղվել ու վեր է ածվել «Կարիա ալ-Ասաբիատ»-ի:

Կարծում ենք, որ ճանապարհն Արծափից հետո անցնում էր Հայկական պար լեռնաշթան Չինգիլի լեռնանցքով ու Օրկովի կիրճով, այնուհետև, թեքվում էր դեպի արևելք և իջնում Երասխ գետի հովիտն՝ Արտաշատի կամրջի մոտ: Այն, հավանաբար, անցնում էր Երասխը Արտաշատի կամ Տափերի (Տափերական) կամրջով ու շարժվում դեպի Դվին:

Այժմ կարող ենք անդրադառնալ Մետաքսի ճանապարհի երթուղուն Դվինից դեպի Բյուզանդիա: Ի սկզբանե նշենք, որ այս ճանապարհը հիշատակվում է նաև «Մղոնաչափք»-ում՝ հետևյալ կայաններով. Դվին-Կարին (խնդրո առարկա շրջանում ճանապարհն ընթանում էր արդեն Արծն քաղաքով)-հայ-բյուզանդական սահմանային շրջան-Կողոմնիա-Նեոկեսարիա-Ամասիա-Կոստանդնուպոլիս³⁶:

Դվին-Կոստանդնուպոլիս ճանապարհը Դվինից մինչև Բասեն ուներ երկու ուղեգիծ՝ Անիով և Բագավանով:

Առաջին ուղեգծի վրա սկսել էր զարգանալ Անին: Ըստ ալ-Մուկադդասիի՝ X դ. սկզբին Դվինի ամենամեծ դարպասներից մեկը կոչվում էր Անի քաղաք-ամրոցի անունով: Պատճառն այն էր, որ Մետաքսի ճանապարհի գլխավոր ուղեգիծն այդուհետ ընթանում էր Անիի բերդի մերձակայքով:

Այս ուղեգծի վրա սկսեց զարգանալ նաև Կարսը, որն արդեն Սմբատ Ա-ի գահակալության սկզբում, դատելով Հովհաննես

³⁴ Jacut, III, էջ 144:

³⁵ Ibn Khordadbeh, էջ 122:

³⁶ Յ. Մամանյան, Երկեր, հ. 2, Ե., 1985, էջ 182–183:

Դրասխանակերտցու տեղեկություններից, սկսել էր ձևավորվել որպես քաղաք: Պատմելով այն մասին, թե ինչպես է Աշոտ Ա-ի եղբայր Աբասը փորձ կատարում չենթարկվել Սմբատ Ա-ին, պատմիչը հաղորդում է, որ «այնուհետև Սմբատայ զօր մեծ գումարտակ արարեալ՝ ասպատակ սփռելի վերայ աշխարհակոյտ շինիցն Աբասայ շուրջ զամրոցան»³⁷: Անկասկած, խոսքը միջնաբերդի շուրջ տարածվող արվարձանների մասին է:

Քանի որ Հայ Բագրատունիների տերության հիմնադրումից հետո իր գոյությունը պահպանում էր Կարինի ամիրայությունը, ապա Մետաքսի ճանապարհը այդ շրջանում շրջանցում էր Կարնո քաղաքը: Ըստ Թովմա Արծրունու՝ Դվինի 893 թ. երկրաշարժից հետո՝ 894/5 թ. բյուզանդական զորքը պաշարեց Կարնո քաղաքը, բայց անհաջող³⁸: Քանի որ մինչ այդ՝ 893 թ., կնքվել էր հայ-բյուզանդական պայմանագիրը, է. Դանիելյանը բյուզանդացիների կողմից Կարնո քաղաքի պաշարումն իրավացիորեն դիտարկում է հայ-բյուզանդական դաշինքի համատեքստում³⁹: Ամենայն հավանականությամբ, Բյուզանդիան նպաստում էր Մետաքսի ճանապարհի շրջակայքի՝ արաբներից մաքրման գործընթացին, որն արևելքից սկսել էր Սմբատ Ա-ն, գրավելով Բասենը: Սակայն, բյուզանդացիները Կարնո քաղաքը գրավել չկարողացան, իսկ տեղի արաբական ամիրայությունը գոյատևեց: Դրա հետևանքով սկսում է զարգանալ Արծն քաղաքը, որը գտնվում էր Կարնո քաղաքից ոչ հեռու: Ըստ XI դ. բյուզանդական պատմիչ Հովհաննես Սկիլիցեսի՝ Արծնը մեծ քաղաք էր, որն առևտրի համար ուներ հարմար դիրք: Այնտեղ առևտուր էին անում Հնդկաստանից, Պարսկաստանից և այլ երկրներից բերված ապրանքներով⁴⁰: Ինչպես ճիշտ կերպով

³⁷ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 148:

³⁸ Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985, էջ 358: Բյուզանդացիները Կարին և Բասեն արշավեցին նաև 901 և 902 թթ. (տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Օիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1970, էջ 15):

³⁹ Տես է. Դանիելյան, Մանագկերտը բյուզանդա-արաբական հակամարտության ոլորտում (IX դարի երկրորդ կես – X դար), – «Պատմա-բանասիրական հանդես», 1977, թիվ 1, էջ 158–159:

⁴⁰ Տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Բյուզանդական

նշում է Բ. Առաքելյանը, Արծնը պետք է հատկապես աճեր X դ. ընթացքում⁴¹: Այսինքն, հավանական է, որ խնդրո առարկա շրջանում սկսել էր քաղաքի ձևավորման գործընթացը:

Խոսելով առաջին ուղեգծի մասին, պետք է նշել, որ դրա ուղղությամբ գտնվող շրջանները Սմբատ Ա-ի օրոք կցվել էին արքունի տիրույթներին: Խոսքը, մասնավորապես, Բասեն գավառի մասին է: Սմբատ Ա-ն, ի թիվս այլ շրջանների, ազատագրել էր նաև Բասեն գավառը⁴²: 893 թ. հայ-բյուզանդական առևտրական պայմանագրի կնքումից հետո Սմբատ Ա-ն իր տիրույթներին կցեց Բասենը, ամենայն հավանականությամբ, մայրուղին վերահսկողությամբ ներքո պահելու նպատակով:

Պետք է նշել նաև, որ Աշոտ Ա-ի մայրաքաղաք Բագարանը և Սմբատ Ա-ի մայրաքաղաք Երազգավորսը ուղղակիորեն կապված էին Դվին-Տրապիզոն ճանապարհին Անիով:

Այսպիսով՝ ճանապարհի առաջին ուղեգիծը Դվինից շարժվում էր հյուսիսարևմտյան ուղղությամբ, Անիով անցնում Կարս և շարժվելով արևմուտք՝ հասնում էր Վաղարշավան, իսկ այնուհետև՝ Արծն: Այնտեղից դեպի արևմուտք ճանապարհը մուտք էր գործում Բյուզանդական կայսրություն:

Ճանապարհի երկրորդ ուղեգիծը Դվինից մինչև Բասեն ընթանում էր Բագավանով: Ճանապարհի այդ հատվածը համապատասխանում էր հայոց հինավուրց Արքունի պողոտայի կամ Արտաշատ-Տիգրանակերտ մայրուղու Արտաշատ-Բագավան գծամասին⁴³:

Ինչպես ցույց է տալիս Ղևոնդի մի վկայությունը, Արքունի պողոտան գործում էր նաև VII դ.⁴⁴: Ամենայն հավանականությամբ, այն անցնում էր Երասխ գետն Արտաշատի կամ Տափերի (Տափերական) կամրջով: Համաձայն Հ. Մանանդյանի տեղադրություննե-

աղբյուրներ, Գ. Հովհաննես Սկիլիցես, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Ե., 1979, էջ 159–160:

⁴¹ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դդ., Ի I, Ե., 1958, էջ 111:

⁴² Ամանուն Զրուցագիր, էջ 159–161:

⁴³ Ղևոնդ, էջ 140:

⁴⁴ Անդ:

րի՝ Արտաշատի և Բագավանի միջև՝ Արքունի պողոտայի վրա, գտնվում էին Փառախոտ, Ցուլակերտ և Արուն բնակավայրերը⁴⁵:

Դատելով Ղևոնդի հաղորդումից՝ Բագավանից հետո Արքունի պողոտան անցնում էր Բագրևանդ գավառում գտնվող Արծնի գյուղով: Պատմիչը, խոսելով այն մասին, թե ինչպես են արաբական զորքերն Ամր զորավարի գլխավորությամբ Ջորա պահակով մտնում Հայաստան և գալիս Խլաթ, պատմում է, որ ապա «նոյնժամայն շունչ կլեալք՝ դարձեալ յարծակէին, ուշ եղեալ ելանել յառաջին պողոտայն արքունի ընդ գավառն Ապահունիս: Հասանէին ի գաւառն Բագրևանդ ի գիւղն Արծնիէ: Այստեղ արաբական զորքերը բանակ են դնում «առ եզերք գետոյն (իմա՝ Արածանի – Ա. Ե.) որ ընդ նա (իմա՝ Արծնի գյուղը – Ա. Ե.) անցանէ»»: Դեպի Արծնի են գալիս նաև Կարնո քաղաքը պաշարած Մուշեղ Մամիկոնյանի զընդերը, գալիս են Բասենով ու հասնում Բագրևանդ: Այստեղ հայկական զնդերը անցնում են Արածանին ու հարձակվում արաբների վրա⁴⁶: Փաստորեն, ճանապարհը Բագավանից Արածանու ափով անցնում էր դեպի արևմուտք ու հասնում Արծնի գյուղը:

Արքունի պողոտան, փաստորեն, դուրս գալով Դվինից, երկու ճյուղ էր տալիս Արծնի գյուղում: Մեկը շարժվում էր Արճեշ, իսկ մյուսը, ըստ «Մղոմաշափք»-ի՝ Կարին: Համաձայն Պեվտինգերյան քարտեզի՝ ճանապարհը երկփեղկվում էր Բագավան հանգուցային կայանից՝ Բագրևանդում⁴⁷: Դատելով հիշյալ ուղղություններից, որոնցով հայոց և արաբական զորքերը եկան ու հանդիպեցին Արծնի գյուղի մոտ և Պեվտինգերյան քարտեզի վերոհիշյալ հիշատակությունից, Արծնին գտնվում էր Բագավանի հարևանությամբ՝ Արածանու ափին ⁴⁸:

⁴⁵ Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 22–25: Տե՛ս նաև Բ. Հարությունյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

⁴⁶ Ղևոնդ, էջ 147–148:

⁴⁷ Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 46:

⁴⁸ Հետաքրքիր է այն, որ Հ. Մանանդյանն իր աշխատությանը կից «Bagauna-Artaxata ուղեգիծը» քարտեզում ճանապարհը երկփեղկել է ոչ թե Բագավանում, ինչպես նշում է Պեվտինգերյան քարտեզը, այլ նրանից դեպի արևմուտք՝ այնտեղ, ուր պետք է գտնվեր Արծնին (տե՛ս Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 47, տե՛ս նաև Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, Ս. Ղազար,

Ճանապարհին այնուհետև Ալաշկերտի դաշտով և Արամանա կոչված գյուղով շարժվելով՝ հատում էր Հայկական պարից արևմուտք գտնվող Ջրաբաշխ լեռները Բագրևանդ գետի վերին հոսանքից դեպի արևմուտք և Բասենում միանում Դվին-Տրապիզոն ճանապարհին⁴⁹: Վերջինիս օգտին է խոսում նաև Ղևոնդի կողմից Արծնիի ճակատամարտի նախօրեին տեղի ունեցող իրադարձությունների նկարագրությունը: Կարնո քաղաքը պաշարած Մուշեղ Մամիկոնյանի զնդերն արաբներին ընդառաջ՝ դեպի Արծնի են գալիս Բասենով ու հասնում Բագրևանդ⁵⁰: Ճանապարհին այնուհետև հասնում էր Խաղտոյառիճ, որտեղ երկփեղկվում էր: Մի ուղեգծով այն ընթանում էր հյուսիս-արևմուտք՝ դեպի Տրապիզոն, իսկ այնտեղից ծովափով դեպի Կոստանդնուպոլիս, իսկ մյուսով՝ դեպի արևմուտք՝ Սատաղ-Կողոնիա-Կոստանդնուպոլիս երթուղով⁵¹:

Պետք է նշել, որ Տրապիզոնն արաբական աղբյուրներում հիշատակվում է որպես հայ վաճառականների համար կարևոր առևտրական կենտրոն: Արաբ պատմիչները հաղորդում են, որ Սմբատ Ա-ի թագավորությունը տարածվում էր Պարտավից մինչև Կարնո քաղաք և Ջազիրայից ու Ատրպատականից մինչև Տրապիզոն⁵²: Դեռևս Ա. Գրենը հանգել էր այն եզրակացության, որ Հայ Բագրատունիների տերության սահմանը հասնում էր Տրապիզոն⁵³: Ամենայն հավանականությամբ, Սմբատ Ա-ի օրոք, երբ 893 թ. կնքվեց հայ-բյուզանդական պայմանագիրը, Տրապիզոնը հայ-բյուզանդական հարաբերություններում վերածվեց կարևոր առևտրական կենտրոնի: Ըստ ալ-Իսթախրիի՝ «նրանք (իմա՝ հայերը – Ա. Ե.) Ռումի երկիրը (իմա՝ Բյուզանդական կայսրություն – Ա. Ե.) մտնելու համար ունեն մի նավահանգիստ, որ հայտնի է Տարաբազունդահ (իմա՝ Տրապիզոն – Ա. Ե.) անունով, որտեղ հավաքվում են վաճա-

1890, էջ 525):

⁴⁹ Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 48–62:

⁵⁰ Ղևոնդ, էջ 147–148:

⁵¹ Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 62–82:

⁵² Տե՛ս al-Istakhri, էջ 188, Ibn Haukal, էջ 344: Դեռևս Ա. Գրենը հանգել էր այն եզրակացության, որ Հայ Բագրատունիների տերության սահմանը հասնում էր Տրապիզոն (տե՛ս А. Грен, *Узл. азбу.*, էջ 78):

⁵³ А. Грен, *Династия Багратидов в Армении.* – “Журнал министерства народного просвещения”, часть ССХС, С.-Петербург, N 80, 1893, ноябрь, էջ 78:

ռականները և [այնտեղից] մուտք գործում Ռումի երկիրը»⁵⁴: Իբն Չաուկալը Տրապիզոնը համարում է Չայոց թագավորության մեջ մտնող դուռ կամ մուտք դեպի Բյուզանդիա⁵⁵: Պետք է նշել, որ Տրապիզոնի՝ Չայ Բագրատունիների տերության մեջ մտնելու հարցը քննության առնելը դժվար է, քանի որ հայկական և բյուզանդական սկզբնաղբյուրները նման տեղեկություններ չեն պահպանել: Սակայն, քանի որ արաբական աղբյուրներում կա նման հիշատակություն, այն շրջանցել չի կարելի: Կարծում ենք, որ Տրապիզոնը հայերի համար Բյուզանդիայի հետ առևտրական հարաբերություններում ձեռք էր բերել խիստ կարևոր նշանակություն և, գտնվելով Չայոց տերությունից Բյուզանդիա ընթացող մայրուղու վրա, բառի բուն իմաստով, դուռ էր հանդիսանում դեպի կայսրության խորքերը:

Նշենք նաև, որ Կարսից Դվին-Տրապիզոն ճանապարհը ճյուղ էր տալիս դեպի Արտանուջ, իսկ այնտեղից էլ՝ ընթանում դեպի Սև ծովի ափերը: Ըստ Թ. Չակոբյանի՝ Արտանուջից ճանապարհը շարժվում էր Սև ծովի ափերն ու հասնում Խուվիթա, որտեղից էլ մի ճյուղով ընթանում էր դեպի Տրապիզոն և դեպի Փուլթ, իսկ մյուսով՝ դեպի Սեբաստուպոլիս⁵⁶:

Չայ Բագրատունիների տերության առևտրական կապերի հիմնական ուղղությունները:

Ինչպես վկայում են դրամական գանձերի հետազոտության տվյալները, Չայ Բագրատունիների տերությունը առևտրական հարաբերություններ ուներ եվրոպական պետությունների, օրինակ՝ Ֆինլանդիայի, Շվեդիայի, Լեհաստանի, Գոտլանդ կղզու, Դանիայի և Գերմանիայի հետ:

Առևտուրը Եվրոպայի հետ ընթանում էր հիմնականում երկու ուղղություններով: Առաջին ուղղությունը Չայաստանի վրայով ընթանում էր Չյուսիսային Կովկաս և անցնում Եվրոպա:

⁵⁴ Տե՛ս al-Istakhri, էջ 188:

⁵⁵ Տե՛ս Ibn Haukal, էջ 344:

⁵⁶ Թ. Չակոբյան, Չայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 2007, էջ 279:

Երկրորդ ուղղությունն Արևելքից գալով՝ Հայաստանի վրայով չարժվում էր դեպի Փոքր Ասիա, այնտեղից՝ ընթանում էր դեպի Կոստանդնուպոլիս, այնուհետև՝ Եվրոպա⁵⁷:

Այսպիսով, IXդ. վերջից Հայ Բագրատունիների տերությունը հանդիսանում էր հիմնական միջնորդն Արևելքի և Արևմուտքի միջև առևտրում և շփումներում՝ ընդհանրապես: Բագրատունի թագավորներին հաջողվեց Հայոց տերությունը դարձնել չեզոք երկիր՝ հնարավորություն ընձեռելով Արևելքին և Արևմուտքին՝ վերսկսելու նաև քաղաքակրթական շփումները: Այդ իրողության մեջ արտացոլվում է նաև Հայաստանի քաղաքակրթական ներդրումը պետությունների և ժողովուրդների զարգացման և միջազգային երկխոսության վերականգնման գործում: Վերարժևորվում է նաև Հայաստանի քաղաքակրթական ավանդն ինչպես դարաշրջանի գերտերությունների՝ Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության, այնպես էլ հարևան ու հեռավոր թագավորությունների ու ժողովուրդների զարգացման գործում:

⁵⁷ Խ. Մուշեղյան, Արևելյան դրամների գանձերը և Հայաստանի տնտեսական կապերի հիմնական ուղղությունները VIII–X դարերում, «ՊԲՀ», 1978, թիվ 3, էջ 231–233:

А. ЕГИАЗАРЯН

**ШЕЛКОВЫЙ ПУТЬ И АРМЯНСКОЕ ЦАРСТВО
В КОНЦЕ IX И В НАЧАЛЕ X ВВ.**

С конца IX века царство армянских Багратидов являлось основным посредником между Востоком и Западом в сфере торговли и в целом в международных отношениях. Осмысливается также цивилизационный вклад Армении в процессе развития соседних и дальних царств и народов.

A. YEGHIAZARYAN

**THE SILK ROAD AND ARMENIAN KINGDOM AT THE
END OF IX AND THE BEGINNING OF X CENTURIES**

From the end of IX century the Armenian Bagratid Kingdom was the main mediator between East and West in the sphere of trade and generally in international relations. Also the civilizational contribution of Armenia in the processes of development of the neighbouring and far kingdoms and peoples is comprehended.

**ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՅԻ ԱՅԱՍ-ԹԱՎՐԻՉ
ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՄԱՅՐՈՒԴԻՆ
(XIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XIV Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)**

Տնտեսաաշխարհագրական բացառիկ նպաստավոր դիրքի շնորհիվ Կիլիկյան Հայաստանը հայտնվել էր առևտրական կարևորագույն ճանապարհների հանգուցակետում: Այստեղ խաչաձևվում էին աշխարհի չորս կողմերից ձգվող թե՛ ծովային, և թե՛ ցամաքային ուղիները: XIII–XIV դդ. Հարավային Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական կապերում առաջնային նշանակություն էր ստացել Այաս-Թավրիզ քարավանային ճանապարհը:

1243 թ. Չմանկատուկի ճակատամարտում Իկոնիայի սուլթանությունը ջախջախիչ պարտություն է կրում մոնղոլական զորքերից, ինչը վերջ է դնում նրա գերիշխանությանը Փոքր Ասիայում: Դրանով սելջուկները զրկվում էին նաև առևտրական կարևոր ճանապարհների տնօրինումից: Նույն թվականին Կեսարիայում Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների միջև կնքվում է համաձայնագիր¹: Երկու տարի անց՝ 1245 թ., Հեթում Ա-ը վերահաստատում է Վենետիկին շնորհած արտոնագրերը²:

Անկասելի արագությամբ առաջ շարժվող մոնղոլական ռազմական մեքենան, այնուամենայնիվ, շրջանցում է Կիլիկիան Հայաստանը և Տրապիզոնի կայսրությունը: Այս երկու պետությունները Միջերկրական և Սև ծովեր դուրս եկող լավագույն դարպասներն էին, իսկ դրանց ասպատակումը կնշանակեր վերջնականապես խաթարել տարածաշրջանում ձևավորված առևտրական կապերի համակարգը, ինչը հետագայում մեծ եկամուտներ էր ապահովելու մոնղոլներին:

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 282: Գալստյան Ա., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, N 1, էջ 96–100:

² Langlois V., Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, p. 143–145.

Ամենակին չի բացառվում, որ Հեթում Ա-ը մոնղոլական արքունիքում, ի թիվս շատ հարցերի, շոշափել է նաև միջազգային առևտրին առնչվող որոշակի խնդիրներ, ինչպիսիք կարող էին լինել, օրինակ, հեռավոր Չինաստանից ծովով Մետաքսի ճանապարհի՝ Մերձավոր Արևելք մտնող ճյուղավորումների ճշգրտումը, ինչպես նաև իտալական ծովային հանրապետությունների՝ Վենետիկի և Ջենովայի հետ առևտրական կապերի հաստատումը, որտեղ Կիլիկյան Հայաստանը միջնորդական կարևոր դեր ստանձնելու մեծ հնարավորություններ ուներ։ Առավել ևս, որ Հայոց թագավորությունն իտալացիների հետ առևտրական սերտ փոխհարաբերությունների արդեն հիսուն տարվա ավանդույթներ ուներ։

Սանգու խանի հրամանով Չինգիզ խանի ևս մեկ թոռ՝ Հուլավուն, 1256 թ. հաստատվելով Իրանում, հիմնում է մոնղոլական տերության ուլուսներից մեկը՝ Իլխանությունը (1256–1353 թթ.), որը 1261 թ. մեծ խան Խուբիլայի (1259–1294 թթ.) կողմից ճանաչվեց որպես ինքնուրույն պետություն։ Եվ արդեն 1258 թ. Հուլավուն նվաճում է Բաղդադը և կործանում Աբբասյան խալիֆայությունը։ Այս իրադարձությունը շրջադարձային նշանակություն ունեցավ Մերձավոր Արևելքի ոչ միայն քաղաքական իրավիճակի համար, այլև դեռ մեծ փոփոխություններ պետք է առաջացներ նաև տարածաշրջանի տնտեսական կյանքում։ Այսպես, եթե մինչ այդ Հնդկաստանից և Չինաստանից ապրանքները Պարսից ծոցով բերվում էին Բաղդադ, որտեղից դրանք քարավանային ճանապարհներով ուղղվում էին խաչակրաց նավահանգիստներ, ապա Հուլավյանները ճանապարհային գլխավոր հանգուցակետը տեղափոխում էին դեպի հյուսիս՝ իրենց մայրաքաղաք Թավրիզ³։ Պարզ է, որ նախկին բոլոր ճանապարհները կորցնելու էին երբեմնի նշանակությունը և արդեն անհրաժեշտ էր փնտրել առևտրական նոր մայրուղի, որը պետք է դուրս գար մի կողմից Միջերկրական, իսկ մյուս կողմից էլ՝ Սև ծովեր։ Հենց Այաս-Թավրիզ ճանապարհին էլ դառնում է այդ ռազմավարական ծրագրերի արդյունքը։ Ուղու միջնամասում այն ճյուղավորվում և ուղղվում էր Տրապիզոնի կայսրություն։ Բա

³ Микаелян Г., История Киликийского Армянского государства, Е., 1952, с. 352.

-ցի այն, որ մոնղոլներն այդպիսով հեշտությամբ կապվում էին ամբողջ սևծովյան ավազանի հետ, Թավրիզը շատ ավելի հարմար կետ էր Կովկասով հյուսիսի հետ առևտրական կապ պաշտպանելու համար:

Թավրիզից Բաղդադով ու Պարսից ծոցով տնտեսական կապ էր պահպանվում հարավարևելյան Ասիայի, իսկ ցամաքային ուղով՝ Միջին Ասիայի ու Հեռավոր Արևելքի հետ: Ֆրանչեսկո Բալդուչի Պեգոլոտտին իր ձեռնարկում ներկայացրել է գրաստի վրա բարձրագույն ապրանքն Այասից Թավրիզ տեղափոխելու ճանապարհաժամասը, որտեղ կայան առ կայան նշել է այդ ուղու վրա գտնվող խոշոր բնակավայրերը: Բանն այն է, որ Պեգոլոտտին քաղաքների անվանումներին տվել է արտահայտված իտալերեն հնչողություն, ինչն էլ երկար ժամանակ բազմաթիվ ուսումնասիրողների համար նշյալ ուղին հետազոտելու հիմնական դժվարությունն է եղել: Բավական է միայն նշել, որ ճանապարհի վերջնամասում գտնվող Խոյ քաղաքը ֆլորենտացին հիշատակել է Condoro ձևով⁴: Համադրելով Վ. Հեյդի⁵, Հ. Յուլի⁶, Հ. Մանանդյանի⁷ և մի շարք այլ ուսումնասիրողների տեսակետները՝ Գր. Միքայելյանն առանձնացրել է ուղու հիմնական կայանները՝ Այաս-Կեսարիա-Սեբաստիա-Երզնկա-Երզրուն-Խոյ-Թավրիզ: Ինչպես տեսնում ենք, դրանց մեծ մասը բուն Հայաստանի հայաշատ խոշորագույն քաղաքներն էին: Հայտնի է, որ Նախիջևանը ևս Խոյի միջոցով կապվում էր այս մայրուղուն: Երզրունից Կարս և Անի գնացող ճյուղավորումը ճանապարհը կապում էր Կովկասի և ընդհանրապես հյուսիսի հետ⁸: Բաբերդով գնացող ճանապարհով էլ Երզրունը կապվում էր Տրապիզոնի հետ⁹, որի միջոցով Այասը միանում էր սևծովյան ամբողջ ավազանին:

⁴ Francesco Balducci Pegolotti, *La Pratica della Mercatura*, New York, 1970 (այսուհետև՝ Pegolotti), p. 28–29.

⁵ Heyd W., *Histoire du commerce du Levant au moyen âge*, t. II, Amsterdam, 1967, p. 112–119:

⁶ Yule H., *Cathay and the Way Thither: Being a Collection of Medieval Notices of China*, V. II, London, 1866, p. 299–301.

⁷ О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Е., 1954, с. 285–296:

⁸ Микаелян Г., *Աշխ.*, էջ 350–361:

⁹ Карпов С., Трапезундская империя и Западноевропейские государства, с. 22. Canestrini G., *Documenti spettanti al commercio dei Veneziani con l'Armenia e Trebisonda, Ragusa e Negroponte (1201–1321)* // *Archivio Storico Italiano*, T. IX, Ap. 29, Firenze, 1853,

Ասորիքից Փոքր Ասիա տանող գլխավոր ճանապարհը նույնպես անցնում էր Կիլիկիայի տարածքով: Այն Կիլիկյան Հայաստան էր մտնում Պորտելլա (Դռնակ կամ Դրունքն Ասորւոց, իտալ. Portella) լեռնանցք-անցակետով և ձգվում Միջերկրական ծովի ափի ամբողջ երկայնքով, որից դեպի հյուսիս ուղղված բազմաթիվ ճյուղավորումներն սկիզբ էին առնում Կիլիկյան խոշոր նավահանգիստներից: Ի դեպ, Պորտելլայով հարավ գնացող ուղին ձգվում էր մինչև Արաբական թերակղզու ծայր հարավ՝ Ադեն նավահանգիստ, որը Կարմիր ծովի դարպասն էր: Սինայի թերակղզու մոտ այս ճանապարհը ճյուղավորվում էր դեպի եգիպտական նավահանգիստներ: Գուզլակ (Կապան Կուկլկայ, Անցք Կիլիկիայի, Pylae Ciliciae) կոչված մյուս կարևոր անցակետով, որը գտնվում էր Կիլիկիայի արևմուտքում, կարելի էր անցնել Սեբաստիա, իսկ այնտեղից էլ՝ Սև ծով ու Թավրիզ¹⁰:

Հայ վաճառականների մասին հիշատակությունների մնացած սակավությունը բացատրելու համար նախ փորձենք ուրվագծել Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական կապերում ձևավորված այն ոլորտները, որոնցում պետք է որ հայերը հատկապես ներգրավված լինեին: Ամենայն հավանականությամբ նրանց համար առաջնային նշանակություն է ունեցել ցամաքային, այն է՝ հիմնականում Այաս-Թավրիզ մայրուղով ընթացող առևտուրը, որը ներառում էր բուն Հայաստանի խոշոր քաղաքները: Գր. Միքայելյանը նկատել է, որ սելջուկների կողմից գրեթե ամբողջ Առաջավոր Ասիայի նվաճումը ծանր հարված հասցրեց Անիով, Կարսով և հայկական խոշոր այլ քաղաքներով անցնող կարևոր ճանապարհներին, որոնց միջոցով ապրանքները տեղափոխվում էին Տրապիզոն, ապա՝ Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից էլ՝ Եվրոպա¹¹: Բաղդադի նվաճումից հետո առևտրական ճանապարհների ցանցը տե-

p. 335. Racine P., Images de la colonisation placentine a l'Aïas et Caffa a la fin du XIIIe siècle // Rivista di bizantinistica, N 3, 1993, p. 354.

¹⁰ Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 129, 416–417: Մուքաֆյան Վ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001, էջ 321–322: Տեր-Ղևոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145–1226 թվականներին, Ե., 1994, էջ 136–137: Հայաստանի պատմության ատլաս, էջ 76–77: Lane F., Venice. A Maritime Republic, London, 1973, p. 71.

¹¹ Микаелян Г., նշվ. աշխ., էջ 189:

Հետաքրքիր է սկզբնաղբյուրներում եղած տեղեկությունները հայ առևտրականների ուղիների աշխարհագրական ընդգրկման մասին: Արևելքում դրանք ձգվում էին մինչև Սիամ, Կոչինչին, Ջավա և Ֆիլիպիններ, իսկ Արևմուտքում՝ Եվրոպայի երկրները: Հատկանշական է Ֆրանսիացի ծովագնաց Ժան-Ֆրանսուա դե Լա Պերուզի (1741–1788 թթ.) այն տեղեկությունը, որ պայմանավորված քաղաքական հանգամանքներով, ի տարբերություն եվրոպացիների, Մանիլայի նավահանգիստ թույլատրվում էր մուտք գործել միայն հայերին, որոշ մավրերի և Գոայի պորտուգալացիներին⁸: XVIII դ. վերջում Բատավիա-Ջակարտայում, Սուրաբայայում հաստատված հայերի մեծ մասը զբաղվում էր թանկարժեք քարերի, հատկապես, ադամանդի առևտրով⁹: Ֆր. Մակլերը նշում է, որ ոսկերչությունը և փորագրությունը դեռևս անտիկ ժամանակներից շատ հարգի էր հայերի մոտ: Հատկապես Վանի ոսկերիչները հայտնի էին իրենց վարպետությամբ: Դարեր անց, երբ համեմատաբար մեծ թվով հայ ոսկերիչներ հաստատվեցին Փարիզում, այն դարձավ «վանյան փորագրության» մի իսկական կենտրոն¹⁰:

Ֆրանսիացի ճանապարհորդները բարձր են գնահատել միջազգային առևտրում հայ առևտրականների ծավալած գործունե-

⁶ Deux voyages en Asie au XIII^e siècle par Guill. de Rubruquis (envoyé de Saint-Louis) et Marco Polo, Paris, 1888, p. 156.

⁷ Ibid., p.157.

⁸ Jean-François de Galaup La Pérouse, Jean-François de La Harpe, Relation abrégé d'un voyage de La Pérouse: pendant les années 1785, 1786, 1787 et 1788, Leipsick, 1799, p. 281.

⁹ Trois Conférences sur l'Arménie ... p. 37.

¹⁰ Ibid., p. 63–66.

ուրթյունը: 1805 թ. Նապոլեոն I կայսեր հանձնարարությամբ դիվանագիտական նպատակներով Արևելք ուղևորված Ամեդե ժոբերը (1779–1847 թթ.) գրում է. «Այնուամենայնիվ, պետք է համաձայնվել, որ նրանք (հայերը) շատ խելամտություն և ազնվություն են ցուցաբերում առևտրում»¹¹:

Համաձայն ժոզեֆ Տուրնեֆորի (1656–1708 թթ.) գնահատականի, հայերի քրիստոնյա լինելը հեշտացնում էր Եվրոպայի այլ ազգերի հետ նրանց հաղորդակցությունը: Նա նշում է, որ «հայերն աշխարհի լավագույն, ազնիվ, քաղաքավարի մարդիկ են՝ լի առողջ դատողությամբ և պարկեշտությամբ»: Տուրնեֆորը, մինևույն ժամանակ, կարևորում է հայերի չափավորությունը, սըրտաբացությունը, անկեղծությունը, մեծ ուղևորություններ ձեռնարկման կարողությունը¹²: Այս գնահատականներին համահունչ է 1726 թ. Ամստերդամում լույս տեսած «Առևտրի համաշխարհային հանրագիտարանի» այն տեղեկությունը, որ Ասիայի ազգերից Ձմյուռնիայում ամենամեծ առևտուր անողները հայերն էին և Պարսկաստանից եկող քարավանները գրեթե ամբողջությամբ իրենք էին առաջնորդում: Նույն հանրագիտարանի այլ տեղեկությունների համաձայն՝ Ձմյուռնիայում հայերն ունեին ավելի քան 12 հազար վաճառակետեր¹³: Նաև նշված է, որ Մարսելում և Ձմյուռնիայում մետաքսի, բամբակի, մոմի ապրանքատեսակների կեղծումը սովորական էր համարվում հույների և հրեաների համար, այնինչ հայերը վստահություն և մեծ հարգանք էին վայելում¹⁴:

Առևտրական նպատակներով Արևելք ուղևորված Ֆրանսիացի ժան Շարդենը (1643–1713 թթ.) իր ճանապարհորդությանը նվիրված աշխատությունում նշում է, որ Ձմյուռնիայում ակտիվ գործու-

¹¹ Amédée Jaubert, Voyage en Arménie et en Perse, dans les années 1805 et 1806, Paris, 1821, p. 110.

¹² J. P. de Tournefort, Relation d'un voyage du Levant : fait par ordre du roi : contenant l'histoire ancienne et moderne de plusieurs îles de l'Archipel, de Constantinople, des Côtes de la mer Noire, de l'Arménie, de la Géorgie, des frontières de Perse, et de l'Asie Mineure, Amsterdam, 1718, t. II, p. 158.

¹³ Dictionnaire universel de commerce: contenant tout ce qui concerne le commerce qui se fait dans les quatre parties du monde, Amsterdam, 1726, t. I, p. 1002.

¹⁴ Dictionnaire universel de commerce: contenant tout ce qui concerne le commerce qui se fait dans les quatre parties du monde, Genève, 1742, t. II, p. 547.

նեություն ծավալած հոլանդացիների գլխավոր շահույթը «հայերին և նրանց ապրանքները Եվրոպա և այնտեղից հետ ուղեկցելն է»¹⁵: Ըստ Տուրնեֆորի՝ հայերը ոչ միայն Լեվանտի առևտրի տերերն էին, այլև կարևոր մասնակցություն ունեին Եվրոպայի մեծ քաղաքների առևտրում¹⁶:

1644 թ. Արևելք ուղևորված միսիոներ Ռաֆայել դյու Մանը գրել է, որ Պարսկաստանից մեծ քանակությամբ մետաքսի բազմազան տեսականի էր դուրս բերվում և հայերն այդ ամբողջն արտահանում էին դեպի հյուսիս՝ Մոսկվա, Շվեդիա, Լեհաստան, Գերմանիա, որտեղ նրանք մեծ շահույթ էին ստանում, քանի որ հյուսիսի նշված բոլոր այս երկրները հետաքրքրված էին մետաքսե գործվածքից տարբեր տեսակի ապրանքների արտադրությամբ¹⁷: Հայերն առևտրական հաստատություններ էին հիմնել Լիվոռնոյում, Վենետիկում և Ամստերդամում: Միևնույն ժամանակ նրանք գալիս էին Փարիզ՝ ձեռք բերելու պերճանքի առարկաներ¹⁸:

Հիմնավորց հայկական Կարին (Էրզրում) քաղաքը և այդ ժամանակաշրջանում, հատկապես նրա մերձակայքում գտնվող Արծն քաղաքը, մետաքսի առևտրի տարանցիկ ուղիների վրա էր գտնվում և այստեղով մեծ թվով քարավաններ էին անցնում: Տուրնեֆորը, նկարագրելով իրենց 300 հոգուց բաղկացած քարավանը, նշել է, որ այն գրեթե ամբողջությամբ հայերից էր բաղկացած, որոնք մետաքս էին տանում Թոխաթ, Ջնյունիա, Կոստանդնուպոլիս¹⁹:

Ռաֆայել դյու Մանը Ֆրանսիայի ֆինանսների նախարար Ժան-Բատիստ Կոլբերին ուղղված իր զեկուցագրում կարևորել է հայ առևտրականների դերը Ֆրանսիայի հետ առևտրական պայմանագրերի կնքման և Լեվանտից տարբեր ապրանքատեսակների արտահանման գործում: Նա գրում է, որ հայերը կարող են Ֆրանսիա բերել մեծ քանակությամբ տարբեր գույնի շագրենի կաշի: Նա

¹⁵Voyages de M^r le Chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, Amsterdam, 1711, t. I, p. 8.

¹⁶J. P. de Tournefort, op. cit., p. 158.

¹⁷Le P. Raphaël du Mans, L'Etat de la Perse en 1660, Paris, 1890, p. 342.

¹⁸Ibid., p. XLII.

¹⁹J. P. de Tournefort, op. cit., p. 168.

նշում է, որ Վանա լճի ջուրն ունի առանձնահատկություն, և այդ լճի ջուրը մշակվում է ամենագեղեցիկ կանաչ շագրենը²⁰: Իսկ Լեվանտի սաֆյանների՝ կարմիր, կապույտ և դեղին տեսակները, որոնք պատրաստվում էին Պարսկաստանում և Հայաստանում, ավելի գեղեցիկ էին և մեծ, քան Ֆրանսիայում պատրաստվածները:

Ռաֆայել դյու Մանը մանրամասն նկարագրում է Վանի միջ-նաբերդը, լիճն ու կղզիները: Նա նշում է, որ բոլոր կողմերից առևտրականներ են գալիս Վան, որպեսզի գնեն լճի ձուկը (տառեխ), որը տանում են Պարսկաստան, Վրաստան, Ռուսաստան, Լեվանտ, որտեղ հնարավոր չէր պատկերացնել լավ ընթրիք՝ վերջում առանց այդ ձկան համոտեսման²¹:

Ֆրանսիացի ճանապարհորդը նշում է, որ հայ առևտրականները կարող են նաև բերել մեծ քանակությամբ այծի բուրդ, քանզի սա առևտրի այն կարևոր տեսակն է, որով նրանք զբաղվում էին Հոլանդիայում և Ֆլանդրիայում, որտեղ պատրաստված մեծաքանակ զգեստները արտահանվում էին իսպանացիների համար Կարիբյան ծովի կղզիներ:

Իր զեկուցագրում նա գրում է, որ հայերը կարող են նաև բերել մեծ քանակությամբ չմանված բամբակ, և այն վաճառել ավելի էժան գնով, քան Ջնյուռնիայից, Հալեպից և այլ վայրերից բերվածները: Եվրոպայում այդ ապրանքի կարիքը շատ կա, եթե հաշվի առնենք այն պահանջարկը, որն անհրաժեշտ է Պրովանսում պատրաստվող ապրանքատեսակների համար²²:

Հատկանշական է, որ Լյուդովիկոս XIII (1610–1643 թթ.) թագավորը և կարդինալ Ռիշելիեն հայ առևտրականներին անցագրեր²³ էին տվել Մարսելում ազատ առևտուր անելու համար: Լյուդովիկոս XIV-ի (1643–1715 թթ.) օրոք Մարսելի առևտուրը նոր թափ ստացավ: Ռաֆայել դյու Մանը Կոլբերի ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ բոլոր ապրանքատեսակներից, որ

²⁰ Le P. Raphaël du Mans, op. cit., p. 345.

²¹ Ibid., p. 347.

²² Ibid., p. 349.

²³ Frédéric Macler, L'Arménie à travers l'art et l'histoire, Paris, 1911, p. 18.

հայերը կկարողանային բերել, պետք էր ջանալ, որ նրանք Մարսել ներմուծեին գխտոր, որն անհրաժեշտ էր սև ներկանյութ ստանալու նպատակով, ինչը Ֆրանսիայի համար խիստ եկամտաբեր կլիներ²⁴:

Կարդինալ Մազարինիի առաջարկով և պնդմամբ 1660 թ. ընդունվեց հրովարտակ՝ Մարսելում հայկական համայնք ստեղծելու վերաբերյալ: 1703 և 1706 թթ. այս հրովարտակը նորացվեց՝ հօգուտ հայկական գործվածքների ներմուծման²⁵: Հայ առևտրականների թիվը XVII դ. երկրորդ կեսից Ֆրանսիայում ավելացավ, որոնք իրենց ներդրումն ունեցան երկրի տնտեսության զարգացման գործում²⁶:

Այսպիսով, ֆրանսիացի միսիոներների և պաշտոնական անձանց ճանապարհորդական գրառումներում կարևոր տեղեկություններ են պարունակվում հայերի թե՛ արհեստագործական հմտության և թե՛ դրա արգասիքների լայն տեսականիով Մետաքսի ճանապարհով ընթացող առևտրին ակտիվ մասնակցելու մասին: Միևնույն ժամանակ նրանք ուշադրություն են դարձրել հայ առևտրականների բարոյական բարձր հատկանիշների վրա, որոնք քաղաքակրթական միջ են կրում: XVIII–XIX դդ. ֆրանսիական պատմագրության մեջ արտացոլված այդ տեղեկությունները կարևոր նշանակություն ունեն հայ պատմագրության առևտրա-տնտեսական և մշակութային կապերին վերաբերող բնագավառների ուսումնասիրության համար:

²⁴ Le P. Raphaël du Mans, p. 350.

²⁵ Fr. Macler, op. cit., p. 18.

²⁶ Ibid.

А. ДУМИКЯН

**ОЦЕНКА ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯН В ТОРГОВЛЕ ПО
ШЕЛКОВОМУ ПУТИ В МЕМУАРАХ ФРАНЦУЗСКИХ
ПУТЕШЕСТВЕННИКОВ XIII–XIX ВВ.**

В путевых записях французских миссионеров и официальных лиц XIII–XIX вв. содержатся важные сведения о Великой Армении, Малой Армении и Киликийской Армении, а также о деятельности армян и об их активном участии в торговле по Шелковому пути. Вместе с тем, миссионеры обращали внимание на высокие моральные качества армянских купцов, носящих на себе печать цивилизации. Эти сведения, отразившиеся во французской историографии XVIII–XIX вв., имеют важное значение для исследований в сфере армянской историографии, касающейся вопросов истории международных торгово-экономических и культурных связей.

А. DUMIKYAN

**ASSESSMENT OF THE ARMENIANS' ACTIVITIES IN THE
SILK ROAD TRADE IN THE MEMOIRS OF FRENCH
TRAVELERS OF XIII–XIX CENTURIES**

In travel records of French missionaries of XIII–XIX centuries there are important data about as Great Armenia, Armenia Minor and Cilician Armenia, as well as active participation of Armenians in the trade along the Silk Road. At the same time they paid attention to the Armenian merchants' high moral qualities, which bear a civilizational mark. The data reflected in the XVIII–XIX cc. French historiography have an important significance for studies in the sphere of Armenian historiography in relation to the questions of the history of international trade and economic, as well as cultural relations.

**ԶՄՅՈՒՆԱՅԱՅ ԱՌԵՎՏՈՒՐԸ
ԼԵՎԱՆՏՈՒՄ ԵՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ**

XII–XIII դդ. և դրանից հետո Վենետիկի և Ջենովայի առևտրի ընդլայնումը Կիլիկիայի հայկական թագավորության և Բյուզանդական կայսրության միջազգային ծովային և ցամաքային տարանցիկ առևտրական ուղիներում՝ խթանեցին նաև հայ առևտրականության կապերն Արևելքի հետ: Հայ վաճառականների գործունեությանը նպաստում էր, մյուս կողմից, Հայաստանի քաղաքների առևտրահանգուցային գործառնությունը: Այստեղից ձգվող ճանապարհները տանում էին դեպի հյուսիս՝ Տրապիզոն և Կ. Պոլիս, սրանց վրայով՝ սևծովյան նավահանգիստներ, ինչպես և տարածվում դեպի Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած առևտրական ուղիները: Դա հնարավորություն էր տալիս հայ առևտրականներին՝ շարունակ շփվել Լեվանտի առևտրական կենտրոնների հետ: Իսկ սելջուկների ավերիչ ասպատակություններից և զավթումներից հետո Լեվանտում «առաջացել էին հայկական գաղութներ»¹:

Հայաստանում ստեղծված ծանր քաղաքական պայմաններում հայ առևտրականները Ձմյուռնիայում ևս ստեղծել էին իրենց առևտրական հենակետը (Ֆակտորիա)՝ նախքան հայրենիքից տեղի ունեցած արտագաղթերի հետևանքով այնտեղ հայկական գաղթավայրի հաստատումը: Հայերը Էգեյանի մատույցներն էին հասնում Հայաստանի տարբեր շրջաններից՝ միաժամանակ Լեվանտական առևտրական հրապարակներ տեղափոխելով փոքրասիական տնայնագործական արտադրանք և հումք:

Նիկեայի կայսրության (1204–1261 թթ.) և ապա փոքրասիական բեյությունների (XIII դ. վերջից) ժամանակաշրջանում Ձմյուռնիան Կ. Պոլսի, Տրապիզոնի և Այասի հետ միասին փոքրասիական կարևոր նավահանգիստներից մեկն էր:

¹ Մանանդյան Հ., Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ե., 1952, էջ 166:

Եվրոպական առևտրականների հետ հայերի համագործակցության մասին է վկայում այն, որ նրանք գտնվում էին թուրքերի դեմ արշավանքի պատրաստվող Կլիմենտ VI պապի շրջապատում: Արշավանքին մասնակցում էին Վենետիկը, Ջենովան և Կիպրոսը: Դաշնակիցների նավատորմը ուղղվեց դեպի Այդընի էմիրություն և տիրեց Ջմյուռնիայի մեծ մասին, որ տևեց մինչև Լենկթեմուրի կողմից քաղաքի գրավումը (1402 թ.): Այս զինակցությունը ցույց էր տալիս նաև Ջմյուռնիայի կարևոր նշանակությունը Լեվանտի և առհասարակ միջազգային առևտրի ասպարեզում: Այդ նշանակությունը պահպանվեց և ավելի ընդլայնվեց XIV–XV դդ. և հետագայում: Դրան մի հայտնի չափով նպաստեց Միջերկրական ծովի ասիական նավահանգիստների դերի նվազումը, որի հետևանքով առանձնապես աշխուժացան փոքրասիական քարավանային ուղիները, որոնք տանում էին Կ. Պոլիս և Ջմյուռնիա: XVI դ. Միջերկրածովյան առևտրում Վենետիկի թուլացումը պետք է փոխհատուցվեր եվրոպացիների հետ առևտրի մեծացումով, որից դարձյալ շահեցին այդ նավահանգիստները:

XV դ. եվրոպական մանուֆակտուրային արտադրությունը դեպի Արևելք ուղիներ էր հարթում արտադրության մի որոշ մրցունակության պայմաններում: Եվրոպական թավիշը և մահուղը, առանձնապես անգլիական մահուղը, փոքրասիական շուկաներում փոխանակվում էին տեղական արտադրանքի հետ: Հետագայում արագորեն զարգացող իտալական, անգլիական, ֆրանսիական և հոլանդական արտադրությունը Լեվանտի առևտրական հրապարակում գնահատվելու էր մանավանդ հումք ստանալու տեսակետից: Հումքի հարածուն պահանջարկը նշանակալի եկամուտներ էր խոստանում այն անմիջականորեն արտադրության վայր տեղափոխելու գործում: Այս բեկումն էր պատճառը, որ փոքրասիական ներքին առևտրին քաջատեղյակ հայ առևտրականները XVI դ. կեսերին դուրս էին գալիս Ջմյուռնիայից և ծովային ուղիներով հումք (բամբակ, մետաքս) էին հասցնում եվրոպական երկրներ:

XVI–XVII դդ. զմյուռնաբնակ, ինչպես և եկվոր հայ վաճառականները ապրանքացանկի շատ կարևոր տեսակներ էին տեղափոխում Եվրոպա և զգալի տեղ էին գրավում մանավանդ իտալական

քաղաքների հետ շարունակվող առևտրում: 1576 թ. Վենետիկի սե-
նատը զեղչել էր ցամաքով բերված մետաքսի մաքսը, իսկ 1589 թ.
որոշմամբ թեթևացնում կամ անմաքս էր դարձնում Պարսկաստա-
նից ներմուծված մետաքսը, որի զգալի մասը բաժին էր ընկնում
Ձմյուռնիայի նավահանգստին²: Տոսկանայի դուքսը ևս 1591 թ. մի
հրովարտակով առանձնաշնորհումներ էր տրամադրում հայերին՝
հրավիրելով նրանց բնակություն հաստատել Լիվոռնոյում: 1646 թ.
այստեղ հանգրվանած հայ խոշոր վաճառականներից երեքը
զմյուռնացիներ էին, որոնք թվական տեսակետից զիջում էին մի-
այն կեսարացիներին: XVII դ. զմյուռնահայերի թիվն ավելի էր մե-
ծացել այդ քաղաքում: 1663 թ. Ս. Հավատոյ տարածման ժողովի
մի վավերագրում նշվում է, որ այդ կատարվել էր «դոսկանական
տերութեան շնորհած արտօնութեանց պատճառաւ և յետօյետե
յաճախելովն ի Լիւռնոն»³:

Լիվոռնոյում հայերը վաճառում էին արևելյան երկրներից բե-
րած հումք, ինչպես և Լեվանտի շուկաներում պահանջարկ վայե-
լող ապրանքներ՝ շերամ, մուշկ, որդան կարմիր, բուստ, սաթ, մեղ-
րամոմ, բրդեղեն, կտավ, կերպաս և այլն: Այս հանգամանքը
կարևոր է տեղի հայ վաճառականության հարատևությունը (մինչև
XIX դ.) բացահայտելու տեսակետից, քանի որ պարսկական մե-
տաքսի ներմուծումը բավականաչափ սպառվել էր XVIII դ. առա-
ջին կեսից՝ աստիճանաբար ցրելով իտալական ու հոլանդական
քաղաքներում մետաքսի առևտրից սնուցվող հայ առևտրականնե-
րի կուտակումները: Սրանով հանդերձ, Լիվոռնոյում հայ առևտրա-
կանների հարատևումը բացատրվում է նաև հոլանդական բեռնա-
շրջանառության մեջ ունեցած նրանց ակտիվ դերով, որի շնորհիվ
իրացվում էր յուրատեսակ միջնորդություն հոլանդական նավատե-
րերի և Լիվոռնոյի միջև:

Ձմյուռնահայ վաճառականները վաղեմի կապեր ունեին Վենե-
տիկի հետ: Այստեղ բնակվող այդ վաճառականներից, որոնք ապ-
րել են XVII–XVIII դդ. և թողել երկուսից ավելի ճյուղ կամ սերունդ,

² Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 440:

³ Սյուրմեան Ա., Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Ա, Հալէպ, 1940, էջ 51:

Ղ. Ալիշանը հիշատակում է Մարտիրոսյանին (հինգերորդ սերունդ) և Ադամյանին (չորրորդ սերունդ)⁴:

Առևտրի փոփոխությունների հետևանքով կատարվում էր և հակառակը՝ Վենետիկի հայ վաճառականներն էին բնակություն հաստատում Ջնյուռնիայում: Սրանով է մասամբ բացատրվում եվրոպայում ապաստանած հայերի գաղթը Ջնյուռնիա՝ XVIII դ.: Ջնյուռնահայ վաճառական Շահումյան ընտանիքի մասին Ա. Այվազյանը նշում է, որ այն «Վենետիկեն եկած հին ընտանիք մըն է»: Հիրավի, Մեղրիի (կամ Կափան/Ղափանի) վաճառական դասը, որը «հզոր էր իր միջազգային կուտակումներով»⁵, XVII դ. և հետո առևտրական տներ էր հիմնել Վենետիկում, Կ. Պոլսում, Ջնյուռնիայում և այլուր: Շահումյանների տոհմը, որից, ի դեպ, սերում էր Դավիթ Բեկի զինակից Ստեփանոս Շահումյանը, Վենետիկում էր հաստատվել XVII դ. կեսերին: Ստեփանոս Շահումյանի հորեղբայրը՝ Սահակի որդի Ոսկանը, այստեղ «եկեալ եւ հաստատեալ էր ի տուն վաճառականութեան»⁶: Շահումյանները, ինչպես և Վենետիկի մյուս հայ վաճառականները, ամբողջովին կապված էին լեվանտական առևտրի հետ. Նրանք ներմուծում և արտահանում էին գյուղատնտեսական հումք, Դամասկոսի կերպաս, եվրոպական լայն սպառման առարկաներ, գործվածքեղեն, ապակի և այլն: 1757 թ. այդ առևտրական տունը սնանկացավ շուրջ հարյուրամյա գործունեությունից հետո:

Ջնյուռնահայ առևտրականները սերտ կապեր ունեին հոլանդական առևտրական կենտրոնների հետ, որին մի հայտնի չափով նպաստել էր հոլանդական նավաշինության զարգացումը: Հոլանդիայի հյուսիսային գավառներում առևտրական առաջատարի դեր ստանձնած Ամստերդամը ազատություններ էր շնորհել օտար առևտրականներին:

Հոլանդիայում հանգրվանած հայ վաճառականները փոքրասիական մետաքսն ու գյուղատնտեսական հումքը Հոլանդիա տեղափոխելուց հետո լեվանտական առևտրի կենտրոններ էին տա-

⁴ Ալիշան Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 497:

⁵ Լեո, Խոջայական կապիտալ, Ե., 1934, էջ 283:

⁶ Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 300:

նուն եվրոպական արտադրության արդյունքները: 1626 թ. հետո Նոր Ջուլայի հայերը մշտական հաստատություն գտան Ամստերդամում՝ նրա հետ առևտրական կապեր ստեղծելով «առանց հոլանդացի, հրեա կամ այլ միջնորդների, հոլանդական շահերից օգտվելու համար թե ներածությամբ, և թե արտածությամբ»⁷: Ձմյուռնահայ վաճառականները ևս գործում մասնակցություն են բերել այս հարաբերություններին: Շարդենը 1672 թ. նշում էր, որ վաղուց ի վեր Ձմյուռնիայում ապրող հայերը գործնական կապեր ունեն հոլանդական առևտրական ընկերությունների հետ⁸:

Արտաքին առևտրում առաջացած խոչընդոտների դեպքում, սակայն, հայ վաճառականները միավորվում էին և այս պարագայում նրանց կազմակերպվածությունն ի հայտ էր գալիս որպես քաղաքական հովանավորություն վայելող օտար վաճառականներին ընդդիմանալու արդյունավետ միջոց: Ա. Սարուխանը մեջբերում է զմյուռնահայ վաճառականների բողոքագիրը (1658–1659 թթ.) Ձմյուռնիայի հոլանդական հյուպատոս Մորտիերի դեմ՝ ուղղված Հոլանդիայի Գլխավոր շտատներին: Հյուպատոսը կամայականորեն արգելել էր հայ վաճառականների ապրանքների բեռնումը հոլանդական նավեր՝ պահանջելով բարձրացնել վճարը: 1660 թ. հյուպատոսը հանվեց իր պաշտոնից⁹:

Սինչև XVIII դ. և դեռ դրանից հետո էլ զգալի թվով հայ վաճառականներ էին բնակվում Հոլանդիայում: Ամստերդամում գործառուղ այս մեծահարուստ վաճառականների հետ Սինեոն և Ղուկաս կաթողիկոսները մշտական կապ էին պահպանում, նրանց նախապես տեղյակ պահում ազգային-կրոնական գործերում իրենց անելիքների մասին:

Ձմյուռնահայ վաճառականները Հոլանդիայից ներմուծում էին մահուդ, գործվածքեղեն, մետաղներ, իսկ Օսմանյան կայսրությունից արտահանում էին մետաքս, գյուղատնտեսական ապրանքներ: Այս առևտրի մեջ էին ընդգրկված նաև Ամստերդամում բնակվող այլ հայ վաճառականներ՝ կեսարացիներ, նոր ջուլայեցիներ,

⁷ Սարուխան Ա., Հոլանդիան և հայերը, Վիեննա, 1926, էջ 37:

⁸ «Յառաջ», 28 սեպտ., 1972:

⁹ Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 23:

ագուլեցիներ և այլն: Ամստերդամի հայ համայնքը գոյատևեց մինչև XIX դ. սկիզբը, երբ նապոլեոնյան պատերազմների հետևանքով այդ քաղաքը զրկվեց իր ինքնուրույն առևտրական նշանակությունից:

Զմյուռնիայում գործող հայ վաճառականության տարանցիկ առևտրին մասնակցելու տնտեսական հիմքը Պարսկաստանի և Օսմանյան կայսրության գյուղատնտեսական հունքի արտադրությունն էր, որի զգալի մասը ստացվում էր նրանց կողմից զավթված և 1555 թ. Ամասիայի պայմանագրով բաժանման ենթարկված Հայաստանի արևելյան և արևմտյան մասերից: 1639 թ. Կասրե Շիրինի թուրք-պարսկական պայմանագրից հետո աշխուժացան փոքրասիական, Կ. Պոլսի, Տրապիզոնի և միջերկրածովյան առևտրական ուղիները: Սակայն էգեյանի շրջանում դրությունը պետք է բարդանար թուրք-վենետիկյան՝ Կրետեի կամ Կանդիայի պատերազմի պատճառով, որ բավական վնաս հասցրեց արտաքին առևտրին: Զմյուռնիա տանող քարավանային ուղիները դարձան անապահով:

Այսուհանդերձ, քարավանային ճանապարհը, անկախ իր խափանումներից, գործում էր, որի վկայությունը տալիս է Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունը»: Իր ճանապարհորդությունների ընթացքում Զաքարիան անցել է նշված քարավանային ուղիներով մինչև Զմյուռնիա և ապա Եվրոպա: Նա Ագուլիսից դուրս է եկել (առաջին անգամ) 1647 թ. մարտին՝ արձանագրելով. «Մին բեռն ապրիշինով (մետաքս) գնացի դեբի Ըզմիր»¹⁰: Ագուլեցի այս վաճառականի ուղին ժամանակի բանուկ անցումային գծերից մեկն էր, որն անցնելով Հայկական լեռնաշխարհով, ընդգրկում էր Ագուլիս-Նախիջևան-Երևան-Էրզրում-Թոքատ և Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող Զմյուռնիա տանող քարավանային ճանապարհը: Ագուլեցի վաճառականների այս ուղին Կարինում (Էրզրում) սովորաբար միանում էր Նոր Զուղայի վաճառականների երթուղուն: Այս ուղին որոշ ընդհատումներով (պարսկա-թուրքական ընդհարումների ժամանակ) բավական բանուկ էր նաև XVIII դարում և հաճախ

¹⁰ Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Ե., 1938, էջ 71–72:

շրջանցում էր Բրուսա-Էնկյուրի գիծը: «Առանց Էնկյուրիեն և Պրուսայեն անցնելու,- գրում էր Տավերնիեն,- Թոքատեն ուղղակի Իգմիր ջորիով քսանը և հինգ օր է, իսկ ուղտով՝ քառասուն օր»¹¹: Ուշագրավ է, որ Ջաքարիան անցել է նաև վերջին Ջմյուռնիա-Մանիսա (հուն. Մագնեսիա)-Բրուսա ցամաքային հատվածով, որը բանուկ էր դարձել դեռևս XIV-XV դդ.: Այս ուղիով էր իրականացվում նաև Էգեյանի շրջանի բամբակի և բամբակագործական արտադրանքի արտահանումը Եվրոպա (Բերգամայից, Դենիզլիից և այլն), որը հունքի վաճառահանման կարևոր ուղի դարձավ XVIII դ.:

Բավական լայն շառավիղ ունի Ջաքարիայի առաջին ուղևորությունը՝ Վենետիկ - Ամստերդամ - Լիվոռնո - Ջուստից - Կալիս-Մալիկա - Ալիկանտա - Լիվոռնո - Մեսինա - Ջմյուռնիա երթուղով: Ակնհայտ է, որ իր գործառնություններով նա ամենից առաջ առնչվում է իտալական և հոլանդական առևտրական կենտրոններին որոնց հետ մշտական կապեր ուներ նաև զմյուռնահայ վաճառականությունը XVII դ.:

Իրենց ազդեցությամբ ու հարստությամբ պարսկահայ վաճառականներից հետ չէին մնում Ջմյուռնիայում դեռևս XVI դ. և հետո հաստատված Մաժաք-Կեսարիայից ու Եվրոկիայից եկած հայերը: Սրանց մի մասը, ինչպես և արևելահայ վաճառականները, դարձան տեղաբնիկներ՝ Ջմյուռնիայում կառուցելով տներ, ձեռք բերելով ընդարձակ հողատարածություններ և այլն: Ապրոյան նշանավոր գերդաստանից Մատթեոսի օրինակը, որը 1680-ական թթ. տուն էր կառուցել Ջմյուռնիայում, եզակի չէր:

XVII դ., սակայն, զգացվում էր ֆրանսիացի և եկվոր վաճառականների տարբերությունը իրավական հարաբերությունների բնագավառում: Այսպես, զմյուռնացի վաճառականներ "Obro և Ferpius George" անվամբ, դիմել էին Մարսելի իշխանություններին՝ առևտրական նույնպիսի արտոնություններ ստանալու, ինչպիսիք ունեին Պարսկաստանից եկած հայ վաճառականներն այդ ժամանակ¹²:

¹¹ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւրոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 247:

¹² Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 43:

Պետք է կարծել, որ դիմումը բավարարվել էր, քանի որ ֆրանսիական կառավարությունը մինչև 1634 թ. խրախուսում էր պարսկական հումքի ներմուծումը և բարենպաստ պայմաններ էր ստեղծում տարանցիկ առևտրի համար, որի կարիքն էր զգուժ ֆրանսիական թեթև արդյունաբերությունը: Նշված տարվան միայն ֆրանսիական կառավարությունը շոշափելի սահմանափակումներ մտցրեց լեվանտից բերվող մետաքսի առևտրի մեջ: Մարսելում մեկ հակ մետաքսի դիմաց գանձվող մաքսը 16-ից հասավ 112 ֆրանկի, որը ֆրանսիական շուկայում ձեռնթափ արեց հայ վաճառականներին և մի որոշ ժամանակ նրանք ստիպված էին հրաժարվել Մարսելից ու անմիջական կապեր հաստատել Յուլանդիայի ու Անգլիայի հետ¹³:

Պետք է նկատել, որ ֆրանսիացի առևտրականները դրանից առաջ պայքարել էին երկրի ներսը թափանցող ապրանքների դեմ և կառավարությունից պահանջել էին համապատասխան իրավական միջոցառումներ: 1632 թ. Մարսելի առևտրականները դիմել էին Լյուդովիկոս XIV-ին՝ հովանավորելու իրենց և խիստ միջոցներ ձեռնարկելու մաքսերից խուսափող և էժան գնով մետաքս վաճառող հայերի դեմ¹⁴: Ակներև է, որ Լեվանտի հետ կապված ֆրանսիացի առևտրականները ի դեմս հայերի, տեսնում էին լուրջ մրցակիցների: Գործում էր նաև ֆրանսիական կառավարության կողմից կիրառվող՝ երկրից ոսկին ու արծաթը չհանելու և այդպիսիք ըստ հնարավորին դրսից բերելու մերկանտիլիստական քաղաքականությունը, իսկ հայ վաճառականների գործունեությունը գերազանցապես սահմանափակվում էր մետաքսի առևտրի շրջանակներում:

Սարուխանի հիշատակած վաճառական Օբրին պետք է որ Ապրոյան գերդաստանից լիներ, թերևս ինքը՝ Աբրահամ (Ապրո) Ապրոյանը, որը թեև 1660-ական թթ. Բելգրադից տեղափոխվել էր Կ. Պոլիս, սակայն դրանից շատ առաջ գործառնություններ Ձմյուռնիայում: Ապրոյի որդի Մատթեոսը հոր մահից առաջ (1676 թ.)

¹³ Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Ե., 1959, էջ 183:

¹⁴ Մատենադարան, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 240, վավ. 6:

գտնվում էր Ձմյուռնիայում, անշուշտ, առևտրական գործերի բերումով: 1688 թ. երկրաշարժն այստեղ կործանեց նրա կառուցած տունը, զոհվեցին նրա մայրն ու որդիները, որ պատկերված է իր՝ Մատթեոսի հորինած «պատմական ոտանավորում»¹⁵: Մատթեոսի գործունեության շրջանում էր (1680-ական թթ.), որ ֆրանսիական կառավարությունը նշանակալի արտոնություններ ընձեռեց հայ առևտրականներին՝ երկրի նավահանգիստներում արևելյան առևտուրն աշխուժացնելու համար:

XVIII դ. երկրորդ կեսին զգալիորեն ծավալվեցին գմյուռնահայերի կապերը Տրիեստի հետ: Դրանից անմիջապես առաջ եվրոպական առևտրական հիմնուղիների փոփոխությունները, Լեվանտի առևտրում եվրոպական տերությունների բացարձակ գերիշխանությունը, ինչպես և Արևելքից եվրոպական շուկաներ զուտ հունք արտահանելու իրողությունները զգալիորեն ազդեցին հայ առևտրականների գործունեության վրա: Ձմյուռնիայի և եվրոպական քաղաքների միջև երթևեկող ոչ քիչ թվով հայ վաճառականներ Առաջավոր Ասիայի տարանցիկ դերի սահմանափակման պայմաններում՝ թողեցին եվրոպական բնակատեղիները և հաստատվեցին Ձմյուռնիայում: Սևարսը նշում էր, որ այս ժամանակ գաղթօջախ են վերադարձել Վենետիկում, Ավստրիայում, Յուլանդիայում և այլ վայրերում բնակվող հայ վաճառականները, ընդամին, ցույց տալով քաղաքի հայ բնակչության թիվը՝ 12.000 մարդ¹⁶: Նկատելի էր նաև հայ վաճառականության տեղաշարժը եվրոպական մի երկրից մյուսը: 1769 թ. սեպտեմբերի 12-ին քահանա Յովհաննեսը հայտնում էր Վենետիկի Մխիթարյանների արքահայր Ստեփանոսին, որ ավստրիական կայսրուհի Մարիա-Թերեզան արտոնել է հայերին՝ բնակվելու Տրիեստում¹⁷: Այստեղ բնակություն հաստատած գմյուռնահայ վաճառականները գործել են բավական երկար ժամանակ, մինչև XIX դ. և հետո: Տրիեստի մի «ծանուցմունք պսակաց» մատյանում (1798-1808 թթ.) հիշվում է խաթուն

¹⁵ Մատենադարան, Անհատական արխիվների ֆոնդ, ձեռ. 4515:

¹⁶ Քոստան Յ., Հայք ի Ձմյուռնիա եւ ի շրջակայս, Վիեննա, 1899, էջ 33:

¹⁷ Տայեան Ղ., Մայր դիւան Մխիթարեանց ի Վենետկոյ ի Ս. Ղազար, Վենետիկ, 1930, էջ 261:

Մարիամ Ռոզան, «դուստր իզմիրցի պարոն Յովհաննիսի Պետրոսի Ձաքարեան», որը 1806 թ. ամուսնացել էր մի վերոնացի իտալացու հետ: 1807 թ., դարձյալ իտալացու հետ, ամուսնացել էր զմյուռնացի Կարապետ Աստվածատրյանի դուստր խաթուն Բրիջիտան¹⁸:

Նվազ են ուսումնասիրված զմյուռնահայ վաճառականների հարաբերությունները Ռուսաստանի հետ: Ջմյուռնիայի վրայով առևտուր անող հայ վաճառականները Ռուսաստան էին մտնում ոչ միայն կասպիական-վոլգյան ուղիով, այլև Հոլանդիայի վրայով մտնելով հյուսիսային ծովային ուղի՝ այնտեղից ափ իջնելով Արխանգելսկում: Այսպես, XVII դ. վաճառական խոջա Սաֆարը Սպահանով անցել էր Թավրիզ, ապա Էրզրումի և Թոքատի վրայով՝ Ջմյուռնիա: Այնուհետև նա անցել է Ամստերդամ՝ այնտեղից ապրանք առնելու և Մոսկվա տանելու համար¹⁹: Պետք է նշել, որ Պարսկաստանի վրայով անցնող ճանապարհը XVII–XVIII դդ. ավելի քիչ էր մատչելի զմյուռնահայ վաճառականներին, քան Հոլանդիայով և Շվեդիայով տանող ուղին: Ջմյուռնահայ վաճառականները շարունակում էին կապված մնալ դեպի արևմուտք տանող փոքրասիական ճանապարհներին, ինչպես իրենց հայրենակիցների մեծամասնությունը:

Պետրոս Մեծի ժամանակ ռուսական կառավարությունը ջանքեր էր գործադրում ընդդիմանալու լեվանտական առևտուրն ամրապնդելու, ինչպես և Հնդկական օվկիանոսի առևտրական ուղիներն ընդարձակելու եվրոպական երկրների քաղաքականությանը՝ ելնելով ռուսական առևտրի շահերից: 1715 թ. Պարսկաստանում ռուսական դեսպան Ա. Վոլինսկուն տված հրահանգներում ցարը ցանկալի էր համարում դիվանագիտական խոչընդոտներ հարուցելը Ջմյուռնիայի և Հալեպի առևտրական ուղիների դեմ²⁰:

¹⁸ Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին, հ. Գ, Վիեննա, 1983, էջ 537:

¹⁹ Լեօ, Հայկական տպագրութիւն, հ. 1, Թիֆլիս, 1901, էջ 83:

²⁰ Армяно-русские отношения в первой трети XVIII века (под ред. А. Иоаннисяна), Т. II, ч. I, Е., 1964, с. IX–X.

Հայտնի չէ՝ արդյոք Ապրոյանները օգտվել են ռուսական առևտրական մագիստրալներից: Փաստն այն է, սակայն, որ թուրքական կառավարությունը հազիվ թե խրախուսեր նրանց մասնակցությունը ռուսական առևտրին: Իր հերթին, Պետրոսն հետաձգեց պարսկական մետաքսի առևտրին մերժեցման քաղաքականությունը՝ այն փոխարինելով մերձկասպյան մահանգները գրավելու պլանով: 1719 թ., նա չեղյալ հայտարարեց հայ վաճառականներին տրված բոլոր արտոնությունները²¹: Երկու տարի անց Պետրոսը դարձյալ պետք է կարևորություն տար առևտրական գործունիին: 1721 թ. փետրվարի 27-ին Կ. Պոլսում ռուսական ռեզիդենտ Կ. Նեպլյուկին նա կարգադրում էր Ձմյուռնիայի, Հալեպի, Ալեքսանդրիայի և Դանուբի առևտրական ուղիներին լավատեղյակ վաճառականներին համոզել Ռուսաստանի միջով պարսկական մետաքսը Եվրոպա անցկացնելու օգտակարության մեջ²²: 1723 թ. հուլիսին և սեպտեմբերին Պետրոսը վերականգնեց հայ վաճառականների արտոնությունները Ռուսական կայսրությունում, սակայն այն հայ վաճառականները, որոնք Օսմանյան կայսրության տնտեսական ու քաղաքական շահախնդրությունների ուժով շարունակում էին կապված մնալ փոքրասիական ավանդական ուղիներին, այդպես էլ որևէ նշանակալի մասնակցություն չբերեցին ռուսական առևտրական հրապարակին: Քիչ անց, պարսկական առևտրական ուղիներն արդեն ապահովության հույսեր չէին ներշնչում հայ վաճառականներին՝ թուրք-պարսկական պատերազմների, Պարսկաստանի ներքին անկայունության և միջֆեոդալական բախումների պատճառով: 1730-ական թթ. Նադիր շահը արգելեց մետաքսի արտահանումը Թուրքիա, որ փաստորեն քայքայեց փոքրասիական ապրանքափոխանակության գործընթացը: Դրան հակադրվելով՝ սուլթան Մահմուդն իր հերթին դիմեց համապատասխան գործողությունների: Սիմեոն կաթողիկոսը նշում էր, որ հրապարակվել է «սուլթան Մահմուտի ֆարման վասն արեւելցի վաճառականացն, որք ի յերկիրն օսմանցւոց զի մի պահանջեսցեն զհարկ ինչ ի նո-

²¹ Նույն տեղում, էջ 169–172:

²² Նույն տեղում, էջ 172–173:

ցանէ ՌՃԾԱ թուին տաճկաց»²³: Ակներև է, որ պարսկական խափանող գործողություններին սուլթանը պատասխանում էր անմաքս առևտրի առավելությամբ: Այս հակամարտությունը հասցրեց նրան, որ 1740–1750-ական թթ. Պարսկաստանում անմախընթաց չափերով նվազեց մետաքսի առևտուրը: Այստեղ գործառու վաճառականները տեղափոխվեցին Ռուսաստան, Եվրոպա, Փոքր Ասիայի առափնյա շրջաններ, Յնդկաստան և այլուր: Ձմյուռնիան և Հալեպը դրա հետևանքով կորցրեցին մետաքսի շահութաբեր առևտուրը: Աստիճանաբար մարեց XVIII դ. երկրորդ կեսին դեռևս գործող Սպահան-Թավրիզ-Կարին-Թոքատ-Ձմյուռնիա ուղին:

XVII–XVIII դդ. պետք է առանձնացնել զմյուռնահայ վաճառականների գործունեության մի կարևոր բնագավառը՝ ակնավաճառությունը: Ոմն ջուղայեցի Սարգիս XVII դ. առաջին քառորդին կամ դրանից քիչ անց վաճառական խոջա Ավետիքի հետ Հալեպից անցել էր Ձմյուռնիա և հաստատվել այնտեղ, իբրև ակնեղենի վաճառական: Սա այն Սարգիսն է, որին Այտընում 1635 թ. քահանա էր ձեռնադրել Տրդատ եպիսկոպոսը, ինչպես պարզվում է մի բժշկարանում նույն Սարգսի գրած հիշատակարանից²⁴: Ձմյուռնիան ակնեղենի առևտրի նշանավոր կենտրոն էր. Լյուդովիկոս XIV-ի բժիշկ Պ. Լուկան, որը XVIII դ. սկզբին այցելել էր Ձմյուռնիա, հայտնում էր, որ Կյուզել Հիսարում (Այտըն) «հայերը մեծ վաճառականութիւն կընեն մետաքսի և մանածի» և դրա հետ միասին «պէգեսքենին (ծածկած շուկա – Ա. Խ.) մէջ ալ թանկագին քարերու եւ այլ արժեքավոր առարկաներու տուրևառ կըլլա»²⁵:

XVII–XVIII դդ. Ձմյուռնիայի հայ վաճառականները հրեա և հույն վաճառականության հետ միասին տիրապետող դիրք ունեին Այտընի, Ալաշեհիրի, Մանիսայի և Էգեյանի առափնյա այլ շրջաններում՝ բավարարելով նաև տեղական սպառողի պահանջարկը: Ձմյուռնահայ վաճառական էքզյանների մասին Թ. Ճերմակյանը գրում է, որ նրանք մասնակցել են Եվրոպական կտավի ներմուծ-

²³ Սիմեոն կաթողիկոս, Ջամբռ գիրք, Վաղարշապատ, 1873, էջ 245:

²⁴ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.) (կազմ. Հալոբյան Վ., Հովհաննիսյան Ա.), Կ. Բ, Ե., 1975, էջ 596:

²⁵ «Բյուզանդիոն», 24 դեկտեմբերի, 1909:

մանը, սակայն աչքաթող չեն արել նաև չքավոր սպառողին, «որը կը գոհանար տեղական բամպակ կտաւներով, որոնց այժմ Մէնէմենի պէզ կան բամպուք պէզի անունը կը տրուի»²⁶: Հիրավի, քննարկվող ժամանակաշրջանում առևտրական հայեր էին հաստատվել Նազիլիում, Դենիզլիում, Մանիսայում, Գասապայում և այլուր, որոնք զբաղվում էին քաղաքներին և մյուս բնակավայրերին կից ավաններում մշակվող գյուղատնտեսական ապրանքների (խաղող, ցորեն, գարի, բամբակ, թուզ, բանջարանոցային կուլտուրաներ) վաճառքով: Էգեյանի առափնյա տարածքների և ընդհանրապես փոքրասիական շրջանների գյուղատնտեսական ապրանքներն էին, որ առաջնակարգ նշանակություն պետք է ստանային զմյուռնահայ վաճառականների գործառնություններում՝ XVIII դ. երկրորդ կեսին մետաքսի առևտրի անկումից հետո: Ընդլայնվեց, մասնավորապես, բամբակի առևտուրը: Ձմյուռնիայի առևտրականությունը, գրում է Ինճիճյանը, «ամէն տարի 40 հազար բեռ (պալեսա) բամպակ Ֆրէնկիստան կը խրկէր, 20 հազար բեռ ալ բամպրկէ մանած կը խրկէր: Սա բեռները քովի գեղերէն Իզմիր բերելու, Իզմիրէն ալ ծովեզերքը տանելու միայն ճամբու խարճ 1786 որ տարին որ մենք Իզմիր գտնուեցանք, շաբաթ կըլլար, որ 300–500 քէսէ կը խարճէին վաճառականները, բայց այսչափ բամպրկին դէմ Ֆրէնկիստան իր ձեռագործները բերելէն զատ՝ նաւերով նաղտ ըստակ ալ կը խրկէր վճարելու համար»²⁷: Այս ժամանակաշրջանում Թուրքիան տնտեսապես ավելի մեծ չափերով կախման մեջ ընկավ եվրոպական տերություններից, երկրի հումքը դուրս էր հորդում արտասահման՝ պահանջարկ չգտնելով տեղական չգարգացած արտադրության կողմից: Տեղական տնայնագործական արտադրությունը զուրկ էր մնում պետական խրախուսանքից, իսկ եվրոպական անհամեմատ էժան և որակյալ ապրանքներն այդ արտադրությունը գամում էին իր ավանդական մակարդակին: XVIII դ. Թուրքիայում առևտուրը շարունակում էր իր մեկուսի գոյությունը արտադրությունից: Բամբակի մշակության Էգեյանի վայրերը՝ Մա-

²⁶ «Արշալույս», Ձմյուռնիա, 1 մայիսի, 1908:

²⁷ Ինճիճեան Ղ., Դարապատում. 1750–1757, Վենետիկ, 1824, էջ 232:

միսա, Այտըն, Բերգամա, Թիրե, Դենիզլի և այլն, դարձան բամբակի արտահանության կենտրոններ: 1740 թ. ֆրանսիական առևտրականներին տրվեցին նոր արտոնություններ, սահմանվեց մաքսի ցածր չափ՝ 3 տոկոս, այն դեպքում, երբ Օսմանյան կայսրության առևտրականները վճարում էին 10 տոկոսի չափով²⁸: Նույնամանա իրավունքներ ստացան Անգլիան և Յուլանդիան: Հալեպի և Կ. Պոլսի հետ մեկտեղ անգլիացիները առևտրական ֆակտորիաներ հիմնեցին նաև Ջնյուռնիայում՝ համախմբելով անգլիացի գործարարներին: Ջնյուռնահայ առևտրական կապիտալը մեծ դժվարությամբ էր դիմանում այսպիսի կազմակերպված մրցակցությանը: Այս պայմաններում հայ վաճառականները Եվրոպայից ներմուծում էին կերպասի բազմազան տեսակներ, հախճապակե իրեր, հագուստ և այլն: Սակայն միայն բամբակագործության զարգացումն էր, որ առևտուրը խթանելուց զատ, նպաստում էր տեղական ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացմանը: 1740-ական թթ. զարգացում էր ստացել նաև գորգերի տնայնագործական արտադրությունն ու առևտուրը: Ա. Ի. Նեպլյուն արձանագրում էր Ջնյուռնիայում ոլորաթելի գորգերի բարձր որակը²⁹:

Այսպիսով, XVII–XVIII դդ. զնյուռնահայ առևտրականությունը և ընդհանրապես այդ նավահանգստում գործառուղ հայ վաճառականությունը խոշոր ներդրում ունեցավ Արևելքի և Արևմուտքի առևտրում՝ հույն և հրեա վաճառականության հետ միասին կատարելով նշանակալի դեր՝ բավարարելով հունքի նկատմամբ եվրոպական արտադրության պահանջարկը և ըստ հնարավորին խթանելով գյուղատնտեսական արտադրության տեղական զարգացումը: Ջնյուռնիայում գործառու՞ն էին ոչ միայն տեղաբնակ, այլև Եվրոպայում, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում զբաղված հայ վաճառականները: Այս առումով զնյուռնահայ վաճառականությունն հասկացությունը ստանում է շատ ավելի լայն իմաստ՝ սերտաճելով առհասարակ տնականորեն գործող հայ վաճառականությանը: Կարծում ենք, որ հայ առևտրականության այս տարանցիկ

²⁸ Новичев А. Д., История Турции, Т. I, ч. I, Л., 1963, с. 212.

²⁹ Дандиг Б. М., Русские путешественники на Ближнем Востоке. М., 1965, с. 80.

հանգրվանի միջազգային բազմաթիվ կապերով, ինչպես իր հայրենի բնաշխարհի՝ Հայաստանի հետ ունեցած անմիջական առնչություններով է բացատրվում զմյուռնահայ գաղթօջախի հույժ կարևոր նշանակությունը հայ մշակույթի այդ ժամանակաշրջանի պատմության մեջ: Չնայած իր բնակչության համեմատաբար փոքր քանակին (XVII–XVIII դդ. Չմյուռնիայում ամենաբարձր ցուցանիշը եղել է 12.000 մարդ, բայց սրան պետք է ավելացնել նաև շրջակայքի հայ բնակավայրերի հայերի թիվը, որ գերազանցում էր բուն զմյուռնացի հայերի թվաքանակը), գաղթօջախը նաև XIX դ. և ծանրակշիռ ներդրում արեց ազգային մշակութային արժեքների զարգացման ասպարեզում ընդհուպ մինչև իր գոյության ողբերգական վախճանը՝ Մեծ եղեռնի վերջին արարը (1922 թ. սեպտեմբեր):

А. ХАРАТЯН

АРМЯНСКИЕ КУПЦЫ СМИРНЫ В ТОРГОВЛЕ ЛЕВАНТА И ЕВРОПЫ

Армянские купцы Смирны и других регионов развернувшие деятельность в XVII–XVIII вв. внесли большой вклад в торговле Востока и Запада. В Смирне торговали армянские купцы не только портового города, но и занятые в международной торговле в странах Европы и Передней Азии.

**ARMENIAN MERCHANTS OF ZMYURNIA IN THE
LEVANT AND EUROPEAN TRADE**

Armenian merchants of Zmyurnia and from other regions, acting in this port in XVII-XVIII centuries contributed greatly to the East-West trade. Armenian merchants not only from Zmyurnia, but also those busy in international trade in the countries of Europe and Western Armenia traded in this port.

ՋՈՒՂԱՅԱՅԵՐԻ ԶՈՒՇԱՄԵՂԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ առևտրականները, որ հայտնի էին իրենց եռանդուն գործունեությամբ և առևտրական միջավայրի հաստատուն կապերով, արդեն XVIII դարում հանդես էին գալիս առևտրական գրեթե բոլոր կարևորագույն կենտրոններում: Հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներից շատերը նոր հորիզոններ են ստեղծում ոչ միայն տնտեսական, այլև մշակութային հարաբերություններում: Հայերը սերտ կապեր էին հաստատել Իրանի, Միջին Ասիայի և Հնդկաստանի առևտրական կենտրոնների հետ: Նոր Ջուղայի հայ վաճառականները միջազգային ապրանքափոխանակության մեջ հսկայական դերակատարում ունեին: Հայտնի է, որ նրանք հանդիսանում էին Եվրոպայի և Ասիայի միջև ընթացող առևտրի հիմնական միջնորդները, և նրանց ձեռքում էր գտնվում իրանական մետաքսի արտահանման մենաշնորհը, և ոչ միայն մետաքսի¹: Նրանց առևտրական գործարքները կատարվում էին ժամանակի օրենքների համապատասխան տնտեսա-իրավական բոլոր կանոններով:

Հայ վաճառականների՝ մաքսատներով անցման բոլոր կանոններին համապատասխան լրացված բոլոր առևտրական փաստաթղթերը, երկիր ներմուծած ապրանքների տեսակների, արժեքի, չափի ու կշռի և դրանց դիմաց գանձված մաքսերի մասին պահպանված փաստաթղթային վկայությունները, փաստում են հայ վաճառականի կայացած գործունեության մասին: Նոր Ջուղայի պատմությամբ զբաղվող մասնագետները քաջատեղյակ են մեծահարուստ Խալիլարեանց գերդաստանի և Մասեհյան ընտանիքի մասին²: Նրանք համարվում էին Նոր Ջուղայի հայ վաճառականության ներկայացուցիչները և հայտնի էին իրենց բարերարությամբ: Հայ վաճառականները, լինելով եվրոպական երկրներում, մանրակրկիտ ծանոթանում էին տվյալ տարածաշրջանի հետ, լա-

¹ Տեր-Յովհաննեսն Զարուբին, Պատմություն Նոր Ջուղայի, հ. Ա, 1880, հ. Բ, 1881:

² Մինասեան Լ. Գ., Իրանի հայկական վանքերը, Վիեննա, 1972:

վատեղյակ էին շուկայի ապրանքատեսականին, արագ ընդօրինակում էին այդ երկրների նորամուծությունները և վերցնում այդ երկրների բարքերի և սովորույթներից շատ տարրեր: Անշուշտ այդ գործնական շրջագայություններից հայ վաճառականը ոչ միայն իր մշակույթը և իր տարածաշրջանին բնորոշ ապրանքատեսականին էր ներմուծում օտար երկրներ, այլև այնտեղից վերցնում իր համար ծանոթ և անծանոթ: Մեդալային արվեստը, որն իր ուրույն տեղն ունի համաշխարհային արվեստում և բավական լավ ուսումնասիրված է եվրոպական երկրներում³, որպես ինքնուրույն ճյուղ ձևավորորված լինելով XV դարում Իտալիայում, արդեն հայտնի էր հայ վաճառականին XVIII դարում:

Վերածննդի դարաշրջանում բարձր էր գնահատվում անտիկ դրամային արվեստը, և բարձրաշխարհիկ անձերից շատերն ունեին սեփական դրամների շքեղ հավաքածուներ, որ բարձրաշխարհիկ տների համար ընդունված երևույթ էր: Անտիկ դրամների նմուշներն օրինակ հանդիսացան մեդալային արվեստի՝ որպես ինքնուրույն ճյուղի ձևավորման և զարգացման համար: Հաճախ հելլենական և հռոմեական դրամների պատկերատեսակների օրինակները կրկնօրինակվում էին մեդալիոնների և մեդալների վրա: Մեդալային արվեստը արտացոլում է ժամանակի քաղաքական և մշակութային իրականությունը, նրա մեջ ընդգրկվում են ամենատարբեր բովանդակության թեմաներ և XVIII դարում Եվրոպայում այն ավելի վերահսկելի էր իշխանության կողմից: Մեդալները նվիրատվական նշանակություն ունեին: Այն նվիրվում է որևէ անձի տոնակատարության կամ որևէ սոցիալ-քաղաքական իրադարձության առիթով: Մեդալները հատվում էին ոչ մեծ քանակությամբ, նրանք իրենց շրջանագծով ավելի մեծ էին, քան դրամները: Մեդալները սկզբնական շրջանում հատվում էին ձեռքով՝ մուրճի հարվածներով, ինչպես առաջին դրամները, իսկ հետագայում երևան են գալիս մամլիչ սարքավորումները: Մեդալները պատրաստվում են ոսկուց, արծաթից, պղնձից, բրոնզից նաև պլատինից:

³ Одноралов Н. В., Техника медальерного искусство, М., 1983.

Դրանք նվիրվում էին կայսրության բարձրաստիճան անձանց, օտարերկրյա պատվիրակների և բարձրաստիճան զինվորականների⁴: XVI–XVII դարերում եվրոպական ազնվականության շրջանում մեծ տարածում ուներ սեփական դիմապատկերով մեդալների պատվերը: Ի դեպ, այսօր էլ եվրոպական շատ երկրներում նորից վերադարձել է այս ավանդույթը. իրենց հոբեյանական տարելիցին իրենց դիմապատկերով մեդալներ են պատվիրում:

Առևտրական ճանապարհները դեպի եվրոպական երկրներ տարբեր ուղղություններով էին ընթանում, որոնցից մեկն էլ դեպի Ռուսաստան էր: Հայ առևտրականները ռուսական ճանապարհներով անցնում էին մերձվոլգյան վաճառաչաի քաղաքներով և հասնում Մոսկվա, Արխանգելսկ, Պետերբուրգ, այնուհետև՝ եվրոպական երկրներ, մասնավորապես՝ Յուլանդիա⁵: Այստեղ կար բարգավաճ հայ գաղութ, որտեղ վաճառականների մեծ մասը հիմնականում եկել էր Նոր Զուլայից: Ամստերդամի հայ վաճառականությունը, ընդօրինակելով տեղի բարքերը, սովորույթները, որդեգրեց գեղեցիկ մի ավանդույթ. ամուսնական միության գաղափարի կարևորությունը հավերժացնել՝ փոխանցելով հուշամեդալների վրա:

XVIII դարում Յուլանդիայի հայ վաճառականների պատվերով թողարկվեցին ամուսնական մեդալիոններ և մեդալներ, որոնք հայ իրականության մեջ հայտնի են որպես առաջին մեդալներ՝ պատրաստված Յուլանդիայում⁶: Չնայած գոյություն ունի տեսակետ, որ ոչ միայն Յուլանդիայում են մեդալներ պատրաստել, նաև տարբեր հայ գաղթօջախներում այդ թվում նաև Լվովում ուր կային հայ ոսկերիչ վարպետներ «որոնք հայտնի էին իրենց բարձրարվեստ աշխատանքներով»⁷: Նրբագեղ ճաշակի, ամուսնական մեդալները՝ թողարկված Յուլանդիայում, քարոզում էին ամուսնության սրբութ-

⁴ Նույն տեղում:

⁵ Юхт А., Восточная торговля России в 30-40-х гг. XVIII в. и роль в ней армянских купцов, ЗУСЗ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.) 1956 N. 8, էջ 45: Ա. Սարուխան, Յուլանդյան եւ հայերը ԺԶ–ԺԹ դարերում, Վիեննա 1926:

⁶ Հայ ամուսնական մեդալի առաջին գծագրությունը տվել է Ապելի J. APPEL, Repertorium zum Munzkunde des Mittelalters und der neuern Zeit, III, 2n.1258, Wien 1824.

⁷ И. Спасский, Неизданная медаль Мартина Хольцха с армянскими надписями. “Сообщения ГЭ” XVI, Л., 1959.

յան կարևորությունը: Նմանատիպ մեղալների կիրառումը ընդունված և տարածված էր եվրոպական մեծատոհմիկ և մեծահարուստ անձների միջավայրում: Այն ոչ միայն հուշամեդալային, նվիրատվական իմաստ էր պարունակում երիտասարդ զույգերի համար, այլև որպես ազնիվ մետաղից պատրաստված հուշամեդալներ՝ նաև դրամական ներդրում նորաստեղծ ընտանիքի համար:

Միջազգային առևտրի մեջ Վենետիկի ոսկե դուկատը XIV–XIX դարում կշռում էր 3,49 գրամ, իսկ մեդալիոնները 18 գրամ, մեդալիոններն ավելի փոքր էին, քան մեդալները, ուստի 18 գրամ մեդալիոնը 5 դուկատի արժեք ուներ: Հետևաբար ամուսնական այդ մեդալիոնները բավական արժեքավոր էին ոչ միայն ազնիվ մետաղի պարունակության առումով, այլև մեդալների ինքնարժեքը դառնում էր ավելի բարձր նաև փորագրիչ վարպետի ստորագրության պատճառով: Ընտանեկան այս մեդալներն Ամստերդամի հայ գաղթօջախում մեծ տարածում ունեին: Հայ համայնքի անդամները, ընդօրինակելով այս գեղեցիկ սովորույթը, այն որպես ավանդույթ մտցրեցին իրենց կենցաղում և սկսեցին հարսանեկան հանդեսների օրվա առիթով պատվիրել նմանատիպ հուշամեդալներ՝ նվիրաբերելով երիտասարդ զույգերին՝ ի հիշատակ ամուսնության օրվա:

Հոլանդիայում պատրաստված հարսանեկան կամ ամուսնական հայկական մեդալների հանդեպ հետաքրքրությունն առիթ հանդիսացավ շատ դրամագետների համար՝ դեռևս XIX դ. առաջին տասնամյակից սկսած իրենց հետազոտությունները կատարել խնդրո առարկայի շուրջ: Այդ ուղղությամբ հետազոտություններ են կատարել Մ. Բրոսսեն, Վան դեր Մեյերը, Գերալդ վան Լուս, Ջ. Դիեկսը, Վան դեր Վոորտը, Ի. Սպասսկին, Ջ. Պտուկյանը, Հ. Սարգսյանը:

Ըստ մետաղի բաղադրության մեդալները ոսկուց են, արծաթից, պղնձից: Այս հուշամեդալների օրինակները գտնվում են Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների հավաքածուում, Էրմիտաժի դրամագիտության բաժնում, Հաագայի կայսերական թանգարանում, Լեյդենի թանգարանում և մի քանի անձնական հավաքածուներում: Հարսանեկան մեդալներն իրենց հորինվածքի, կատարո-

դական և պատմական արժեքով առաջնակարգ մեդալներ են, որ պատվիրվել են Նոր Ջուղայի հայերի կողմից: Մասնավորապես Նոր Ջուղայի Խալդարյան տոհմի Հակոբջանի որդի Օհանի կողմից: Խալդարյանները հայտնի մեծահարուստ ընտանիք էին: Ջբաղվելով վաճառականությամբ՝ նրանք կառուցել էին Նոր Ջուղայի Ս. Թովմայի եկեղեցին⁸, բացի դրանից Ամստերդամի 1713 թվականի Աստվածաշնչի մեջ նույնպես հիշատակվում է իրենց անունը: Ի հիշատակ այդ գերդաստանի՝ Նոր Ջուղայի թաղամասերից մեկը կոչվել է Խոջա Հակոբջանի անունով: Ուստի հայկական ամուսնական մեդալի պատվիրումը նույնպես կապված է այս գերդաստանի հետ, ավելի ստույգ Խալդարեան տոհմից Օհանի և Ալեքսան Մասեհեանի անվան հետ: Վերջինիս՝ Ալեքսանդր որդի Մասեյիե անունով հիշատակում է Ալիշանը Սիսականի մեջ, երբ տալիս է հայ վաճառականների ցանկը⁹: Համաձայն Սարուխանի, այս անունը գոյություն ունի Ամստերդամի համալսարանի գրադարանում պահվող որոշ գրքերի վրա, ուր մի քանի վաճառականներ իրենց ստորագրությունն են թողել գրադարանում պահվող այդ մի քանի օրինակների վրա: Հետևաբար այս երկու գերդաստանների վաճառականները հանդիսացել են հայկական մեդալների առաջին պատվիրատուները: Հայկական ամուսնական կամ հարսանեկան առաջին ոսկյա մեդալը պատրաստված է անվանի նկարիչ և մեդալագործ Մարտին Հոլցհեյի կողմից (1697–1764 թթ.): Այնուհետև նրա որդին, Իոհան Հոլցհեյը (1729–1808 թթ.), որն աշխատել է հոր մոտ նույն արհեստանոցում, շարունակել է նրա գործը: Որդու կողմից պատրաստված են մեդալիոններ, իսկ հոր կողմից՝ մեդալներ¹⁰: Այդ վկայում է նրանց անվան սկզբնագրերը նշված մեդալի էքզերգում: Մեդալագործի նոթատետրում նշվում է, որ հայ վաճառականներից ստացավ 90 դուկատ դրամ՝ 10 մեդալներ պատրաստելու համար: Այդ ժամանակ 90 ոսկի դուկատները կշռում էին 310.5գ.: 1 ոսկի դուկատը = էր հոլանդական 5.25 ֆլորինի ուստի՝

⁸ Մինասեան Լ. Գ., Իրանի հայկական վանքերը, Վիեննա, 1972:

⁹ Ա. Սարուխան, Հոլլանդյան եւ հայերը, Վիեննա 1926, էջ 58–63 Ալիշան Ղ., Սիսական, Վեներիկ, 1893:

¹⁰ Պտուկեան Զ., Հոլանտա կոխուած 18–րդ դարու հայ մետալներ, Բազմավեպ, 1977, 3–4:

90 դուկատը = 472.5 ֆլորինի: Նոթատետրում ասվում է, որ մեծ մեդալները վաճառվում էին 63 ֆլորինով, իսկ փոքրերը՝ 31.50 ֆլորինով¹¹:

Հետազոտելով մեդալների վրայի հորինվածքի մանրամասները՝ նշենք, որ մեդալային արվեստի ձևավորման մեջ առաջնային են դիցաբանական և այլաբանական խորհրդանիշները, քանդակագարդ գրությունները, աստվածաշնչային պատգամները: Համաձայն բովանդակության՝ այս մեդալները խորհրդաբանական և դաստիարակչական իմաստ ունեն նորաստեղծ ընտանիք կազմող զույգերի համար: Բացի բարձրարվեստ, շքեղ արտահայտչականությունից, այս հուշամեդալները դարձան Նոր Ջուդահայերի կողմից պատվիրված առաջին հայագիր մեդալները: Նրանք պատվիրված էին ժամանակի հայտնի հոլանդացի նկարիչ - մեդալագործին՝ Մարտին Հոլցհեյին:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել այս մեդալները, որպես առևտրական կապիտալի դրսևորումներ: Հետևաբար, Նոր Ջուդայի Խալդարյան գերդաստանի և Մասեիյան ընտանիքի կողմից պատվիրված հուշամեդալներն արդյունքն էին առևտրական այն կապիտալի, որ Նոր ջուդայեցիները ստեղծել էին իրենց առևտրական գործունեության ընթացքում: Ջուդահեռներ անցկացնելով եվրոպական մեդալների և եվրոպական մշակույթի հետ, հայ վաճառականը վերցնելով և զուգակցելով եվրոպական ավանդույթները՝ ներկա պարագայում թեմատիկ բնույթ ընտրելով ամուսնության ծիսակատարման ավանդույթը, ներկայացրել է ժամանակի ճաշակը: Նա հայկական տարրեր մտցնելով մեդալի գեղագիտական ձևավորման մեջ, պատվիրելով և վճարելով համապատասխան գումար մեդալագործին, թողել է մնայուն հիշատակ ոչ միայն երիտասարդ զույգերին սուրբ ամուսնության օրվա առթիվ, այլև թողել է պատմա-մշակութային տեսանկյունից մնայուն հուշարձան, որը կարող է դառնալ սկզբնաղբյուր հայ մեդալային արվեստի ուսումնասիրության համար՝ տարբեր տեսանկյուններից:

¹¹ A. O. Van Kerkwijk, Jaarboek 1919, p. 28.

Գործարար ջուղահայերի մեդալներն իրենց վրա եղած հայագիր մադթանքներով վկայում են ոչ միայն տնտեսական կապիտալի նաև գեղագիտական ճաշակի և հայկական ինքնության պահպանման դրսևորումների մասին:

Այսպիսով, հայկական մեդալների հետքերով գնալով, կրկին անդրադարձանք մեզ ծանոթ Նոր Զուղայի Խալդարյան գերդաստանի և Մասեյան ընտանիքի կողմից պատվիրված հուշամեդալների թեմային, փորձելով այն ներկայացնել առևտրական կապիտալի արդյունքի տեսանկյունից:

A. МУШЕГЯН

ИЗ ИСТОРИИ ПАМЯТНЫХ МЕДАЛЕЙ АРМЯН ДЖУГИ

Армянские памятные медали заказанные семьями Халдарян и Масеян из Нор Джуги (Новый Джуга) рассматриваются с точки зрения результатов торгового капитала.

A. MOUSHEGHYAN

FROM THE HISTORY OF THE JUGHA ARMENIANS' SERVICE MEDALS

Armenian commemorative medals ordered by the Khaldaryan and Maseyan families from New Jugha are considered from the point of view of the results of the commercial capital.

**ՇԱՄԱԽԱՅԱՅԵՐԻ ԴԵՐՈ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ
ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Պատմական հիշատակությունները վկայում են, որ Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում, հայերը բնակվել են վաղ ժամանակներից սկսած և գործուն մասնակցություն են ունեցել երկրամասի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Հ. Աճառյանի բնորոշմամբ՝ «Աղուանից երկրին մեջ կը գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր... Ասոնք այնպէս ուժեղ էին և այնպէս հաստատուն կերպով տեղաւորուած երկրին մեջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլ և ընդհակառակը, զանազան հաջող հանգամանքներու պատճառաւ... ազդեր էին երկրի վրայ...»¹: Սիմեոն Ա Երևանցի պատմագիր կաթողիկոսն իր հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայալեզու և հայակրօն ժողովրդոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ (ընդգծումը մերն է – Գ. Ս.)»²:

X դարից սկսած՝ Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով ընկած տարածքը սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի է Շիրվան կամ «Շարուանայ, Շիրուանայ» երկիր անուններով³: Միքայել Չամչյանն այդ մասին գրում է. «Աղուանից աշխարհ..., որ է ընդ մեջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Դարբանդ. և սա

¹ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 44:

² Դիւան Հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 417–418:

³ IX դ. վերջերին, երբ արաբական խալիֆայության թուլացման պայմաններում Բուև Աղվանքի մի շարք մարզեր դարձան ինքնուրույն, Շիրվանի մարզի ամիրան X դ. գրավեց հարևան մարզերը և իշխանության սահմանները հասցրեց Դերբենդից հարավ ընկած ծովափնյա շրջաններ՝ ընդհուպ մինչև Ապշերոնյան թերակղզի, ներառելով Խորսանի, Լայզանի և մյուս մարզերը (տե՛ս Минорский В., История Ширвана и Дербенда X-XI вв., Москва, 1963, с. 106-119, տե՛ս նաև Փափազյան Հ., Անանուն Տաջիկ աշխարհագիրը Հայաստանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դ.), «Տեղեկագիր» ՀԱՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1953, N 5, էջ 80, 86):

կոչի Աղուանք Շիրուանայ, կամ Շիրուան...»⁴: Շիրվանում հայ բնակչության՝ հնուց և վաղ միջնադարից եկող մշակութակերտ գործունեության շարունակականության վերաբերյալ ուշագրավ դիտարկում է արել Լեոն՝ նշելով, որ «Հայերը Շիրվանում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չը պէտք է մոռնալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը, երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական եւ քաղաքական խիստ ազդեցութեան տակ»⁵: Շիրվանի կենտրոնն էր հինավուրց Շամախի քաղաքը, որի տնեսական, մշակութային և քաղաքական կյանքում զգալի դերակատարություն է ունեցել տեղաբնակ հայ բնակչությունը⁶:

Աշխարհագրական դիրքով Շամախին գտնվել է հին աշխարհի հաղորդակցության և առևտրական մեծ ճանապարհների վրա: Այդտեղով էր անցնում առևտրառազմական մեծ նշանակությամբ հայտնի Պարտավ-Դերբենդ ճանապարհը: Տարանցիկ այդ ուղին միմյանց էր կապում Պարտավ, Շամախի, Շիրվան, Ղուբա և Դերբենդ քաղաքները⁷: Դրա շնորհիվ Շամախին եղել է մետաքսի, արվեստի և վաճառականության, քաղաքական ու մշակութային կապերի կարևոր հանգույց և տարբեր պետությունների ռազմական ու դիվանագիտական զանազան միջոցառումների մշտական ելակետ: Այս կարևոր բնաշխարհագրական հատկանիշների բերումով մշտապես այդ քաղաքն էին գալիս ռուս, իրանացի, հնդիկ և այլ ազգերի վաճառականներ: Շամախիում կենտրոնացվել են տարբեր վայրերից բերված ապրանքները և այստեղից առաքվել Թիֆլիս, Բաքու, Այսրկովկասի այլ քաղաքներ և Աստրախանի վրայով

⁴ Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. 9, Երևան, 1984, էջ 131:

⁵ Լեո, Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 7, N 28:

⁶ Շամախի քաղաքի հայ բնակչության համառոտ պատմությունը տե՛ս Ստեփանյան Գ., Շամախին և շամախահայերը (հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջերը), «Վեմ», Երեւան, 2009, հոկտեմբեր-դեկտեմբեր, N 3, էջ 74–95:

⁷ St u Караулов Н., Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербейджане: Ал-Истахрий (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, с. 29-31), տե՛ս նաև Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր (Մարզպանության հաստատումից Հայաստանում մինչև Բագրատունյաց թագավորության անկումը), Երևան, 1960, էջ 343:

նաև Ռուսաստան և Եվրոպա: Միաժամանակ այդտեղ էին վաճառվում Նուխիի, Բաքվի, Գյոքչայի, Ղուբայի և այլ գավառներում պատրաստված տարաբնույթ ապրանքներ⁸: Ժամանակակցի բնորոշմամբ՝ «Քանզի գիտել եւս արժան է յաղագս փարթամութեան քաղաքիս այսորիկ Շամախու... և զի էր պանտար Կասպիական ծովուն և յամենայն կողմանց վաճառականացն տեղիք բնակութեան, և վաճառի, և շահաւետութեան ի Զնդկաց և ի Զոռոնոց, ի Զուղայու, ի Ռուսաց, և յամենայն երկրէ. և այսպէս լի էր ամենայն ստացուածովք և գանձիւք»⁹:

Շիրվանի տնտեսական կյանքում մեծ դերակատարություն ունեին հատկապես շերամապահությունն ու մետաքսագործությունը, որոնք զարգացած էին մասնավորապես Շաքի (Նուխի) և Շամախի քաղաքներում և հարակից գյուղերում: Մետաքսագործության այդ կենտրոնները, լինելով միջնադարի բանուկ խաչմերուկներում, մշտապես գրավել են ճանապարհորդների ուշադրությունը: XIV դարի 40-ական թվականների սկզբների բավարացի ուղեգիր Յո. Շիլքերգերն իր ուղեգրությունում ուշագրավ տվյալներ է հաղորդում Շաքիում և Շամախիում արտադրվող մետաքսի մասին: «Ահա և Շեքիի քաղաքը,– գրում է նա,– որը գտնվում է Սպիտակ ծովի (ի տարբերություն Սև ծովի, Կասպից ծովն անվանվում էր Սպիտակ – Գ. Ս.) ափին տարածված մի բերրի երկրում: Այնտեղ նույնպես աճեցնում են մետաքս: Շուրուան երկիրը, որի մայրաքաղաքն էր Շոմախին, ուներ աննպաստ կլիմա, սակայն այստեղ աճում էր ընտիր մետաքս»¹⁰:

Տնտեսության բնագավառում շամախահայերը, արտադրական այլ ճյուղերից (կաշեգործություն և այլն) առավել, հատկապես զբաղվել են մետաքսաթելի արտադրությամբ և ունեին գործարաններ¹¹: Արտադրության այդ ճյուղը Շիրվանում հայտնի էր դեռևս

⁸ Տե՛ս Зелинский С., Описание города Шемаха, Тифлис, 1896, с. 31.

⁹ Եսայի Զասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 33:

¹⁰ Շիլքերգեր Յո., ճանապարհորդություն Մյունխենից Եվրոպա, Ասիա, Աֆրիկա, 1394–1427 թթ., գերմաներենից թարգմանեց Է. Մակարյան, Երևան, 2004, էջ 65:

¹¹ Տե՛ս Дубринин Н., История войн и владычества русских на Кавказе, т. I, кн. 3, СПб., 1871, с. 146:

վաղ անցյալից: Հարկ է նշել, որ շերամապահության և մետաքսագործության արտադրությունը շիրվանահայերի համար համարվում էր կենսաապահովման հիմնական աղբյուրներից մեկը: Անգամ մետաքսե գործվածքներով են վճարվել խաներին տրվելիք հարկերն ու տուրքերը¹²:

Շիրվանում հայ բնակչության աճին զուգընթաց Շամախի քաղաքն աստիճանաբար դառնում էր հայաշատ խոշոր կենտրոն: Այսպես, վկայաբերենք եվրոպացի ճանապարհորդների՝ շամախահայերի վերաբերյալ թողած տեղեկությունները: Այս առումով ուշագրավ տեղեկություն է հաղորդում XV դարի երկրորդ կեսի իտալացի դիվանագետ, ճանապարհորդ ու վաճառական Ջոզեֆո Բարբարոն, որը 1471–1473 թթ. եղել է Վենետիկի դեսպանը Իրանի այդօրյա տիրակալ Ակ-կոյունլու Ուզուն-Հասանի արքունիքում: Վենետիկ վերադառնալու ճանապարհին Բարբարոն Թավրիզից հետո լինում է նաև Շամախիում և Դերբենդում: Նկարագրելով Շամախի քաղաքը՝ նա գրում է. «...Շամախի... գտնվում է դեպի Բագվի ծովը վեց օրվան ճանապարհի հեռու... Այս շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն եւ շինում է մետաքս, կտավ եւ ուրիշ բաներ իրենց եղանակով: Գտնվում է Մեծ Հայաստանում¹³, եւ բնակիչների մեծ մասը հայ են»¹⁴: Հիշարժան է նաև անգլիական «Ռուսական» ընկերության գործակալ¹⁵, ճանապարհորդ ու վաճառական Անթոնի Ջենկինսոնի՝ Շամախիում 1563 թ. ապրիլի 10-ի գրառումներից հետևյալ հատվածը. «...այս քաղաքը (Շամախին – Գ. Ս.) ծովից ուղտով յոթը օրվան ճանապարհի հեռու է, բայց հիմա շատ ավերակ է, բնակեցված գլխավորապես հայերի-

¹² Առաքելյան Գ., Արևելյան Հայաստանի արդյունագործությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 1990, էջ 175:

¹³ Հայտնի է, որ Շամախի քաղաքը գտնվում է Կուրի ձախափնյակում: Ամենայն հավանականությամբ Ջ. Բարբարոն նկատի է ունեցել Շամախիում ստվար հայության հանգամանքը, ուստի և քաղաքը ներկայացրել է Մեծ Հայքի սահմաններում: Նշենք, որ Ջ. Բարբարոյի տեքստի այդ հատվածը միտումնավոր կերպով դուրս է թողնվել Путешественники об Азербайджане, под ред. Э. Шахмалиева, т. I, сост. З. Ямпольский, Баку, 1961, с. 74 գրքում:

¹⁴ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ–ԺԶ դդ., Երևան, 1932, էջ 199:

¹⁵ Փափագյան Վ., Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտներում (XVI–XVII դդ.), Երևան, 1990, էջ 82:

ց... (ընդգծումը մերն է – Գ. Ս.)»¹⁶: Ավելին՝ Շամախիի հայ առևտրականներին էր պատկանում քաղաքի հոլմ մետաքսի արտահանման առաջնայնությունը. հոլմքը վաճառահանվում էր Եվրոպա, Միջին Ասիա, Հալեպ, Իրան և Արևելյան երկրներ¹⁷: Ըստ Ադամ Օլեարիուսի տվյալների՝ 1636–1637 թթ. Շիրվանում արտադրվել էր 3000 հակ մետաքս¹⁸:

Շամախիի առևտրատնտեսական կյանքում հայերի ազդեցիկ դերի մասին է վկայում այն փաստը, որ հայ վաճառականները մետաքսի հոլմքի արտաքին առևտրով մրցակցում էին բրիտանական առևտրական գործող ընկերությունների հետ, որոնք ձգտում էին առևտուրը ընդլայնել Այսրկովկասում: «Անգլիացիները,– գրում է Դ. Քյուրտյանը,– 1561-ին մտան Կովկասեան Հայաստան, Շամախի, Շիրվանի եւն կողմերը առետուրի՝ մասնաւորապէս հոլմ մետաքսի համար, սակայն հազիւ քանի մը տարի վերջ սկսան ինքզինքնին անգոր գտնել Հայոց հետ մրցակցելու գործի մէջ»¹⁹: Որ Շամախիի շուկայում անգլիացիների համար անցանկալի մրցակիցներ էին տեղի, այդ թվում նաև հայ վաճառականները, վկայում է 1568 թ. սեպտեմբերի 1-ին Շամախի այցելած անգլիացի առևտրական Լոուրենս Չեփմենը: Նա հայտնում է, որ Շամախիում շուկան այնքան լավ էր ապահովված ամեն տեսակ ապրանքներով, որ նրանք չկարողացան վաճառել իրենց կտորեղենը²⁰:

Նկատենք, որ Շիրվանում զարգացող մետաքսագործությամբ ծանր հարված հասցրեցին XVI–XVII դդ. թուրք-իրանական տևա-

¹⁶ Հակոբյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 372, տե՛ս նաև *Английские путешественники в Московском государстве в XVI веке*. Пер. с англ. Ю. В. Готье, Ленинград, 1937, с. 205.

¹⁷ Մշակ, Թիֆլիս, 1884, հունվարի 27, N 17, տե՛ս նաև Հակոբյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 412:

¹⁸ *St u Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах*, составленное секретарем посольства Адамом Олеарием, Москва, 1870, с. 791.

¹⁹ Քիրտեան Յ., Հայ ազատագրական փորձ մը ժՁ դարուն (հատուած մը իմ «Հոլմ մետաքսի վաճառականութիւնը եւ հայերը» գործու), «Անահիտ», Փարիզ, 1937, N 5–6, էջ 60:

²⁰ Հակոբյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 414–415, տե՛ս նաև *Английские путешественники...*, с. 239.

կան և ավերիչ պատերազմները: Մեծապես տուժեցին հատկապես շերամապահությամբ և մետաքսագործությամբ զբաղվող հայկական գյուղերը: Մուստաֆա-Լալա փաշայի՝ Շիրվանում 1578 թ. գործած սոսկալի ոճիրների մասին ձեռագիր մի հիշատակարանում ասված է. «Ետոյ ելաւ Խանթաթար յերկրէն Քաֆայու (=Թեոդոսիա), և անցաւ ի Լեռն Ալսըռլայ (?)»²¹ «և մտաւ երկիրն Շարվանայ, շատ աւեր էած, գերեաց զազգս Զայկազանց (ընդգծումը մերն է – Գ. Ս.), քակեցին ծառն ապրիշումի (իմա՝ մետաքսի – Գ. Ս.)»²²:

Շամախիի հայ առևտրականները զբաղվում էին մեծածավալ առևտրով և կապ էին պահպանում հեռավոր երկրների հետ, իրենց ձեռքին էին կենտրոնացրել տարանցիկ առևտուրը: Նրանց գործունեության սահմանները տարածվում էին Ռուսաստանից, Իրանից, Եվրոպայից մինչև Կենտրոնական և Միջին Ասիայի երկրներ: Անշուշտ, շամախահայ վաճառականների առևտուրը այլ վաճառատների հետ չէր սահմանափակվում լոկ հուժմ մետաքսով և մետաքսե կտորեղենով: Նրանք առևտրական կենտրոններ էին հասցնում արևելյան ամենաբազմազան ապրանքներ (օրինակ՝ համեմունքներ, կաշվեղեն, բուսական ներկեր, գորգեր և այլն), իսկ ներկրում էին տնային իրեր, պերճանքի զանազան առարկաներ և այլն: «Մշակի» տեղեկացմամբ, «Առաւել բարձր առուտուր, Ռուսաստանի և Արտասահմանի հետ յարակցութիւն ունեցողներ գլխաւորաբար հայեր են, որոնք ներս են բերում զանազան եւրոպական ապրանքներ, բուրբի, բամբակի և քաթանի գործուածներ (մահուղներ, չիթեր, կտաւներ), պողվատեայ և այլ մետալեղէն գործիքներ, սնդուկներ, թէյ, շաքար, դահֆէ, մաքրած ալիւր, խմիչքեղէն և այլն»²³: Շամախիի հայ վաճառականների՝ միջազգային առևտրի մասնակցության վերաբերյալ ուշագրավ է հետևյալ փաստը: Շամախիում 1915 թ. ամռանը շրջագայած կովկասագետ Ա. Ֆիտուրնի

²¹ Զարցականը Բ. Սարգիսյանինն է:

²² Սարգիսեան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Կ. Ա, Վենետիկ, 1914, էջ 667: Զմմ. Զովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Կ. Փ, Երևան, 1959, էջ 63:

²³ Զ. Ղ. [Գարեգին քհն. Ղուկասյան], Նամակ Շամախուց (Ք), «Մշակ», Թիֆլիս, 1872, օգոստոսի 30, N 30:

տեղեկացմամբ՝ Շամախիի բնակիչ Գրիգոր Գուրգենյանի տանը պահպանվում էին Չինաստանից բերված հախճապակյա սպասքի երկու շքեղ պարագաններ: Վերջինիս հավաստմամբ դրանք իրեն են հանձնել շամախեցի հնաբնակ Ներսիսյանները, որոնց պատմելով այդ սպասքները, սերնդեսերունդ փոխանցվելով, արդեն մի քանի հարյուր տարի է, ինչ գտնվում է իրենց մոտ²⁴:

Հարկ է նշել, որ հոծ հայ բնակչություն ունեցող Շամախի քաղաքն էր Արևելյան Այսրկովկասի այն հանգուցակետը, որտեղ օտարերկրյա վաճառականների հետ գործարար կապեր էին հաստատում նաև տարբեր վայրերից ժամանող հայ վաճառականները²⁵: Այսպես՝ XVII դ. բանաստեղծ-տաղասաց Ստեփանոս Թոխաթեցին, «Ողբ ի վերայ Եվդոկիա մեծի քաղաքին» բանաստեղծության մեջ, նկարագրելով Եվդոկիայի երբեմնի բարգավաճ կյանքն ու ավերումը, տեղի առևտրականների ծավալած գործունեության մասին հայտնում է, որ առևտրական գործերով նրանք լինում էին նաև Շիրվանում և Շամախիում²⁶: Տեղեկություններ կան այն մասին, որ տարբեր ժամանակներում Շամախիում բնակություն են հաստատել Հայաստանից տեղափոխված հայ առևտրավաշխառուական դասի ներկայացուցիչներ: Սիմեոն Երևանցի կաթողիկոսը վկայում է, որ 1640-ական թվականների վերջերին Երևանի նահանգի Կարակոյունլու (հնում՝ Ջիդին, Ջղուն)²⁷ գյուղի կալվածատեր, վաճառական ոմն Սուքիաս ինչ-ինչ հանգամանքների բերումով բնակություն է հաստատում Շամախիում. «Յաղագս Ղարաղոյունլու կոչեցեալ գեղն... գեղս լեալ է ունեմն խօծայ Սուքիաս

²⁴ Տե՛ս Фитуни А., История последней столицы Ширвана (историко-этнографический очерк), «Известия Азербайджанского комитета охраны памятников старины, искусства и природы», вып. 3, Баку, 1927, с. 102.

²⁵ Տե՛ս Хожделение купца Федота Котова в Персию: критич. текст и перевод Н. А. Кузнецовой, Москва, 1958, с. 72.

²⁶ Տե՛ս Ալիշան Ղ., Հայապատում, հ. Բ, Վենետիկ, 1901, էջ 608:

²⁷ Գյուղը նախկինում մտնում էր Երևանի նահանգի Երևանի գավառի Վեդի-բասարի ոստիկանական շրջանի մեջ: 1945–1952 թթ. բնակավայրի խոշորացման պատճառով ապաբնակեցվել է (տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 534):

կոչեցելոյ հայ ազգաւ, և Սուքիասս ի պատահմանց ինչ երթալ ի Շամախի՝ մնայ անդ»²⁸:

Շամախի քաղաքի՝ XVII դարի սկզբների հայկական քարավանատան վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել ռուս վաճառական Ֆեոդոր Կոտովը, որը, երկարամյա շփումներ ունենալով հայերի հետ, սովորել էր նաև հայոց լեզուն: 1623 թ. Իրան մեկնելու ճանապարհին կանգ առնելով Շամախիում՝ ճամփորդական նոթերում գրել է. «Շամախին կառուցված է բարձր լեռների միջև՝ թեքության վրա, բերդը քարից է, բնակավայրն էլ է քարից... Ե՛վ բնակավայրը, և՛ կրպակների շարքը, և՛ քարավանատները կառուցված են բերդից դուրս: Շամախիում կան յոթ քարավանատներ. բոլորն էլ կառուցված են քարից և գտնվում են կրպակների շարքերի միջև. կան տաճկական, հայկական, ուր առևտուր են անում նաև ռուսները, լեզգիների, գիլանցիների և այլ քարավանատներ, և քաղաքն ընդարձակ է»²⁹: Շամախահայերի վերաբերյալ տպավորիչ տեղեկություններ է թողել Իրան ուղևորվելու ճանապարհին 1636 թ. դեկտեմբերի 30-ից 1637 թ. մարտի 27-ը Շամախիում հանգրվանած Սաքսոնիայի թագավոր Ֆրիդրիխ Շլեզվիգ-Հոլշտեյնացու դեսպանության քարտուղար Ադամ Օլեարիուսը: Ըստ նրա՝ Շամախիի բնակչությունը կազմված էր պարսիկներից, հայերից և մի քանի վրացիներից³⁰: 1683 թ. դեկտեմբերին Շամախի այցելած գերմանացի բնագետ և բժիշկ Էնգելբերտ Կենպֆերը քաղաքի բազմակողմանի նկարագրությունից բացի, տեղեկություններ է թողել նաև հայկական քարավանատան մասին³¹: 1686 թ. Շամախի այցելած ֆրանսիացի ճիզվիտ քարոզիչ Ֆիլիպ Ալրիլը հիշատակություն է թողել քաղաքի ազգաբնակչության թվակազ-

²⁸ Ջամբռ, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրիցն: Զամաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմեօնէ ցաւահար եւ վշտակօծ կաթուղիկոսէ Երեսնցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 127:

²⁹ Хожение купца Федота Котова в Персию, с. 36, տե՛ս նաև Խաչիկյան Լ., Զայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, ԲՄ, Երևան, 1980, N 13, էջ 90:

³⁰ Адам Олеарий, Գշվ. աշխ., с. 526.

³¹ Kempfer E., Amoenitatum Exoticarum Politico-Phisico-Medicarum Fasciculi V, Lemgoviae, 1712, p. 267.

մի վերաբերյալ, որի հաղորդումը որոշ պատկերացում է տալիս քաղաքի էթնիկական և դավանական կազմի մասին: Ըստ Ֆ. Ավրիլի՝ մոտ 50–60-հազարանոց բնակչություն ունեցող Շամախիում «Բացի հայերի մեծ թուից, որ կարելի է հասցնել 30000-ի, կան նաեւ հնդիկներ, մոսկովիտներ, վրացիներ, յոյներ, թուրքեր, չերքեզներ եւ բազմաթիւ այլ ժողովուրդներ...»³²: Պարզվում է, որ հայերը կազմել են քաղաքի խառը բնակչության կեսը և, ամենակարևորը, համարվել հիմնական բնակիչներ: Ուշագրավ է, որ Շամախիի հայ քարավանատան մասին վկայություններ են թողել նաև այդտեղ տարբեր ժամանակներում հանգրվանած եվրոպացի ճանապարհորդները: Այսպես՝ 1703 թ. օգոստոսին Շամախի ժամանած հոլանդացի նկարիչ և ճանապարհորդ Կոռնելի լը Բրյուլինը վկայում է, որ քաղաքում հայերը մեծ թիվ էին կազմում: Քաղաք մտնելուց հետո Բրյուլինն իր խմբով հայ ուղեկիցների հետ իջևանել էր հայկական քարվանատանը, ուր մի հայ վաճառական առատորեն հյուրասիրել էր նրանց³³:

Փաստերը վկայում են այն մասին, որ XVII դարի 40-ական թվականների սկզբներից Շամախիի հայ առևտրականները Մոսկվայի հետ հաստատել էին առևտրական սերտ կապեր: 1641 թ. Դեսպանական ատյանի հյուրատանը իջևանած հայ և հնդիկ վաճառականները հայտնում են, որ իրենք շամախեցի ու սպահանցի վաճառականներ են և ցանկանում են առևտուր անել Մոսկվայում³⁴: 1666 թ. փետրվարին առևտրական պայմանագիր կնքելու համար Մոսկվա ժամանած 40 հայերի մեջ կային, ինչպես Ջուղա-

³² Philippe Avril, *Voyage en divers etats d’Europe et d’Asie*. Paris, MDCXCII (1692), p. 114, տե՛ս նաև Թաքիրյան Է., Կոռնելի լը Բրյուլինի «Ուղեգրությունը» որպես աղբյուր հայ գաղթախների պատմության, «Իրան-նամե», Երևան, 1993, սեպտեմբեր, N 4, էջ 21: Դմմ. Գովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 358:

³³ Տե՛ս *Voyage de Corneille Le Brune, par la Moscovie, en Perse, et aux Indes Orientales*. t. I-V, Rouen, NDCCXXV (1725), t. III, p. 484, տե՛ս նաև Թաքիրյան Է., նշվ. աշխ., էջ 21:

³⁴ Տե՛ս Ոսկանյան Վ., Դայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորման պատմությունից (XV–XVIII դդ. սկիզբ): XVI–XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը (հոդվածների ժողովածու), Երևան, 1989, էջ 24–25:

յի, այնպես էլ Շամախիի, Ագուլիսի, Թիֆլիսի և այլ քաղաքների վաճառականներ³⁵:

Պատմական հիշատակությունները հաղորդում են, որ տարբեր ժամանակներում տնտեսական շարժառիթներով շամախահայ վաճառականների մի մասը հարկադրված թողել է հայրենի երկիրը և հանգրվան գտել Աստրախանում: Ամթոնի Ջենկինսոնի մի վկայության համաձայն՝ դեռևս 1559 թ. շամախահայ վաճառականները առևտուր էին անում Աստրախանում³⁶: 1747 թ. պետականաշտոնական վիճակագրության տվյալներով՝ 1730–1740-ական թվականներին Շամախիից Աստրախան բնակություն են հաստատել 40 հոգի (արական սեռի)³⁷: Ավելի ուշ Աստրախան են տեղափոխվում ևս 10 հոգի³⁸: Շամախիից Աստրախանում հաստատված հայ վաճառականների շրջանում ամենից աչքի ընկնող դեմքերից էր 1746 թ. տեղափոխված և 1747 թ. ռուսական հպատակություն ընդունած Սերգեյ Յովհաննիսյանը (Իվանով), որը համարվում էր գործվածքային խոշոր ֆաբրիկատերերից և ամենամեծ արհեստանոցատերերից մեկը³⁹: Յարկ է նշել, որ շամախահայերի՝ դեպի Աստրախան և այլ վայրեր կատարած տեղափոխությունները պարբերական բնույթ չեն կրել, որի շնորհիվ էլ չեն խախտվել նրանց բնապատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

XIX դարասկզբին Այսրկովկասի միացումը Ռուսաստանին բարենպաստ պայմաններ ստեղծեց երկրամասի դանդաղ, բայց նկատելի առաջընթացի համար: Արևելյան բռնակալության տապալումով գյուղերում և քաղաքներում ստեղծվեցին կյանքի ու գույքի

³⁵ Ոսկանյան Վ., Հայերը Մոսկվայում XV–XVII դդ., ՊԲՀ, Երևան, 1971, N 1, էջ 35:

³⁶ Քիրտեան Յ., Հայ եւ անգլիական դրամագլխի պայքարը Կովկասի մէջ (նիւթեր ԺՁ դարու պատմութեան համար. 1550-1600), «Հայրենիք», Պոսթըն, 1941, ԺԹ տարի, օգոստոս, N 10, էջ 136:

³⁷ Յուխտ Ա., Աստրախանի հայկական գաղութի բնակչության սոցիալական կազմը XVIII դարի առաջին կեսում, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1957, N 7, էջ 56, տե՛ս նաև Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության հ. Ա, Երևան, 1964, էջ 373:

³⁸ Хачатрян В., Население армянской колонии в Астрахани во второй половине XVIII века, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1965, N 7, էջ 79:

³⁹ Նույն տեղում, էջ 83, տե՛ս նաև Յուխտ Ա., նշվ. աշխ., էջ 57–58:

անհամեմատ կայուն երաշխիքներ: Հետագա առաջխաղացում ապահովելու նպատակով Ռուսաստանը բարեհաճ վերաբերմունք էր ցուցաբերում երկրամասում բնակվող ժողովուրդների հանդեպ, քաջալերում վաճառականների գործունեությունը: Հատկապես մեծ նշանակություն էր տրվում հայ վաճառականների հետ տարվող քաղաքականությանը: Ռուսական կառավարությունը, հաշվի առնելով հայ վաճառականների՝ Ռուսաստանի հետ հնուց հաստատած առևտրական լայն կապերը, խրախուսում էր նրանց գործուն մասնակցությունը երկրամասի տնտեսական կյանքին⁴⁰: Այդ առաջընթացը նպաստավոր պայմաններ ստեղծեց նաև Շաքի, Շամախի և Բաքու քաղաքներում գործող հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների համար: Նրանցից շատերը վերոնշյալ քաղաքներում սկսեցին ձեռնարկել տնտեսական նոր գործառույթներ: Թթենիների առատության ու բարեխառն եղանակի արդյունքում հայ առևտրաարդյունաբերողները Շամախիում զարկ տվեցին հատկապես շերամապահությանը⁴¹:

XIX դարի կեսերին Շամախին շարունակաբար համարվում էր Արևելյան Այսրկովկասի հայաշատ կենտրոններից մեկը: 1820-ական թվականների կեսերին հայերը քաղաքում ունեին 252 տուն՝ 1260 բնակչով (625 ար., 635 իգ.)⁴²: 1828 թվականին, երբ Ռուսաստանը ստեղծում էր Հայկական մարզը, Լազարյաններն իրենց առաջադրած ծրագրով հայկական թագավորության սահմաններում ընդգրկել էին նաև պատմական Հայաստանից դուրս գտնվող Շամախին և Շաքին: «Շատ մարզեր, ասված էր ծրագրում, ինչպես հին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շաքու և Շամախու մարզերը՝ Էջմիածնի նախագահ վանքով, կազմում են Հայաստանի վաղեմի թագավորության ընդհանուր կորիզը և գլխավոր հիմքը»⁴³:

⁴⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. V, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 267–268:

⁴¹ Մշակ, Թիֆլիս, 1884, 27 հունվարի, N 17:

⁴² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 332, ց. 1, գ. 866, ք. 1:

⁴³ Ղիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 308:

Ցարական կառավարությունը, ջանք չխնայելով Այսրկովկասը դարձնելու մետաքսի հունքի կայուն բազա, Շամախիում մետաքսագործության արտադրությունը զարգացնելու նպատակով 1836 թ. այդտեղի մետաքսաթելի ֆաբրիկային կից բացեց շերամի ուսումնարան⁴⁴։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ Շամախիում արտադրված մետաքսե գործվածքները ևս մեծ պահանջարկ են ունեցել ռուսական քաղաքներում կազմակերպվող տոնավաճառներում։ Այսպես՝ 1858 թ. Այսրկովկասից Նիժեգորոդյան տոնավաճառ բերված 1220 փուլ մետաքսի մի մասը արտադրվել էր Շամախիում⁴⁵։

Մետաքսագործության մեջ առաջնակարգ դիրքեր են գրավել հատկապես շամախահայ առևտրաարդյունաբերողները։ Նրանք ունեցել են մետաքսագործական գործարաններ։ Արտադրական ծավալներով առաջնակարգ դիրք է գրավել հատկապես Թառայան եղբայրներին պատկանող գործարանը⁴⁶։ Նկատենք, որ շամախահայերի շրջանում մետաքսագործությունն ունեցել է մաս երկրորդական ճյուղեր, որոնց մեջ առաջնակարգ տեղ է զբաղեցրել թոռ (քող) կոչվող մետաքսե գործվածքի արտադրությունը։ Սա հատուկ մետաքսաթելից պատրաստված ձեռագործ գլխաշալ էր, որ կանայք ներկում էին զանազան գույներով⁴⁷։ Ձեռագործությամբ զբաղվում էին 8–9 տարեկան աղջիկներից մինչև տարեց կանայք։ Ձեռագործի պատրաստման համար ծախսվում էր 4–10 ռ. և վաճառվում էր 7–15 ռ.⁴⁸։ Շամախիում պատրաստված գլխաշալը մեծ պահանջարկ և կիրառություն է ունեցել ինչպես տարածաշրջանում, այնպես էլ Ռայաստանի տարբեր շրջաններում։ Շամախիում գործված շալը Ջանգեզուրում մեծ հարգ է ունեցել։ Այն սովորաբար ընծայվել է հարսանիքների ժամանակ և մտել է աղջկա օժիտի մեջ⁴⁹։ Տնային արտադրության մեջ շամախահայ կանայք

⁴⁴ Առաքելյան Գ., մշվ. աշխ., էջ 177։

⁴⁵ Նույն տեղում, էջ 178։

⁴⁶ «Մշակ», Թիֆլիս, 1884, հունվարի 27, N 17։

⁴⁷ Նույն տեղում։

⁴⁸ Նույն տեղում։

⁴⁹ Լիսիցյան Ս., Ջանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 164, տե՛ս մաս Կարապետյան է., Օժիտը հայոց մեջ (պատմաազգագրական ուսումնասիրություն),

գբաղվել են նաև զառեկից զանազան ժապավեններ պատրաստելու աշխատանքով: Այդ արտադրանքը, որպես զարդ, հիմնականում գործածվել է բաճկոնի և ուրիշ այլ հագուստների ծայրերին կարելու համար: «Շամախու նշանաւոր և յայտնի արհեստն է մետաքսագործութիւնը,- գրում է Շամախու հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը,- որոյ համար կան արհեստանոցներ՝ բայց ասիական հին ձեւով. սակայն բաւական լաւ գործուածներ են պատրաստում, զոր օրինակ՝ թաշկինակ, վերմակի երես, պարանոցապահ (շարֆ վզի) եւ այլն»⁵⁰: Ուշագրավ է այն իրողությունը, որ Շիրվանի մետաքսից գործած թաշկինակների և գլխաշորերի մասին հիշատակումներ են պահպանվել նաև հայկական հնագույն ժողովրդական երգերում: Ինչպես օրինակ՝ «Լուսնյակն ինձի ցերեկ, Շիրվանի աղլուխ կամ քարվան բերեք»: Հատկանշական է այն իրողությունը, որ Թիֆլիսում տեղի «Գյուղատնտեսական ընկերության» նախաձեռնությամբ 1889 թ. բացված կովկասյան արդյունաբերական և գյուղատնտեսական ցուցահանդեսում, մետաքսագործության բաժնում Շամախիից ներկայացված գույնզգույն և բարակ թափտաները, թռեղը և շալերը աչքի են ընկել իրենց նրբագեղությամբ⁵¹:

Շամախի քաղաքի բարգավաճման և բնակչության բնական աճի վրա խիստ բացասական ազդեցություն էին թողնում հաճախակի կրկնվող ավերիչ երկրաշարժերը: Քաղաքը, գտնվելով սեյսմիկ ակտիվ շրջանում, լրջորեն վնասվել էր 1668, 1669, 1806, 1828, 1847, 1848, 1849 թթ. երկրաշարժերից⁵²: Հերթական աղետալի երկաշարժը տեղի ունեցավ 1859 թ. մայիսի 30–31-ին, որի հետևանքով ավերվեց 3250 շինություն, փլատակների տակ մնաց 400 մարդ⁵³: Շամախիում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի

երևան, 1978, էջ 23:

⁵⁰ Սմբատյանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախույ թեմի, Տփլիս, 1896, էջ 281:

⁵¹ Շիրվանզադե Ա., Նամակ Բաքվից, Եժ, հ. 9, էջ 449:

⁵² Շամախու աղետը (ժողովածու), Բագու, 1902, էջ 11:

⁵³ Տես նույն տեղում, էջ 12: Абих Г., Шемахинское землетрясение 1859 года (Природа и люди на Кавказе и за Кавказом): по рассказам путешественников,

պատճառով, երբ 1859 թ. վերջերին նահանգային կենտրոնական վարչությունը տեղափոխվում է Բաքու⁵⁴, շամախահայերից շատերը ևս փոխում են բնակավայրը՝ հաստատվելով Բաքվում, իսկ հիմնական հատվածը դարձյալ մնում է հարազատ օջախներում⁵⁵: Երկրաշարժից հետո եթե 1861 թ. տվյալներով՝ քաղաքում հայապատկան տների թիվը 876 էր⁵⁶, ապա՝ 1864 թվակիր ունեցող արխիվային մի վավերագրում, որտեղ ամփոփված են Շամախիի Սբ. Աստվածածին հին և նոր եկեղեցիների քահանաների ու նրանց ծխերի թիվը, «տանց նորոք եկեղեցւոյն հայոց Շամախւոյ» ծխերի թիվը կազմում էր 357, իսկ «հնոյ եկեղեցւոյ Շամախւոյ» ծխերի թիվը՝ 347: Ըստ այդմ՝ քաղաքն ուներ 702 ծովա հայ բնակիչ⁵⁷:

Երկրաշարժի հետևանքները վերացնելուց հետո շամախահայերը մետաքսագործության բնագավառում աստիճանաբար վերականգնեցին իրենց դիրքերը: Մետաքսից պատրաստած արտադրանքը շամախահայ առևտրաարդյունաբերողները հիմնականում արտահանել են Բաքու, Թիֆլիս և Մոսկվա⁵⁸: Նկատենք, որ Շամախիի հայ վաճառականները մետաքսի առևտրից բացի զբաղվում էին նաև տորոնավաճառությամբ: Նրանք կարմիր ներկի համար տորոն (բույսի արմտիք) էին մատակարարում Մոսկվայի, Մարսելի, Մանչեստրի մանուֆակտուրային արդյունաբերողների-⁵⁹:

Շամախահայերն առաջնակարգ դիրքեր էին գրավում նաև քաղաքի առևտրական հարաբերություններում: Ստ. Ջելինսկու (Սկրտչյան) տվյալների համաձայն՝ 1870 թ. Շամախիում կային 45

поэтическим произведениям А. Пушкина, М. Лермонтова, Я. Полонского и ученым исследованиям, сост. П. Надеждин, СПб., 1869, с. 287), Землетрясения в Шемахе и Эрзруме в мае 1859 г. (Записки кавказского отдела императорского русского географического общества, кн. VI, Тифлис, 1862, с. 1–19).

⁵⁴ Տե՛ս Ակտ, собранные Кавказскою археографическою комиссиею, под ред. Ад. Берже, т. XII, Тифлис, 1904, с. 398.

⁵⁵ Շամախու աղետը, էջ 12:

⁵⁶ Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 138:

⁵⁷ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 198, վավ. 56:

⁵⁸ «Մշակ», Թիֆլիս, 1884, 27 հունվարի, N 17:

⁵⁹ Նույն տեղում:

հայ առևտրականներ, որոնք, ըստ առևտրի բնույթի, ընդգրկված էին հետևյալ բնագավառներում: Եղել է 1 ալաֆ (մրգեր և գյուղատնտեսական մթերքներ վաճառող), 2 բազազ (սրանց ձեռքին էր կենտրոնացած ռուսական և եվրոպական ֆաբրիկաներից բերված կտորեղենի առևտուրը), 3 բախկալ (նպարավաճառ, չոր մրգերի, յուղի և մեղրի առևտրական), 14 խանութպան (նրանց մեծ մասը զբաղվում էր խմիչքի և մանրածախ ապրանքների առևտրով), 10 արդուզարդի ապրանք վաճառողներ, 1 գրենական պիտույք վաճառող, 1 դեղավաճառ, 5 մանրավաճառ, 1 տախտակ և գերան վաճառող, 1 երկաթեղեն վաճառող, 2 ծխախոտավաճառ, 1 տեղական մետաքսե ապրանք վաճառող և առևտրական գործարք կատարող 3 գրասենյակային աշխատող⁶⁰:

Դեռ հին ժամանակներից Շամախին համարվում էր Այսրկովկասի արհեստագործության զարգացած կենտրոններից մեկը: Ստ. Ջելինսկին հիշատակում է, որ արհեստավոր շամախահայերը ընդգրկված էին քաղաքում գործող արհեստագործական արտադրության գրեթե բոլոր բնագավառներում և ունեին իրենց ձեռնարկությունները: Քաղաքում հայերն զբաղվում էին 27 տարբեր արհեստներով, կային հայապատկան 97 ձեռնարկություն, 121 վարպետ և 109 ենթավարպետ ու աշակերտ⁶¹: Հայերի շրջանում տարածված և զարգացած արհեստներից էին ջուլհակությունը, ոսկերչարածաթագործությունը, տակառագործությունը, զինագործությունը, դերձակությունը, փականագործությունը, ներկարարությունը, դարբնությունը, ձեռագործությունը, հրուշակագործությունը, թիթեղագործությունը, ատաղձագործությունը, զինագործությունը և այլն, որոնք բավական եկամտաբեր արհեստներ էին⁶²: Տեղական գործարանային արտադրության մեջ հայերը մեծապես ընդգրկված էին կոշկակարության, եվրոպական կարի հագուստի, արծաթագործության, մաշակարության, ժամագործության և զինագործու-

⁶⁰ Зелинский С., цит. изъ., с. 32–33.

⁶¹ Նույն տեղում, с. 34:

⁶² Նույն տեղում с. 32–33, տես նաև Զ. Ղ. [Գարեգին քին. Ղուկասյան], Նամակ Շամախուց (Բ), «Մշակ», Թիֆլիս, 1872, օգոստոսի 30, N 30:

թյան բնագավառներում⁶³։ Ուստի պատահական չէ ռուս հեղինակ Պ. Չերեպանովի վկայակոչումը, որ Շամախիի գրեթե ամբողջ կապիտալը գտնվում էր հայերի ձեռքին⁶⁴։

Հատկանշական է այն իրողությունը, որ Շամախի քաղաքի առևտրատնտեսական կյանքում մեծ դերակատարություն են ունեցել հայ ազնվականական տոհմերը։ Շամախիում լայն ճանչում ունեին Քալանթարյան, Դոլուխանյանց, Ավշարյանց, Շահնազարյանց և Լալայանց ազնվականական տոհմերը։ Պատվելի քաղաքացիներ էին Նիկողայոս Ախվերդյանը, Մովսես Ներսեսյանցը, Մեժլում Շահնազարյանցը, Գևորգ Տեր-Սահակյանցը, Սարգիս Տեր-Հովհաննիսյանցը⁶⁵ և ուրիշներ։ Շամախի քաղաքի առևտրի, արդյունաբերության և հասարակական կյանքում հայ մելիքական տոհմերից առանձնահատուկ դերակատարություն է ունեցել հատկապես Լալայան գերդաստանը։ Այդ գերդաստանի շառավիղներից Շամախիում և Բաքվում ծավալած բազմարդյունք գործունեությամբ հատկապես մեծ ճանաչում էին ձեռք բերել Մարկոս բեկ Լալայանի որդի Պողոս բեկը⁶⁶ և նրա 8 որդիները՝ Աթանասը, Հովհաննեսը, Աբրահամը, Մկրտիչը, Մարգարը, Գևորգը, Հակոբը և Կարապետը⁶⁷։ Պողոս բեկ Լալայանը Շամախիում և հարակից Բասխալ գյուղում ունեցել է մետաքսաթելի ֆաբրիկա, որի արտադրանքը հիմնականում արտահանվել է Ռուսաստան, Իրան և Հնդկաստան։ Պողոս Լալայանցը զբաղվել է նաև տորոնի բույսարմատի Ռուսաստան արտահանմամբ, իսկ այնտեղից ներմուծել է լեղակ, որդան կարմիր և խառն ապրանքներ⁶⁸։

⁶³ Зелинский С., նշվ. աշխ., с. 32–33։

⁶⁴ Черепановъ П., Статистическое описание Шемахинской губернии. Шемаха (Кавказский календарь на 1852 г., Тифлис, 1851, с. 428)։

⁶⁵ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1858, դեկտեմբերի 27, N 52, էջ 416։

⁶⁶ Պողոս բեկը մահացել է 107 տարեկան հասակում՝ 1847 թ.։

⁶⁷ Խ. ա. ք. Մ. [Խորեն ավ. քին. Միրզաբեկյան], Կենսագրական ակնարկ շամախեցի Լալայեանց ազնվ. տոհմի (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 1–12, տես նաև Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 335)։

⁶⁸ Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 330–331։

Նշենք, որ շամախահայերի կյանքի առաջընթացի վրա բացասաբար ազդեց 1872 թ. հունվարի 16-ի աղետալի երկրաշարժը⁶⁹: Երկրաշարժը հիմնովին վնասեց քաղաքի բարձրադիր մասում գտնվող հայկական թաղամասը: Հիմնահատակ ավերվեց հայոց նորաշեն Սբ. Աստվածածին եկեղեցին: Երկրաշարժի հետևանքով սկսեց նվազել քաղաքի բնակչության թիվը: Տնտեսական անկման ու ավերումների հետևանքով հազարավոր անգործ մնացած արհեստավորներ և տուրքերից խեղճացած քաղաքացիներ թողնում են հայրենի եզերքը և գաղթում Բաքու, ուր շուտով գոյանում է շամախահայերի մի ամբողջ թաղամաս⁷⁰: Արտագաղթի հետևանքով հայ բնակչության թիվն աստիճանաբար սկսում է նվազել: Այս պայմաններում Շամախիում արագորեն ընկնում է արհեստների ու առևտրի հարգը, բազմաթիվ վաճառականներ սնանկանում են, արհեստավորները մնում են անգործ, փակվում են գործարանները, որի հետևանքով Շամախին աստիճանաբար կորցնում է երբեմնի փառքը և նյութական բարեկեցությունը: Շամախի քաղաքի տնտեսական անկումը հետևյալ կերպ է ներկայացրել «Նոր-Ղար»-ը. «Պատմական Շիրվանը, որ մի ժամանակ իւր առատ արդիւնաբերութեամբ Անդրկովկասի մէջ գրեթէ առաջին տեղն էր բռնում, այսօր շատ կոյր բախտի զօրութեամբ, երկրաշարժի շնորհիւ, մի տխուր և յոյժ ցաւալի տեսարան է ներկայացնում: Այլ ևս չկան այն հոյակապ շինութիւնները, որոնց նայելիս մարդ զմայլւում էր: Չկան նոյնպէս այն մետաքսի գործարանները, որոնց իւրաքանչիւրի մէջ գտնուողների թիւը հասնում էր առնուազն 300–400 ի»⁷¹: Այնուհանդերձ, Բաքվի հետ անհավասար մրցակցության պայմաններում Շամախին փորձում էր պահպանել իր հնամենի շուքն ու փայլը՝ երկրամասի հայության համար նախկինի պէս մնալով որպէս հոգևոր-եկեղեցական և մշակութային կենտրոն: 1897 թ. հունվարի 28-ի (հին տոմարով) համառուսաստանյան առաջին մարդա-

⁶⁹ Зелинский С., նշվ. աշխ., с. 9.

⁷⁰ Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 80:

⁷¹ «Նոր-Ղար», Թիֆլիս, 1891, նոյեմբերի 2, N 159:

համարի տվյալներով քաղաքն ուներ 2515 (1274 ար., 1241 իգ.) հայ բնակիչ⁷²:

XIX դարի վերջերի շամախահայերի քաղաքային կյանքի վերաբերյալ «Բազմամիլիոն ժառանգութիւն» խորագիրը կրող ճանապարհորդական նոթերում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Գաբրիել Քաջբերունին, ըստ որի՝ Շամախի քաղաքը XIX դարի վերջերին հիմնականում բաժանված է եղել երկու մեծ թաղամասերի: Հայերից բացի, քրիստոնեական թաղամասում ապրել են նաև ռուս պաշտոնյաներ: Հայերի բնակելի տները եղել են միահարկ, երկհարկ ու եռահարկ, սյունաշար պատշգամբներով ու նախասրահներով: Քաղաքում հայապատկան տները ճարտարապետական հորինվածքով և շքեղությամբ զգալիորեն տարբերվել են կովկասյան թաթարների տներից⁷³: Անդրադառնալով Շամախի քաղաքի համընդհանուր զարգացման գործում հայերի ունեցած մեծ դերին՝ «Շամախեցի» ծածկանունով հանդես եկող բաքվաբնակ մանկավարժ Հարություն Բաղրամյանը գրում է. «Եւ շամախեցիներից ոչ ոք չի կարող ուրանալ հայերի մեծագործութիւնները թէ՛ քաղաքին ջուր մատակարարելու խնդրում, թէ՛ դպրոցական և թէ՛ այլ հանրօգուտ ասպարեզներում, որոնցից հաւասարապէս օգտուում էին բոլորը, առանց ազգի խտրութեան: Մինչդեռ թուրքերի մէջ քաղաքակրթութիւնը կասեցնող երևոյթներից դուրս՝ սպանութիւններից, աւազակութիւններից բացի, այլ բան մենք չենք կարող ցոյց տալ, ուր մնաց հանրօգուտ գործ կամ բարեգործութիւն...»⁷⁴: Հայերի ու կովկասյան թաթարների հասարակական կյանքի սոցիալ-բարոյական նկարագրի համեմատական բնութագիրը ներկայացնելու համար ավելորդ չենք համարում մեջ բերել նաև «Մշակ»-ում Շամախիի թաթարների վերաբերյալ արված հետևյալ

⁷² Стѣ Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI-Бакинская губерния. под ред. Н. А. Тройницкаго, СПб., 1905, т. 61, с. 1, տե՛ս նաև таблица XIII, с. 53.

⁷³ Стѣ Քաջբերունի Գ., Բազմամիլիոն ժառանգութիւն, ՅԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 5-6:

⁷⁴ Շամախեցի, Թրքասիրութի՞ւն, թէ թրքամոլութիւն. ընդդիմախօսական եղիշէ Ա. Զ. Գեղամեանի «Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը» գրքի առթիւ, Թիֆլիս, 1920, էջ 20–21:

դիտարկումը. «Տեղւոյս թուրք ազգաբնակչութիւնը, եթէ ասեմ աշխարհակալ Չինկիզխանի և Լանկ-Թամիրի օրերից մինչև այսօր իր վայրենի և արիւնարբու բնաւորութիւնից մի կորեկի չափ թողած չէ, բոլորովին չեմ սխալւի... Բայց մեր տեղւոյս մահմետական տարրը, չը նայելով իր, համարեա թէ, մի ամբողջ դար ռուսաց ողորմած Կայսրութեան օրէնքներով կառավարելուն, դարձեալ իր արիւնասէր և սպանիչ բնաւորութիւնից մի մանանխոյ հատի չափ չէ կորցրած: Թաղը թաղի վրա կհարձակեն: Այդ դէպքում ոստիկանութիւնը և քաղաքիս կառավարութիւնը անկարող կլինի նրանց խաղաղեցնելու: Յայտնի է 1866 թ. կոտորածը, երբ մի վարունգի առիթով 76 թուրք մարդ սպանւեցին»⁷⁵:

Այսպիսով՝ ինչպես վկայում են մատենագրական, արխիվային և վիճակագրական աղբյուրները, պատմության բոլոր ժամանակներում էլ Շամախի քաղաքը համարվել է Արևելյան Այսրկովկասի հայաշատ կենտրոններից մեկը: Տեղի հայությունն իր ստեղծագործ աշխատանքով նշանակալից հետք է թողել քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ քաղաքի հայ բնակչության թիվն արդեն 4534 (2314 ար., 2220 իգ.) էր⁷⁶:

Շամախիի հայ առևտրաարդյունաբերողների գործունեությունը խաթարվեց 1918 թ. թուրքական զորքերի՝ Բաքվի դեմ արշավանքի հետևանքով: Այդ արշավանքի ժամանակ հուլիսի 20-ին գրավվեց Շամախին, որի հետևանքով կոտորածի ու տեղահանության ենթարկվեց քաղաքի հայությունը: Դատարկված հայապատկան տներն ու ողջ ունեցվածքը բռնագրավեցին հարևան գյուղերի կովկասյան թաթարները: Աղրբեջանի կառավարությունը նպատակադրվել էր քաղաքից դուրս մղել կոտորածներից մազապուրծ սակավաթիվ հայերին և բռնությամբ տիրանալ նրանց տներին ու ունեցվածքին: Այդ նպատակով կառավարությունը որոշել էր քաղաքի ներքին թաղում բնակվող կովկասյան թաթարներին վերաբնակեցնել վերին թաղում՝ ավելի բարեկարգ վիճակում գտնվող

⁷⁵ Հայ-լուսաւորչական, Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1880, օգոստոսի 15, N 142:

⁷⁶ Кавказский календарь на 1917 г., Тифлис, 1916, с. 179.

հայկական թաղամասում: Գ. Քաջբերունին 1920 թ. մարտի 26-ին ցավով նշում էր, որ եթե հայերի տներն ընկնեն «...անընդունակ, երբեք այգու երես չտեսած, երկյարկանի տներում չապրած, գոնե՜ների ու ոչխարների հետ կեանք վարած մարդկանց ձեռքեր, այդպիսիները իհարկե, եղածն էլ քարուքանդ կանեն»⁷⁷: Հեղինակը երիցս իրավացի էր: Ընդամին՝ ներկայիս «Աղդբեջան» անվամբ արհեստածին պետության ստեղծման հիմքում զգալի մաս է կազմում նաև շամախահայերի՝ դարեր ի վեր քրտնաջան աշխատանքով ստեղծված անբավ հարստությունը:

Շամախիում հայ բնակչությանն իրավագրկելու, հալածելու և էթնիկ զտման քաղաքականությունը շարունակվեց մինչև 1988 թ., որին հաջորդեց 1989 թվականին հուլիսին տեղի ունեցած՝ հայերի վերջին հատվածի բռնագաղթը (բռնագաղթի նախօրեին Շամախին ուներ մոտ 110–120 (մոտ 70 տուն) հայ բնակիչ)՝ բռնագավթելով ու ոչնչացնելով ժամանակի ընթացքում նրա ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները⁷⁸: Դրանով վերջնականապես ավարտվեց Շամախի քաղաքի զարգացման ու առաջընթացի մեջ վճռորոշ դեր խաղացած հայության՝ մաքառումներով և հերոսապատումներով լի պատմությունը:

⁷⁷ Քաջբերունի Գ., նշվ. աշխ., թ. 1, 69:

⁷⁸ Տե՛ս Ստեփանյան Գ., նշվ. աշխ., էջ 94:

Г. СТЕПАНЯН

**РОЛЬ АРМЯН ШАМАХИ В
ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ
ВОСТОЧНОГО ЗАКАВКАЗЬЯ**

Согласно письменным источникам, архивным документам и статистическим данным, город Шамахи являлся одним из армяно - населенных центров Восточного Закавказья. Местные армяне своим творческим трудом оставили значительный след в социально-экономическом развитии города и всего региона.

G. STEPANYAN

**THE ROLE OF THE ARMENIANS OF SHAMAKHI IN THE
EASTERN TRANSCAUCASIA'S TRADE-ECONOMIC
RELATIONS**

According to the written sources, archive documents and statistic data, the city of Shamakhi was one of the populated by Armenians centres of Eastern Caucasia. Local Armenians by their creative work left considerable trace in the social-economic development of the city and the whole region.

ՀԱՅԵՐԸ ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՅԻՆ

Սկսած 18-րդ դարից գերմանացի մշակութաբանները տարբեր մշակույթների յուրացման և տարածման ռաիվիրաներին անվանում են *kulturträger* (մշակույթի կրողներ): Քաղաքակրթությունների փոխադարձ ներթափանցումը, որի գլխավոր արդյունքն է նյութական և հոգևոր մշակույթի փոխանակումը և ժողովուրդների հոգևոր մերձեցումը, տեղի է ունենում խաղաղ պայմաններում առաջին հերթին ապրանքների փոխանակմամբ զբաղվող վաճառականների կամ հետաքրքրասեր ուղեգնացների ու ճանապարհորդների ջանքերով, իսկ պատերազմների ժամանակ՝ ռազմական գործողությունները գրի առնող ու նկարագրող զորավարների շնորհիվ: Պատահական չէ որ անտիկ ժամանակներից հունա-հռոմեական պատմագրության մեջ զգալի թիվ են կազմում հենց զորավար-պատմագիրները:

Մ.թ.ա. 401–400 թվերին պարսկական անհաջող արշավանքից հետո հելլենական Բյուրի հետ Հայաստանով Հելլադա վերադարձող պատմագիր-զորավար Քսենոփոնը, այլ հելլեն զորավարների ու զինվորների հետ հայերի գետնափոր տներում հյուրընկալվելով և նրանց կարասներից՝ լողացող գարու հատիկներով զարմանալի ոգեշնչող հեղուկը, ինչպես և պահունի գինին վայելելու ժամանակ ունկնդրել է հայ վիպերգուների պատմած հին ավանդությունը մ.թ.ա. 6-րդ դարի սկզբին իշխած Հայոց Արմենիոս թագավորի մասին և այդ նյութի հիման վրա ստեղծել իր «Կյուրոսապատում» (Կյուրոպեդիա) մեծարժեք պատմավեպը: Բացի այդ, նրա «Անաբասիս» նշանավոր երկի բազմալեզու թարգմանությամբ, շատ ժողովուրդների մեջ տարածվեց հայկական գարեջրի մասին հնագույն վկայությունը: Ահավասիկ, նյութական և հոգևոր մշակույթի տարածման և հեռավոր բազմազգ սերունդներին փոխանցելու երկու բացառիկ օրինակ, թեև մենք՝ հայերս, մինչև հիմա հարկ եղած չափով չենք օգտվել երկուսուկես հազարամյակ առաջ մեծանուն

հույն զորավար-պատմագրի մեզ պարզևած այդ պատվական ժառանգությունից:

5-րդ դարի սկզբին ստեղծված հայերեն Ագաթանգեղոսի Պատմության Առաջաբանը հրաշալի դրվագներ է պատկերում հեռավոր երկրների ծովային ուղևորություն կատարող նավաստիների մասին, որոնք մրկածուփ ալիքները հաղթահարելով և իրենց կյանքը վտանգելով՝ հեռու աշխարհներից բերում են ոչ միայն դեղաբույսեր և անուշաբույր համեմունքներ, թանկարժեք մարգարիտ ու զարդեր թագավորներին ճոխացնելու համար, այլև զբաղվում են «խոսքի վաճառականությամբ», այսինքն՝ այցելած ժողովուրդների մոտ հավաքում են պահպանվող հայրենի պատմության վերաբերյալ անցյալի հետաքրքիր դրվագներ, որոնցով հարստացնում են ազգային դպրությունը: Այս եզակի Առաջաբանը հեռավոր կղզիներից ու երկրներից նյութական և հոգևոր արժեքների ներկրման ամենավաղ ճոխ նկարագրությունն է նորաստեղծ հայ դպրության սկզբնավորման ժամանակից և իբրև այդպիսին եզակի հետաքրքրություն է ներկայացնում նաև եվրոպացի հետազոտողների համար: «Իսկ իմ անցեալ սահեալ շրջեալ ի վերայ յորձանախոր... ալեացն, սրավարացն մոլեգնելոցն, ձգտեալ ի կղզիս քաղաքացն և յաշխարիս հեռաբնակս, գտեալ լցեալ մեծաբեռն խստաբեռունս, ինչ ինչ պատուական և արգոյ, ի զարդ և յօգուտ՝ եկեալ հասուցաք ի կայս հանգստեան ձերոյ օգտութեան. փութացեալ բացցուք զթանգարական վաճառս խանթից վաճառեսցուք լսելեաց զգիւտս աշխատութեան մերոյ, առնուլ զունկնդրութիւն և տալ զպատմութիւն»¹:

Վերջին տարիներս աշխույժ գործածության մեջ մտած «Մետաքսի ճանապարհ» արտահայտությունը գլոբալացման ներկա ժամանակաշրջանին բնորոշ դրսևորումներից է: «Մետաքսի ճանապարհ»-ը հնագույն ժամանակներից առաջադիմության ձգտող զանազան ազգերը կապել է հեռավոր Արևելքի հնագույն քաղաքակրթության երկրի՝ Զինաստանի հետ, որին 5-րդ դարի Պատմահայր Մովսես Խորենացին համարում է «հյուսիս-արևելյան քաջա-

¹ Ագաթանգեղայ պատմութիւն, Թիֆլիս, 1883, էջ 21–22:

տոհմիկ և գլխավոր աշխարհ», իսկ ճենաց ազգը՝ «բոլոր հյուսիսային ազգերից առաջինը»² և իր Հայոց Պատմության մեջ ներկայացնում է այդ սիրամարգաշատ և բազմամետաքս երկրի ճոխ բնությունը, ժողովրդի զունագեղ կենցաղով հանդերձ. «Աքանջելի է և աշխարհին առատութեամբ ամենայն պտղոց, և գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւետ և սիրամարգաշատ և բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց և հրեշից, և որ էշայծենունսդ անուանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական և սակաւուց ճաշակելիս՝ զփասեան և զպոր, և այլք այսպիսիք: Այլ զականց և զմարգարտաց ոչ ասեն գիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ագանելիք՝ հասարակաց նոցա է զգեստ: Եւ այս յաղագս աշխարհին ճենաց»³: Զինաստանի այս նկարագրությունը հնագույնն է հայ մատենագրության մեջ և թերևս նաև Առաջավոր Ասիայի և Եվրոպայի աշխարհագրական երկերում: Խորենացու բերած այս նկարագրությունը չի կարող բացառապես գրական ծագում ունենալ, այլ արդյունք է նաև հայ ուղեգնացների և դեպի Հնդկաց երկիր նավարկող ականատես հայ նավաստիների տեղեկատվության, որի մասին ակնարկում է Ագաթանգեղոսի Պատմության առաջաբանը:

Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր, խոշորագույն փիլիսոփա և անտրոպոլոգ Իմանուիլ Կանտը (1724-1804 թթ.), որ մշակել է փիլիսոփայական անտրոպոլոգիայի հիմունքները, 1796/97 թթ., ի մի բերելով իր 20-ամյա ակադեմիական դասախոսությունները և փիլիսոփայական հայացքները գործնական մարդաբանության վերաբերյալ, և դրանք շարադրել առանձին գրքով: Այն հրատարակվեց 1798 թվականին «Anthropologie in pragmatischer Hinsicht» («Անտրոպոլոգիան պրագմատիկ տեսանկյունով») վերնագրով:

Ուսումնասիրության մեջ Կանտը մանրամասն անդրադարձել է եվրոպական ազգերի յուրահատուկ գծերին՝ շատ կողմերից դիպուկ ներկայացնելով բրիտանացիների, ֆրանսիացիների, իսպա-

² Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Բ, ՉԱ, Երևան, 1991, էջ 221:

³ Նույն տեղում, Բ, ՉԱ, էջ 223:

նացիների, գերմանացիների, հույների, ինչպես և ասիական որոշ ազգերի էթնիկ բնութագիրը: Կանտի նրբանկատ դիտողականությունը երևան է հանել նշված ազգերի շատ բնորոշ հատկանիշներ, որոնք 18-րդ դարից հետո էլ մինչև այժմ բնութագրական են նրանց համար: Չափազանց հետաքրքիր են այս առումով բնավորության այն ուրույն գծերը, որ ավելի քան 200 տարի առաջ նկատել է գերմանացի մեծ մարդաբան փիլիսոփան հայերի մեջ: «Քրիստոնյա մյուս ժողովրդի՝ այն է հայերի մեջ տիրապետում է մի ինչ-որ յուրատեսակ առևտրական ոգի. նրանք զբաղվում են ապրանքափոխանակությամբ, ոտքով ճամփորդում են Չինաստանի սահմաններից մինչև Կորսո հրվանդանը Գվինեայի ծովափին: Դա ցույց է տալիս այդ խելամիտ և ժրաջան ժողովրդի առանձնահատուկ ծագումը, որը հյուսիս-արևելքից մինչև հարավ-արևելյան ուղղությամբ անցնում է գրեթե ամբողջ Հին Աշխարհով և կարողանում է սիրալիր ընդունելություն գտնել բոլոր ժողովուրդների մոտ, որոնց հետ նրանք շփվում են: Դա ապացուցում է նրանց բնավորության գերազանցությունը, որի սկզբնական ձևավորումը մենք այլևս չենք կարող հետաքննել՝ այժմյան հույների թեթևամիտ և քծնող բնավորության հետ համեմատած»: Այս պահից սկսած, Կանտի վկայությունից կարելի է եզրակացնել, որ մետաքսի և այլ ապրանքների առևտրական ճանապարհների քարտեզի վրա վաճառականների երթևեկության արևմտյան սահմանակետ պետք է համարել Արևմտյան Աֆրիկայի Կորսո հրվանդանը, մինչև ուր սիրալիր ընդունելության էին արժանանում Չինաստանից եկող հայ վաճառականները:

Այս երևելի գծերը, որ ի հայտ է բերում գերմանացի մեծ մտածողը հայերի, իբրև առաջավոր մշակույթի կրող ու տարածող ժողովրդի, գործունեության մեջ, չէին կարող անարձագանք մնալ և չարժանանալ գերմանական, ինչպես և եվրոպական առաջավոր մտածողների՝ գրականության մեծերի ուշադրությանը:

Կանտի աշխատությունը լույս տեսնելուն պես, անմիջապես արժանացավ Գյոթեի բարձր դրվատանքին: Նույն 1798 թվականի դեկտեմբերի 19-ին Շիլլերին գրած նամակում Գյոթեն ուշադրություն է հրավիրում այդ հետաքրքիր աշխատության վրա՝ «Կանտի

Անտրոպոլոգիան ինձ համար շատ արժեքավոր գիրք է և ապագայում կարող է ավելին լինել, երբ ես վերստին այն ըմբռնեմ փոքրիկ չափաբաժիններով...»: Եվ նկատի առնելով եվրոպական գանազան ազգերի բնավորություններում Կանտի նկատած կենցաղային մակարդակի թուլությունները՝ նրա որոշ դիտողությունները զավեշտալի է համարում: Անշուշտ հայերին տրված Կանտի այս բարձր և բնորոշ գնահատականն է եղել պատճառը, որ գերմանացի հանճարեղ բանաստեղծ Գյոթեն փորձել է ստեղծել վաճառական քարավանապետ հայի կերպարը: Գյոթեի ստեղծած գեղարվեստական վիթխարածավալ ստեղծագործության մեջ գտնում են մի փոքրիկ բանաստեղծություն «Թողեք, որ ես լամ...», որի մեջ հանդիպում է «Armenier» (հայ) ցեղանունը: «Արևմտա-արևելյան դիվան» վերտառությամբ բանաստեղծական ժողովածուի⁴ ութերորդ գրքում «Suleika Nameh» - «Գիրք Ջուլեյկայի» գիշերային անձայրածիր անապատում քնած ուղտերի և ուղտապանների մեջ արթուն են միայն երկուսը՝ հայ քարավանապետը և նրա կողքին բազմած գերմանացի բանաստեղծը, որը սիրում էր իրեն պատկերել պարսիկ բանաստեղծ Յաֆեզի կերպարով, ինչպես «Արևմտա-արևելյան դիվան»-ի երկրորդ գրքում՝ «Hafis Nameh» - «Գիրք Յաֆիզի» վերտառությամբ բանաստեղծական ժողովածուում: Ու մինչդեռ հայ քարավանապետը ցերեկվա հոգսաշատ ճանապարհից հետո իր մտքում լռելայն հաշիվներ է անում, բանաստեղծը մտովի հաշվում է վաղվա անցմելիք երկար ու ձիգ ճանապարհի ու լորանները, որոնց վերջում նրան սպասում է իր երազած Ջուլեյկան: Պարսկուհու այս անունը հանդիպում է Գյոթեի նաև այլ բանաստեղծություններում, բայց հայ քարավանապետի կերպարի առկայությամբ այն յուրահատուկ գույներանգ է ստանում, երբ գերմանացի մեծ բանաստեղծի գրչի տակ դրանք մեկտեղվում են իբրև հայի գործնական բնավորության և պարսկական արևելյան ռոմանտիկայի խորհրդանիշներ:

Թողեք, որ ես լամ, գիշերն է պատել
 Ինձ անապատում այս անձայրածիր:

⁴ Գրվել է 1814–1819 թվերին և բաղկացած է 12 գրքից:

Քնած են ուղտեր և ուղտապաններ,
Հայն արթուն՝ մտքում հաշիվ է անում.
Մինչ ես իր կողքին՝ չափում եմ ուղին,
Որ բաժանում է ինձ Ձուլեյկայից,
Համրելով տաղտուկ, ճամփա երկարող
Կեռմանները ձիգ...⁵

Ագուլիսի և պատմական Հին Ջուղայի, Սալմաստի, Սպահանի ու Նոր Ջուղայի հայ վաճառականների շիտակության և ազնվության մասին բազմաթիվ գրույցներ են պահպանվել ժողովրդական ավանդություններում՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Իրանի բազմաթիվ ազգագավառներում: Պատմում էին, թե օտարազգի վաճառականները Պարսկաստան գալով՝ հայ խոջաների անուններ էին ընդունում, որպեսզի վստահություն ձեռք բերեն իրենց քաղականների համար:

Բայց եկավ մի ժամանակ, երբ «Մետաքսի ճանապարհին» դարանակալող քոչվոր ավազակներն ու գանձագողերը օղուգ խաշնարած Օսմանի գլխավորությամբ ստեղծեցին՝ Օսմանյան կայսրությունը և պատուհաս դարձան քաղաքակրթության բարձունքների հասած ժողովուրդների համար:

Հայոց ցեղասպանության ականատես և ամենաբուռն ցասումով ցեղասպանությունը դատապարտող Արմին Թեոֆիլ Վեգներն իր «Ճիշ Արարատից» պամֆլետում (1922 թ.) հայ ժողովրդին բնորոշում է իբրև Արևելքի և Արևմուտքի մշակույթներն իրար շաղկապող կամուրջ. «Եթե կա մի ազգ, որ այս պատերազմից հետո արժանացել է համայն աշխարհի կարեկցանքին, ապա դա հայությունն է ու նրա ճակատագիրը: Արևելքի և Արևմուտքի սահմանագծում, Կովկասյան այն լեռների ստորոտում, որ պատմությունն անվանել է ժողովուրդների կամուրջ, այս ժողովրդին վաղուց հետե հերոսական խնդիր էր վիճակված՝ միջնորդ դառնալ երկու մշակույթների միջև, մի խնդիր, հատկապես ճակատագրական այն պատճառով, որ այս ժողովուրդը, արևելյան բարբարոս հորդաներով շրջապատված, վաղ դարերից ի վեր հակված էր Արևմուտքի

⁵ Թարգմ. Ա.Մուշեղյանի – Գյոթե, Վայմարյան քնար, Երևան, 1985, էջ 130:

մշակույթների կողմը: Եվրոպայի խորը անկման ողբալի ու ամոթալի նշանն է դա, որ մենք թույլ տվեցինք անապատի պես ամայացնել հենց այդ երկիրը, և որ նրա բնակիչները, իրենց հարազատ տուն ու տեղից քշված, ողբալի գոյությունն են քարշ տալիս օտար երկնքի տակ: Ատելությունն ու անբանականությունը խորտակեցին ժողովուրդների կամուրջը, որի բեկված սյուները դուրս են ցցվել գորշության նեխած ճահճից: Բայց թեև այսքան հուսախաբություններից հետո էլ Հայաստանն այլևս չի կարող ակնկալել, որ իրեն գոհացում տան Արևելքի երկրների վերաբերյալ հաշտության բանակցությունները, որի համար այժմ երկրորդ անգամ խորհրդակցության են հավաքվել աշխարհի տերությունները, այսուհանդերձ նա երբեք էլ չպիտի դադարի հավատալ իր ազատագրմանը: Որովհետև նրանց համար, որ այդքան կրքոտ սիրով կառչած էին իրենց մի թիզ հողին, որ անապատում իրենց մահվան թափորի ժամին էլ մի բուռ հայրենի հող էին տանում շորերի լաթերի մեջ, որպեսզի մեռնելիս գլխի տակ դնեն, նրանց երկիրը մշտապես մի զորացնող մայր կլինի և գաղտնախորհուրդ զորությամբ լեցուն՝ պիտի բանա իր արյունաշաղախ գիրկը, որ նոր ընծյուղներ արծակի իր ընդերքից: Այս տարաբախտ ժողովրդի վերջին բեկորների հայացքները հավատով սևեռված են Արարատի գագաթին, ուր մի ժամանակ Նոյի աղավնին բերեց խաղաղության ձիթենու ճյուղը»⁶:

⁶ Արմին Թեոֆիլ Վեգներ, «Գիշ Արարատից» (1922) (թարգմ. Ա. Մուշեղյանի) հետևյալ գրքում – Վեգներ, «Ծանապարհ առանց տունդարձի», հավելված, ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 2000:

АРМЯНЕ НА ШЕЛКОВОМ ПУТИ

Начиная с 18-го в. немецкие культурологи первопроходчиков в освоении и распространении разных культур называли *kulturträger* (носители культуры). В этом деле высокую оценку дали армянам Иммануил Кант, Иоганн Вольфганг фон Гёте, Вегнер Теофил Армин.

Al. MUSHEGYAN

ARMENIANS ON THE SILK ROAD

Since the 18th c. German culturologists called the pioneers in cultivation and the spread of culture *kulturträger*. Immanuel Kant, Johann Wolfgang von Goethe, Armin Theophil Wegner assessed highly the Armenians in this cause.

CHINESE DRAGONS AND PHOENIXES AMONG THE ARMENIANS

The *pax mongolica* instituted after the conquests of Genghis Khan is the locus for the exchange or, better, the importation into medieval Armenia art of motifs and attitudes from China. At the time Armenians were living under two quite separate regimes. In the historic homeland - Great Armenia and Armenia Minor independence had been lost as a consequence of successive invasions of Seljuks, Turkmens, and Mongols. To the southwest in Cilicia on the Mediterranean coast a new Armenian polity was established in the late eleventh century to become a fully recognized Armenian kingdom in 1198, an ally of the Crusaders. The Armenian kings of Cilicia were among the first Near Eastern or European states to establish diplomatic relations with the Great Mongols. By the mid-thirteenth century, what might be called an Armenian-Mongol treaty was concluded, though the contracting parties were hardly equal in terms of their relative power or influence.

The initial wave of Mongol invaders of the first quarter of the thirteenth century passed through northern Armenia, conquering and occupying the lands of the Armenian feudal families and Georgia. Resistance was met with harsh punishment and severe taxation imposed on the conquered peoples.

The experience of the Armenian kingdom in Cilicia was very different. Spared the conquest of the first wave of Mongol incursions, but fully cognizant of the grave difficulties of their cousins in Great Armenia and of the defeated and conquered status of their own enemies, the Seljuk sultans of Rum, the Cilician rulers were quick to turn to diplomacy as a proactive method of coming to terms with the new and unknown force from the East. The plan chosen by King Het'um I (1226–1269) was to deal directly with the Mongol chief, the Great Khan, in his capital. For more than fifty years, coinciding with the second half of the thirteenth century, the Armenian kingdom of Cilicia had friendly relations with the Mongols,

even concluding an alliance that was several times renewed¹. From the successive journeys by Smbat, Constable of Armenia, in 1247–1250² and then his brother King Het'um himself in 1253–1255 to the death of Ghazan Khan in 1304, Armenian princes and kings travelled to the Great Mongol court in Central Asia or to the various residences of the Ilkhanids, the Mongols of Iran⁴, especially during the rule of Hülegü (1256–1265), his son Abakha (1265–1282), and his grandson Arghun (1284–1291).

This diplomacy produced an agreement; perhaps it is too much to call it a treaty, but an arrangement whereby the Armenian kingdom of Cilicia would be an ally of the Mongols. Armenian armies would fight along with the Mongols in the Near East and the Mongols would help the Armenians

¹ On Armenian-Mongol relations see, A. G. Galstyan, "The First Armeno-Mongol Negotiations", in *Patma-Banasirakan Handes* (1964), no. 1, 91–105 (in Armenian); Sirarpie Der Nersessian, "The Kingdom of Cilician Armenia", in *A History of the Crusades*, vol. II, ed. by K. M. Setton, R. C. Wolff and H. W. Hazard, Philadelphia, 1962, 630–659, reprinted in *idem, Études Byzantine et Arméniennes, Byzantine and Armenian Studies* (hereafter *Études*), 2 vols., Louvain, 1973, 329–352; S. R. Boase, *The Cilician Kingdom of Armenia*, New York, 1978, 25–29; Claude Mutafian, *La Cilicie au carrefour des empires*, 2 vols., Paris, 1988, vol. I, 423–429; Claude Mutafian, *Le Royaume arménien de Cilicie*, Paris: CNRS Editions, 1993, 54–61.

² On Smbat's journey, see Jean Richard, "La lettre du Connétable Smbat et les rapports entre Chrétiens et Mongols au milieu du XIII^{ème} siècle", in Dickran Kouymjian, ed., *Armenian Studies/Études arméniennes: In Memoriam Haïg Berbérian*, Lisbon: Calouste Gulbenkian Foundation, 1986, 683–696.

ներառյալ և քաղաքների, հիմնահատակ ավերումն էր, որն իրագործվում էր անկախ գրավելու ձևից՝ թե՛ ռազմական հաղթանակի, թե՛ հակառակորդի հանձնվելու դեպքում: Ընդ որում, արգելվում էր և դրանց հետագա վերականգնումը: Մոնղոլներն իրենց հպատակություն հայտնած իշխանական-զինական կազմավորումներն անմիջապես ներառում էին իրենց զորամիավորումների կազմում և ստիպում մասնակցել հետագա արշավանքներին: Արդեն նվաճված երկրների զինուժի օգնությամբ հարևան երկրները նվաճելը նույնպես մոնղոլների ռազմավարության հիմնական մեթոդներից էր: Սա նշանակում էր ոչ միայն երկրի հպատակեցում, այլև նրա ռազմական ուժի լիակատար վերահսկում և օգտագործում: Ինչպես վկայում են հայկական աղբյուրները, մոնղոլները տեղական զինուժը սովորաբար տեղադրում էին կռվի առաջին գծում՝ թշնամուն անմիջապես դեմ-դիմաց, իսկ իրենք թիկունքից վերահսկում նրա գործողությունները: Ահա թե ինչ է գրում այդ մասին մոնղոլների արշավանքները մանրամասնորեն նկարագրող Գրիգոր Ականեցին. «բայց պատճառ յաղթութեանն /մոնղոլների – Յ. Պ./ էին Յայոց եւ Վրաց իշխանքն, որ լինէին երեսք զառաջինն, եւ ուժգին բախելով ի թշնամիս յարձակէին. եւ ապա զկնի նոցա Տաթարն նետիւ եւ աղեղանք»⁸⁴: Միջնադարյան քաղաքն առանց պարսպի՝ այսինքն պաշտպանության, դադարում էր լիարժեք գործող օրգանիզմ լինելուց և այս հանգամանքն անպայմանորեն բացասական էր ազդում արհեստագործական տնտեսության վրա:

Քաղաքական-իրավական առումով մոնղոլական նվաճումները սկիզբ դրեցին մի շարք հայ իշխանական տների անհետացմանը քաղաքական ասպարեզից: Յայ իշխանները նախ զոհ էին գնում պատերազմի առաջին գծում, ապա մոնղոլների բազում սադրանքներին: Նվաճողները լայնորեն իրագործում էին զրաված տարածքները սեփականելու քոչվորական սկզբունքը, նպաստում իշխանական տների փոխգծտմանն ու մասնատմանը: Եթե մինչև

⁸⁴ Գրիգոր Ականեցի, Պատմութիւն ազգին նետողաց /Յայերն բնագիրը և վրաց. թարգմ. Ն. Շոշիանշվիլու, Թբիլիսի, 1961, էջ 20:

13-րդ դարի վերջերը հայ նախարարական տները, ի մասնավորի Հայաստանի արևելյան մասում գտնվող ղեռ պահպանում էին իրենց կիսանկախ գոյությունը, ապա հաջորդ կես դարը հայտնի է որպես նախարարական տոհմերի քայքայման և անհետացման ժամանակաշրջան: Նման գործընթացը մի կողմից հանգեցնում էր տեղական տոհմերի հովանավորության տակ գտնվող արհեստների (առաջին հերթին շինարարական) անկմանը, մյուս կողմից էլ եկվոր այլեթնիկ ու այլադավան իշխողների երևան գալն իր հետ բերում էր որոշակիորեն մոր պահանջներ ու ճաշակներ, ինչը որոշ դեպքերում իր կնիքն էր դնում նաև խեցեգործական ու ապակեգործական արտադրանքի վրա:

Տնտեսա-մշակութային իրավիճակը պայմանավորող երրորդ կարևոր հանգամանքը նվաճող քոչվորների ավանդական բացասական վերաբերմունքն էր դեպի երկրագործությունը և դեպի նստակյաց կենսաձևն ընդհանրապես: Ուշագրավ է, որ մինչև 13-րդ դարի 60-ական թթ.՝ մինչև Հուլավու խանը մոնղոլ առաջնորդներն ապրում էին վրանային ճամբարներում և այդպես էլ չհիմնեցին որևէ ստացիոնար բնակավայր: Նման պայմաններում ստացիոնար-քաղաքային կյանքը կորցնում էր իր առաջատար դերն ու վարկը: Մոնղոլների կողմից կիրառվող անասնագոլության պրակտիկան լուրջ հարված հասցրեց երկրագործական տնտեսությանը, առաջ բերելով նրանում քարշող ուժի նվազում, մշակման պարզունակ ձևերի գերակայություն:

Արհեստավորների գերեվարման տարածված պրակտիկան, արտագաղթը, արհեստագործության բնագավառում ստրկական աշխատանքի լայն օգտագործումը հանգեցնում էին առաջադեմ տեխնոլոգիաների անհետացմանը, քաղաքների վերածմանը գյուղերի, արհեստագործական արտադրանքի նվազմանը:

Սակայն հարկ է նկատել նաև, որ մոնղոլական ընդարձակածավալ նվաճումների հետևանքով Հեռավոր Արևելքից մինչև համարյա Միջերկրածով հսկայածավալ տարածքները հայտնվեցին միասնական տիրապետության ներքո՝ կազմակերպված հաղոր-

դակցման ու հսկողության համակարգով: Քաղաքական կամ առևտրական նպատակներով Հայկական լեռնաշխարհից հարակից տարածքներից մինչև Ոսկե հորդա կամ նույնիսկ Մոնղոլիա ճանապարհորդությունը 13-րդ դարի կեսերին դարձել էր բավականին սովորական մի ձեռնարկում: Աշխարհաքաղաքական նման իրավիճակը և մոնղոլ խաների առևտրին ուղղված շահագրգիռ քաղաքականությունը, քանի որ այն մեծ եկամուտներ էր բերում, նպաստեց տարանցիկ առևտրի ակնհայտ աշխուժացմանը: Շատ կարճ ժամանակում նվաճված երկրներում նկատվեց առևտրական կապիտալի աճ, առևտրականների խավի հզորացում: Հատկանշական է, որ հենց 13-րդ դարի երկրորդ կեսերից են մեզ հասել բազմաթիվ տեղեկություններ հայ առևտրականների, նրանց գործունեության, քաղաքականության վրա նրանց ազդեցության մասին: Այս իրավիճակը որոշակիորեն ազդել է և խեցեղենի տեսականու վրա, այս ժամանակի պեղածո մշակութային համալիրներում մեծանում է չինական խեցեղենի, հախճաասալերի և ներմուծված մի քանի այլ տեսակների քանակը: Շնորհիվ նման յուրօրինակ աշխարհաքաղաքական իրավիճակի՝ դիտվում է և յուրօրինակ մշակութային մի պատկեր: Տեղական տնտեսա-մշակութային կյանքը, այդ թվում և արհեստագործությունը անկում են ապրում, սակայն պեղածո նյութերի մեջ ավելանում է ներմուծված, հաճախ բարձրորակ իրերը, հանգամանք, որը աշխարհաքաղաքական հիմնապատկերի չինացության դեպքում կարող է հիմք հանդիսանալ աշխույժ տնտեսա-մշակութային կյանքի մասին ենթադրությունների համար:

13-րդ դարի 60-ական թվականներին երկու մոնղոլական հարստությունների՝ Ջուչյաններ և Հուլավյանների միջև սկսվեց մի դաժան պայքար, որը տևեց համարյա մի հարյուրամյակ, և որի հետևանքով Արևելք-Արևմուտք ճանապարհները տեղափոխվեցին հարավ, և Հայաստանի արևելյան նահանգները միջազգային առևտրին սկսեցին մասնակցել միայն դիպվածային կարգով:

Հայաստանի 13-րդ դարի երկրորդ կեսի - 14-րդ դարի խեցեղենը հանդես է գալիս որպես մշակութային մի ինքնուրույն երևույթ, ավանդական դրսևորումների հետ մեկտեղ երևան բերելով նաև մի շարք որակական յուրահատկություններ: Հայաստանի խեցեգործական մշակություն 13-րդ դարի կեսերից դիտվող այդ յուրահատկություններն ունեին երկու տարբեր հիմնարար աղբյուրներ: Դրանցից առաջինը 12-րդ դարի վերջերից սկսած Առաջավոր Ասիայի խեցեգործական մշակություն տեղի ունեցած բնականոն զարգացումներն էին, որոնք Հայաստանում մոնղոլական արշավանքների հետևանքով դիտվող քաղաքների անկման պայմաններում առանձնակի տարածում գտան մոտ կես հարյուրամյակ ուշացումով: Երկրորդը՝ հենց մոնղոլական արշավանքների հետևանքով մշակութային մի շարք ոլորտների այդ թվում և խեցեգործության արագ փոխազդեցություններն էին Չինաստանից մինչև Միջերկրածով մի ընդարձակ տարածքի վրա, որի արդյունքում 13-րդ դարի երկրորդ կեսի - 14-րդ դարի խեցեգործությունը ներկայանում է շատ ավելի տարասեռ՝ թե՛ տեխնոլոգիական, թե՛ ոճական և թե՛ ծագումնաբանական առումով: Այս երկու հանգամանքների շնորհիվ էլ ժամանակի հայաստանյան խեցեղենը ոչ թե առանձնացված մշակութային օղակ էր, այլ բազմաթիվ զուգահեռներով կապված էր առաջավորասիական, միջինասիական ու մերձվոլգյան խեցեղենի հետ և փաստորեն մշակութային համընդհանուր երևույթի տեղական տարբերակներից մեկն էր⁸⁵:

Չինական խեցեղենի ամենամեծ հավաքածուները Հայաստանում ծագում են Անիի և Գառնիի պեղումներից (Դվինում և Անբերդում գտնվել են միայն մի քանի աննշան բեկորներ): Շնորհիվ իրենց խիստ կարծր խեցու, յուրահատուկ ջնարակի և զարդանախշման՝ թանկարժեք քարերից պատրաստված անոթների նմանակներ հիշեցնող չինական խեցեղենը ոչ միայն ունեցել է խիստ բարձր վարկանիշ հարուստ սպառողների շրջանում, այլև հանդիսացել է մերձավորարևելյան ջնարակապատ խեցեգործության տե-

⁸⁵ Մանրամասնորեն տե՛ս Petrosyan H. Ceramic production in Armenia in the First half of the 13th century and the 14th century – in “Armenia in the Cultural Context of East and West. Ceramiac and Glass (the 4th -14th centuries)”, Yerevan, 2009, pp. 167-179.

դական մի շարք ուղղությունների զարգացման ամենահիմնական խթաններից մեկը: Ուստի նրա գյուտերը այս կամ այն տարածաշրջանում ոչ միայն վկայում են առևտրամշակութային փախհարաբերությունների մասին, այլև մի յուրօրինակ ցուցանիշ են այն իրողության, թե ինչ չափով է տվյալ տարածաշրջանը ներառված եղել մերձավորարևելյան խեցեգործական մշակույթի մեջ: Ամիում գտնված չինական խեցեղենի միայն երկու օրինակներ կարելի է վերագրել 9-11-րդ դարերին: Դրանցից մեկը վեցաթերթ ծաղկի մմանվող թաս է, երկրորդը լայնաբերան բաց անոթի շրթի բեկոր՝ չինական բնույթի փորագիր զարդերով: Նրանց մոտիկ զուգահեռները Սամառայում գտնված չինական խեցանոթների հետ վկայում են, որ դրանք Ամիում կարող էին հայտնվել հենց այս մշամավոր դպրոցի արտադրանքի հետ միասին⁸⁶:

Հայաստանում գտնված չինական խեցեղենի մնացած օրինակները վերաբերում են 13-րդ դարի երկրորդ կեսին ու 14-րդ դարին: Դրանք գերազանցապես այսպես կոչված սելադոններ են՝ կանաչի տարբեր երանգների ջնարակներով պատված կարծր խեցիներ⁸⁷: Հատկապես մեծ թիվ են կազմում լուսնյուան-յաո⁸⁸ տիպին պատկանող սելադոնները: Դրանք որպես կանոն պատկանում են զանազան տիպի ափսեների՝ հարդարված ակոսատումներով, սեղմումով, խեցու շերտերի հեռացմամբ և փորագրությամբ արված չինական ազատ ոճի բուսական մոտիվներով, ներառյալ և լոտոսը, էլիպսներով և ցանցերով (նկ. 1, 2):

⁸⁶ Шелковников Б. А. Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья - Советская археология, 21, 1954, с. 368-378, рис. 1, 2. Он же, Поливная керамика из раскопок города Ани, с. 47-49, рис. 24, 25.

⁸⁷ Սելադոնը հատուկ խեցի էր, որն իր կարծրությամբ զիջում էր միան ճենապակուն: Այն հարուստ էր կվարցով ու երկաթով: Բարձր ջերմաստիճանի տակ թրծվելով՝ նրա հիմքի և ջնարակի մեջ պարունակող երկաթը՝ վերականգնվելով օքսիդային վիճակից, ջնարակը գունավորում էր կանաչի տարբեր երանգներով: Իսկ նստուկի կամ շրթի անջնարակապատ մասերը ստանում էին դարչնագույն երնագ. տե՛ս Hetherington A.L. Chinese Ceramic Glazes, Los Angeles, 1948, pp. 24-25, 30-32.

⁸⁸ Լուսնյուանը վայր է Զինաստանի Զժեցզյան նահանգում, ուր Սուեյան ժամանակաշրջանում (960-1279 թթ.) պատրաստում էին ճենապակետիպ անոթներ. տե՛ս Hobson R.L., Hetherington A.L. The Art of Chinese Potter, London, 1923, p. 11.

Գառնիում գտնվել են նաև հյուսիսային սելադոնի և սելադոնի մերձավորարևելյան մամնակումների մի քանի բեկորներ⁸⁹: Առանձնակի կարևորություն ունեն «կապույտ և սպիտակ» տիպին պատկանող ճենապակու երկու բեկորները, որոնք այս տիպի առաջին ներմուծված օրինակների թվին են պատկանում⁹⁰:

13-րդ դարի երկրորդ կեսին և 14-րդ դարի Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անկման պայմաններում չինական խեցեղենի մեծաքանակ ներմուծումը պայմանավորված էր հենց մոնղոլական ընդարձակ նվաճումներով, երբ Հեռավոր Արևելքի հետ դյուրին դարձած առևտրի շնորհիվ, որը զգալի եկամուտներ էր բերում մոնղոլական խաներին ու կուսակալներին, չինական խեցեղենը լայնորեն արտահանվում էր Մերձավոր Արևելք, Պոլլոլժիե և Արևմտյան Եվրոպա:

⁸⁹ Պետրոսյան Հ., Գառնին 9-14-րդ դարերում, Երևան, 1988, էջ 83:

⁹⁰ Նշվ. աշխ., աղ. 48/7:

Г. ПЕТРОСЯН

**КИТАЙСКАЯ КЕРАМИКА КАК ПОКАЗАТЕЛЬ
ШЕЛКОВОГО ПУТИ**

Н. PETROSYAN

**THE CHINESE CERAMICS AS AN INDICATOR
OF THE SILK ROAD**





Նկ. 1, 2 Սելադոնե ափսե, լունցյուան յառ, 13-րդ դարի երկրորդ կես – 14-րդ դար,
Գառնի:

**ԱՐՑԱԽՈՒՄ ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Թեմայի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի տնտեսական-մշակութային կյանքում մետաքսագործության ունեցած կարևոր դերով¹: Մետաքսագործությունը մանածագործության ճյուղ է, մետաքսյա թելեր ստանալու և դրանցից գործվածքներ պատրաստելու արհեստ: Չինաստանում, որը համարվում է մետաքսագործության հայրենիքը, մետաքսե² գործվածքներ պատրաստել են հնագույն ժամանակներից, այնուհետև՝ Մետաքսի ճանապարհով ընթացող առևտրի շնորհիվ հայտնի էր դարձել Միջին Ասիայում, Իրանում, Հայաստանում, Կովկասում, Բյուզանդիայում և այլ երկրներում: Սկսած հին ժամանակներից մետաքսե գործվածքները առևտրի ամենահարգված ապրանքներից էին: Հայաստանի վրայով է կապվել Արևելքը Արևմուտքի հետ մետաքսի առևտրի գործում:

Մետաքսագործությունը նշանակալից զարգացման էր հասել միջնադարյան Հայաստանում³, որի արևելյան Արցախ նահանգում զարգանալու համար այն նույնպես բարենպաստ պայմաններ գտավ:

Առաջին մետաքսի գործարանը Արցախում բացել են Աղաբաբե Արիգոր Խաչատրյանները⁴: Եթե Շուշի գավառում ավելի շատ

¹ Արևելյան Հայաստանի մետաքսագործության մասին մանրամասն տե՛ս Առաքելյան Գ., Շերամապահությունն ու մետաքսագործությունը Ելիզավետպոլի նահանգում (19-րդ դ.), Հայոց պատմություն (գիտական հոդվածների ժողովածու), Եր., 2007, N 8:

² Բնական տեքստիլ թել՝ բոժոժի հյուսման ժամանակ շերամորդի մետաքսագեղծերից անջատվող նյութ: Առավել կարևոր արտադրական նշանակություն ունի մետաքսագործական տնտեսություններում բազմացվող թթեմու շերամորդին: Շերամորդի բոժոժից ստացվում է մետաքսահումք:

³ Առաքելյան Բ., Մետաքսագործություն, Հայկական Սովետական հանրագիտարան հ. 7, Եր., 1981, էջ 484, Տե՛ս նաև նույնի՝ Քաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դդ., հ. 1, Եր., 1958:

⁴ Հարությունյան Մ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում)

զարգացած էր շերամապահությունը, ապա Զիվանշիրի գավառում՝ բամբակագործությունը և խաղողագործությունը⁵։ Շուշի քաղաքի մետաքսագործության զագացման մասին տեղեկանում ենք. «1829 թ. Շուշի քաղաքում արտադրվել էր 7200 կտոր մետաքսե գործվածք, որից 740 գլխաշոր, 6100 միաչափ հատված կտորներ, որոնցից կարում էին վարագույրներ, ծածկոցներ, հագուստ եւ այլն։ Որակյալ մետաքսաթելի յուրաքանչյուր *ստիլ*⁶ համար արտադրողին վճարվում էր 24 կոպ. պղնձե դրամ, վատորակ մետաքսաթելի դեպքում՝ 18 կոպ»։ 1832 թ. Շուշիում կար 42 մետաքսագործարան։ Շաքիում, Շիրվանում և Արցախում մետաքսագործության զարգացման մասին իր գոհունակությունն էր հայտնել Գ. Ռոզենը՝ 1832 թ. դեկտեմբերի 22-ին Ե. Կանկրինին ուղղված իր նամակում։ 19-րդ դարի 30-ական թվականների տվյալներով՝ Շաքիի, Շիրվանի, Ղարաբաղի, Գանձակի, Ղուբայի ու Թալիշի մետաքսի տարեկան եկամուտը կազմում էր 15000 փութ⁷։ Շուշիում 1890 թ. Ստացվել է 2,138 փութ բոժոժ, իսկ 1894 թ.՝ 17,000 փութ, որից 4,300 փութը ուղարկվել է արտասահման⁸։ Սկզբնական շրջանում շերամապահ գյուղացիները ոչ միայն բոժոժ էին արտադրում, այլ պարզունակ եղանակով ոտնաչարխով մանում էին թել։ Տեղացի վաճառականները արտադրանքը արտահանում էին արտասահմանյան քաղաքներ։

Արցախի բնական մետաքսը բարձր է գնահատվել միջազգային մի շարք տոնավաճառներում։ 1882 թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հոնաշեն - Հադրուքի մետաքսն արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի։ Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալա-

19-րդ դարի երկրորդ կեսին եւ 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ 2010, էջ 12:

⁵ Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչեւ մեր օրերը, Եր., 2002, էջ 248:

⁶ 1 ստիլը հավասար էր մեկ ֆունտի՝ 400 գրամի:

⁷ Բաղդասարյան Ն., Մետաքսագործության զարգացումը Ղարաբաղում 1810-1860-ական թթ., Լրատու: Գիտական հոդվ. ժողվ/ Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Ստեփանակերտ 2011, N 1, էջ 21:

⁸ Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 248:

տի վարագույրները: Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության փորձերը Արցախում կատարվել են 19-րդ դարի կեսերին:

1926 թ. հուլիսի 6-ին կազմակերպվեց մետաքսագործական ֆաբրիկան⁹: 20-րդ դարի 30-ական թվականներին արցախահայ շերամագործները մեծ նվաճումներ արձանագրվեցին և մետաքսի արտադրության բնագավառում¹⁰: Սկսած 1958-91 թթ. հրատարակվել է «Մետաքսագործ» թերթը¹¹: Արցախյան ազգային ազատագրական շարժման սկզբնական ժամանակաշրջանում թշնամին ավերեց մետաքսագործական կոմբինատը:

Արցախը մետաքսագործության և գորգագործության հարուստ ավանդույթներով իր մեծ ներդրումն ունի հայկական արհեստների և մաշակութի գանձարանում:

Օ. АВАНЕСОВ

К ВОПРОСУ ФОРМИРОВАНИЯ ШЕЛКОВОДСТВА В АРЦАХЕ

H. AVANESOV

TO THE QUESTION OF FORMATION OF SERICULTURE IN ARTSAKH

⁹ Առստամյան Գ., Իմ պատիվ իմ ցավ Ղարմետաքսկոմբինատ, Ստեփանակերտ, 2010, էջ 3:

¹⁰ Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը: Ազգագրական ակնարկ, Եր., 1981, հ. 12, էջ 79:

¹¹ Հարությունյան Մ., Արցախի պարբերական մամուլի պատմությունից 1874-2009 թթ., Ստեփանակերտ, 2010, էջ 61:

**ՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԿՇԻՈՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽԱՉՈՒԴԻՆԵՐՈՒՄ**

Քաղաքակրթական շփումներում ճանապարհները և հաղորդակցման ուղիները էական նշանակություն ունեն ցանկացած երկրի համար: Դրանք մարդկային գործունեության հիմքն են և յուրօրինակ թթվածինը: Այս տեսակետից միանգամայն հասկանալի է առևտրական ուղիների դերը երկրի տնտեսության և ընդհանրապես կեցության տարբեր ոլորտների զարգացման գործում: Այս առնչությամբ աննախադեպ է բոլորին հայտնի Մետաքսի ճանապարհի դերը:

Հայկական լեռնաշխարհը՝ որպես քաղաքակրթության բնօրրան, ի հնուց անտի հաղորդակցական ուղիների բանուկ խաչմերուկ էր: Բնականաբար, այստեղ էին խաչվում աշխարհի տարբեր կողմերի ուղիները: Հայ ժողովուրդը խիզախ և նախաձեռնող իր բնավորությամբ գործուն մասնակիցն է եղել առևտրական մեծածավալ գործարքների՝ դառնալով ժամանակի ընթացքում կարևոր և ազդեցիկ ուժ: Այդ շահեկան գործունեության համար նա արժանացել է Ասիայի և Եվրոպայի միջև միջնորդի պատվանունի¹: Ուշադրության է արժանի այն փաստը, որ մոտ 7 դար (Ք.ա. I դ. - մ.թ. VI դ.) Հայաստանը հսկայական դեր է կատարել Արևելքի, մասնավորապես չինական և հարևան երկրների ապրանքների համաշխարհային առևտրում²:

Սիջնադարում՝ 6-րդ դարում, հայերը Երուսաղեմում ունեին 70 վանք, եկեղեցի և սրբավայր, որը վկայում է մեծաքանակ

¹ Ա. Ալաոյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան. Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը (սկիզբէն մինչեւ ժԱ դար Քրիստոսի), Գահիրէ, 1941, էջ 76:

² Նույն տեղում, էջ 74:

տեղաբնակ հայերի գոյության և հնավանդ ավանդույթների մասին: Իսկ արքայական, նախարարական և իշխանական տներից մի քանիսը, օրինակ՝ Մամիկոնյանները, Սյունիները, Արշակունիները, Սահառունիները և այլք ունեին մեկից ավելի վանքեր³: Սա ևս աներկբայորեն հայերի քաղաքակրթական հզոր ազդեցության վկայությունն է: Ուստի բոլորովին էլ պատահական չէ, որ հայերին է վերապահված Հիսուս Քրիստոսի սրբազան շիրմի պահպանությունը: Դա մեր քաղաքակրթական երբեմնի առաջատար լինելու հավաստումն է:

Այնպես որ, Մետաքսի ճանապարհը ոչ միայն առևտրական խնդիրներ էր լուծում, այլև այլազան և բազմաշերտ փոխահարաբերություններ էր հաստատում տարբեր ազգերի, տվյալ դեպքում հացահատիկի (Հայկական լեռնաշխարհ) ու բրնձի (Հինաստան) մշակման սկզբնավորման կենտրոնների միջև՝ ստեղծելով մշակութային փոխհարստացման և իրար ճանաչելու հրաշալի հնարավորություններ: Այս հանգամանքը իր հերթին կարևոր ազդակ է դառնում քաղաքակրթությունների զարգացման և հետագա մերձեցման առումով:

Չինական մեծ պարիսպը, որպես պաշտպանական միջոց, ունեցել է նաև տնտեսական նշանակություն՝ ապահովելով Չինաստանի առևտրական կապը՝ Մետաքսի ճանապարհով Արևմուտքի հետ:

Որոշ հետազոտողներ արձանագրում են, որ հայ-չինական հարաբերությունները ձևավորվել են տակավին Ք. ա. IV դարում, իսկ այնուհետև՝ Հան արքայատոհմի Վու Տի կայսեր (Ք. ա. 140-80 թթ.) ժամանակ հայ վաճառականներ են հիշատակվում: Լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ չինական թղթի գյուտը հայ վաճառականներն են տարածել Եվրոպայում⁴: Հայերը հաճախ են այցելել այս երկիր՝ Հայաստան բերելով մետաքս, ճե-

³ Ե. Թ. վարդապետ Պետրոսյան, Հայ եկեղեցու պատմությունը, Էջմիածին, 1995, էջ 168:

⁴ Ս. Պողոսյան, ճենաց աշխարհ, Չինմաչին և, վերջապես, Չինաստան. - «Իրատես de facto», 28-31. 10. 2011:

նապակի, կիսաթանկարժեք նեֆրիտ քար, արծաթաթել ու ոսկեթել գործվածք և այլ ապրանքներ: Իսկ Չինաստանում պահանջարկ ունեին հայկական դեղամիջոցները, բուսական և հանքային ներկերը, հատկապես «որդան կարմիրը», որով ներկում էին չինական ու հնդկական մետաքսի լավագույն տեսակները⁵: Պատմագիրները նշում են, որ և՛ «որդան կարմիրը», և՛ դրանով ներկված գորգերը, բրդյա և մետաքսյա գործվածքները արտահանվել են ինչպես Արևելք, այնպես էլ Արևմուտք⁶:

Ի դեպ, հայերն ունեն իրենց ներհատուկ մի զարմանալի հատկություն. նրանք արագորեն հարմարվում են օտար, անծանոթ միջավայրին՝ ստեղծելով իրենց բարեկեցությունն ու հարմարավետությունը: Շատ հետազոտողներ արձանագրել են, որ նրանք տիրապետում էին տեղի բարբառին, լավատեղյակ էին ավանդույթներին, բնակիչների յուրահատկություններին, դրա համար էլ հաճախ եվրոպացիների համար կատարում էին ուղեկցողների ու թարգմանիչների դեր⁷:

Հայերը ինչպես շատ երկրներում, այնպես էլ Չինաստանում բացառիկ հարգանք և ազատություն էին վայելում: Հիմքեր կան ենթադրելու, որ նրանք այստեղ խաղողագործությամբ և գինեգործությամբ զբաղվելու փորձեր են կատարել դեռևս Թան արքայատոհմի տիրապետության ժամանակաշրջանում՝ 618-907 թթ.: Հետաքրքրական է, որ պահպանվել են հայի արտաքինին բնորոշ հատկանիշներով (արծվակտուց, կեռ քիթ, սև բեղ ու մորուք) օժտված անձանց արձանիկներ⁸: Ընդհանրապես հայ վաճառականի կերպարը աշխարհի բոլոր ծագերում ընկալվում էր իբրև ազնվության, պարկեշտության և վստահության խորհրդանիշ: Փաստորեն, նրանք եղել են համաշխարհա-

⁵ Ս. Պողոսյան, Եվ ձգվում էր «Մետաքսի ճանապարհը». - «Իրատես de facto», 12-14. 04 2011:

⁶ Խ. Գալֆայան, Արարատյան որդան կարմիրը. - «Գիտություն և տեխնիկա», 1970, № 2, էջ 16-19:

⁷ Ս. Պողոսյան, Եվ ձգվում էր «Մետաքսի ճանապարհը»:

⁸ Լ. Խաչիկյան, Հայերը Հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա. - «Բանբեր Մատենադարանի», 1980, № 13, էջ 57:

յին առևտրի ցանցի ստեղծողներից, նաև Եվրոպայի և Չինաստանի միջև աշխույժ առևտրի ուղեհարթներն ու առաջագնացները⁹: Հիշատակենք ընդամենը մեկ փաստ ևս: Չինաստանում աչքի ընկնող մտավորականը չինարեն լեզվի ուսուցիչ և չինարենից եվրոպական լեզուներ և հակառակը թարգմանություններ կատարող Հովհաննես Ղազարյանն էր: Նա անգլերենից չինարեն է թարգմանել Աստվածաշունչը, որն առաջին և լավագույն թարգմանությունն է չինարեն¹⁰:

Կարծում ենք՝ առևտրուղիների ապահովության տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Կտրիժվորաց եղբայրությունները կամ Եղբարց միաբանությունները: Այսպես էին կոչվում Հայաստանում և հայկական գաղութներում XII–XIX դարերում գործած երիտասարդական կազմակերպությունները: Դրանք կազմակերպվել են հայ երիտասարդությանը համախմբելու, միավորելու, նրանց աշխարհիկ ու հոգևոր դաստիարակությանը նպաստելու նպատակով: Դրանք ունեցել են նաև կիսառազմական բնույթ. երիտասարդությանը վարժեցրել են կարգուկանոնի, զինվորական գործին, որպեսզի հարկ եղած դեպքում մասնակցեն իրենց քաղաքների պաշտպանությանը, ուղեկցեն առևտրական քարավաններին և այլն:

Քոչվոր ցեղերի արշավանքների և տարբեր բնույթի ավազակային հարձակումների պայմաններում հայ վաճառականները առավելագույնս ռազմունակ էին և հարկադրված էին զենք կրել: Նրանք բոլոր առումներով պատրաստ էին իրենց ուղևորությունների ժամանակ պաշտպանել իրենց և հակահարված տալ ցանկացած ելուզակի ու կողոպտիչի: Ավելացնենք, որ Կիևի հայերը XV–XVI դդ. վտանգի պահին թշնամու դեմ դուրս էին բերում 500 ռազմիկ քաղաքացի¹¹:

⁹ Ս. Պողոսյան, Եվ ձգվում էր «Մետաքսի ճանապարհը». – «Իրատես de facto», 12-14. 04 2011:

¹⁰ Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 330:

¹¹ Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 51:

Ներկայումս հաղորդակցության և կապի միջոցները մեծ զարգացում են ապրում և այդ գործընթացը սրընթաց կերպով շարունակվում է: Այս ոլորտում առկա են քաղաքական և աշխարհաքաղաքական շահերի բախումներ, որոնք անտեսում են ազգային միտումներն ու նկատառումները, ընդհանրապես ազգային արժեքները: Դրա դրսևորումներից է թուրք-ադրբեջանական հակահայկական քաղաքականությունը:

Ուստի, պատմական հիմքի վրա Հայաստանի ամբողջական պատկերը ներառող Մետաքսի ճանապարհի վերականգնումը կարևոր ռազմավարական խնդիր է:

Р. НААТАКЯН

**ЦИВИЛИЗАЦИОННАЯ РОЛЬ АРМЯН НА
МЕЖДУНАРОДНЫХ КОММУНИКАЦИОННЫХ
ПЕРЕКРЕСТКАХ**

R. NAHATAKYAN

**CIVILIZATIONAL ROLE OF ARMENIANS IN THE
INTERNATIONAL COMMUNICATIONAL CROSSROADS**

**ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՆԹԱՏԵՔՍՏՈՒՄ**

(Հայ ժողովրդական հեքիաթների հիման վրա)

Հայ ժողովրդական բանահյուսության և միջնադարյան մատենագրության մեջ առկա են Արևելյան երկրների հետ փոխառնչությունների բազում դրվագներ, որոնց մասին հիշողությունները կենցաղավարում են մասնավորապես հեքիաթներում: Հայկական հեքիաթները պահպանել են այդ միջավայրին վերաբերող մանրամասներ՝ ծովային և քարավանային առևտուր, ապրանքափոխանակություն, կնիք, դրամական շրջանառություն և այլն: Գտնվելով Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքով պայմանավորված միջազգային տարանցիկ առևտրի կենտրոնում՝ Հայաստանը «Մետաքսի ճանապարհով» կապվում էր Սև և Միջերկրական ծովերի ավազանների նավահանգիստների հետ, դրանց վրայով առևտրական գործարքներ էր կատարում Իրանում, Միջագետքում, Եգիպտոսում, Հնդկաստանում և Չինաստանում:

Հազարան բլբուլ, Սինամահավք (չինական թռչուն), անմահական ջուր ու խնձոր և չնաշխարհիկ (Չինաց աշխարհից) գեղեցկուհիներ որոնող մեր հեքիաթների հերոսները հաճախ հայտնվում են օտար, այնկողմնային համարվող աշխարհներում: Հայկական «Քյոսի, Թոփալի ու Քոռի նաղլը»¹², «Մեռլի հրեշտակը»¹³, «Ավճի Շաբուլի տղեն»¹⁴, «Սիմոն կուպեցին հեքիաթը»¹⁵, «Մաջրում խոջի հեքիաթը»¹⁶, «Իմաստուն քուռագի հեքիաթը»¹⁷, «Երեք դարդա-

¹² ՀԺՀ, հ. I, Երևան, 1959, էջ 507–511:

¹³ ՀԺՀ, հ. II, Երևան, 1959, 243–253:

¹⁴ ՀԺՀ, հ. IV, Երևան, 1963, էջ 27–45:

¹⁵ Նույն տեղում, էջ 319–329:

¹⁶ Նույն տեղում, էջ 105–117:

¹⁷ Նույն տեղում, էջ 139–148:

տեր»¹⁸, «Առջի տղա»¹⁹ և այլ հեքիաթներում հերոսներն առևտուր են անում, բախտ կամ ճշմարտություն որոնում Սպահանում, Հալեպում, Թեհրանում, Հնդու երկրում, Չինմաչինում, Արաքստանում, Բաղդատում և անգամ խորհրդանշական Պղնձե քաղաքում ու Քաջանց երկրում:

Արևելյան պատկերացումների հիմքով ստեղծված հայկական հեքիաթներում առանցքային դեր է կատարում Հայաստանից արտահանվող և դրսից ներմուծվող ապրանքների տեսականին: Գործնական շփումներին, առևտրական և մշակութային կապերի հաստատմանը մասնակցում էին տարբեր երկրներով անցնող «Սետաքսի ճանապարհի»²⁰ մերձավորությամբ ապրող ժողովուրդները: Այդ ճանապարհը անցնում էր հայկական հիմնավուրց մայրաքաղաքներով և խոշոր քաղաքային կենտրոններով՝ Արտաշատ²¹, Տիգրանակերտ, Դվին, Անի, Կարս, Կարին, Արծն, Ջուղա, Նախիջևան և այլն: Առևտրական քարավանները Հայաստան էին բերում չինական ու միջինասիական մետաքսե գործվածքներ, հնդկական անուշահոտ յուղեր, համեմունքներ, թանկագին քարեր, ռուսական մորթիներ ու մուշտակներ: Հռոմա-պարթևական առևտրական կապերն ըստ Ստրաբոնի՝ վերելք են ապրում Հայաստանի շնորհիվ, ինչպես նաև Պոնտական Կոմանա քաղաքի բարգավաճումը կապված էր Հայաստանից արտահանվող ապրանքների առևտրի հետ²²:

¹⁸ ՀԺՀ, հ. VIII, Երևան, 1977, էջ 532–547:

¹⁹ Նույն տեղում, էջ 790–794:

²⁰ «Սետաքսի ճանապարհը» սկսել է գործել մ.թ.ա. 2-րդ դարի կեսերին, երբ սկսվեցին առևտրատնտեսական և մշակութային հարաբերություններ հաստատվել Հռոմեական և Հանի (Չինական) կայսրությունների միջև: Հենց այս ժամանակաշրջանում սկսեցին կապեր հաստատվել նաև Առաջավոր Ասիայի երկրների և Կենտրոնական Ասիայի ու Չինաստանի միջև (Ա. Мартиросян, На Великом шелковом пути, Ереван, 1998, с. 3):

²¹ Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատը, Պլուտարքոսի վկայությամբ, մ.թ.ա. I դարում ունեցել է առևտրատնտեսական լայն շառավիղ և կարևոր նշանակություն (Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, с. 53–54):

²² Страбон, География, Москва, 1964, XI, 5,8, XII, 3,36.

Հայտնի է, որ մոնղոլական հրոսակների կողմից Չինաստանի հյուսիսային շրջաններ քշված հազարավոր տարագիրները նույնպես զբաղվում էին առևտրով²³:

«Մեռլի հրեշտակը»²⁴ (Այրարատ) հեքիաթում թագավորն իր որդիներից յուրաքանչյուրին «իրեք հարիր մանեթ» է տալիս ու պատվիրում, որ առևտուր անեն, մարդ դառնան: Մեծ ու միջնեկ տղաները փողերը «բազարում», քամուն են տալիս, իսկ թագավորի պուճուր տղան «իրեք հարիր մանեթով» փակում է ծեծվող մեռելի պարտքերը, տերտեր է կանչում և իր ծախսով թաղում նրան: Երեկոյան նա դատարկ վերադառնում է տուն ու հորը պատմում իր արարքի մասին: Թագավորն ուրախանում է, հրամայում, որ իր գանձարանից մի գոգ ոսկի բերեն տղայի համար. «Որդի,— ասումա,— գնա՛ ուրիշ երկիր ապրանք ա՛ռ բե՛ր ըստե ծախա, աղպորտանցդ միջին բալի էլի դու իմ էրեսը պարզ անես»²⁵: Եվ այսպես հայկական հեքիաթների հերոսները օրերով, շաբաթներով, ամսով ճանապարհ են գնում, օտար քաղաքների «քարվանսարում վե գալի, օթախ քրեհում, կենում, իրանց առուտուրի հեննա ըլնում»²⁶:

«Հարամբաշու հեքիաթում»²⁷ (Այրարատ), «Սիմոն կուպեցին հեքիաթում»²⁸ (Բասեն) վաճառականները, հասնելով օտար երկիր, գնում են թագավորին տեսության և թույլտվություն են խնդրում՝ նրա երկրում առևտուր անելու համար. «Թագավորն ապրած կենա, մենք այսինչ բազրկյաններն (վաճառականներ) ենք, բերել ենք մեր ապրանքը էս քաղաքը սաղացնենք. թե իրավունք կա՝ ծախենք, թե իրավունք չկա՝ էթանք ուրիշ քաղաք:

Ասեց.- Որթի, իրավունք ունեք, բազրկյանների ապրանքը քաղաքներընը կսաղանա»²⁹:

²³ Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Կ. Բ, Երևան, 1967, էջ 327:

²⁴ ՀԺՀ, հ. II, 243–253:

²⁵ Նույն տեղում, էջ 246:

²⁶ ՀԺՀ, հ. II, էջ 249:

²⁷ ՀԺՀ, հ. I, էջ 368–376:

²⁸ ՀԺՀ, հ. IV, էջ 319–329:

²⁹ ՀԺՀ, հ. I, էջ 372:

«Մեռլի հրեշտակը»³⁰ հեքիաթում հերոսները վերադառնալիս նույնպես «գալիս են, գալի, շատն ու քիչն Աստոծ գիտա, մի օր, երկու օր, իրեք օր, մի շաբաթ, երկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս...»³¹:

Մետաքսը Չինաստանից Հայաստան և Արևմուտք տեղափոխելն ապահովում էր մեծ կարողություն: «Տակավին մ.թ.ա. 124 թ. փաստեր են արձանագրված Հայաստան ներմուծված չինական մետաքսի վերաբերյալ»³²: Այս կապերը շարունակվեցին նաև միջնադարում, ընդհուպ մինչև XVII–XVIII դարերը³³: Քարավանները ճանապարհվում և մետաքսի բեռով վերադառնում էին երկու տարվա ընթացքում. «Քարավանապետերը միշտ հայեր էին լինում: Արևելքն ու Արևմուտքը հեղեղող բեռնափոխադրումը կենտրոնացված էր Ջուղայի վաճառականների ձեռքում»³⁴: Օտար երկրներ առևտրի գնալիս հեքիաթի հերոսները «ասսու անումը տալիս են, ընկնում ճամփա»³⁵: Երկարատև այդ ճամփորդությունը թեև ապահովագրված չէր կյանքի համար վտանգավոր փորձություններից, սակայն գայթակղիչ էր եկամտաբերության առումով: «Սխալ կլիներ կարծել, որ Հայաստանը միայն միջազգային տարանցիկ առևտրի կամրջի դեր էր կատարում»³⁶: Նա արտաքին այդ առևտրին մասնակցում էր նաև սեփական արտադրանքով: Հայաստանում դեռ հնագույն ժամանակներից արհեստները լայն տարածում էին գտել: Երկրի ներքին առևտրին համընթաց աշխուժանում էր հատկապես արտաքին առևտուրը: Ընդարձակ առևտրի պահանջ-

³⁰ ՀԺՀ, հ. II, 243–253:

³¹ Նույն տեղում, էջ 251:

³² Ա. Ժամկոչյան, Միջնադարյան Հայաստանի հախճապակին 9–14-րդ դարերում.- Հայաստանի հնագիտական հուշարձանները, թիվ 10, Երևան, 1981, էջ 97: Մետաքս (հուն. metaksa, ասոր. mitaksa)-շերամի որդի արտադրած նրբաթելը, ազնիվ կերպասեղեն (Ստ. Մախասետանց, Հայերեն բացատրական բառարան, հ. Գ, Երևան, 1944, էջ 308:

³³ М. Кречетова, Несколько китайских фарфоровых предметов с армянскими монограммами.- Труды Отдела Востока Эрмитажа, т. 3, М.-Л., 1940, с. 346–350.

³⁴ Фернан Бродель, Игры обмена, Материальная цивилизация, экономика и капитализм, XV–XIII вв., (перевод с французского Л. Е. Куббея), т. 2, Москва, 1988, с. 146.

³⁵ ՀԺՀ, հ. I, էջ 507, հ. II, էջ 247:

³⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 811:

ներից ելնելով՝ Տիգրան Մեծի և Արտավազդ 2-րդի օրոք դրան է կտրվում: Հայաստանից արտահանվում էին հացահատիկ, ձիեր, ջորիներ, աղ, գինի, երկաթ, կապար, պղինձ, անագ, ներկեր (որդան կարմիր), կաշի, բուրդ, Վանա լճի աղ դրած տառեխ ձուկը, գորգեր, անտառանյութ (փայտ), կաշվեղեն³⁷: Հիշատակվում է նաև Հայաստանի գինին, որը արտահանվում էր գլխավորապես Միջագետքի քաղաքները: Ըստ Հերոդոտոսի՝ հայկական գինին եփրատի հոսանքով հասցնում էին մինչև Բաբելոն³⁸:

«Ավճի Շաբուրի տղեն»³⁹ (Շիրակ) հեքիաթում որսորդի որդին Հայաստանից բերված քառասուն տիկ գինով հարբեցնում է «Հնդու երկրի» քառասուն փղերին, քերթում է նրանց ոսկորները և ուղտերի քարավանին բարձած՝ բերում-հասցնում է իր երկիրը⁴⁰:

«Սունբաթի հեքիաթում»⁴¹ (Այրարատ) հարուստ վաճառական Սունբաթի հոր քառասուն չրաղները (ապրանքն անվտանգ երկրներ կիր տեղափոխող ծառայողները) Սունբաթից պահանջում են, որ իր հանգուցյալ հոր պես իրենց աշխատանքով ապահովի: Սունբաթը չի ուզում «դուքամի» դուռը փակել, գեղեցկուհի կնոջը տանը թողնել և «չրաղների» հետ աշխարհեաշխարհ ման գալով՝ առևտուր անել: Նա աշխատանքի դիմաց «չրաղներին» ապրուստի փող է առաջարկում՝ յուրաքանչյուրին հինգ հարյուր, իսկ հետո՝ հազար մանեթ: «Չրաղները» չեն համաձայնվում՝ պատճառաբանելով. «-Ախար չէ՞ նաղդ փող ա, կտանենք, կփչացնենք, կմնանք քո մոտին ամոթով»⁴²:

Հեքիաթի շարունակության մեջ տեսնում ենք, որ առևտրական հարաբերությունների ծավալման շնորհիվ պարզ ապրանքափոխանակությանը զուգահեռ նկատելի է դառնում նաև դրամական շրջանառությունը: Առևտրատնտեսական կյանքում մեծանում է

³⁷ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 810–811, Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IX–XIII դդ., Երևան, 1946, էջ 75:

³⁸ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 80–81:

³⁹ ՀԺՀ, հ. IV, էջ 27–45:

⁴⁰ Նույն տեղում, էջ 32:

⁴¹ ՀԺՀ, հ. II, էջ 525–533:

⁴² Նույն տեղում, էջ 526:

փողի դերը: Վերոհիշյալ հեքիաթում վաճառականի կինը հավատացած է, որ «Փողը փող կաշխատի»⁴³ և ամուսնուն խորհուրդ է տալիս փողի փոխարեն «չրաղներին» գործ տալ, որպեսզի փողը գործի մեջ դրվի և եկամուտ բերի. «Կնիկն ասում ա.- Դրուստ եմ ասում, նաղդ փողը կտանեն, կփչացնեն, գործ տու՛, գործ»⁴⁴: Կնոջ խորհրդով՝ Սումբաթը «չրաղներին» պատվիրում է քառասուն եգ առնեն, ապրանք առնեն, «էթան խրիդ անելու»⁴⁵ (առևտուր անելու): Սակայն հեքիաթները ուշագրավ տեղեկություններ են պարունակում նաև «խրիդ անելու» բարդ օրենքների, հարստություն կուտակելու մոլուցքով իրար դավելու, չարամենգորեն ուրիշի ունեցվածքին տիրելու «բազրգյանների» խարդախությունների մասին: Նման պարագայում հեքիաթներում, տվյալ դեպքում՝ վերոհիշյալ «Սումբաթի հեքիաթում» կան «Սիմոն կուպեցին հեքիաթում» սովորաբար թիրախ է դառնում փորձի պակաս ունեցող վաճառականի միայնակ մնացած կինը, ով հանիրավի զրպարտվում է նենգ վաճառականի կողմից: Եվ քանի որ «Առուտուր ընելիս ըպրանքին միտ հոգի էլ ա ծախվում»⁴⁶, վաճառականը զրպարտում է Սումբաթի կնոջը: Սումբաթը համոզված լինելով կնոջ հավատարմության մեջ գրագ (մարջ) է գալիս՝ պահանջելով ապացույցներ: Վաճառականը Սումբաթին առաջարկում է մարդի խաղալ. «Քառասուն բեռն իմն ա, քառասուն բեռն քունն ա, քառասուն չրաղ իմն ա, քառասուն՝ քունն ա. թե ես գնացի քու կնկա պատկերը բերեցի, քու քառասուն բեռն, քառասուն չրաղը ինձ, դու էլ ինձ մոքար, թե չբերի, իմ ունեցածը քեզ, ես քեզ մոքար»⁴⁷: Ինչպես կյանքում, հեքիաթում նույնպես զառ զցելը, խաբելն ու խորամանկելը իրենց հերթին դառնում են մրցության թեմա և խաղային ձև. «խարդախը ձևացնում է, թե հետևում է խաղի կանոններին և մասնակցում է

⁴³ Ա.Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960, էջ 248: Տե՛ս նաև Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, Արցախ, տետր № 1, 2006 թ., «Փողը փող կը պիրի, թե վեր դադրը գիդես» (նույն տեղում, թերթ 42):

⁴⁴ ՀԺՀ, հ. II, էջ 526:

⁴⁵ ՀԺՀ, հ. II, էջ 526:

⁴⁶ Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, Արցախ, տետր № 1, 2006 թ., թերթ 43:

⁴⁷ ՀԺՀ, հ. II, էջ 527:

խաղին մինչև բռնվելը»⁴⁸։ Հետաքրքիր է նկատել, որ «դեռևս XVII դարում ժամկետային առևտրային գործարքները հայտնի էին «գրազներ» անունով»⁴⁹։ Վաճառականը կեղծ փաստերով Սումբաթին թյուրիմացության մեջ է գցում, գրազը շահում և ունեզրկում։ Սումբաթի կինը հարցուփորձ անելով հասնում է Թեհրան, իր խելքով ու հնարամտությամբ պատժում խարդախ վաճառականին, բացահայտում ճշմարտությունը, փրկում ամուսնուն և վերջինիս ունեցվածքը. «Մի էրկու օրից եղը Սումբաթը թագա ապրանքը առած էկավ իրա դուքանի առաջին վեր ածեց»⁵⁰։

Քարավանները Հնդկաստանից Հայաստան էին բերում բրինձ, բամբակ, բամբակի գործվածքներ, հնդկական համեմունքներ, թանկագին քարեր և գոհարեղեն, խնկեղեն, փղոսկր, սև փայտ, ներկանյութեր⁵¹։ Դրսում մեծ պահանջարկ էր վայելում ընկուզենու փայտը։ «Քյոսի, Թոփալի և Քոռի նաղլը»⁵² (Այրարատ) հեքիաթը ցուցանշական է հեքիաթի հերոսի ու նրա առևտրական գործերի հետ կապված մանրամասներով։ Հեքիաթի հերոսը, ինչպես ինքն է ներկայանում, «բազրկյանի տղա» է, անունը՝ Մարտիրոս, «Փարպի գեղից»⁵³։ Հոր մահից հետո նա հարցուփորձ է անում պարզելու, թե Հալեպում որ ապրանքը բարձր պահանջարկ ունի, իմանում է, որ «շիմշատ փետը շատ թանգ ա ծախվըմ Հալեպումը»⁵⁴։ Եվ թեև հայրը պատվիրել էր Հալեպ չգնալ, «տղեն առավ քառասուն - դաթրի բեռ շիմշատի փետ, բարցեց, ասսու անըմը տվեց, ընկավ ճամփա»⁵⁵։ Աստծո անունով ճամփա ելած մարդը Հալեպ հասնելուն պես հայտնվում է փորձանքի մեջ։ Առաջին իսկ իջևանատիրոջ «նոքարները» բեռնաթափում են բազրկյանի որդու քառասուն ջորիներին՝ պատճառաբանելով, թե առավոտյան ճանապարհ ընկ-

⁴⁸ Յո. Հայզհինգա. Homo Ludens, Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, Երևան, 2007, էջ 79:

⁴⁹ Նույն տեղում, էջ 78–81:

⁵⁰ ՀԺՀ, հ. II, էջ 532:

⁵¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 810:

⁵² ՀԺՀ, հ. I, էջ 507–511:

⁵³ Նույն տեղում, էջ 508:

⁵⁴ Նույն տեղում, էջ 507:

⁵⁵ Նույն տեղում:

նելն ավելի ապահով կլինի: Բեռնաթափման ժամանակ թուփալը մի բեռ շիմշատ փայտ է գողանում, «կեսը լցնում է օջաղը, կեսն էլ դնում թախտի տակը»⁵⁶: Քյոսեն, թուփալն ու Քոռը բազրկյանի տղային խաբում են, թե. «Մեր քաղաքընը էտ փետը մուֆթա ա, վառըն են, ու տարավ շանց տվեց, որ օջաղը լիքն էր, թախտի տակը լիքն էր»⁵⁷: Իսկ հետո իբր ափսոսում են, որ էդ խեղճ մարթը անտեղի «ահագին ծախս ա քաշել, ահագին քրեհ ա տվել», ոնց որ «աղը բարցել ա՝ տանըն ա Կողբընն ա ծախըն: Դե՛, ասըն ա, - հոքս մի՛ հանի, էս բաղիովը (պղնձե խոր աման) օխտը ոսկի կտամ քեզ, քու ծախսդ էլ ա դուս կգա»⁵⁸: Բազրկյանի որդին Հալեպի խանութներից մեկում ծանոթանում է մի «դուքանչի հալիվորի» հետ և իմանում, որ Հալեպում Հայաստանից բերված շիմշատ փայտը շատ թանկ արժե, «մսխալը կաժենա հինգ մանեք», իսկ ինքը Քյոսայի, թուփալի և Քոռի՝ երեք թալանչի ընկերների հերթական զոհն է: Պարտված Քոռ թալանչին որոշում է զրպարտել Մարտիրոսին: Նա տանուտերին բողոքում է, իր մի աչքն է ուզում, որը իբր ժամանակին տվել է բազրկյանի տղային: Բազրկյանի տղան էլ ասում է. «-Շատ լավ. իմ մի հ'աշկն էլ հանեք, Քոռի էն մի հ'աշկն էլ հանեք, դրեք կշեռքը կըշեռք, թե որ բարեբար ըլի, տվեք նրան»⁵⁹: Կոնֆլիկտը հանգուցալուծվում է արդարությունն ու առևտուրը մատնանշող կշեռքի՝ թե՛ իրական-նյութական, թե՛ խորհրդանշական գործառույթով: Հեքիաթն ավարտվում է երախտապարտ հայ առևտրականի նվիրատվությամբ. «Նոր ըտե էտ տղեն իրա բեռները ծախեց, մի բեռը տվեց աշխուն փեշքաշ, էտ քյարվանսարեն էլ թողաց դրան, իրա բեռները ոսկի շինած, ետ դառավ իրանց վաթանը»⁶⁰:

«Սուրայի սովդաքյարի որթու հեքիաթում»⁶¹ (Այրարատ) հեղուկները ոչ միայն իրենց երկրի ապրանքները ջորիներին բարձած

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ Նույն տեղում, էջ 508:

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ Նույն տեղում, էջ 511:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ ՀԺՀ, հ. I, էջ 196–208:

(ղաթըր) տանում են հեռու երկրներ վաճառելու, այլև օտար երկրներից նավով ապրանք են բերում (մի գյամնչի ապրանքը թափել էր, պըտի ետ դառնար)⁶², երբ թագավորի աղջիկը նավավարին խնդրում է, որ իրեն էլ այդ նավով տանի հեռու երկիր. «Ախչիկը մի էլավ գյամին, գնացին: Համա ի՞նչ թավուր ա քըըմ գյամին, դու պրծա՛ր»⁶³: Նույն «Որսորդ Հայրապետ» հեքիաթում «տղան փրցոց կենին. տվեց անկինը. տասվերկու ամիս թարմ ծովի վրա մնըց. նե՛սև, նե՛քար, նե՛լեառ կերևա. էրկինք ու ծով կար»⁶⁴:

Զինաստանից բերվող հում մետաքսի փոխարեն Հայաստանից արտահանվում էր արհեստագործական արտադրանք՝ մետաղե գործիքներ, ոսկյա և արծաթյա իրեր, պերճանքի առարկաներ, պղնձյա ամանեղեն, ռազմական գործի հետ առնչվող զենքեր ու զրահներ, բրդե և մետաքսե գործվածքեղեն, որոնք արտադրվում էին Հայաստանի քաղաքների «գործոց տներում»⁶⁵ և որոնց մասին բավականաչափ տեղեկություններ կան հայ մատենագրության մեջ⁶⁶ և հեքիաթներում:

«Ավճի Շաբուրի տղեն»⁶⁷ (Շիրակ) հեքիաթում որդին զարմանում է, թե իր հայրն ինչ մասնագիտություն ուներ, որ այդքան զենք ու զրահ կա տան մի անկյունում. «Էս իմ հերս ի՞նչ զանիաթի էր, որ - ըսավ մորը,- էսքան սիլլահ կը պահեր:

-Ավճություն կեներ,- ըսավ մերը:

⁶² Նույն տեղում, էջ 201:

⁶³ Նույն տեղում:

⁶⁴ ԶԺՀ, հ. XVI, Երևան, 2009, էջ 402: Հնուց անտի հայ ծովայինները մեծ համբավ ունեին Հնդկաստանի նավահանգիստներում: Ինճիճյանը գրում է, որ «հայերը երևելի նավապետներ եղած են», որոնք «մեծ նավեր բանեցնելով վարպետ եղան Պենկալային առջևին ծոցին մեջ ու Գանկես կամ Կընկա գետին մեջ նավարկելու...» (Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 261):

⁶⁵ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա 1861, էջ 180, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 810–813:

⁶⁶ Ղազար Փարպեցին իբրև Հայոց աշխարհի «երկրի տակ ծածկված գանձեր», մատնացույց է անում «ոսկին ու պղինձը, երկաթն ու պատվական քարերը, որոնք ընկնելով արհեստավորի ձեռքը, թագավորներին զուգում են գեցեցկատեսիլ զարդերով ու բանվածքներով, ինչպիսին են խույրերի, թագերի ու հանդերձների վրա ընդելուզված ոսկեհուռ պաճուճանքները» (Ղազար Փարպեցի, Հայոց Պատմություն, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, էջ 23):

⁶⁷ ԶԺՀ, հ. IV, էջ 27–45:

-Ես էլ, - ըսավ,- ավճուրջուն կենեմ հորս պես»⁶⁸:

Հայաստանի հնագույն զենքերից են եղել նետն ու աղեղը (հեքիաթներում՝ նետ ու անեղ, նետվանեղ), ինչպես նաև պեղածո հարվածող մարտական զենքերը՝ քար նետող պարսատիկները (փիլիկան)⁶⁹, գուրզը (մական), միզակը (մզրախ), որի փոխարեն հայ պատմիչները հաճախ գործածել են աշտեն կամ գեղարդ բառերը, իսկ Չարսանճագի բարբառով գրառված հեքիաթներում նետի փոխարեն գործածվում է խըշտ բառը: «Գորտ»⁷⁰ հեքիաթում «մենծ տղան նետեց. խըշտը գնըց ընկավ լալային դուռը»⁷¹: «Անմահական խնձոր» (Այրարատ) հեքիաթում թագավորի փոքր տղան «նետուանեղը վե կունի, կէթա խնձորի ծառի տակին դարավուլ կքաշի»⁷²: Հայ մատենագրության մեջ⁷³ հիշատակություններ են պահպանվել արհեստի տարբեր ճյուղերով (մանածագործություն, ներկարարություն, ոսկերչություն, բրուտագործություն, զինագործություն, դարբնություն) զբաղվող մարդկանց մասին, իսկ ժողովրդական հեքիաթներում տեղեկություններ կան նրանց արտադրանքի վերաբերյալ, որոնց մի մասը առևտրի և փոխանակության միջոցով արտահանվում էր հարևան և հեռավոր երկրներ: Բնորոշ է, որ մ.թ. I-II դարերում հայոց լեզուն հարստանում է «շուկա», «խանութ» և առևտուր բնորոշող այլ ասորական բառերով⁷⁴, ինչպես նաև հեքիաթներում հանդիպող «պազար» (բազար), «դուքան» (կուղպակ-կրպակ-կուրբա) բառերով⁷⁵, որոնք վկայում են, որ ինչպես Արևելքում, մեզանում նույնպես քաղաքի հիմնական հատկանիշը շուկան է՝ իր խանութներով:

⁶⁸ Նույն տեղում, էջ 28:

⁶⁹ Արիստակես. Լաստիվերցի, Պատմություն: Թարգմանությունը Վ. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 61–62:

⁷⁰ ՀԺՀ, հ. XVI, էջ 334–352:

⁷¹ Նույն տեղում, էջ 334:

⁷² ՀԺՀ, հ. II, էջ 24:

⁷³ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց: Քննական բնագիրը Ս. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1981, էջ 194, Կ. Գանձակեցի, Հայոց Պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, 1982, էջ 260, Ա. Լաստիվերցի, նշվ. աշխ., էջ 61–62:

⁷⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 813:

⁷⁵ ՀԺՀ, հ. I, էջ 508, հ. II, էջ 525:

Արաբ հեղինակների վկայությունները հայերի բարեկեցիկ կյանքի մասին համախոս են հայկական աղբյուրների հետ: «Հայաստանում պատրաստվող բրդե, բամբակե ու մետաքսե զանազան գործվածքների ու կտորների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում արաբական մատենագիրները՝ Իստախրին, Իբն Հաուբալը, Յակուբին, Մասուդին և ուրիշները»⁷⁶: Իբն-ի Բատուտան երզնկայի մասին հայտնում է, որ «այնտեղ կան լավ կարգավորված շուկաներ, այստեղ շինում են գեղեցիկ կերպասներ, որ իր անունով են կոչվում: Նրա մեջ կան պղնձի հանքեր, որով շինում են ամաններ և «բայսուսներ (աշտանակներ)»⁷⁷:

Խոսելով Սմբատ Ա-ի և նրա հոր՝ Աշոտի թագավորության առաջին շրջանի մասին՝ Ստեփանոս Տարոնեցին հայտնում է, որ մինչև իսկ հովիվներն ու նախրապանները հագնում էին մետաքսե պատմունճաններ⁷⁸: «Արտուճ և խաղաղ թագավոր»⁷⁹ հեքիաթում թագուհին հանդիմանում է անտառում ծխական փորձությունների հաղթահարման փուլում գտնվող, «քարը բարձ դարձրած» իր որդուն և վերջինիս հիշեցնում է իր «ղումաշե ընկողինը»⁸⁰:

Գործվածքեղենի և մասնավորապես մետաքսի արտադրության զարգացածությունը միջնադարյան Հայաստանի քաղաքներում հաստատվում է ինչպես ձեռագիր աղբյուրներով⁸¹ ու մատեն-

⁷⁶ Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10–11-րդ դարերում, Երևան, 1940, էջ 29:

⁷⁷ Իբն-ի Բատուտա, Օտար աղբյուրներ հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 31:

⁷⁸ Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 161: Ս. Խորենացին Արտաշես արքայի հուղարկավորության մասին հայտնում է. «...Նրա դագաղը, ասում է, ոսկեղեն էր, գահը և անկողինը բեհեզից և մարմինը պատող պատմունճանը ոսկեթել, գլուխը թագ դրած, ոսկյա գնեքն առջևը» (Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, էջ 229):

⁷⁹ ԴժՀ, հ. XVI, էջ 372–379:

⁸⁰ Նույն տեղում, էջ 374:

⁸¹ Մանածագործության մասին խոսում փաստեր են պահպանվել ձեռագրերի կազմերի ներսի կողմից ծածկված մետաքսյա և կտավե աստառներում (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռագիր № 5554, 5555, 5559, 5563, 5591, 5569, 6263 և այլն, որոնք պատկանում են 12–13-րդ դարերին): Անիի երազահանում կողք կողքի հիշատակված են բամբակը, իլիկը, «Ջահրան» (ճախարակը), «ապրեշումը» (մետաքս), բուրդը, մազը և կաճը (ՄՄ, ձեռ. № 695, թ. 205բ):

նագրական վկայություններով⁸², այնպես էլ գործվածքների պեղածո նմուշներով⁸³ և բանահյուսական միջավայրում կենցաղավարող հեքիաթներով: Կիրակոս Գանձակեցին գրում է, որ հայ կանայք նուրբ ձեռագործերով զարդարել են իշխանական հագուստները, սուրբ խորանի ծածկոցները, եկեղեցական վարագույրները, որ «ներկված էր պես-պես ու զույնզգույն, գործված էր քանդակածն ու նկարված էր պատկերներով»⁸⁴:

«Հելուզակ թագուհին»⁸⁵ հեքիաթում աղջիկն իր գլխաշորը տալիս է աղքատ հալիվորին, պատվիրում այն «պագարում» վաճառել՝ ապրանքի գինը սահմանելով «չորս հարիր մանեթ»: Այդ գումարով գնում են տեղաշոր, ուտելիք, հագուստ, մետաքս ու մետաքսե կտոր. «-Էս հարիր մանեթը կտաս յորդան դռչկի. հարիր մանեթն էլ կտաս ապրըշմի (մետաքս), ղնայուզի (մետաքսե կտոր)»⁸⁶: Մետաքսե կտորից աղջիկը գլխաշորներ է պատրաստում, իսկ հալիվորը դրանք վաճառում է շուկայում. «Աղջիկը օրական շիքեց լյայլուխ, հալիվորը ծախեց. հա՛ ծախեցին, հարստացան: Քաղաքին մեջ էլ մե մեծ վաճառական էդ խալիվոր դարձավ»⁸⁷:

Հայկական հեքիաթներում թագավորին դիմավորում են ոսկյա սպասքով⁸⁸, հերոսները «խասա շորեր» են հագնում, «օսկի մատնիկ», «գինդ», «ապըրջան» կրում կամ «քյամար» կապում⁸⁹: Վերոհիշյալ հեքիաթներում ամենաթանկարժեք զարդերն ու ակնեղենը

⁸² Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., էջ 23, Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 135, Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 61–62: Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, էջ 228:

⁸³ 1908 թ. Տիգրան Հոնենցի տոհմային դամբարանից հանվել է վերջինիս ազգականներից մեկի՝ փոքրիկ իշխանադստեր հագուստը՝ «մետաքսեայ ամբողջ հագուստ ոսկե բանուածքներով ու մետաքսով, և ոսկով նուրբ հիսած քող, մետաքսեայ ժապավենից գօտի» (3. Օրբելի, Անույ աւերակները, Վաղարշապատ, 1911, էջ 46):

⁸⁴ Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 157:

⁸⁵ ՀԺՀ, հ. III, Երևան, 1962, էջ 262–273:

⁸⁶ ՀԺՀ, հ. III, էջ 270:

⁸⁷ Նույն տեղում:

⁸⁸ ՀԺՀ, հ. VIII, էջ 66:

⁸⁹ ՀԺՀ, հ. IX, Երևան, 1968, էջ 261–262:

հաճախ գնահատում են հրեա (ջիուդ) ոսկերիչները, որոնք շատ խորամանկ են և հմուտ առևտրի մեջ⁹⁰: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեքիաթներում առկա հիշողությունները համախոս են պատմական տվյալների հետ⁹¹:

«Հարամբաշու հեքիաթում»⁹² թագավորի որդին սիրահարվում է վաճառականի քրոջը: Թագավորը պահանջում է, որ աղջկա պատկերը քաշեն ու ուղարկեն իրեն. «Ես թաքավոր եմ, հո չեմ էրթա էն ախչկանը տենալու. ես պըտի էն ախչկա պատկերը տենամ՝ իմ տղի լայաղին ա, թե չէ»⁹³: Վաճառականն անհանգստանում է, թե ինչպես պիտի մի գիշերվա մեջ աղջկա պատկերը հանեն: «Քիրն ասեց.- Ախպեր ջան, դու արխեին կաց, իմ ձեռին դժար չի: Դու գնա դուքանը հինգ ռանգ արքշունի թել բեր, կես գազ ել դնավուզ (մետաքսե կտոր), բեր, որ վրին գործեն»⁹⁴: Քույրը մետաքսե կտորի վրա ոսկե թելերով այնպիսի վարպետությամբ էր ինքն իրեն պատկերել, որ «ինքն էլ մայիլ մնաց իրա ձեռի գործի վրա: Բացի դրանից քիրը շինել ա մի ոսկե խոնչա, մի ոսկե կաքավ, ոսկե ճուտերը հետը ֆռռում են»⁹⁵:

«Հելուզակ թագուհին»⁹⁶ (Այրարատ) հեքիաթում Արևելյան կողմի թագավորի որդին իր մի տոպրակ ոսկին կարող էր ստանալ միայն իր կնիքը ուղարկելուց հետո. «Երբ օր ես իմ փեչաղը օղորկի՝ ես ոսկին ըղրկի՛ր, գա»⁹⁷: Տուրուբերան-Մուշից գրառված «Հեքիաթ Տովլաթ - տուշկունի, մարդու մը ու փաշայի մը»⁹⁸ բնագրում ոսկերիչը կնիք (մհոր, մոհր) է պատրաստում մեծահարուստի կնիքի մմանողությամբ, որով հեքիաթի հնարամիտ հերոսը գանձարանից հանում է «Երկու հարիր օսկի»⁹⁹:

⁹⁰ ՀԺՀ, հ. II, էջ 163:

⁹¹ Фернан Бродель, նշվ. աշխ., էջ 146.

⁹² ՀԺՀ, հ. I, էջ 368–376:

⁹³ Նույն տեղում, էջ 374:

⁹⁴ Նույն տեղում:

⁹⁵ Նույն տեղում, էջ 375:

⁹⁶ ՀԺՀ, հ. III, էջ 262–273:

⁹⁷ Նույն տեղում, էջ 267:

⁹⁸ ՀԺՀ, հ. XIII, Երևան, 1985, էջ 379:

⁹⁹ Նույն տեղում, էջ 387: Հնդկահայ արհեստավորության մեջ, մասնավորապես

XVII դարում հայ վաճառականները «Մետաքսի ճանապարհի» արևմտյան հատվածի վրայով շարունակում էին իրենց առևտուրը: 1643 թ. գրված մի հիշատակարան վաճառական Հակոբը հայտնում է. «...մինչև Լ.(30) ամ ի վերայ աշխարհիս շրջի բազում ընչիւք, ծախիւք, վաճառէի զինչս իմ, եթէ ծովով կամ ցամաքով: Ձամենայն երկիրս տեսանէի՝ ի յերկիրն Ֆռանկաց տեսայ, բազում անգամ ի Կաստանդնուպօլիս վաճառեցի զինչս իմ, ի յերկիրն Յունաց բովանդակ տեսի մինչ ի Հալապ, Բաղդատ, Շամ, Երուսաղէմ, տեսայ: Այլ և Պարսից երկիրն զամէն՝ մինչ ի Խորասան տեսայ: Բ(2) անգամ յերկիրն Օգրեգստան մտայ: Այլ և գ (3) անգամ ի յերկիրն Հնդստան գնացի»¹⁰⁰:

Հատկանշական է, որ հայ առևտրականներին հաճախ ուղեկցում էին հայ հոգևորականները, որոնք Չինաստան էին գնում քաղաքացիական նպատակով¹⁰¹:

Այցելելով հեռավոր երկրներ և լավ ծանոթ չլինելով տեղացիների բարքերին՝ երբեմն վաճառականների հաղորդած տեղեկությունները տարածվում էին իրարամերժ ու սարսափազդու այլակերպումներով, որոնք վեր էին ածվում հրաշապատում սյուժեների: Հայոց հնագույն պատկերացումներով՝ դրախտը գտնվում է Արևելքում և հենց Չինաստանից են բացվում «դրախտի դռները»: Այս ամենի արձագանքները տեսանելի են նաև հայ բանահյուսության («Մեր տերն Արևելից գա ի դատաստան»)¹⁰² և դասական գրականության մեջ¹⁰³:

Կալկաթայի հայ համայնքում մեծ թիվ էին կազմում ոսկերիչները, որոնք «այնպիսի համարում ունեին, որ նրանց շատ հաճախ պատվերներ էին տալիս ոչ միայն Հնդկաստանից, այլ նաև Եվրոպայի և Ասիայի զանազան երկրներից» (Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 260):

¹⁰⁰ Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ (1641–1660), հ. Գ, Երևան, 1984, էջ 436:

¹⁰¹ Ուշագրավ է, Նիկոլայ Միլեսկու Սպաֆարիի (1675–1678 թթ. գլխավորում էր ռուսական դեսպանությունը դեպի Չինաստան) վկայությունը Չինաստանում իտալացի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոյի և հայ անվանի հոգևորական, միսիոներ Անտոն Սուլթանիեցու հետ հանդիպման մասին (Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 326, Բ. Մարտիրոսյան, Հայաստանը Մետաքսի ճանապարհի խաչովիներում. – «Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 4, էջ 92):

¹⁰² Աղոթք, «Փորձ», № 2, Թիֆլիս, 1877–78, էջ 273–274 (Ձավախք):

¹⁰³ Թողի երկիրն իմ հայրենի,/ Անահ անցա Արաբ ու Հինդ,/ Տեսա մարդիկ չորս

Հեթում պատմիչը հայտնում է, որ «այնքան այլազան և հրաշագեղ բաներ կան այս երկրի մեջ (այսինքն՝ Չինաստանում – Թ. Յ.) և այնքան նրբարվեստ, որ հազիվ թե որևէ մեկը համեմատվի նրանց հետ»¹⁰⁴։ Հայաստանում հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են չինական խեցեղեն և հախճապակի (սելադոն), որի արտադրության մշակույթը առաջացել է Չինաստանում, իսկ արդեն 9–10-րդ դարերում, մասնագետների կարծիքով, Դվինի խեցեգործական արհեստանոցներում վարպետները, վերամշակելով հախճապակե խեցանոթների որոշ զարդեր, ստեղծում են տեղական նմուշներ՝ հախճապակյա թասեր, ափսեներ, խոշոր պնակներ, կճուճներ՝ գծադիր և դրոշմված, խորաքանդակ և այլ զարդերով, որոնք ինքնատիպ են և ունեն ժամանակի հայկական արվեստին հատուկ ոճ¹⁰⁵։ Արդեն 18-րդ դարի վերջին քառորդին և 19-րդ դարի սկզբին հայ-չինական առևտրական կապերն այնքան էին զարգացել, որ հայ վաճառականների պատվերով չինացի արհեստավորները պատրաստում էին հայատառ մակագրություններով ճենապակե առարկաներ¹⁰⁶։ Ի դեպ «Սասնա ծռեր» էպոսի որոշ պատումներում Խանդութի աչքերը համեմատվում են չինական բաժակի հետ¹⁰⁷, իսկ չար աչքի դեմ հմայական աղոթքներում օձի կաթը լցնում են չինական բաժակի մեջ («Կթեցի զկաթ՝ քասա չինին»)՝¹⁰⁸, ինչը վկայում է Հայաստանում չինական ապրանքների առկայության մասին։

XVI–XVIII դարերում հայերն այնպիսի դիրք և հեղինակություն ունեին Չինաստանում, որ իրենց ապրանքները տեղափոխում էին հայկական տարբերամշան ունեցող սեփական շոգենավերով, իսկ եվրոպացիները Չինաստան մուտք գործելիս, Ղ. Ալիշանի վկայու-

գլխանի./ Տեսա հազար աղետ ու խինդ Յասս մինչև Չինունաչին./ Յասս մինչև ծովը ճերմակ./ Տեսա երկրի ծայրը վերջին/ Եվ դրախտի դուռը կրակ (Վ. Տերյան, Երկեր, Երևան, 1989, էջ 158)։

¹⁰⁴ Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ, Ի Վենետիկ 1842, էջ 6–7։

¹⁰⁵ Ա. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 97–98։

¹⁰⁶ М. Кречетова, նշվ. աշխ., էջ 346–350։

¹⁰⁷ Սասնա ծռեր, ժողովրդական վեպ, Կ. Ա. Երևան, 1936, էջ 32, 284։

¹⁰⁸ Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Աշխատասիրությամբ՝ Ս. Հարությունյանի, Երևան, 2006, էջ 84, N 19։

թյամբ, ապահովության համար հազնում էին հայկական տարագ՝ ներկայանալով իբրև հայ¹⁰⁹: Ճիշտ է, XVIII դարի վերջերին Չինաստանում հաստատված անգլիական առևտրական ընկերությունները և մյուս եվրոպացի գաղութարարները հայերի ազդեցությունը համաշխարհային առևտրի մեջ նվազեցնելու նպատակով սկսեցին հալածել չինահայ վաճառականներին, բռնագրավել վերջիններիս նավերը: Վերոհիշյալ հիշողություններն արտահայտվել են նաև հայկական հեքիաթներում (քարավանների վրա հարձակում, ապրանքների բռնագրավում և այլն): Հայկական հեքիաթների հերոսները հաճախ քարավանատերերին ու ջահելներին խրատում են գիշերը ճանապարհ չգնալ: Հեքիաթների շարունակության մեջ մենք տեսնում ենք, որ խրատին չհետևողները պատուհասվում են կա՛մ հեղեղից, կա՛մ ավազակների հարձակումներից¹¹⁰:

Արաբ աշխարհագրագետ Ալ-Իստահրին վկայում է Հայաստանի մայրաքաղաք Դվինում արտադրվող բրդե հագուստների, գորգերի, բարձերի, բազմոցների, դայթանների և հայկական արտադրության այլ իրերի, ինչպես նաև Դվինում արտադրվող մետաքսյա կտորների և տեղում «քիրմիզ» (որդան կարմիր) կոչված ներկով մահուդի ներկման մասին¹¹¹: «Խոջա Մահմուդ, խոջա Ալի»¹¹² (Կարճկան-Գոմս) հեքիաթում ջիուդները խոջա Մահմուդի ապրանքի մեջ «յափմա կըրմըզ» են որոնում, այսինքն՝ կեղծ որդան կարմիր ներկ, որը գտնելու պարագայում, վաճառականին պիտի տուգանեն: Ճիշտ է, հեքիաթում ջիուդները զրպարտում են վաճառականին, սակայն հեքիաթը փաստում է յուր ժամանակին որդան կարմիրի բարձր պահանջարկի և շուկայում տվյալ ներկի կեղծ ապ-

¹⁰⁹ Ղ. Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնաց աշխարհի, Վենետիկ ի Սխիթարայ վանս, 1893, էջ 467:

¹¹⁰ ՀԺՀ, հ. VII, Երևան, 1979, էջ 136–139, 458–463, հ. IX, էջ 119–123, հ. XV, Երևան, 1998, էջ 160–168, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Ռ. Գրիգորյան հ. 14, (Գեղարքունիք), Երևան, 1983, էջ 127–128, Հ. Գուրունյան, Համշենահայ բանահյուսություն, Երևան, 1991, էջ 45–47:

¹¹¹ Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск двадцать девятый, Тифлис, 1901, с. 19.

¹¹² Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, FA IV, 2325–2392:

րանքանմուշների մասին: «Բայց Հայաստանում ամենից ավելի շատ տարածված էր գորգագործությունը, որը պետք է բավարարեր թե՛ տեղական պահանջները և թե՛ արտահանվեր արտաքին շուկաներ իբրև վաճառքի առարկաներ: Արաբ պատմիչների տեղեկությամբ հայերը հարկի դիմաց խալիֆայությանը տալիս էին նաև գորգեր»¹¹³: «Սիմոն կուպեցին հեքիաթուն»¹¹⁴ Կոստանդնուպոլսի թագավորի որդին իր հոր պալատում մի ամիս շարունակ հյուրընկալում է Սիմոն կուպեցի տղային և պատասխան հրավերն ընդունում է՝ քայլելով Կոստանդնուպոլսի պալատից մինչև հարուստ հայ վաճառականի դուռը փռած խալիչայի վրայով: Հայկական գորգերի և դրանց վաճառքի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում Ադամ Մեցը: Հայտնի է, որ հայկական արտադրության գորգերն արտահանվում էին ոչ միայն Արևելք, այլև Արևմուտք: Օմայանների խալիֆ ալ-Վալիդ 2-րդի տանը պատերը և հատակը ծածկված էր հայկական գորգերով: Ար- Ռաշիդի կինը նստում էր հայկական գորգի վրա, իսկ նրան շրջապատող կանայք հայկական բարձերի վրա¹¹⁵:

Հայաստանում արտադրվող բազմատեսակ նուրբ կտորեղենները վկայում են հույժնային և գեղարվեստական մեծ պաշարների մասին: Հյուսվածքագործությունը ծաղկում էր ոչ միայն Դվինում և Անիում, այլև՝ Երզնկայում: Հայաստանի և Երզնկայի մասին Մարկո Պոլոն հայտնում է. «Այս մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որ կոչվում է Արզնիգա (Երզնկա), ուր հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները (buckram): Երկրի ժողովուրդը հայեր են»¹¹⁷: Հյուսվածքեղենի համար օգտագործում էին բուրդը, բուսական թելերը և շերամի որդի արտադրած մանրաթելը, որով հպար-

¹¹³ Վ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 82:

¹¹⁴ ՀԺՀ, հ. IV, էջ 319–329:

¹¹⁵ Адам Мец, Мусульманский Ренесанс, Москва, 1973, с. 369.

¹¹⁶ Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 23:

¹¹⁷ Հ. Հակոբյան, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ. Ա, (ԺԳ–ԺԶ դար), Երևան, 1932, էջ 48:

տանում է միջնադարյան առակի թեմին, «զի սաղարթ իւր նիւթ է մետաքսեայ»¹¹⁸:

Կիրակոս Գանձակեցին նշում է, որ մոնղոլների վարած դաժան հարկային քաղաքականության պահանջով՝ արիեստավորները նույնպես հարկատու էին պետությանը¹¹⁹: Խոսքը դարբինների, շապարարների (ծեփարարներ) մասին է, որոնք կերպասներ և բըրդե կտորեղեններ ներկող արիեստավորներ էին¹²⁰: Իսկ Արաբական տիրապետության տարիներին, հատկապես VII–VIII դարերում Օմայանների օրոք մտցված հարկահանության նոր՝ բնամթերքի միջոցով կատարվող կարգը, Հայաստանում ստեղծում է տնտեսական ծանր վիճակ: Շիրակից գրառված «Ծանր հարկեր»¹²¹ հեքիաթում դերվիշի շոր մտած թագավորի և վեզիրի ծարավը այգեպանը հագեցնում է իր այգում աճող նռան հյութով: Միայն մեկ նռան հյութը բավարարում է երկուսին:

«Բը էդ բաղեն ինչքա՞ն օքուտ կը քաղե բաղպանձին,– մտածում է թագավորը,– Ես մինչի հիմի հարկեր չեն դրե ըդունց վրե՛ն»¹²²:

Պալատ վերադառնալով՝ թագավորը հարկման է ենթարկում նաև այգեպաններին: Երկիրը հայտնվում է ծանր դրության մեջ: Երկու-երեք տարի հետո ծալոված թագավորն ու վեզիրը դարձյալ այցելում են այգեպանին և ջուր են խնդրում: Այս անգամ այգեպանը մի չորացած նուռ է բերում, քամում է, քամում, բան դուրս չի գալիս: Թագավորը հարցնում է, թե ինչպես եղավ, որ «երկու-իրեք տարի առաջ էկա էս բաղը, ջուր ուզեցի. դու բերեցիր մի նռով էրկու հոգի կշտացուցիր: Հիմի սաղ բաղեն մեզի ընչի՞՞ չը կրցար ջուր խնցներ»¹²³:

Այգեպանը պատասխանում է, որ իր այգին թագավորի դրած հարկերից չորացավ:

¹¹⁸ Գրական հուշարձաններ, Ա, Մ. Գոշ, Առակներ, Երևան, 1951, էջ 50–51:

¹¹⁹ Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 260:

¹²⁰ Վ. Աբրահամյան նշվ. աշխ., էջ 75:

¹²¹ ՀԺՀ, հ. IV, էջ 441–442:

¹²² Նույն տեղում, էջ 441:

¹²³ Նույն տեղում:

Թագավորը վերադառնում է իր «թախտը», վերանայում իր հարկային քաղաքականությունը և երկիրը հարստացնում:

«Աշկը ծակ դաղմաչին»¹²⁴ (Արցախ) հեքիաթում ընչաքաղց հարկահավաքի պատճառով գյուղացու այգին չորանում է, դառնում «չոր խուշուշ»¹²⁵:

Դաղմաչի (մուխթսիբ, մութսիբ) բառը հարկահավաքի, առևտրական մաքսը հավաքողի, շուկայի չափ ու կշռի հսկիչի պաշտոն է նշանակում, ինչի մասին հիշատակվում է Ս. Գունդստաբլի Դատաստանագրքում¹²⁶ և վիմագիր արձանագրություններում¹²⁷: Իսկ ժողովրդի վերաբերմունքը անխնա հարկահանության, մաքսային տուրքերի վերաբերյալ, ցավոք, այսօր նույնպես խիստ արդիական է:

Ամփոփելով բանահյուսական, մատենագրական և հնագիտական տվյալները քննվող թեմայի վերաբերյալ և մասնավորապես հայ ժողովրդական հեքիաթներում առկա դրսից ներմուծվող և Հայաստանի քաղաքների «գործոց տներում» արտադրվող ու արտահանվող ապրանքատեսականու մասին, կարող ենք ասել, որ այսօր, երբ կրկին մեծացել է Արևելքի երկրների դերը համաշխարհային սոցիալ-քաղաքական ու մշակութային ասպարեզում, մենք հայերս հնուց անտի դրացիական կապեր ենք ունեցել հարևան ու հեռավոր ազգերի հետ ու ներգրավված ենք եղել արևելքի ու արևմուտքի, հյուսիսի և հարավի պատմամշակութային և առևտրատնտեսական միջազգային կարևոր գործընթացներում:

¹²⁴ Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, Արցախ, 2004 թ., տետր № 2, էջ 62–68:

¹²⁵ Նույն տեղում:

¹²⁶ Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի), Կիլիկեան դատաստանագիրք XIII դարի, Ձեռագրերի համեմատութեամբ լոյս ընծայեց Արսէն Վարդապետ Դլտճեան, Ս. Էջմիածին, 1918, էջ 63:

¹²⁷ Летопись на камнях, собрание-указатель армянских надписей, составил К. Костанянц, С.-Петербург, 1913, с. 27.

Т. АЙРАПЕТЯН

**ШЕЛКОВЫЙ ПУТЬ В КОНТЕКСТЕ ТОРГОВО-
ЭКОНОМИЧЕСКИХ И ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ
СВЯЗЕЙ**

(На основе армянских народных сказок)

Т. HAYRAPETYAN

**THE SILK ROAD IN THE CONTEXT OF COMMERCIAL-
ECONOMIC AND HISTORICAL-CULTURAL RELATIONS**
(On the basis of Armenian folktales)

**ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆԴԵՑՈՒ «ԳԱՆՁ ՉԱՓՈՅ, ԿՇՈՈՅ, ԹԻՈՅ
ԵՒ ԴՐԱՄԻՑ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՐՀԻ» ՁԵՌՆԱՐԿԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ՍԵՐՆԴԻ ԿՐԹՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Մետաքսի ճանապարհը ցամաքային ամենաերկար և ամենահին առևտրային ուղին է եղել աշխարհում: Մետաքսի ճանապարհով մի երկրից մյուս երկիրն էր տեղափոխվում այն, ինչի պահանջարկը պարզապես կար ներմուծող երկրում:

Մետաքսի ճանապարհին առաջարկվում էր ազգային մշակույթի արտադրանքը: Գնորդը գնում էր հնդկական համեմունքն ու չինական մետաքսն ամենից առաջ այն պատճառով, որ ինքը պարզապես ուներ դրա պահանջարկը: Սակայն կարևոր էր նաև դրանց՝ Հնդկաստանում և Չինաստանում արտադրվելու փաստը, քանզի դրանք արտահայտում էին այդ երկրների մշակութային առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ, հայկական Որդան կարմիրը մանաւորիկ պահանջարկ և համբավ չէր ունենա աշխարհում, եթե այն բացի Մեծ Հայքից սկսեր արտադրվել նաև այլ երկրներում և միևնույն որակով:

Մետաքսի ճանապարհի հիմնական շարժիչը պետք է համարել վաճառականությանը: Նա էր կատարում բեռների փոխադրումները: Վաճառականներն էին կտրում հարյուրավոր մղոններ, մետաքսը, Որդան կարմիրը, հայկական գինին ու զանազան համեմունքներ հասցնում «Բաբելոնիա ու Հելլադա, մինչ Ֆռանկիստան ու Սպանիա»: Մետաքսի ճանապարհի վաճառականները նաև մշակութային յուրահատուկ կրողներ էին, ովքեր տեղափոխում էին նաև իրենց ճանապարհորդությունների ընթացքում տեսած երկրների մասին պատմություններն ու նկարագրությունները: Վաճառականն էր, որ հաղորդում էր մի երկրի թանկության ու մյուս երկրում կողմնացույցի գյուտի մասին: Նա էր, որ հաշվում էր դրամի չափն ու որոշում մեկ թոփ կտորին հասանելիք ֆրանկը կամ դիլեր

արծաթը: Փաստորեն, Մետաքսի ճանապարհի վաճառականը, բացի վաճառական լինելուց, նաև յուրահատուկ տեղեկատվության կրիչ էր: Դրանով իսկ, ավելի ու ավելի մեծ դեր է սկսում խաղալ հայ վաճառականությանը վերաբերող հարցերի քննության գործում:

Հայ վաճառականները ստեղծել էին մի յուրահատուկ եղբայրություն, որը պատասխանատու էր միևնույն ժամանակ նաև «եղբայր» վաճառականի տեղեկացված լինելու համար: Հայ վաճառականը պարտավոր էր իմանալ գրեթե բոլոր այն լեզուները, որոնք ընկած էին Մետաքսի ճանապարհի երկայնքով, ինչպես նաև քաջածանոթ լինել այդ երկրների մշակույթներին: Միևնույն ժամանակ հայ վաճառականը պիտի քաջատեղյակ լիներ թվաբանությանն ու վաճառականության կանոններին: Նա պիտի գերազանցապես տիրապետեր աշխարհագրությանը, աստղագիտությանը, օրացույցին: Պիտի լավ իմանար նաև տարբեր ժողովուրդների օրացույցների յուրահատկությունները: Սակայն ամենից կարևորը նրա՝ տարբեր չափի, կշռի և դրամական միավորների իմացությունն էր և այդ իմացության փոխանցումը «եղբայրությանը»: Յուրաքանչյուր քարավանատանը պիտի որ լինեին չափի, կշռի և դրամի մասին «թղթեր», որով «եղբայրության» վաճառականը կարող էր իմանալ իրենից առաջ գնացած վաճառականի թողած գրառումները, որոնք հայտնում էին, թե ինչ ֆինանսական կարգեր էին տիրում այդ ժամանակ աշխարհում և ինչ փոխարժեքներ էին գործում: Պետք է կատարել մի շատ համարձակ հայտարարություն, որը կատարյալ հակառակն է, ինչ պնդում է ամբողջ Եվրոպան. հայ վաճառականությունը ստեղծել էր իր ժամանակվա աշխարհին հատուկ առաջին ֆինանսաբանկային համակարգը և տարադրամի փոխարժեքների ցուցիչները դեռևս ավելի վաղ, քան Եվրոպան և ամբողջ աշխարհը հաղորդակից կլիներ դրան: Հայ վաճառականը նաև այն ժամանակվա աշխարհի «Բարի կամքի դեսպանն» էր, խաղաղության քարոզիչն ու առաջին մշակութային երկխոսություն իրականացնող ոչ պետական, միջազգային կազմակերպված ցանցը:

Այս ամենի մասին մանրամասն տեղեկություններ է հայտնում Ղուկաս Վանանդեցին իր՝ **«Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի»** աշխատության մեջ, ուր նա ամբողջացրել է, ինչպես ինքն է ասում, «...գիտութիւն ամենայն տեսակ կշռոց, չափոց եւ դրամից, որով բոլոր աշխարհի վաճառականութիւնն վարի-»¹: Ղուկաս Վանանդեցու վերոնշյալ վկայությունից պարզ է դառնում, որ նա գրում է մի ձեռնարկ, որը համահունչ է իր ժամանակի աշխարհի կշռի, չափի, թվի և դրամի վերաբերյալ եղած գիտությանը և նա գրում է հենց այդ գիտությունը (ձեռնարկը)՝ «Ծախիւք եւ ի խնդրոյ հայցման Ջուղայեցի Խաչատուրի որդի պարոն Պետրոսին»²: Փաստորեն, այս ձեռնարկը պատվիրված է, ինչպես վկայում է Ղուկաս Վանանդեցին, ջուղայեցի Խաչատուրի որդի Պարոն Պետրոսի կողմից, որը. «Տախիւք եւ հաւանութեամբ եռամեծ Վեհի Թօմայ վարդապետի եւ սրբափայլ եպիսկոպոսի Վանանդեցւոյ՝ տանն Գողթնեաց: Յամի տեառն 1699, Յունուարի 16: Յամստերդամ»³: Այս կերպ Վանանդեցին վկայում է, որ իր վերոնշյալ աշխատությունը նախապես լավ հետազոտության արդյունք է, և որ այն մշակված է և, կարևորագույնը, բռնել է քննություն՝ արժանանալով «եռամեծ Վեհի Թօմայ վարդապետի» հավանությանը:

Վանանդեցին իր այս գիրքն ուղղում է «Առ Հայագուն Վաճառասեր Եղբարս»՝ հենց այդպես վերնագրելով իր կոչը: Ծիշտ է, Վանանդեցին իր այս ձեռնարկը ուղղում է հայ վաճառական եղբայրներին, սակայն նրա նախորդ վկայությունից կարելի է դատել, որ հայ վաճառականության մեջ 17-րդ դարում պատկառելի տեղ ունեին Ջուղայի հայ վաճառականները, քանզի 1-ին՝ գիրքը պատվիրված էր ջուղայեցի Խաչատուրի որդի պարոն Պետրոսի կողմից, 2-րդ՝ Գողթան տան եպիսկոպոսի կողմից հավանության արժանացած լինելու փաստը, ավելին, այդ հեղինակողն էլ հենց վանանդեցի է: Դիմելով «Հայագուն Վաճառասեր Եղբարս»՝ Վանանդեցին, ճիշտ է, դիմում է բոլոր հայ վաճառական եղբայրներին,

¹ Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի, Յամի տեառն 1699, Յունուարի 16: Յամստերդամ, էջ 1:

² Նույն տեղում::

³ Նույն տեղում:

սակայն նա այդպիսով իսկ փաստում է, որ իր ապրած ժամանակաշրջանում կար հայազուն վաճառասեր եղբայրության վերաբերյալ փաստի ընկալումը, որն անկասկած պիտի հիմնված լիներ այդ ժամանակ իրապես գոյություն և կարգավիճակ ունեցող հայ վաճառականների եղբայրության վրա, անմիջապես որոնց համար նա գրում է իր ձեռնարկը:

Շատ կարևոր է այն դրույթը, թե ինչ արժեքներ են ընկած եղել հայ վաճառականների եղբայրության հիմքում: Մի ամբողջ հըսկայական ցանց, ցանցային մի համակարգ, որ ներառել էր Չինաստանից և Չնդկաստանից մինչև Իսպանիա ու Բրիտանիա (այն ժամանակվա պատկերացումների աշխարհը), աշխատել և իր գոյությունն է պահպանել արժեքային ուրույն համակարգի՝ վստահության վրա: Ցանցային այս համակարգն ուներ իր կենտրոնը, որը սկզբնապես Ջուղան էր, իսկ Շահ Աբասի իրականացրած բռնագաղթից հետո՝ Նոր Ջուղան, ուր տեղափոխվել էին նախկին ջուղայեցիները: Իր՝ «Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում 16-17 դդ.» մենագրության մեջ Վ. Փափազյանը նշում է. «Աբաս 1-ինը ձգտում էր հասնել այն բանին, որ իրանական արտաքին առևտուրը որևէ կախում չունենա օսմանյան Թուրքիայից... Նրան անհրաժեշտ էր թվում նոր, հուսալի և ապահով ուղիների հարթումը Իրանի արտաքին առևտրի իրացման համար: Հենց սրանով է բացատրվում Արևելյան Հայաստանի խոշորագույն կենտրոն Ջուղայի ավերումն ու նրա բնակիչների վերաբնակեցումը Իսֆահանի մոտ: Աբասի առաջնահերթ խնդիրն էր օգտագործել ջուղայեցիների փորձն ու հմտությունը Սեֆյան Իրանի արտաքին առևտրի զարգացման համար»⁴:

Այս հսկայական ու բարդ, միմյանց հետ տարբեր բնույթի և տեսակի կապակցված և հանգուցավորված ցանց-համակարգի համար Վանանդեցին բերում է վստահության իր դրույթը՝ սահմանելով այսպես. «Ձորինչ քեզ լինիլ ոչ կամիս, այլոց մի՛ առներ. եւ գորինչ քեզ լինիլ կամիս՝ այլոց եւս արա: Քանզի՝ երբ զայս կանոն

⁴ Փափազյան Վ. Հ., Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում 16-17 դդ., Երևան, 1990, էջ 42:

ընդ ամենեսեան 'ի գործ ածենք, լինինք Աստուծոյ սիրելիք եւ յամենայն մարդոց պատուելիք: Այսու կանոնաւ 'ի կատար ածենք զամենայն օրէնս ամենայն ազգաց՝ թէ՛ զԱստուածայինս, թէ՛ զեկեղեցականս, թէ՛ թագաւորականս եւ թէ՛ քաղաքականս»⁵:

Աստվածաշնչյան այս պատգամը (Մատթէոս. 7:12; Ղուկաս. 6:31-Ռ. Թ.) Վանանդեցին լրացնում է արիութիւնը, արդարութիւնը և խոհեմութիւնը պատկերող նկարով՝ նկարի մեջ պատգամելով. «Ո՛վ Նուրիջանեան Լեր միշտ խոհեմ Արդարաբան. Առցես պըսակ Արիութեան»⁶:

Եղբայրության այս դրույթները, որ Վանանդեցին ամբողջացրել է վստահության ներքո, իրենց արտացոլւում են գտել հայ վաճառականների նամակագրութիւններում⁷, որոնք հաստատում են Վանանդեցու դրույթներն ու փաստում, որ հայ վաճառականների եղբայրության հարաբերութիւնների հիմքում ընկած, դեռևս Վանանդեցու կողմից արձանագրված արժեքները պահպանվել էին մինչ 19-րդ դար և շարունակում էին կենսունակ լինել: Հետևաբար, ավելի քան ժամանակի պահանջ և հրամայական էր Վանանդեցու գրվելիք ձեռնարկը:

Ղ. Վանանդեցու առջև հստակ խնդիր էր դրված հայերեն մի ձեռնարկ կազմել, որը օգտակար կլինի բոլոր վայրերի հայ վաճառականներին՝ Իսպանիայից մինչ Շահական Պարսկաստան և Հնդկաստան: Վանանդեցու ձեռնարկն իր մեջ պետք է ներկայացներ, ինչպես նա է գրում, «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի»⁸:

Այս առումով Վանանդեցին իր ձեռնարկը բաժանում է թեմատիկ մասերի, որոնցում շարադրում է իր ժամանակի աշխարհում տիրող՝ վաճառականին օգտակար գիտելիքները: Վանանդեցին, սկսելով իր այս ձեռնարկը, ամենից առաջ տալիս է չափի, կշռի, թվի, և դրամի միջազգային, օտարալեզու անունները, որոնք գոր-

⁵ Վանանդեցի Ղ., Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի, էջ 5:

⁶ Նույն տեղում, էջ 6:

⁷ Իգ. Վարդապետ Փափագեանց, Պատճենք նամակաց վաճառականութեան, ի Վենետիկ, 'ի վանս Սրբոյն Ղազարու, 1826. ՌՄՀՄ, էջ 131-133:

⁸ Ղ. Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի, էջ 2:

ծածելի էին իր ժամանակ. «Ի Գլխաւոր վաճառատեղիս, որք են յաշխարհի վերայ՝ բառքս այսորիկ:

Թիւ, կշիռ եւ չափ այսպէս ասի հայի՝ թիւ, կշիռ, չափ: Իտալիանի՝ նո՛ւմէրօ, պէ՛զօ, միգո՛ւր: Դօլլանդիգի՝ խըթալ, վիխտ, մաթ: Թուրքի՝ սայի՛, թերագի՛, օլչի: Ֆարսի՝ շմար, միզա՛ն, փէյմա՛նա»⁹: Փաստորեն, Վանանդեցին հայ վաճառականությանն ու հայկական չափի, կշռի, դրամի և թվի միավորները դիտարկում է միջազգային տերմինաբանության համակարգի մեջ՝ այսպիսով դարձնելով ընդհանուր մի մաս: Սա թույլ է տալիս հայ վաճառականներին անընդհատ զուգահեռներ ունենալ և անընդհատ համեմատել չափման միջազգային միավորները: Դետաքար, Վանանդեցին տալիս է փոխարժեքների համակարգը:

Գլուխ Ա-ում Վանանդեցին իր ձեռնարկը սկսելը տեղին և պարտադիր է համարում՝ նախապէս գրելով «*Յաղափս հին կշռոց, չափոց և դրամից*»՝ այս կերպ, փաստորեն, ծանոթացնելով եղբայր վաճառականին հին համակարգի հետ՝ տալով ներկա համակարգի նախապատմությունը՝ իրենից նաև աղբյուրագիտական արժեք ներկայացնելով մինչ իրեն եղած միավորների վերաբերյալ¹⁰:

Այս ամենի հետ Վանանդեցին տեղեկություններ է հայտնում չափի, կշռի և դրամի հին միավորների մասին¹¹: Վանանդեցին նաև փորձում է տալ տարբեր երկրների միավորների անվանումների զուգահեռները. «Ասեն ոմանք, թէ սատեր, սիկդ, դիդրաքմայ եւ երկդրամեան՝ մի եւ նոյն կշռոյ անուն է: Այսպէս եւս՝ տաղանդ, քանքար եւ մնաս՝ մի՛ եւ նոյն է: Այսքան առ այս»¹²: Կարևորագույն փաստ՝ Վանանդեցին, տալով զուգահեռներն ու միավորները, անպայմանորեն նշում է, որ այդքանի իմացությունն արդեն իսկ բավական է վաճառականին՝ իր գործերը կազմակերպելու համար:

⁹ Նույն տեղում, էջ 3:

¹⁰ Նույն տեղում, էջ 7:

¹¹ Նույն տեղում, 7:

¹² <http://www.digilib.am/digilib/>, Դայ մատենագրության թուանշային գրադարան, Ղ. Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի, Յաղագս հին կշռոց, չափոց և դրամից (այսուհետև՝ Ղ. Վանանդեցի):

Չեռնարկը Վանանդեցին շարունակում է «Յադագս այլ եւ այլ լտրից՝ եւ քաշից: Ի Ֆրանկստան այլ եւ այլ լիտր կայ, որ Լիբրա եւ Փունթ ասի: Բոլոր Իտալիոս յ'երկրումն մին լիբրա ունի 12 ունցա, 24 լօտ, 48 սիսայն, 96 դրիամ, 576 դանկ, 1728 դիրաթ, 5760 գրամ: Ինգլիզումն մին դանթարն 100 փունթ է', մին փունթն՝ 144 դրիամ»¹³: Ընտրելով քաշի առաջին միավորը՝ Վանանդեցին այնուհետև այն համեմատության մեջ է դնում այլ միավորների հետ, որպեսզի «եղբայր վաճառականը» կարողանա ճիշտ հաշվարկել և չհանդիպել դժվարությունների տարբեր երկրներում «տուրևառությամբ» զբաղվելիս:

Այս ամենը Վանանդեցին փորձում է փողի արժեքի չափման հիմնական միավորի հետ դնել համեմատության մեջ՝ տալով «Ոսկւոյ եւ արծաթի քաշն 'ի Ֆրանկստան»: Պետք է նշել, որ Ֆրանկստան ասելով, այն ժամանակ հասկանում էին ամբողջ Եվրոպան:

«Յօլլանդայ մին մարքն 8 ունցայ է': Մին ունցէն 20 էնգլս է', մին էնգլսն 32 աս է': Դարձեալ՝ մին զուտ ոսկւոյ մարքն 24 դիրաթ է': Մին դիրթն 12 գրամ է': Հռօմայ մէկ մարքն 8 ունցայ է', մէկ ունցէն՝ 8 դրիամ, մէկ դրիամն 3 ըսկրի'պուլ, մէկ ըսկրիպուլն՝ 2 դանկ, մէկ դանկն՝ 3 դիրաթ, մէկ դիրաթն՝ 4 գրամ: Յերկրին Ֆրանցայու մէկ մարքն 8 ունց է', մէկ ունցէն 8 գրօս է', մէկ գրօսն՝ 3 պէնիմգ, մէկ պէնիմգն՝ 24 գրամ»¹⁴: Այստեղ ևս Վանանդեցին չի զլանում և ոսկին ու արծաթը կրկին համամեատության մեջ է դնում, այս անգամ պղնձի, երկաթի, արճճի, դիպակի և կլայկի հետ: Սակայն այս գլխում նա կարևոր է համարում «Հնդուստան լեղակի լիտրն աքբարի դիտր է': Մէկ աքբարի դիտրն 40 սեր է': Մէկ սերն 30 փեսաբար է': Մէկ փեսաբար 4 մսխալ ու կէս է': Լինի մէկ աքբարի դիտրն 5400 մսխալ»¹⁵: Վերոնշյալը թույլ է տալիս պատկերացում կազմել այն կապերի մասին և այդ կապերը հաստատող վաճառականների իմացությունների մասին:

¹³ Ղ. Վանանդեցի, Յադագս այլ եւ այլ լտրից՝ եւ քաշից:

¹⁴ Ղ. Վանանդեցի Ոսկւոյ եւ արծաթի քաշն 'ի Ֆրանկստան:

¹⁵ Նույն տեղում:

«Յաղագս զանազան Չափոց եւ Թւոց» գլխում Վանանդեցին անդրադառնում է չափի և կշռի տարբեր միավորներին՝ ծանոթացնելով դրանց իր եղբայր վաճառականին աշխարհում տիրող չափերի և միավորների միջազգային միավորներին. «1 գազն 16 բահր է՝ 1 բահրն 2 գիրահ կամ գրէհ է՝ Համբօրգ՝ 112 գազ եւ կէս, Տանձկայ՝ 122, Նարվայ՝ 125 արշուն, Կօլօնիայ՝ 120, 'ի Լօնդրայ՝ 60 գազ, եւս՝ 75, 49, 61: 'ի Սիվիլեայ՝ 83 վարայ եւ 1 թուլթ, 'ի Լիզբօն՝ 62 վարայ, 'ի Վենէտիկ՝ 101 բրաչ եւ 2 թուլթ, 'ի Հռօմ՝ 33 կանայ, Ղըպրուզ՝ 124 գազ, Բուրսայ՝ 114, Ըստամպօլ՝ 113, Հալապ՝ 108»¹⁶: Ապա, վերջակետ դնելով այս գլխին, Վանանդեցին գրում է. «Գիտեա՛ եւս՝ էլ, վարա, բրաչա, կաննա, արշին, գազ՝ մի եւ նոյն խօսք է»¹⁷:

Վանանդեցու աշխատության կարևորագույն մաս է կազմում «Պատմութիւն եւ խօսք Վաճառականութեան»-ը: Առաջինը, ինչին նա անդրադառնում է. «Ի Հնդուստան ինչ խրիդ որ լինի՝ հարիւրին երեք ու կէս ուշուրն այ, իւր քուլլի խարջովն՝ հարիւրին հինգ դուս կելնի»¹⁸: Սրան հաջորդում է մի ամբողջ պարբերություն, որտեղ նա չափազանց մանրամասնորեն նկարագրում է, թե որ ապրանքն ինչպես է ծախվում, ինչ դրամով, ինչքանով: Նա բացառիկ մանրամասնությամբ է գրում անգամ ճոթի մասին. «Ինչ ճոթ, որ հակի տակի կապած լինի՝ քուռով կու ծախվի: ճոթի քուռին 20 հատ է՛, ամա հայելուն, գրդլուին, քրիստալլին, արճճով ուլունքի քուռին 21 է՛: Ինչ ճոթ, որ հակի տակի կապած չըլինի՝ թօփով կու ծախվի: Թալաթինն կամ բուլղարն ջօռով կու խօսին՝ 2 հատն 1 ջօռ է»¹⁹: Վանանդեցու այս մոտեցումը թույլ է տալիս հասկանալու, թե նա ինչ պատրաստականությամբ և պարտավորվածությամբ է գրել իր ձեռնարկը՝ անդրադառնալով առաջին հայացքից, թվում է, թե ընդհանրապես ուշադրության կարիք չունեցող մի խնդրին, ինչպիսին էր ճոթի՝ հակի տակից կապված կամ կապված չլինելու փաստը:

¹⁶ Ղ. Վանանդեցի, Յաղագս զանազան Չափոց եւ Թւոց:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Ղ. Վանանդեցի, Պատմութիւն եւ խօսք Վաճառականութեան:

¹⁹ Նույն տեղում:

Վանադնեցին ձեռնարկում նաև նշում է փողի փոխարեն ապրանքի համար նախատեսված հարկը ապրանքով վճարելու կարգն ու չափը, և թե դրսից բերած ոսկին ինչ կարժենա. «Այս ապրիշումի գօմրուկն թե փող ունիս՝ փող կու տաս, թե չէ՝ քսանէն մին ապրանք կու տաս: Երբ դառնաս 'ի Մարդամու՝ թե դուրս ոսկի, արծաթ ունիս՝ արծաթի մին ֆունքն 14 մարչիլ կու հսաբեն: Մարչիլն՝ 15 դիան գօմրուկ: Դուրս ոսկու մին ոսկին 1000 դիան հսաբեն՝ 30 դիան գօմրուկ, նոյնպէս եւ այլ ոսկին»: Վաճառականի համար կարևոր տեղեկություն և գիտելիք է նաև այն, թե որ ապրանքը ինչով է վաճառվում. «Դանթարով կու ծախվի բալնոմն, բուրդն, բամբակն, բամբակե մանածն, գխտորն, լուղն, արճիճն, կլայեկն, չալիկն, բաղամն եւ այլ այսպիսի ապրանք»: Ապա Վանանդեցին ավելացնում է, թե որ ապրանքը որ երկրում ինչպես և ինչ գնով է վաճառվում. «Վենետիկու ալիշվէրիշն Լիգօրնու պէս այ: Ապրիշումի ահվալն այս է՝ դադիմի սովորութիւն է՝ կապած. քնար ապրիշումն լիտրէն 48 դրուշէթ՝ որ է՝ 2 կօռէնթ դուկատ: Թէ թանկ է՝ քնար ապրիշումն՝ դարեն փոքր այ, թե աժան է՝՝ դարեն շատ է»²⁰:

Այն ժամանակահատվածը, որում ապրում էր Վանանդեցին և որտեղ տպագրվել էր նրա ձեռնարկը, համաշխարհային առևտրական հարաբերություններում հսկայական դեր ունեին հոլանդացիները: Քանի որ Ամստերդամն այն ժամանակ համարվում էր վաճառականության և առևտրականության խոշորագույն կենտրոն, ապա Վանանդեցին հատ-հատ նշում է, թե որ ապրանքը որտեղից է ներմուծվում, ինչ գնով, ինչ արժեք այն արտահանող երկրում, ինչ արժեք ուներ վաճառքի պահին, ինչպես նաև դրա գինը վաճառաչահ այլ երկրներում²¹:

Վանանդեցին նաև տալիս է մի քաղաքից մյուս քաղաք ճանապարհորդելու համար պահանջվող ժամանակն ու անհրաժեշտ վճարը, ինչպես նաև հիշատակում է յուրաքանչյուր երկրի լեզուն: Նա այդպիսով մի կողմից փաստում էր, որ հայ վաճառականները քիչ թե շատ տիրապետում էին այդ լեզուներից շատերին, իսկ

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

մյուս կողմից կարևորում էր վաճառականի համար լեզուների իմացությունը, որը նրան ապահովում էր և հաջողություն, և թույլ էր տալիս մրցակցության մեջ մտնել այլ վաճառականների հետ՝ ունենալով առավելություն: «Ի Ֆրանկստան երեք գլխաւոր լեզու կու խօսին՝ լաթինի, թելտօնի կամ դօչի եւ ըսկլաւօնի», - թվելով Եվրոպայում իշխող լեզվախմբերը, այնուհետև Վանանդեցին թվում է նաև յուրաքայլոր լեզվախմբում ընդգրկված լեզուները՝ «Լաթինի լեզուէն փէյդա ելաւ Ֆրանցիզի, Իտալիանի, Սպանիօլի եւ Փօթթուգէզի լեզուն»²²:

Վանանդեցին իր ձեռնարկի մեջ հանդես է գալիս նաև որպես ազգագրագետ, կատարելով որոշակի եզրահանգումներ: Այսպես նա ամենից առաջ անդրադառնում է քաղաքավարությանը՝ «Ազգն ֆրանցիզաց քաղաքավարու թուականութեամբ է՝ թավազացի, ալլեմանն՝ բարեկան, իտալիանն՝ ռաշիդ, սպանիօլն՝ փքալի, ինգլիզն՝ հպարտ»: Երկրորդը, որ նա անդրադառնում է՝ տվյալ ազգի տարազն է. «Զգեստուք՝ փրանցիզն է՝ փոփոխական, ալլեմանն՝ հետեւօղ, իտալիանն՝ խեղճ, սպանիօլն՝ փառամոլ, ինգլիզն՝ պսպղուն»: Ապա հաջորդում է կերակրի նկարագրությունը և խորհրդի ու ազգային մենթալիտետի նկարագրությունը. «Խորհրդով եւ մասլահաթով ֆրանցիզն է՝ հապճեպ եւ վռազ, ալլեմանն՝ ծանր, իտալիանն՝ բարակ, սպանիօլն՝ զգոյշ, ինգլիզն՝ վստահ: Ալլեմանն է՝ արջ, ֆրանցիզն՝ արծիւ, իտալիանն՝ աղուես, սպանիօլն՝ փիլ, ինգլիզն՝ առիւծ»²³:

Հաջորդ տեղեկությունը, որի վրա կանգ է առնում Վանանդեցին, տվյալ երկրի սահմանների նկարագրությունն ու թագավորանիստ քաղաքների թվարկումն է: Ապա նա թվում է կրոնները (քրիստոնեություն, մահմեդականություն, հեթանոսություն և հուդայականություն) ու իրենց ճյուղերը:

Վանանդեցին իր ձեռնարկի մյուս գլուխը նվիրում է, ինչպես ինքն է գրում՝ «Յաղագս մղոնաչափութեան»: Այստեղ նա թվարկում է Եվրոպայի գրեթե բոլոր կարևոր առևտրային ճանապարհ-

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

ները, վաճառաշահ կենտրոններն ու մի երկրից մյուս երկիր գնալու ուղիները²⁴:

Վանանդեցին փորձում է այս ձեռնարկն իր ձեռքը նոր վերցնող վաճառականին սովորեցնել համման, գումարման, բազմապատկման և բաժանման գործողությունները. «Հիմն եւ այբուբեն բոլոր ռաղամին է՝ չորս տեսակ եւ 4 դուռն համարողական արհեստին, այսինքն՝ բարդելն, դուրս հանելն, բազմացնելն եւ բաժանելն: Էստից աւելի էլ դուռն չկայ՝ թէ՛ սաղ թվի եւ թէ՛ կտոր թվի դուռն լինի: Ինչպէս հայոց բովանդակ գրեանքն 38 այբուբենի գրովն հասիլ ելան եւ օրըստօրէ կու գրվին, այնպէս որքան հսաբ, ռաղամ եւ համարելոյ բան կայ աշխարհիս վերայ, ամէնն վերոյ գրեալ չորս դներովն կու շինվի՝ թէ՛ վաճառականութեան ռաղամն, թէ՛ զինուորութեան եւ թէ՛ աստեղաբաշխութեան»: Նորակոչ վաճառականի կամ արդեն կայացածի համար Վանանդեցին մտածում է զանազան վարժություններ՝ վերոնշյալ գործողությունները հասու և ընկալելի դարձնելու համար, գործօրինակ²⁵:

Ավարտելով իր ձեռնարկը՝ Վանանդեցին հարկ է համարում ևս մեկ անգամ կարևորել. «Զի 'ի խնդրոյ եւ ծախսիւք իւրով տպեցաւ այս ժողովածու փոքրիկ գրքուկս ձեռամբ տրուալ Ղուկասու Դպրի Վանանդեցոյ 'ի յ'օգուտ մերազնեայ Բանասէր վաճառական Եղբարց, որք սիրեն եւ կամին իմանալ զանազան քաշս, դրամս եւ զայլինչ, որ վաճառականութեան հետեւի՝ թէ 'ի Ֆրանկստան, թէ 'ի Յնդուստան, թէ յ'Աջամստան եւ թէ Յոռմաստան»²⁶:

Ամփոփելով կարևորեմք. Վանանդեցին իր առջև խնդիր ուներ գրելու ձեռնարկ և նա այդպես էլ վարվում է՝ վաճառական եղբայրությամբ տալով բոլոր անհրաժեշտ գիտելիքներն այն երկրների վերաբերյալ, որոնց հետ այն կարող էր որևէ տեսակ կապեր հաստատել, ինչպես նաև իրեն ժամանակակից շուկայի առաջարկն ու պահանջարկը: Այս ամենն նրան դարձնում էր առավել մրցունակ օտարազգի վաճառականների նկատմամբ: Հայ վաճառականների

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Ղ. Վանանդեցի, Յիշատակարան:

եղբայրությունն այս տեսակ ձեռնարկների միջոցով շարունակում էր ակտիվորեն մասնակցել Մետաքսի ճանապարհով իրականացվող առևտրին:

P. ТМОЯН

**“СОКРОВИЩЕ МЕР, ВЕСОВ И ДЕНЕГ ВСЕГО МИРА”
ГУКАСА ВАНАНДЕЦИ – ПОСОБИЕ ДЛЯ ВОСПИТАНИЯ
НОВОГО ПОКОЛЕНИЯ АРМЯНСКОГО КУПЕЧЕСТВА**

R. ТМОЯН

**THE WORK OF GHUKAS VANANDETSI "TREASURE
OF MEASURE, WEIGHT, NUMBER, AND THE MONEY OF
THE WHOLE WORLD"- MANUAL FOR EDUCATION OF
THE NEW GENERATION OF THE ARMENIAN
MERCHANT CLASS**

**ՀՆԴԿԱՅԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԴԵՐՈՒՄ
(XVI–XVIII ԴԱՐԵՐ)**

Հին և միջին դարերում Ջուղան կարևոր նշանակություն է ունեցել Հայոց աշխարհի առևտրա-տնտեսական և մշակութային կյանքում: Հետագայում Նոր Ջուղան (Սպահանի մերձակայքում) դառնում է հայ առևտրական կապիտալի խոշոր կենտրոններից մեկը¹:

Հաստատելով առևտրական համայնքներ եվրոպական և ասիական գլխավոր քաղաքներում, հայ վաճառականները միջազգային բանուկ ուղիների վրա ստեղծում էին առևտրական հանգուցակետեր²: Հայ վաճառականները հաջողությամբ ամրանում էին ինչպես ցամաքային առևտրական մայրուղիների, այնպես էլ ծովային առևտրի մեջ՝ ներգրավվելով Արևելք-Արևմուտք միջազգային առևտրի ոլորտներում³:

Ջուղայեցի վաճառականության առավել ձգողական ուղղությունները երկուսն էին, դեպի հարավ՝ Հնդկաստանը և դեպի հյուսիս՝ Ռուսաստանը⁴: Դեպի Հնդկաստան ցամաքային ճանապարհով հայ վաճառականությունը անցնում էր Պարսկաստանի, Աֆղանստանի և Տիբեթի միջով մինչև Բենարաս և այստեղից էլ տարածվում դեպի գլխավոր առևտրական կենտրոններ⁵: Իսկ ծովային առևտրի համար հայ վաճառականությունը օգտագործում էր Պարսից ծոցի բերանում գտնվող Հորմուզ կղզին իրենց տարանցիկ

¹ Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 80:

² Vahe Baladouni, Armenian merchants of the seventeenth and early eighteenth centuries: English East Indian company sources, Philadelphia, 1998, p. XVII.

³ History of Armenians in India, chp. 3, t. 1 www.menq.am/.../menu_ind_rel.htm

⁴ Լեո, Խոջայական կապիտալ, էջ 82–83:

⁵ Basil Anni, Armenian settlements in India. Kolkata, 1969, p. 2.

առևտրի համար՝ Գյուջարաթի արևելյան ափին գտնվող Քամբեյի, Դիոլի և ավելի հարավ Գոայի հետ⁶:

Հաստատվելով Սպահանի մոտ հայ վաճառականությունը մոտենում է Հնդկաստանի սահմաններին: Հայ վաճառականների խորհրդով է, որ Շահ Աբբասը իր թագավորության վերջին տարիներին անգլիական Արևելա-Հնդկական ընկերության հետ դաշնակցած և նրանց օգնությամբ պորտուգալացիներից գրավում է Հորմուզ նեղուցի մոտ գտնվող նավահանգիստը, որին տալիս է Բենդեր Աբբաս անունը: Այդ ճանապարհը հարկավոր էր հայ վաճառականներին Հնդկաստանի հետ առևտուր զարգացնելու համար⁷:

Սկսած 16-րդ դարից մինչև եվրոպացի վաճառականների ներթափանցումը Հնդկաստան հայ վաճառականությունը հաստատվում է Հնդկաստանի հիմնական առևտրական կենտրոններում: Հետագա դարերում այդ հոսքը ավելի մեծ չափերի է հասնում: Սակայն հայ վաճառականները այստեղ կանգ չեն առնում և հետագայում անցնում են Հնդկական օվկիանոսի կղզիները՝ ճավա, Սումատրա, Ֆիլիպինյան կղզիներ, մանավանդ Մանիլա քաղաքը և Զինաստանի ծովափ:

Հայ վաճառականների համար շահութաբեր առևտուր էր ակնավաճառությունը: Նրանք մեծ շահույթ էին ստանում թանկարժեք քարերի վաճառքից, իսկ բազմատեսակ թանկարժեք քարերի կենտրոններից էր Հնդկաստանը: Ակնավաճառությունը կամ գոհարավաճառությունը այնքան լուրջ նշանակություն ստացած զբաղմունք էր, որ նույնիսկ առաջին վաճառական գրականությունը, որ կազմվել է հայերի կողմից՝ ակների և նրանց հատկությունների մասին է (այս աշխատությունը տեղ է գտել Առաքել Դավրիժեցու «Պատմության» մեջ)⁸:

Հայ վաճառականները Հնդկաստանի և Արևմուտքի միջև առևտրի գլխավոր միջնորդներն էին և մեծ պահանջարկ ունեցող հնդկական ապրանքներով ողողում էին եվրոպական շուկաները: Հայերը առաջին վաճառականներն էին, որ ներգրավվել էին Հնդ-

⁶ Julfa v. Armenians in India, www.iranica.com/.../ot_julfa_v_20090821.html

⁷ Լեո, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 5, Երևան 1986, էջ 194:

⁸ Լեո, Խոջայական կապիտալ, էջ 68:

կաստանի ամենաշահութաբեր՝ համեմունքների, բեհեզի և թանկարժեք քարերի առևտրի մեջ⁹:

Հնդկաստանում ջուղայեցիների առևտրական գործունեության մասին Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի արխիվում պահպանվել են մեծաքանակ գրագրություններ, բիզնես գործարքների հետ կապված փաստաթղթեր, նամակներ, կտակներ և այլն: Այս արխիվում է պահպանվել Կոստանդ Ջուղայեցու կողմից կազմված առևտրական դասագիրքը, որ ամբողջությամբ նվիրված է Հնդկաստանին: Կոստանդ Ջուղայեցին Հնդկաստանի տնտեսական և առևտրական կյանքի փորձագետ էր և դասավանդել է Նոր Ջուղայում գործող վաճառականների երեխաների համար նախատեսված դպրոցում¹⁰: Հեղինակն այդ դասագրքում տեղեկացնում է հարյուրավոր ապրանքների գների մասին, բերում է թանկարժեք քարերի ավելի քան 20 ցուցակ, ըստ իրենց կշիռների, գների և նրանց համապատասխանությունը այդ ժամանակվա Հնդկաստանում շրջանառվող արժույթների հետ: Կոստանդ Ջուղայեցու դասագիրքը շատ արժեքավոր սկզբնաղբյուր է 17–18-րդ դարերի Հնդկաստանի տնտեսական և առևտրական կյանքը ուսումնասիրելու համար¹¹:

Հեռավոր տարածությունների վրա առևտուր կազմակերպելու համար, ըստ Ռենե Բարենցե IV-ի, անհրաժեշտ է երկու գործոն: Առաջինը զարգացած ինֆորմացիոն համակարգի առկայությունը, որ ջուղայեցի հայ վաճառականները իրենց փոստային համակարգի շնորհիվ ստեղծել էին շատ վաղուց և երկրորդ գործոնը՝ առևտրի ծավալման ընթացքում հյուրընկալ երկրի պետական կառույցների վրա հենվելն էր, որ հնարավորություն էր տալիս ստանալ պետության հովանավորությունը և պաշտպանել հյուրընկալ երկրի առևտրական շահերը այլ երկրներում: Այս գործելակերպը հնարավոր է դառնում խաղաղ իրականացված առևտրի և հյուրընկալ

⁹ Anni Basil, *Armenian settlements in India*, p. 2.

¹⁰ Տեր-Յովնանեանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայի, հ. 1, հ. 2, Նոր Ջուղա, 1880, 1881:

¹¹ *History of Armenians in India*, t. 1, ch. 3.

երկրին անընդհատ տրամադրվող ֆինանսական օգուտների շնորհիվ¹²:

Յնդկաստանի շատ մասերում հայ վաճառականները իրենց պարկեշտության և բազմաթիվ այլ առաքինությունների շնորհիվ առևտրական գերազանցության են հասնում: Նրանք մտնում էին բնիկ ազգաբնակչության մեջ, մոտենում տեղական կիսանկախ կամ անկախ իշխաններին (ռաջաներին) և բարձր պաշտոնյաներին (նավաբներին), իրենց տակտով ու ազնվությամբ, իրենց համբերատարությամբ և բազմամյա ամխոնջ աշխատանքով ձեռք էին բերում հավատ, վստահություն և անընդհատ ընդլայնում իրենց առևտրական շրջանառությունը: Իրենց եռանդուն գործունեությամբ հայ վաճառականները այնքան կարևոր դիրք են գրավում Յնդկաստանի առևտրի մեջ, որ երկար ժամանակ նրանք համարվում էին այդ առևտրի գլխավոր տերերը, թեև նույն Յնդկաստանում ավելի մեծ չափերով և ավելի լուրջ կազմակերպվածությամբ գործում էին եվրոպական մի շարք ազգերի ներկայացուցիչներ:

Իսպանիան համարյա արգելում էր օտարների մուտքը Ֆիլիպինյան կղզիներ, բայց հայերը մտնում էին: Չինաստանում անգամ, որ այնքան դժվարություններ և արգելքներ կային օտարների նկատմամբ, հայ վաճառականների ներկայությունը այն աստիճան սովորական երևույթ էր, որ ճիզվիտ քարոզիչները այդ վաճառականների պես էին հազնվում, որպեսզի կարողանան ազատ մուտք և երթևեկություն ունենալ երկրում¹³:

Հայ վաճառականները շատ հայտնի էին Յնդկաստանում: Նրանց գործունեությունն այնքան արդյունավետ էր, որ Յնդկաստանին տիրապետած մողոլ կայսրերը հովանավորել և բազում արտոնություններ են շնորհել նրանց:

Հայերը հատուկ հովանավորության են արժանացել Մեծ Մոնղոլի կայսրության հզոր արքաներից մեկի՝ Ջալալուդդին Աբբասի կողմից (1556–1605 թթ.): Հայր Սոմսերատը հաղորդում է, որ նույ-

¹² S. Aslanian. Trade Diaspora versus Colonial State: Armenian Merchants, the English East India Company, and the High Court of Admiralty in London, 1748–1752, - A Journal of Transnational Studies, Volume 13, Number 1, Spring 2004, pp. 37–100.

¹³ Լեո, երկերի ժողովածու 10 հատորով, հ. 5, էջ 507–508:

միսկ կայսր Աբբարը խաբվել էր տարածված, բայց սխալ կարծիքից, որ Ասիայի բոլոր քրիստոնյաները հայ են¹⁴: «Նա քաջատեղյակ էր առևտրի բնագավառում հայերի ազնվությանն ու բանիմացությանը,– գրում է Մ. Սեթը,– ուզում էր նրանց միջոցով զարգացնել իր երկրի առևտուրը»¹⁵: Հովանավորելով հայ վաճառականներին՝ նա ձգտում էր դիմակայել Հնդկաստանի ծովափնյա քաղաքներում հաստատվող եվրոպական հզոր ընկերություններին, որոնք վտանգավոր մրցակիցներ էին առևտրում:

Աբբարը հայերին սիրաշահելու նպատակով մայրաքաղաք Ագրայում նրանց հող է հատկացնում և նպաստավոր ամեն պայման ստեղծում անկաշկանդ գործունեության համար: Նա նույնիսկ Ագրայում հաստատվող հայերի համար պետության ծախսերով 1562 թ. կառուցում է եկեղեցի: Թովմաս Խոջամալյանը գրում է. «Հրամայեաց յետոյ որ ժամ շինեն, Հայոց քահանայ բերել տան, և իւրեանց հայրենի բարեպաշտութեանն հետևեն: Ձայս բան լսելով՝ եկին՝ի Նոր Ջուղայոյ վարդապետ, քահանայ, և շատ տուն հայեր յԱկբարաբադ, զորս շատ պատուով թագաւորին՝ պարգևեաց նոցա հինգ հազար բիզայ գետին յԱկբարաբադ վասն տուն, պարտեզ, այգի և այլ պիտանի տեղեր շինելոյ»¹⁶:

Հայերը Ագրայում ունեցել են իրենց սեփական քարավանսարան, որը լավ հայտնի էր այլազգի վաճառականներին: Քարավանսարայում հայերը քննարկում էին իրենց համայնքի ներքին կյանքին վերաբերող հարցերը և կնքում գործարքներ ու պայմանագրեր իրենց ու եվրոպացիների միջև: Ագրա եկած օտարերկրացիները այստեղ ստանում էին գործնական խորհուրդներ: Հայր Սոնրիկեն իր ճանփորդական ուղեգրության մեջ 1640 թ. գրում է. «Ագրա քաղաք մտնելուն պես ես ճանապարհվեցի հայկական քարավանսարա՝ հարուստ վաճառականների մասին տեղեկություններ ստանալու համար»¹⁷:

¹⁴ History of Armenians in India, t. 1, ch. 3.

¹⁵ Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, ՀՀ ԳԱԱ, 2003, էջ 384:

¹⁶ «Այաս» ծովային հետազոտությունների ակումբ, Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում, Եր., 2011, էջ 143:

¹⁷ History of Armenians in India, t. 1, ch. 3.

Ագրայի հայ համայնքն այնքան մեծ հեղինակություն է ունեցել, որ նրան այցելել են անգամ հնդիկ արքաները: 17-րդ դարի սկզբին Յնդկաստան այցելող ճանապարհորդ Տավերնիեն իր ուղեգրության մեջ նշել է նման մի այցելության մասին Շահ Ջհանի կողմից¹⁸:

Մեծ Մոդոլի մեկ այլ հզոր գահակալ Ահուրեզգեբի (1658–1707 թթ.) արքայական ֆերմանով (հրովարտակ) հայերին իրավունք է տրվել Բենգալիայի մայրաքաղաք Մուրչիդաբադի արվարձան Սայդաբադում հիմնելու իրենց մշտական գաղթօջախը: Այդ գաղթօջախի մասին Յնդկաստանի պատմության գիտակ Բոլթսը, իր "Consideration on Indian affairs" աշխատության մեջ վկայում է հետևյալը. «Հայերը, որոնք միշտ էլ հայտնի են եղել Յնդկաստանում իրականացվող առևտրական գործարքներով, հնուց նշանակալի գաղթօջախ ունեին նաև Բենգալիայում, մասնավորապես Սայդաբադում: Նրանց առևտրի իրավունքը նույնպես հաստատվել էր Մեծ Մոդոլի հրամանով»: Հայերին Ահուրեզգեբը տվել է հում մետաքս և հակով կտոր վաճառելու մենաշնորհ՝ ընդամենը 3 տոկոս առևտրամաքսով: Ահուրեզգեբի հրովարտակով հայերը ստացել են մի շարք այլ արտոնություններ ևս: Յնդկահայերի հոգևոր առաջնորդ Ստեփանոս վարդապետը, կարողացել է Մեծ Մոդոլի հաջորդ կայսրերին հաստատել տալ այդ ֆերմանը, որով Սայդաբադի հայերը 3,5 տոկոս մաքս վճարելով ազատ առևտրի իրավունքներ և մի շարք այլ արտոնություններ էին ստանում: Հայերը Սայդաբադում ունեցել են նաև լեղակենու (հնդիկոնի) արտեր և այն մշակելու համար «գործանոցներ»¹⁹:

Հայերին առանձնաշնորհումներ է տվել նաև Ահուրեզգեբի որդին՝ Բահադուր շահը (1707–1712 թթ.): Նրան այցելած Խաչատուր վարդապետը կարողացել է նրանից ստանալ հետևյալ իրավունքները. 1. Հայոց ազգը ազատ լինի ամեն կողմով, 2. եթե հայ ազգից մեկը մեռնի, ունեցվածքը շարժական թե անշարժ, հայոց ազգի սեփականությունը պիտի դառնա, ուրիշները իշխելու իրավունք չունենան, 3. «Մալ, միրես, խարջի, խարջենն կես ռուփի

¹⁸ Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, էջ 386:

¹⁹ Նույն տեղում, էջ 400–401:

տան, երեք և կես մաքս տան, ինչ զգեստ ուզենան հագնեն, ուր կանենան գնան, ոչ ոք արգելք չլինի»²⁰: Հայտնի է նաև, որ Մադրասում հաստատված հայերը մեծ շուքով ընդունում են Արկոտի նավաբին, և ի նշան շնորհակալության, նրանից ստանում են բավական մեծ առևտրական արտոնություններ: Հայերը, պարտքի տակ չմնալով ծախսում են 30.000 հուն («հունը» կամ «խունը» հավասար է 3-ից 8 ռուպիի) և Մադրասի մոտակայքում Մալման գյուղի սահմանում հոսող Այդար գետի վրա կառուցում բազմակամար մի կամուրջ, որը հայտնի է եղել «Մալմանլոնգյան կամուրջ» անունով²¹: Մադրասում հայերը հեղինակ են և այլ հասարակական կառույցների:

Նոր դարերի ընթացքում եվրոպական առևտրականները ընդլայնում են իրենց առևտրի սահմանները: Նավագնացության և նավերի կատարելագործումը 15-րդ դարում օվկիանոսային նավարկությունը դարձնում են իրական: Հյուսիսային և արևմտյան եվրոպայի ազգերը, որոնք ի տարբերություն իտալական քաղաք-պետությունների քիչ օգուտ ունեին Միջերկրականի՝ Արևելքի հետ առևտրի զարգացումից, սկսում են փնտրել նոր ճանապարհներ դեպի Արևելք: Պորտուգալացի ծովախույզ Վասկո դա Գաման, եվրոպացի ծովախույզներից առաջինն էր, որ հայտնաբերեց Բարեհուսո հրվանդանով դեպի Հնդկաստան տանող ճանապարհը 1498 թ.: 16-րդ դարի վերջում պորտուգալացիները դարձան առաջինը, որ շրջանցելով Աֆրիկան նավարկեցին Հնդկական օվկիանոսով և այս ընդարձակ տարածաշրջանում, մասնավորապես՝ Պարսից ծոցում, Հնդկաստանի արևմտյան ափին, Մալայան թերակղզում և կղզիներում ստեղծեցին հարուստ առևտրական կայսրություն: Մեկ դար կամ ավելի անց, հոլանդական և անգլիական Արևելա-հնդկական ընկերությունները ներխուժեցին այդ ռեգիոն և իշխեցին արևելյան առևտրին: Ավելի ուշ, այնտեղ հայտնվեց Ֆրանսիական Արևելա-հնդկական ընկերությունը: Սրանց կողքին ստեղծվեցին բազմաթիվ մանր Արևելա-հնդկական ընկերություններ, ինչպես Պրուսական, Ռուսական, Իսպանական և Շվեդական, որոնք գոր-

²⁰ «Ազգասեր», Կալկաթա, Ա. հ. 1, N 16, 1845, Բ. N 37, 1846:

²¹ Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, էջ 391–392:

ծեցին այս տարածաշրջանում²²: Եվրոպացիների, մասնավորապես անգլիացիների տիրապետության ազդեցությամբ, Յնդկաստանում զարգանում է ծովային առևտուրը և առաջանում են նոր քաղաքներ և կենտրոններ, ինչպիսիք են Կալկաթան, Չինսուրան, Սայ-իդաբադը, Դաքան, Մադրասը, Մումբայը, Ռանգունը և այլն: Հայերը ներգրավվելով ծովային առևտրի մեջ, հաստատվում են այս կենտրոններում: Հայկական նոր գաղութներ են գոյանում և բարգավաճում: Սիմեոն Երևանցի կաթողիկոսի 1765 թ. կազմված «Ջամբռ»-ի մեջ տեղ գտած Յնդկաստանի հայաբնակ քաղաքների ցանկը համեմատելով Կոստանդ Ջուղայեցու 1702 թ. առևտրական դասագրքում թվարկած քաղաքների հետ, պարզ երևում է, որ կան հայկական բնակավայրերի մասին տեղեկություններ²³:

Հայ վաճառականները հարաբերվել են Յնդկաստան ներթափանցած եվրոպացիների հետ, ապրել և առևտուր արել նրանց գաղութներում, միջնորդել մոդուլ կայսրերի հետ բանակցություններում, համագործակցել և արտոնություններ ստացել նրանցից: Սակայն, լայնածավալ համագործակցություն ունեցել են միայն անգլիական Ընկերության հետ: Նման վարվելակերպի պատճառը Յնդկաստանի ծովային առևտրի համար իրար հետ մրցող երկրների գաղութային քաղաքականության առանձնահատկություններն էին²⁴:

Իսպանացիները Յնդկաստանում շատ քիչ ազդեցություն են ունեցել, հետևաբար հայերը նրաց հետ շատ հազվադեպ են հարաբերվել, այն էլ Յնդկաստանի տարածքից դուրս՝ հեռավոր կղզիներում, որտեղ հայերը հիմնականում բնիկների հետ են առևտուր արել:

Հայ-պորտուգալական հարաբերությունների մասին Աքբարի արքունիքից 1598 թ. գրված մի նամակում հիշատակվում է «քրիստոնեական եղբայրության ու համերաշխ գործունեության մասին

²² Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում, էջ 62–63, Vahe Baladouni, Armenian merchants, p. XXI.

²³ Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, հ. 3, Կահիրե, 1961, էջ 303:

²⁴ Նույն տեղում, էջ 312:

հայ և պորտուգալական կղզիների միջև»։ Պորտուգալական տիրապետությունը կարճ է եղել Յնդկաստանում և, բացի այդ, լինելով ջերմեռանդ կաթոլիկներ, նրանք կրոնական ծավալման գործունեություն են իրականացրել երկրում²⁵։

Պորտուգալացիներին հաջորդած հոլանդացիները, որոնք հաստատվել են Յնդկաստանի ծովափնյա տարածքներում բացառապես առևտուր անելու նպատակով, անխուսափելիորեն հարաբերվել են հայերի հետ։ Յոլանդական տարածքներում հայերը առևտուր անելու և բնակվելու ազատություն են վայելել։ Բենգալիայի առաջին առևտրական կայանում՝ հոլանդացիների հիմնածինսուրայում, հայերը լայնածավալ առևտուր են արել և կարողացել են բարգավաճել։ Մալաքայի, Սումատրայի, ճավայի և Խաղաղ օվկիանոսյան այլ կղզիներում, որոնք հոլանդական տիրապետության տակ մնացին երկար ժամանակ, շատ հայեր հաստատվել և մեծ հարստության տեր են դարձել և մնացել բարգավաճ վիճակում երկար ժամանակ։

ճավայի մայրաքաղաք Բատավիայում կարևոր հայ գաղութի մասին է խոսում 1747 թ. մարտի 31-ին Յոլանդական Արևելա-Յնդկական ընկերության հատուկ հրովարտակը, որով հայերին «ազատ քաղաքացու» արտոնագիր էր տրվում եվրոպացի բնակիչներին հավասար²⁶։ Մասնավորապես, մեծ թիվ են կազմել Յնդկաստանում հոլանդական գլխավոր արտադրության՝ համեմունքների առևտրով հարստացած հայերը²⁷։

Ֆրանսիացիները անգլիացիների նման հայ գործակալների և ազդեցիկ մարդկանց միջոցով բանակցել են մողոլ արքաների հետ և որոշ արտոնություններ ստացել։ Օրինակ, Սուրաթում ֆրանսիական ֆակտորիա հիմնադրելու գործում նշանակալի դեր է կատարել Մարգար Ավանչիցը (Մարգար Ավագ Շինենցը)։ Նա նշանակվել է Յնդկաստանի ֆրանսիական վաճառականության ընդհանուր տնօրեն ֆրանսուա Քարոնի օգնական, ով 1668 թ. ստեղծել է

²⁵ Նույն տեղում, էջ 313։

²⁶ Զ. Տեր Կ. Զորդանանյան, Նետրլանդական Արևելեան Յնդկաստանաց հայ գաղութի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երուսաղեմ, 1937, էջ 15։

²⁷ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, էջ 313–316։

առաջին ֆակտորիան Սուրաթում: 1669 թ. նույն Խոջա Մարգարը, որպես Ֆրանսիական Արևելա-հնդկական ընկերության պատվիրակ, ուղարկվում է Գոլկոնդայի կառավարիչ Աբդուլահ-Քուդաբի շահի արքունիք: Նրա բանակցությունների շնորհիվ ձեռք է բերվում ֆերման, որի համաձայն ֆրանսիական ընկերությանը արտոնություն էր տրվում առևտրով զբաղվել ամբողջ երկրի տարածքում առանց ներմուծման և արտահանման մաքս վճարելու, ինչպես նաև Մուլշիլիփաթամում ֆակտորիա կառուցելու իրավունք և Խոջա Մարգարն էլ նշանակվում է այդ ֆակտորիայի նախագահ²⁸: Մեկ ուրիշ հայ՝ Խոջա Վազեդը, ֆրանսիական գործակալ է դառնում Մուլշիլիփաթամում²⁹:

Ֆրանսիացիները կարողացել են գնահատել հայերին, որ իրագել էին Չնդկաստանի գործերին: Սակայն, նրանք կարճատև տիրապետություն են ունեցել Չնդկաստանում: Նրանց տիրապետության տակ գտնվող քաղաքներում հայերը ևս ունեցել են գաղութներ: Օրինակ Մուլշիլիփաթամում, որ Չնդկաստանի արևելյան եզերքի ամենակարևոր նավահանգիստն էր և ուներ նույն կարևորությունը, ինչ որ ունեցավ Մադրասը: Հայերը հաստատվել են և այլ վայրերում՝ Բոնթիչերի, Չարնենակո, Եհանոն, Սուրաթ և այլն:

Հայ վաճառականության կարևորությունը Չնդկաստանի և, առհասարակ, ասիական առևտրի մեջ գնահատվել է անգլիացիների կողմից, որոնք այդ երկրում իրենց առևտրական հաջող գործունեության երաշխիքներից մեկը համարեցին հայ վաճառականության հետ համագործակցությունը: 17-րդ դարի 50-ական թթ., երբ անգլիացիները նոր էին հաստատվում Բենգալիայում և հաստատվելու համար ուղիներ էին փնտրում, դիմում են հայերի օգնությանը: Թե ինչու՞ նրանք ընտրեցին հայերին, բացատրում են իրենք՝ անգլիացիները. «Անհրաժեշտ է ասել, որ հայերը Դելիի այն հպատակներից էին, որոնց նկատմամբ կառավարության կողմից կարմեծ հարգանք և հովանավորություն: Հայերի նկատմամբ այդ հար-

²⁸ History of Armenians in India t. 2, ch. 3.

²⁹ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, էջ 318:

գանքը գալիս է դեռևս Աքբարի ժամանակներից: Նրանք դրան արժանացել էին ազնվության և անկողմնակալության համար»³⁰:

Հայերի միջնորդությամբ անգլիական ընկերությունը կարողացել է մոտենալ տեղական իշխանություններին: Երբ անգլիացիները 1651 թ. պատվիրակություն են ուղարկում Շահ Ջահանի մոտ, որպեսզի թույլտվություն խնդրեն կառուցելու ֆակտորիա, հայտնի վաճառական Խոջա Իսրայել Սահրադը նշանակվում է պատվիրակության ղեկավարներից մեկը: 1690 թ. Աղա Սահրադի բանակցությունների շնորհիվ, անգլիացիները Մեծ Մողոլից ստանում են Բենգալիայում առևտրական ֆակտորիա հաստատելու իրավունք: Նույն թվականին նրանք հիմնում են Կալկաթան: 1894 թ. Մեսրոպ Սեթը Կալկաթայի տարածքում հայտնաբերում է 1630 թ. հայերեն արձանագրությամբ շիրմաքար, որը որոշ ուսումնասիրողների հիմք է տալիս հայերին համարել Կալկաթայի հիմնադիրները³¹: Այս կապակցությամբ հնագետ պրոֆեսոր Ռ. Վիլսոնը իր «Կալկաթայի հայ հիմնադիրները» հոդվածում իրավամբ նշում է. «Եթե վաղ ժամանակների արձանագրությունները թույլ չեն տալիս մեզ որոշելու, թե արդյոք կար հայկական գաղութ այստեղ մինչև 1630 թ., սակայն դրանք մեզ ցույց են տալիս, որ հայերի միջոցով էր, որ անգլիական գաղութը ապահովեց իր տեղը այս երկրում: Եթե Չարնոքը Կալկաթայի հիմնադիրն է, նրա առանձնաշնորհումների և նախկին երաշխավորության հեղինակն է հայազգի մեծանուն վաճառական Խոջա Իսրայել Սահրադը»³²: 1698 թ. հուլիսին, Ազիմ-Ուշ-Խանի և դարձյալ նույն Խոջա Սահրադի միջև կայացած բանակցությունների արդյունքում, անգլիացիները ձեռք են բերում իրավունք ընդամենը 16,000 ռուփիով վարձակալելու Կալկաթա, Սութանուֆի և Գովինդրուփ գյուղաքաղաքները: 1713 թ. անգլիացիները կրկին դիմում են Խոջա Սահրադին խնդրանքով, որպեսզի նա բանակցություններ վարի անգլիական դեսպանության անունից կայսր Ֆարուխշահի արքունիքում, որ գտնվում էր Դելիում: 1715 թ. անգլիացիները նրան նշանակում են իրենց դեսպանու-

³⁰ Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, 398:

³¹ Նույն տեղում:

³² Basil Anni, Armenian settlements in India. Kolkata, p. 134.

թյան անդամ: Նրա շնորհիվ անգլիացիները ձեռք են բերում այն պատմական ֆերմանը, որով Հնդկաստանում հիմնվում էր անգլիական տիրապետությունը³³:

Բենգալիայի "The New Empire" օրաթերթում (թարգմանված 21 նոյ. 1925 թ.) հայերի մասին գրված է, թե «որքան մեծ և գնահատելի ծառայություն են մատուցել նրանք Անգլիայի առաջին կառավարիչներին իրենց առևտրական հարաբերությունները հաստատելու այս երկրի մեջ»: Անգլիական այս թերթը գրում է, թե «Բազմաթիվ հայեր օտար իշխողների խժոժությունների հետևանքով իրենց տներից փախած հաստատվել էին մի քանի իտալական նավահանգիստներում և եվրոպական գլխավոր քաղաքներում: Նրանց վստահված էր Հնդկաստանի ապրանքների վաճառքը, ում միջոցով այդ ապրանքները շատ հարմար շուկա էին գտնում Եվրոպայում»³⁴:

Անգլիացիները հայերին առաջինը հանդիպել են Սուրաթում, որտեղ նրանք առաջատար վաճառականներն էին: Նրանք զբաղվում էին մեծածավալ և բավական շահավետ արտահանումներով դեպի Եգիպտոս, Լեվանտ և Միջերկրածովյան նավահանգիստներ՝ գլխավորապես Վենետիկ և Լիվոռնո, Արաբական և Պարսկական ծոցերով՝ օգտագործելով արաբների նավերը... Հայտնի է, որ այդ նավերը հատում էին ընդարձակ Հնդկական օվկիանոսը և այցելում Սումատրա, Ճավա, Ֆիլիպիններ և հասնում մինչև Հիմալայներ: Ապրանքները հայերի կողմից տեղափոխվում էին Պարսից ծոցի նավահանգիստները, այնտեղից ցամաքային ճանապարհով Պարսկաստանով, Հայաստանով և Փոքր Ասիայով ուղարկվում էին Եգիպտոս և Եվրոպա...³⁵:

Սկզբնական շրջանում Հնդկաստանում հաստատվելու համար եվրոպացիները դիմել են ճանապարհներին քաջատեղյակ հայ վաճառականներին. «Հայերը, – գրում է Ղ. Ինճիճյանը, – երևելի նավապետներ եղած են... որոնք մեծ նավեր բանեցնելով՝ վարպետ եղան Պենակալիայի առջևին ծոցեն մեջ ու Գանկես կամ Կըն-

³³ History of Armenians in India, t. 2, ch. 3.

³⁴ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ. 3, էջ 350:

³⁵ A. Mesrob J. Seth, History of the Armenians in India, Kolkata, I, 1937, pp. 227–228.

կա գետին մեջ: Երբ Եվրոպացիք հասան Յնդկաստան, այն ատեն հայ նավապետները անոնց առաջնորդ եղան և ճամփաներ կցուցեին գետին մեջ նավարկելու...»³⁶:

Անգլիական Արևելա-հնդկական ընկերության գլխավոր խնդիրն է դառնում իրենց վերահսկողության տակ պահել հայկական առևտուրը և տեղափոխել նրանց իրենց ուղիների վրա: Ընկերությունը հատուկ շրջաբերականով ծանուցել է. «Եթե հայ վաճառականները ընկերությունից ստանան արտոնագիր՝ շրջելու իրենց առևտրի հնագույն ուղին դեպի Եվրոպա և այնտեղից դուրս անգլիական ձևով, դա կբարելավի Նորին մեծության մաքսային մուտքերը և կնպաստի անգլիական նավագնացության աճին»³⁷:

17-րդ դարի երկրորդ կեսին Յնդկաստանը կառավարում էր հզոր միապետ Ահուրեզգեբը, որ նվաճումներ էր անում և ընդլայնում Մողոլական թագավորությունը: Նա շատ մոլեռանդ մահմեդական էր և մտածում էր մահմեդականությունը տարածելու և տիրապետող կրոն դարձնելու մասին: 1686 թ. Եվրոպացի քրիստոնյա վաճառականներին, մանավանդ անգլիացիներին, սկսեցին նեղել Բենգալիայում: Ահուրեզգեբի ուղարկած բանակը ջարդեց անգլիացիներին և դուրս վճռեց նրանց Բենգալիայից: Բոլոր անգլիական զաղութները թե՛ արևելյան և թե՛ արևմտյան ծովափներում, կողոպտվեցին: Յնդկաստանը համարյա թե բոլորովին կորած էր անգլիական վաճառականների համար: Նրանք, այլ ելք չգտնելով, ստիպված եղան խոնարհվել ահարկու թագավորի առաջ և իրենց հնազանդությունը հայտնել: Այդպես միայն նրանք կարողացան մնալ Յնդկաստանում: Իրենց այս տխուր ժամանակներում էր, որ նրանք դաշինք կնքեցին հայ վաճառականության հետ³⁸:

Անգլիացիները տեսան, որ միակ առավելությունը, որ ունեն հայերի նկատմամբ Յնդկաստանում՝ ծովային փոխադրումներն են: Հայ վաճառականությունը չուներ սեփական նավահանգիստներ, պահեստներ և փոխադրամիջոցներ: Հայերին ևս այս համագործակցությունը անհրաժեշտ էր: Նախ, ծովային առևտրի զար-

³⁶ Ղ. Ինժիճյան, Դարապատում (1755–1757), Վենետիկ, 1824, էջ 246:

³⁷ A. Mesrob J. Seth, History of the Armenians in India, Kolkata, I, 1937, p. 234.

³⁸ Լեո, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 515–516:

գացումը մեծապես վնասել էր Յնդկաստանի ապրանքները ցամաքային ճանապարհով Միջերկրականի նավահանգիստներ և այլուր իրականացվող փոխադրումներին: Բացի այդ ցամաքային փոխադրումները դժվարացել էին Պարսկաստանի ներքին խռովությունների և գահակալական կռիվների, զանազան արշավանքների պատճառով, որոնք ցամաքային ճանապարհները անապահով էին դարձրել³⁹:

Խոսելով առևտրական հասարակությունների մասին, Ֆրեդերիկ Մորոն Ասիայի հայ վաճառականների առանձնահատկություններից է համարում այն, որ «նրանք փորձել են առևտրի բոլոր ձևերը՝ քարավանային առևտուր, շրջիկ առևտուր, լայնամասշտաբ մանրածախ և մեծամասշտաբ առևտուր և նույնիսկ մուտք գործեցին ծովային առևտուր, երբ գիտակցեցին, որ դա միակ ճանապարհն էր պայքարելու եվրոպական մրցակցության դեմ»⁴⁰: 1688 թ. հունիսի 22-ին, Լոնդոնում անգլիական Արևելա-հնդկական ընկերության վարչությունը մի դաշնագիր կնքեց հայ վաճառականների ներկայացուցիչ ջուղայեցի Խոջա Փանոս Քալանթարի հետ: Այդ դաշնակցությունը շատ լայն իրավունքներ էր տալիս հայերին, դրանով որոշում Յնդկաստանի հայերի ապագա վիճակը: Համաձայն պայմանագրի՝

1. Հայերը ստանում են այն բոլոր իրավունքները, որ ունեն անգլիացի վաճառականները:

2. Նրանք այս պահից սկսած ունեն ազատություն ցանկացած ժամանակ անվճար երթևեկել դեպի Յնդկաստան և Յնդկաստանից այլ երկրներ՝ ընկերության ցանկացած նավերով և նույն առավելություններով, ինչ ունեն ցանկացած ազատ մարդ:

3. Նրանց ազատություն էր տրվում բնակվել ընկերության ցանկացած քաղաքում, ավանում, բերդում, ուր որ կամենան: Գնել և վաճառել կալվածքներ և տներ, ընտրվել քաղաքական պաշտոնների համար, հավատի և դավանանքի կատարյալ ազատություն վայելել: Եվ եթե ընկերության որևէ նահանգապետ կամենա խանգարել այս իրավունքների և արտոնությունների իրականացմանը,

³⁹ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ. 3, էջ 305:

⁴⁰ Vahe Baladouni, Armenian merchants, pp. XXV–XXVI.

այդպիսին չպետք է պահվի ծառայության մեջ: Հարկեր կամ տուրքեր հայերը պետք է նույնքան տան, որքան բնիկ անգլիացիները:

4. Նրանք կարող են ճանապարհորդել ընկերության ցանկացած կայանից Հնդկաստանի ցանկացած նավահանգիստ կամ բնակավայր, հարավային ծովերով դեպի Չինաստան և Մանիլա՝ ընկերության նավերով և առևտուր անել Չինաստանի և Մանիլայի կամ ընկերության պայմանագրի սահմանների մեջ գտնվող ուրիշ նավահանգիստներում և վայրերում անգլիացիների հետ հավասար պայմաններով⁴¹: Այնուհետև երկար և մանրամասն հիշատակվում է, թե հայերը ինչ ապրանքների համար ինչ մաքս և նավավարձ պիտի տան: Միայն այդ ապրանքների երկար ցուցակը ցույց է տալիս, թե որքան բազմակողմանի էր հայ առևտրականների գործունեությունը Հնդկաստանում, Հնդկական կղզիներում և Չինաստանում: Մի ուրիշ լրացուցիչ փաստաթղթով՝ ստորագրված նույն օրը, ընկերությունը համձն էր առնում պարտականություններ, որոնց համաձայն, եթե «ընկերությանը պատկանող որևէ քաղաքում կամ ավանում ապրող հայերի թիվը հասնի 40-ի, ապա այդտեղ ընկերությունը պարտավորվում է նրանց հող տալ եկեղեցի կառուցելու համար: Ընկերությունը պարտավորվում էր նաև, կառուցել եկեղեցիներ հայերի համար փայտից, իրավունք տալով նրանց, եթե կամենան, փայտաշենի տեղը կառուցեն քարե եկեղեցիներ: Ընկերությունը նաև իր միջոցներից յոթ տարվա ընթացքում տարեկան յոթ ֆունտ ստերլինգ աշխատավարձ պարտավորվում էր տալ այն քահանային, որին հայերը կընտրեին իրենց եկեղեցուն ծառայելու համար»⁴²:

Հնդկաստանում հաստատված ջուդայահայ վաճառականությունը, որ կապված էր Նոր Զուղայի հետ ոչ միայն ընտանեկան կապերով, այլ նաև առևտրական շահերով, երկար ժամանակ ենթարկվում էր Նոր Զուղայի վաճառական ժողովի իրավասությանը, պատասխանատու էր նրա առաջ և դիմում էր իր շահերը պաշտպանելու համար: Սակայն, 17-րդ դարում ներգրավվելով անգլիա-

⁴¹ A. Mesrob J. Seth, History of the Armenians in India, Kolkata, I, 1937, pp. 234–235, II. 1895, p. 49. «Ազգասեր», Կալկաթա, Բ. N 37, 1846, էջ 132–133:

⁴² Լեո, երկերի ժողովածու, հ. 5, էջ 512:

կան առևտրի մեջ, նախկին ցամաքագնաց խոջան վերածվում է օվկիանոսների վրա առևտուր անող վաճառականի և 18-րդ դարում հայ առևտրական կապիտալի կենտրոնը Նոր Զուլայից տեղափոխվում է Յնդկաստան:

Արևելա-հնդկական ընկերության փաստաթղթերից երևում է, որ հայ նավավարներն ու լոցմաններն աշխատել են ոչ միայն Յնդկական օվկիանոսի ջրերում, այլ նաև այն նավերի վրա, որոնք լողում էին Սուրաթ-Լոնդոն ծովային ուղիով: Ճանապարհներին քաջատեղյակ հայ վաճառականները երբեմն փոխարինել են նավապետներին և լոցմաններին նրանց բացակայության ժամանակ:

Շերերը իր՝ «Անգլիացի վաճառականների պատմությունը» գրքում հայերի կողմից իրականացվող փոխադրումների մասին գրում է, որ «այդ փոխադրումներից ընկերության շահն ավելանում էր շնորհիվ հայերի վճարած նավային բարձր վարձագնի»⁴³:

Հայ վաճառականները կարճ ժամանակամիջոցում կա՛մ գնում կա՛մ կառուցում են իրենց սեփական նավերը: Այս նավերի նավապետները հայեր էին: Հայ ծովագնացները ստեղծում են նաև իրենց սեփական՝ կարմիր-դեղին-կարմիր եռաշերտ դրոշը, դեղին շերտի վրա Աստծո Գառան պատկերով: Ինչպես իրենց հայրենակից ջուղայեցիների տարազը ցամաքային ճամփորդության ժամանակ, այնպես էլ այս դրոշը ծովագնացության ընթացքում անցաթուղթ էր աշխարհի շատ նավահանգիստներում ազատ ելք ու մուտք անող հնդկահայերի համար: Եվրոպական և ասիական առանձին պետությունների կամ ընկերությունների նավերը, ապահովության և ազատ ելունմուտի համար երբեմն նավարկել են հայկական դրոշի տակ⁴⁴:

17-րդ դարում, Անգլիական Արևելա-հնդկական ընկերությունը Յնդկաստանի և Մանիլայի միջև ծովային առևտուր իրականացնելու համար օգտագործել է հայկական նավերը՝ նրանց դրոշի տակ քողարկելու համար իրենց առևտուրը Ֆիլիպինների հետ, քանի որ նրանց արգելված էր Մանիլայի հետ առևտուր անել, իսկ հայերին ոչ:

⁴³ Շերեր Ջ., Պատմություն Անգլիո վաճառականության, Կ. Պոլիս, 1882, էջ 50–51:

⁴⁴ Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, էջ 399–400:

18-րդ դարի կեսերին տարբեր երկրների առևտրում և Յնդկաստանի ներքին շուկայում Կալկաթայի հայերի առևտրական գործարքներն այնքան մեծ են եղել, որ հնարավորություն են տվել նրանց կառուցելու իրենց նավակայանը՝ պահեստներով և անհրաժեշտ բոլոր շինություններով⁴⁵:

1661 թ. անգլիական ընկերությունը իր առևտրի գլխավոր կենտրոնը Սուրաթից տեղափոխում է Մումբայ: Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի Սուրաթից և այլ վայրերից նոր կենտրոն տեղափոխվեն արևմտյան Յնդկաստանի առևտրում կշիռ ունեցող նավատեր մեծահարուստ հայ վաճառականներ: Ընկերության տարեգրություններից երևում է, որ հրավիրվածների մեջ են եղել նաև Սուրաթի հայերից շատերը: Անգլիացիները հայերին հողամասեր են հատկացնում՝ տներ, պահեստներ և եկեղեցի կառուցելու համար: 1676 թ. Խոջա Մինասը, Խոջա Դիլանը և այլ մեծահարուստ հայեր Սուրաթից տեղափոխվում և մշտական բնակություն են հաստատում Մումբայում՝ աշխուժացնելով բարձրացող հայ գաղթօջախը: Անգլիացիները շահագրգռված էին հայ արհեստավորներով ևս: Լոնդոնում ընկերության ղեկավարությունը առաջարկել էր նաև նոր կառուցվող Մադրասի մի թաղամասը հանձնել հայերին, որոնք կարող էին համոզել իրենց հայրենակից վարպետ արհեստավորներին գալ և բնակություն հաստատել այստեղ: Նույն գրությունով առաջարկվել է հայերին թույլատրել (իրենց հաշվին հողի վարձը վճարելու պայմանով) եկեղեցի կառուցել: Նույնիսկ խորհուրդ է տրվել թաղամասը կոչել նրանց հայրենի Նոր Զուղայի անունով⁴⁶:

Յնդկաստանի տարբեր վայրերից հայերին Մումբայ հրավիրելը նպատակ է ունեցել հայերի միջոցով Բենգալիայից, հատկապես Դուգլիից բերվող ապրանքները Եվրոպա արտահանել Մումբայի վրայով: Անգլիացիները նպատակ են ունեցել նաև հայ վաճառականների միջոցով պարսկական մետաքսը նույնպես Եվրոպա ուղարկել Մումբայով⁴⁷: Ընկերությունը հայերին տվել է նաև մենաշ-

⁴⁵ Նույն տեղում, էջ 398–400:

⁴⁶ Նույն տեղում, էջ 404:

⁴⁷ A. Mesrob J. Seth, History of the Armenians in India, Kolkata, I, 1937, pp. 282–283.

նորի. «Պարսկական մետաքսի ողջ առևտուրը վերցնել իրենց ձեռքը, և ներմուծել այն օգտագործելով ընկերության նավերը»⁴⁸:

Ընկերությունը անգլիական կտորների վաճառքը Յնդկաստանում և Պարսկաստանում իրացնելու նպատակով Սուրաթ և Մումբայ հղված հրահանգների մեջ պահանջում էր ստեղծել մի խորհուրդ, որի մեջ մտնող գրագիրները բնակվեն հայերի տներում, սովորեն նրանց լեզուն, ձեռք բերեն նրանց առևտրական հմտությունները և անգլիական կտորները տրվեն գլխավորապես ջուդայի հայ վաճառականներին, ենթադրելով, որ դրանց դիմաց փոխանակումով կստանան մասամբ՝ մետաքս, մասամբ՝ կանխիկ գումար. «Պարսկական թագավորությունը երկրի ողջ մետաքսը առաջարկում էր հայերին 3 տարվա ընթացքում վճարումներ կատարելու պայմանով, ուստի հայերից վերցնել մետաքսի 1/3 մասը, ենթադրելով, որ նրանք կհամաձայնվեն մնացած մասը բեռնել ընկերության նավերին եվրոպական շուկա տեղափոխելու նպատակով»⁴⁹: Ընկերության շահերը մեծանում էին, երբ հայ վաճառականները իրենց փոխադրումները իրականացնում էին նրա նավերով: Ընկերությունը խրախուսում էր հայ վաճառականների կողմից որոշ ապրանքների մատակարարումները⁵⁰:

Ընկերությունը օգտագործել է նաև հայկական նավեր: Օրինակ, Ընկերությունը Սուրաթի և Մումբայի կառավարություններից պահանջում է որոշակի ապրանքների բեռնափոխադրման համար. «Վաճառել Ընկերության ափամերձ նավարկության համար նախատեսված նավերը և օգտագործել հայ առևտրականների փոքրածավալ շարժուն նավերը այս առևտրի համար»⁵¹:

18-րդ դարի կեսերից Մումբայում գործել է առևտրական ընկերություն, որը Յնդկաստանի տարբեր քաղաքներում հաստատված հայերին կազմակերպված ձևով ապրանքներ, հատկապես հակով մետաքս է ուղարկել՝ փոխադարձաբար ստացել այդ քաղաքների տեղական արտադրանքները և դրանք իր հերթին ուղարկել Ասի-

⁴⁸ Ibid., p. 283.

⁴⁹ Ibid., pp. 287–288.

⁵⁰ Ibid., p. 283.

⁵¹ Ibid., p. 289.

այի և Եվրոպայի մի շարք երկրներ: Գնալով քաղաքն իր վրա վերցրեց Սուրաթի դերը: Պարսից ծոցից եկող նավերի համար, որոնցով հայերը հասնում էին Զնդկաստան, առաջին կայան է դառնում Սումբայը: Այստեղ էին հավաքվում առաջին եկվորները, ապա ցրվում Զնդկաստանի հայաշատ քաղաքները⁵²:

Դոկտոր Զ. Գերսոն դա Կունհասի «Բոմբեյի ծագումը» գրքում, որը տպագրվել է 1900 թ. մենք գտնում ենք հետևյալ հիշատակությունները Սումբայի հայերի մասին. «Վաճառականների մի դաս, որին կառավարությունը վերաբերվում էր ծայր աստիճան քաղաքավարի և բարյացակամ, հայերն էին, ովքեր 1676 թ. Սան Ֆրանցիսկո նավի հետ տեղի ունեցած միջադեպի պատճառով ստացել էին ամեն տեսակի աջակցություն, ինչպես, որ կկամենային: Այս վաղ ժամանակների հայերը, ովքեր բարեբախտաբար պետական փաստաթղթերում հիշատակվում էին, հետևյալն էին՝ Խոջա Կարակուզ, Խոջա Մինաս և Խոջա Դելաուեն: Այսպիսի մարդկանց թիվը կարճ ժամանակում աճեց»⁵³:

Անգլիայի և Ֆրանսիայի միջև Զնդկաստանի համար մղվող պայքարի տարիներին, 1746 թ. ֆրանսիացիները խլում են Մադրասը անգլիացիներից: Այստեղ է, որ հայտնի է դառնում, թե ինչպես են հայերը վերաբերվում իրենց դաշնակիցներին: Շատ նշանավոր և հարուստ վաճառական Պետրոս Ոսկանյանը, որը 18-րդ դարի առաջին կեսին Մադրասում անգլիական ընկերության խորհրդականներից մեկն էր, միայն Մադրասում ուներ 33 տուն: Պետրոսը փախչում է քաղաքից և ֆրանսիացիները քանդում են նրա տները, գրավում նրա ամբողջ հարստությունը: Ֆրանսիական ընկերության նահանգապետ Դյուլալեն մարդ է ուղարկում հայ վաճառականի մոտ, խոստանում վերադարձնել նրա ողջ ունեցվածքը, եթե նա անցնի ֆրանսիացիների կողմը: Բայց Ոսկանյանը մերժում է այդ առաջարկը ասելով «Ինչ հարստություն ունեմ, անգլիացիներից եմ ստացել և պարտավոր եմ համարում ինձ լիովին հավատարիմ մնալ անգլիացիներին»: Դրա հետ միաժամանակ մեծահարուստը խնդրում է, որ իր գանձերը բաժանեն աղքատներին, «որով-

⁵² Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, էջ 403–405:

⁵³ A. Mesrob J. Seth, History of the Armenians in India, Kolkata I, 1937, p. 297.

հետև,— ավելացնում է նա,— չեն կարծում, որ ֆրանսիական մեծահամբավ պետությունը կարոտ լինի իմ չնչին ստացվածքներին»։ Ոսկանյանը իր հարստությունից բաժին է հանում այն երկրին, որ այնքան հարստացրել էր նրան՝ չմոռանալով իհարկե և իր իսկական հայրենիքը։ Նա կարգադրում է իր մահից հետո, հանել սիրտը և թաղել Ջուղայում և բավականին գումար է կտակում Ջուղայում աղքատանոց և դպրոց կառուցելու համար⁵⁴։

Այսպիսով, հետամուտ լինելով ծովային առևտրին, հենվելով անգլիական ընկերության համագործակցության վրա, հայերը արդյունավետ գործունեություն իրականացրեցին։ Նրանք ընկերությունից ստացան հզոր պաշտպանություն, գործունեության բոլոր հնարավորությունները և միևնույն ժամանակ մնացին ազատ և իրավատեր իբրև առանձին ազգ, կատարյալ իրավունք ունենալով պահպանելու և զարգացնելու իրենց ազգային ինքնությունը, լեզուն, գրականությունը, կրոնական անկախությունը։ Այս 150 և ավելի տարիների համագործակցության արդյունքում ձևավորվեց հնդկահայ վաճառականության հարստությունը, որ ծառայեցվեց ի շահ ազգային, մշակութային նպատակների։ Եվ ինչպես Նոր Ջուղան իր ժամանակին չմնաց միայն հայ կապիտալի կուտակման վայր, այլ հասարակական մեծ նշանակություն ստացավ, շնորհիվ կրթական, գիտական և մշակութային գործունեության, հայերը ճնդկաստանում նույնպես, շարունակելով Նոր Ջուղայում սկիզբ առած ավանդույթները, իրականացրեցին մի լուսավոր գործունեություն, զարգացնելով հայ հասարակական և քաղաքական միտքը և դրանով մեծ հետք թողեցին հայոց պատմության մեջ։ ճնդկահայ վաճառականությունը միակն էր հայ վաճառականության պատմության մեջ, որ զանգվածային համագործակցություն է ունեցել այնպիսի հզոր ուժի հետ, ինչպիսին Բրիտանական կայսրությունն էր։

«Այսպիսի փոքրիկ գաղութի մը մեջ,— գրում է Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը,— ազգային զգացման այսպիսի կենսունակ խմորումը և յառաջադիմական գաղափարներուն այս օրինակ

⁵⁴ Լեո, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 517–519։

խոր արմատաւորումը տարօրինակ պէտք չէ թուին բնաւ: Ջուղայեցիին, հայութեան ամենէն ազնիւ և ուշիմ այս տիպարը, մեր ժողովուրդին այն տարրն է որ ամենէն ճիշդ ու զեղեցիկ կերպով կը պարզէ իր ցեղային նկարագրին բարի կողմերը: Ի բնէ մտացի եւ հայրենասէր, զարմանալի արագութեամբ կ'օգտագործէ ան իրեն ներկայացած նպաստավոր պայմանները, զարգացնելու համար իր ազգային բարեմասնութիւնները: Արդ, Յնդկաստանէ զատ ոչ մէկ երկիր կրնար անոր ընծեմել այն միջոցները, որոնք պիտի քաջալերէին առևտրական ճարպիկութեան և հարստանալու իր բնայատուկ յարմարութիւնները, ու ոչ մէկ օրինակ՝ անգլիականի չափ պիտի կրնար անոր ներշնչել կրթութեան և գիտակից հայրենասիրության բարձր տենչը: Յնդկահայոց պատմութիւնը ամբողջովին արտահայտումն է այս մտածումին... Ըստ այսմ, ժը դարը՝ որքան Յնդկաստանի մէջ անգլիական տիրապետութեան հաստատումին և ծաւալման, նոյնքան և հնդկահայ գաղութին տնտեսական և ազգային բարգաւաճման լաւագոյն շրջանն է»⁵⁵: Անգլիացիների կողմից Յնդկաստանի գաղութացումը վերջ է դնում հայ-անգլիական համագործակցությանը: Այս հանգամանքը անխուսափելիորեն հանգեցնում է հայ վաճառականության մի ստվար զանգվածի սնանկացմանը: Վաճառականության որոշ մասը շարունակում է իր առևտուրը Յնդկաստանում չնայած բրիտանացիների անհյուրընկալ վերաբերմունքին: Նրանք հասկանում են ժամանակի ոգին և վերափոխվում: «Ազգասեր» անսագիրը հրատարակում է հողվածների մի շարք՝ հորդորելով այս վաճառականներին ներգրավվել արդյունաբերության մեջ⁵⁶: 19-րդ դարի սկզբում հնդկահայ գաղթօջախների քարտեզը նախկինի համեմատ զգալիորեն փոխվում է: Բոլոր գաղութներում կրճատվում է հայերի թիվը և միայն Կալկաթայում և Մադրասում է, որ ոչ միայն չի նվազում, այլ հակառակը ստվարանում է⁵⁷: Յնդկահայ ազգային և մշակութային կյանքը կենտրոնանում է այդ քաղաքներում:

⁵⁵ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, Յնդկահայք, Երուսաղեմ, 1941, էջ 46:

⁵⁶ History of Armenians in India, t. 4, ch. 3.

⁵⁷ 19-րդ դարում մեծ թվով հայ վաճառականներ ներդրումներ են անում արդյունաբերության մեջ, հիմնում գործարաններ: Յետևելով եվրոպացիների օրինակին,

**АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО ИНДИИ В МИРОВЫХ
ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЯХ (XVII–XVIII вв.)**

A. SALNAZARYAN

**THE ARMENIAN MERCHANTS OF INDIA IN THE WORLD
COMMERCIAL-ECONOMIC RELATIONS (XVII–XVIII cc.)**

նրանք միավորում են իրենց կապիտալը և ստեղծում միություններ: Կալկաթայի «Ազգասեր» ամսագիրը ներկայացնում է հայկական միությունների մեծ ցուցակ, որը թույլ է տալիս ենթադրել, որ այդ ժամանակ հնդկահայերը ունեցել են իրենց ուրույն տեղը Հնդկաստանի նոր զարգացող արդյունաբերության մեջ: Այս ընկերությունների շարքում են «Արևելյան Ապահովագրական Միությունը» (ստեղծված 1839 թ.), «Ծովային Ապահովագրական Գործակալությունը», որ իր մասնաճյուղերն ուներ Լոնդոնում, Սինգապուրում, Մադրասում, Մումբայում, Չինաստանում: Այնպիսի ընկերություններ, ինչպիսին էին «Միացյալ Բեռնափոխադրող Ընկերությունը», «Հուգլի Գետի-Բեռնափոխադրող Ընկերությունը» բեռնափոխադրումները կատարում էին հայկական նավերի միջոցով՝ «Հովսեփ-Մանուկ», «Հովհաննես-Սարգիս», «Հարություն-Աբգար», «Հռիփսիմե», «Աճնա-Մարթա», «Հեռո» և այլն: Հայ վաճառականները ներգրավվում են իրենց համար առավել շահավետ առևտրի մեջ: Նրանք զբաղվում են շելլակի առևտրով Միրզափուռում, Ջիալդայում և Կալկաթայում, լեղակենու առևտրով Բեհարում, ջութի առևտրով Դաքայում և այլն: Հայերը վերջնականապես սկսում են լքել Հնդկաստանը 1947 թ. անկախության հռչակումից հետո: Ոչ հնդիկ գործարարների ապագան դառնում է անապահով: Այդ օրերին շատ համրահայտ է դառնում «Հնդկաստանը հնդիկների համար» կարգախոսը: Շատ մասնավոր ընկերություններ ազգայնացվում են: Այս պայմաններում հայ գործարարները լքում են երկիրը և հեռանում ԱՄՆ, Միացյալ Թագավորություն և Ավստրալիա (History of Armenians in India, t. 5. ch. 3):

ՍԻՍՈՒՐԳԻ (ՍԻՐԱՄԱՐԳ) ԱՌԱՍՊԵԼԻ ԴՐՍԱՌՐՈՒՄՆԵՐԸ ՍԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հայտնի փաստ է, որ քրիստոնեության մեջ ներթափանցեցին ու վերաիմաստավորվեցին հեթանոսության բազմաթիվ տարրեր՝ ծեսեր, առասպելական մտացածին կենդանիներ, տոներ: Դրան նպաստեց այն հանգամանքը, որ հին և միջնադարայն կրոնական աշխարհընկալման և տիեզերածնության մասին պատկերացումների միջև կային իմաստային և խորհրդանշանային նմանություններ: Այսպես՝ քրիստոնեական իմաստաբանության համաձայն՝ «սիրամարգը» հանդիսանում է ամմահության և մահի հաղթահարման խորհրդանիշ, միջնորդ երկնքի և երկրի միջև:

Հայերենում սիրամարգ բառը ծագում է սինամարգ ձևից, որն էլ փոխառնված է իրանական լեզուներից՝ հմնտ. պահլավերեն՝ *sen(o) - muruk*, պարսկերեն՝ *simur*, ասորերեն՝ *simur*՝ գոյություն չունեցող առասպելական թռչուն: Տարբեր է այս թռչնանվան մեկնությունը՝ «սիրելի թռչուն»¹, «չինական թռչուն»², «շուն թռչուն»³, «լեռան գազաթին ապրող թռչուն»⁴:

Առավել հավանական կարելի է համարել անվան բացատրության վերջին տարբերակը. մի շարք լեզուներում *psten* - կուրծք նախահնդեվրոպական արմատից պահպանվել է *sCina* (պարսկերեն), *sCinag* (բելուջերեն), ստինք (հայերեն), *στήνιον* (հունարեն), *stnna* (սանսկրիտ)⁵՝ լանջ, բարձունք բառը: Այս բառի առավել արխայիկ տարբերակը *saCeni* նշանակում է «ուռուցիկ», «սրածայր», «գազաթ (լեռան, ծառի)», որտեղից էլ հետագայում

¹ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 219:

² Մալխասեանց Ս. Տ., Հայերեն բացատրական բառարան, IV, Ե., 1945, էջ 198:

³ Тревер К. В., Семурв-Паскудж, собака-птица, Л., 1937.

⁴ Васильев М.А., Аналитические исследования в исторической науке: Особенности формирования и развития восточнославянского язычества, Международный исторический журнал, N10, июль-август 2000, <http://history.machaon.ru>.

⁵ Ստինք, <http://en.wiktionary.org>, 20.12.2009, 4.2.2011.

միայն առաջացել է կուրծք բառը⁶: Այսպիսով saCena, saCena margo (Ավեստա), saina merga (պարսկերեն)՝ Սիմուրգ նշանակում է «թռչուն լեռան (ծառի) գագաթից»: «Սիմուրգ» բառի ստուգաբանությունը լիարժեք նկարագրում է այս առասպելական կերպարի տեղը՝ կենաց ծառի / «տիեզերական լեռան» վրա:

Ժամանակի ընթացքում saina-ka բառը իրանական լեզուներում սկսեց կորցնել իր նախնական՝ «բարձունք» իմաստը, փոխարինվելով կուրծք իմաստով, հետևաբար փոփոխվում էր նաև պատկերագրությունը, և Սիմուրգը սկսեց դիտվել, որպես կուրծք ունեցող թռչուն, իսկ պատկերագրության մեջ տարածում ստացավ կաթնասուն-թռչունների, կին-թռչունների (հուշկապարիկ-սիրինների) ավանդույթը, որն իր արտահայտությունը գտավ նաև հայկական մանրանկարչության մեջ և 15-17-րդ դարերի մի շարք խաչքարային հորինվածքներում⁷:

Սասանյան կայսրության ժամանակաշրջանում (224–651 թթ.) զրադաշտականությունը Պարսկաստանում դարձավ պետական կրոն և արվեստում լայն տարածում ստացավ Ավեստայում սրբանացված զոռմորֆ կենդանիների պատկերագրությունը: Այսպես, Սենմուրվի (Սիմուրգ) թռչնակերպ կենդանու կերպարը Իրանում և նրա մշակութային ազդեցությունը կրող մի շարք շրջաններում դարձավ նախասիրված պատկերագրական մոտիվ: Համաձայն հին իրանական առասպելի՝ Սիմուրգ առասպելական թռչունը բնակվում է բարձր լեռան վրա բոլոր բույսերի սերմերը արարող սրբազան ծառի տակ⁸: Սիմուրգը սրբազան ծառից սերմերը սփռում է աշխարհով մեկ և պահպանում է ծառը օձ-վիշապից: Պատկերագրության մեջ Սիմուրգի մարմինը սովորաբար ծածկված է լինում ձկան թեփուկներով, բուսական և երկրաչափական զարդամոտիվներով՝ շուշաններ, տերևներ: Սիմուրգի՝ որպես «սերմնացանի», կերպարի աղերսները կարելի է փնտրել դեռևս երկրագոր-

⁶ Bailey H. W., Arya II // Bulletin of the School of Oriental and African Studies. 1960. Vol. XXIII. p. 32.

⁷ Պետրոսյան Հ. Լ., Խաչքար, Ե., 2008, էջ 288:

⁸ Zand-akasih iraninan or greater Bundahishn, /transliteration and translation in english by Behramgore Tehmuras Anklesaria/, Bombay 1956, VIII, 3-4.

ծության ծագման ժամանակաշրջանում, ինչի մասին է վկայում նաև նրա վիշապամարտիկ լինելու հանգամանքը:

Սիմուրգն իր սկզբնական սիմվոլիկ կերպարը, սկսեց կորցնել 7-րդ դարի կեսերին՝ Սասանյան տերության անկմանը և արաբական սկզբնական արշավանքներին զուգահեռ: Սա մի ժամանակաշրջան էր, երբ Հայաստանում ազատության վերականգնման պայմաններում՝ լայն թափ էր ստացել շինարարությունը, զարգանում էին քաղաքները, ինչի հետ էին կապված նաև արհեստագործական արտադրանքի աճը և առևտրի ընդլայնումը:

Սիմուրգի հիմնական պատկերագրությամբ մի շարք միջնադարյան քանդակներ պահպանվել են Հայաստանում՝ Էջմիածնի Մայր տաճարի թմբուկի հյուսիսային կողմի սյուներից մեկի խարսխի վրա պատկերված է շան գլխով և շքեղ պոչով զոոմորֆ մի կենդանի, որը անկասկած Սիմուրգի տեղական մեկնաբանությունն է⁹, նմանատիպ առասպելական կենդանիներ էին պատկերված Անիի Տիգրան Յոնենց եկեղցու հարավային ավանդատան մուտքը քողարկող վարագույրի վրա¹⁰, Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու հարավահայաց պատին, Մատենադարանի N 7648 Ավետարանի գլխատառերից մեկի վրա¹¹: Սիմուրգի կերպարը հայկական արվեստում հիմնականում հանդիպում է 12–13-րդ դարերի հուշարձաններում:

Սիմուրգի կերպարը ներթափանցելով Հայաստան հարմարվեց նոր մշակութային միջավայրին՝ պահպանելով իր նախկին տիեզերական կերպարի միայն մի քանի բնորոշիչները՝ համատեղելով դրանք քրիստոնեության իմաստային տարրերի հետ: Այս առասպելի բազմաթիվ դրսևորումներ հանդիպում ենք հայկական միջնադարյան մանրանկարչության, քանդակագործության ու խաչքարային արվեստի, բանափայտության մեջ:

Դեռևս 20 – րդ դարի սկզբին Ս. Հայկունու կողմից գրի առնված «Սինամահալք (հմմտ.՝ սինամարգ)»¹² հեքիաթը հստակ ար-

⁹ Казарян А. Ю., Кафедральный собор Сурб Эчмиадзин и восточнохристианское зодчество IV — VII веков, М., 2007, с. 88–89.

¹⁰ Тревер К. В., ук. соч., с. 58–59

¹¹ Матенадаран, том 1 / Армянская рукописная книга VI–XIV веков, М. 1991, с. 176.

¹² Էմինեան ազգագրական ժողովածու /հավաքեց Ս. Հայկունի/, Լազարեան

տացուլուն է 12–13-րդ դարերի հայկական մանրանկարներում բավական տարածված մի սյուժե, որում կարելի է տեսնել ծառն ի վեր սողացող օձից իր ձագերին պաշտպանող և այդ օձի դեմ պայքարող մի թռչուն: Այստեղ առկա են Սիմուրգի մասին առասպելի հիմնական տարրերը՝ ծառ, թռչուն, օձ, թռչնածագեր (հմմտ.՝ սերմ): Հաճախ մանրանկարներում, հայկական միջնադարյան գորգարվեստում տեսանելի է այս առասպելի ավելի դեկորացված սիմվոլիկ պատկերումը՝ երկկերպ օձ-թռչունների տեսքով:

Սիւնույն սյուժեի ավելի զարգացած տարբերակը կարող ենք տեսնել 12–13-րդ դարերի բազմաթիվ խաչքարային հորինվածքներում, որոնց արմավազարդերը, սկիզբ առնելով խաչի հիմքից, մեկական հանգույց տալով, վեր են ածվում զույգ «թռչնաթևերի»՝ ձգվելով ընդհուպ մինչև խաչի ուղղաձիգ թևերը: Երբեմն այս թռչունների ստորին փետուրներն ավելի նմանվում են սողունների, երբեմն դրանք ունեն աչքեր կամ եղջյուրներ, միջին հատվածի փետուրները սովորաբար արված են բուսական մոտիվներով կամ էլ հիշեցնում են թռչնածագեր, իսկ վերնափետուրը վերածված է թռչնի գլխի: Այնպիսի տպավորություն է ձևավորվում, կարծես խաչն իրենից կենաց ծառ է ներկայացնում, որն աճում է կամ բրգաձև բարձունքի (լեռան) վրա կամ բարձրանում սերմի (աշխարհի) խորհրդանշան հանդիսացող վարդյակից:

Հնդիրանական դիցաբանությունից եկող Սիմուրգի կերպարը համադրելի է խաչքարի վրա պատկերված օձ (վիշապ) – թռչունի հետ. Սիմուրգը բնակվում է «համաշխարհային լեռան» (կամ «կենաց ծառի») գագաթին, նա հանդես է գալիս, որպես «կենաց ծառի» պաշտպան, սերմնացան և վիշապամարտիկ՝ պայքարելով անդրաշխարհի խտոճիկ կենդանիների դեմ: Սիմուրգը տարբեր միջավայրերում հանդես է գալիս տարբեր կերպարներով՝ միաժամանակ բարի և չար, որպես միջնորդ այս և հանդերձյալ աշխարհների միջև: Սա պայմանավորված է դուալիստական աշխարհընկալմամբ, բարու և չարի անվերջ հակամարտությամբ և այս առաս-

պելական կենդանու երկկերպությամբ՝ տվյալ դեպքում օձ (վիշապ) - թռչուն¹³:

Ժամանակի ընթացքում Սիմուրգի առասպելական կերպարը ձուլվեց բազմաթիվ նմանատիպ զոոմորֆ կենդանիների մեջ. արդեն 12–13-րդ դարերում այն դարձել էր մի սինկրետիկ ամբողջություն, որն իր մեջ ներառել էր մի շարք այլ առասպելական թռչունների առանձնահատկություններ, կամ պարզապես դա միևնույն առասպելական նախնուց ծնված կերպարների տարբեր տեղական տարբերակներ են: Այդպես արաբ հեղինակ Ալ Ղազվինին իր «Արարման հրաշքները» աշխատության մեջ նշում է, որ Սիմուրգ Անկան ապրում է յոթ հարյուր տարի և որդու հասունացման պահին իրեն նետում է խարույկի մեջ: Այս մոտիվը կրկնում է փյունիկի մասին առասպելը: Խաչքարերի արմավազարդ թռչունները ևս հաճախ նույնացվում են փյունիկ կամ հավալուսն թռչունների հետ¹⁴:


Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ «սիրամարգ» թռչնավանունը, փոխառված լինելով իրանական միջավայրից, հարմարեցվեց քրիստոնեական գաղափարախոսությանը: Սիմուրգ առասպելական կենդանու ժառանգորդները հայկական մշակութային միջավայրում՝ սիրամարգ, Սինամ¹⁵ (հայկական կանացի անձնանուն առկա դեռ 20-րդ դարի սկզբին), սինամահավք արդեն չունեն նախկին կերպարանքը, այլ հանդես են գալիս որպես թռչուններ, որոնց կերպարում այնուամենայնիվ պահպանվում են իրենց նախնու՝ թռչուն-կաթնասունի, վիշապամարտիկի մասին հիշողությունները: Ներկա քննությամբ կարելի է փաստել, որ Սիմուրգի մասին հին պարսկական առասպելը, ներթափանցելով միջնադարյան հայկական միջավայր, վերափոխատավորվեց, և դրա պատմական առանցքի շուրջ ձևավորվեց ամբողջովին նոր քրիստոնեական խորհուրդը կրող թռչնի կերպարը:

¹³ Тревер К. В., укр. соч., с. 30–34.

¹⁴ Պետրոսյան Հ. Լ., նշվ. աշխ., էջ 288:

¹⁵ Հմմտ. Սանամ՝ Սանամ-կաքավ երգերում:

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ



Նկ. 1. Մշո ճառընտիր, Ավագ վանք, Երզնկա, 1200 թ. (Բազե Ջ., Քուրքյան Ա., Հայկական զարդաքանդակներ, Ե., 2010):



Նկ. 2. 3. ճաշոց, Տարոն, 1320 թ. (Բազե Ջ., Քուրքյան Ա., Հայկական զարդաքանդակներ):



Նկ. 4. 5. Թռչնակերպ արմավազարդ, խաչքար, գ. Առինջ, 13–14 դդ.

Э. ОГАНИСЯН

**ЛЕГЕНДА О СИМУРГЕ (СИРАМАРГ-ПАВЛИН) В
СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЕ**

E. HOVHANNISYAN

**THE MYTH ABOUT SIMORGH (PEACOCK) IN THE
MEDIÉVAL ARMENIAN CULTURE**

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ավանետով Յ. Ս.

Արցախի ՄՄՀ ՌԻԳԸ նախագահ (Ստեփանակերտ, ԼՂՀ)

Բալայան Կ. Լ.

«Այաս» ծովային հետազոտությունների ակումբ

Քետլով Վ. Բ.

ճարտարապետության միջազգային ակադեմիայի թղթ.-անդամ (Հյուսիսային Օսեթիա-Ալանիայի Հանրապետություն, ՌԴ)

Գևորգյան Ջ. Հ.

պ.գ.թ., գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Դանիելյան Է. Լ.

պ.գ.դ., Հայոց փիլիսոփայական ակադեմիայի իսկական անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, հին դարերի պատմության բաժնի վարիչ,

Դումիկյան Ա. Վ.

կրտսեր գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Եղիազարյան Ա. Ս.

պ.գ.դ., Երևանի պետական համալսարան

Թմոյան Ռ. Ս.

ԵՊԼՀ մագիստրոս

Խառատյան Ա. Ա.

պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայ հասարակական-քաղաքական մտքի և մամուլի պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր

Կորնիլով Ա. Ա.

պ.գ.դ., պրոֆ., Ն. Ի. Լոբաչևսկու անվան Նիժեգորոդյան պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի արտասահմանյան երկրագիտության ամբիոնի վարիչ, «Նաիրի» հանդեսի պատասխանատու խմբագիր

Կուլյումջյան Տ.

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (Կալիֆորնիա, Ֆրեզնո, ԱՄՆ)

Չայրապետյան Թ. Լ.

բ.գ.թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Չովհաննիսյան Է. Հ.

ասպիրանտ, ԵՊՀ պատմության ֆակուլտետ

Ղազարյան Ռ. Պ.

պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, գիտ. քարտուղար

Մարգարյան Ե. Հ.

պ.գ.թ., ավագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Մելքոնյան Ա. Ա.

պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն

Մուշեղյան Ա. Խ.

գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Մուշեղյան Ա. Վ.

բ.գ.դ., առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ

Մուրադյան Ի. Ս.

«Մշակույթի և գիտության Չինական կենտրոն»-ի տնօրեն (Երևան, ՀՀ)

Նահատակյան Ռ. Ա.

պատմաբան-վերլուծաբան, ՀՀ Ազգային ժողովի հրատարակչության գլխավոր մասնագետ

Պետրոսյան Հ. Լ.

պ.գ.դ., ԵՊՀ, Մշակութաբանության ամբիոնի վարիչ, Արցախի հնագիտական արշավախմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Պետրոսյան Ս. Գ.

պ.գ.դ., Ս. Նալբանդյանի անվ. պետ. մանկավարժական ինստիտուտ (Գյումրի, ՀՀ)

Պետրոսյան Լ. Ս.

պ.գ.թ., Ս. Նալբանդյանի անվ. պետ. մանկավարժական ինստիտուտ (Գյումրի, ՀՀ)

Պլոսկիխ Վ. Մ.

պ.գ.դ., ակադեմիկոս, Ղրղզստանի Ազգային ակադեմիայի փոխնախագահ

Սալնազարյան Ա. Ժ.

ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ, գիտաշխատող

Սիմոնյան Հ. Ե.

պ.գ.թ., ՀՀ ՄՆ առընթեր պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն

Ստեփանյան Գ. Ս.

պ.գ.դ., ավագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Վարդումյան Գ. Ղ.

պ.գ.թ., առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Օնիբենե Պ.

պրոֆեսոր (Բոլոնիա, Իտալիա)

ОБ АВТОРАХ

Айрапетян Т. Л.

к.ф.н., институт археологии и этнографии НАН РА

Аванесов О. С.

председатель СНО УММ Арцаха (Степанакерт, НКР)

Балаян К. Л.

президент клуба морских исследований “Айас”

Бесолов В. Б.

член-корреспондент Международной Академии архитектуры (г. Владикавказ, Республика Северная Осетия-Алания, РФ).

Вардумян Г. Д.

к.и.н., ведущий научный сотрудник, институт истории НАН РА

Геворкян З. Г.

к.и.н., научный сотрудник, институт истории НАН РА

Даниелян Э. Л.

д.и.н., действительный член Армянской философской академии, зав. отделом древних веков, институт истории НАН РА,

Думикян А. В.

мл. науч. сотрудник, институт истории НАН РА

Егиазарян А. С.

д.и.н., ЕГУ

Казарян Р. П.

к.и.н., ученый секретарь института востоковедения НАН РА

Корнилов А. А.

д.и.н., профессор, зав. кафедрой зарубежного регионоведения факультета международных отношений Нижегородского государственного университета им. Н. И. Лобачевского, ответственный редактор альманаха «НАИРИ»

Куюмджян Т.

иностраннный член НАН РА (Калифорния, США)

Маргарян Е. Г.

к.и.н., старший научный сотрудник институт истории НАН РА

Мелконян А. А.

д.и.н., член-корреспондент НАН РА, директор института истории НАН РА

Мурадян И. С.

директор “Китайского центра культуры и науки” (Ереван, РА)

Мушегян А. В.

д.ф.н., ведущий научный сотрудник, институт литературы НАН РА

Мушегян А. Х.

науч. сотрудник, институт истории НАН РА

Наатакян Р. А.

историк-аналитик, гл. спец. изд-ва аппарата Н. с. РА

Оганисян Э. Г.

аспирант, исторический ф-т ЕГУ

Онибене П.

проф. (Болония, Италия)

Петросян Г. Л.

д.и.н, ЕГУ, зав. кафедрой культурологии,
Руководитель археологической экспедиции в Арцахе,
институт археологии НАН РА

Петросян С. Г.

д.и.н., Гос. пед. институт им. М. Налбандяна (Гюмри, РА)

Петросян Л. С.

к.и.н, Гос. пед. институт им. М. Налбандяна (Гюмри, РА)

Плоских В. М.

д.и.н., академик, вице-президент НАН Кыргызской
Республики.

Салназарян А. Ж.

ИППФ НАН РА, научный сотрудник

Симонян А. Е.

к.и.н., директор научно-исследовательского центра
историко-культурного наследия при Министерстве
культуры РА

Степанян Г. С.

д.и.н., старший научный сотрудник, институт истории
НАН РА

Тмоян Р. С.

магистрант, ЕГЛУ

Харатян А. А.

д.и.н, член.-кор. НАН РА, институт истории НАН РА, зав.
отделом истории армянской общественно-политической
мысли и периодической печати, главный редактор журнала
“Вестник общественных наук”

ABOUT AUTHORS

Avanesov H. S.

Chairman of the Students' Scientific Society of Artsakh's
UMM (Stepanakert, NKR)

Balayan K. L.

"Ayas" Nautical Research Club's President

Besolov V. B.

Corresponding-member of the International Academy of
Architecture (the Republic of North Osetia-Alania, RF)

Danielyan E. L.

Doctor of History, Member of the Armenian Philosophical
Academy, Head of the Department of ancient history, Institute
of History of NAS RA

Dumikyan A. V.

junior sci. researcher, Institute of History of NAS RA

Gevorgyan Z. H.

Candidate of History, researcher, Institute of History of NAS
RA

Ghazaryan R. P.

Candidate of History, Scient secretary of the Institute of
Oriental Studies of NAS RA

Hayrapetyan T. L.

Candidate of Philology, Institute of Archaeology and
Ethnography of NAS RA

Hovhannisian E. H.

postgraduate, Faculty of History of ESU

Kharatyan A. A.

Doctor of History, Corresponding-member of NAS RA,
Institute of History of NAS RA, Head of the Department of
history of Armenian media and social-political thought

Kornilov A. A.

Doctor of History, Professor, Head of the Chair of the Foreign Regional Studies of the Faculty of International Relations of N.I. Lobachevsky State University of Nizhniy Novgorod, Executive editor of the almanac "Nairi"

Kouymjian D.

Foreign Member of NAS RA (California, Fresno, USA)

Margaryan E. H.

Candidate of History, Senior researcher, Institute of History NAS RA

Melkonyan A. A.

Doctor of History, Corresponding-member of NAS RA, Director of the Institute of History,

Mouradyan I. S.

Director of the "Chinese Centre for Culture and Science" (Yerevan, RA)

Mousheghyan A. Kh.

sci. researcher, Institute of History of NAS RA

Mousheghyan A. V.

Doctor of Philology, leading researcher, Institute of Literature of NAS RA

Nahatakyan R. A.

historian-analyst, National Assembly of RA, chief specialist of the print. house

Ognibene P.

Prof. (Bologna, Italy)

Petrosyan H. L.

Doctor of History, Head of the Department of Cultural Studies, Yerevan State University, Head of Artsakh Archaeological Expedition, Institute of Archaeology and Ethnography of NAS RA

Petrosyan S. G.

Doctor of History, State Pedagogical Institute named after M. Nalbandyan (Gyumri, RA)

Petrosyan L.S.

Candidate of History, State Pedagogical Institute named after M. Nalbandyan (Gyumri, RA)

Ploskikh V. M.

Doctor of History, Academician, Prof. (Bishkek, Kyrgyzstan)

Salnazaryan A. Zh.

sci. researcher, IAP of Physics of NAS RA

Simonyan H. E.,

Candidate of History, Director of the Cultural-Historic Heritage Centre of MC of RA

Stepanyan G. S.

Doctor of History, Senior researcher, Institute of History of NAS RA

Tmoyan R. S.

magistrant, ESLU

Vardumyan G. D.

Candidate of History, Leading researcher, Institute of History of NAS RA

Yeghiazaryan A. S.

Doctor of History, ESU

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ա.

Արևմտյան Հայաստանը Արևելք-Արևմուտք առևտրական
հարաբերությունների ոլորտում 4

ՄԻՍՈՆՅԱՆ Հ.

Հայաստանը և միջազգային առևտուրը վաղ բրոնզի
դարում 18

ՂԱԶԱՐՅԱՆ Ռ.

Հայաստանը միջազգային առևտրի ոլորտում Ք.ա. II
հազարամյակի առաջին կեսին 38

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ս., ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ.

Անին և Երվանդունիները 46

ՎԱՐԴՈՒՄՅԱՆ Գ.

Կրոնները մետաքսի ճանապարհին հին և վաղ միջնադարյան
ժամանակներում 59

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ե.

Միջազգային առևտրական ուղիների համակարգը
Մերձեփրատյան սահմանային գոտում 79

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա.

Մետաքսի ճանապարհը և հայոց թագավորությունը IX դարի
վերջին և X դարի սկզբին 93

ԳԵՎՈՐԳՅԱՆ Զ.

Մետաքսի ճանապարհի Այաս-Թավրիզ առևտրական մայրու-
ղին (XIII դ. երկրորդ կես – XIV դ. առաջին կես) 109

ՔԵՍՈՒՈՎ Վ.

Մետաքսի Մեծ ճանապարհը որպես հասարակական
շինությունների և ինժեներային կառուցվածքների
ճարտարապետական նախկին մորֆոտիպերի զարգացման և
նորերի ձևավորման գործոն 121

ԲԱԼԱՅԱՆ Կ.

Մետաքսի ճանապարհը և հայկական նավագնացությունը 152

ԴՈՒՄԻԿՅԱՆ Ա.

167

Մետաքսի ճանապարհի առևտրում հայերի գործունեության
արժևորումը XIII–XIX դդ. ֆրանսիացի ճանապարհորդների
հուշագրություններում

ԽԱՌԱՏՅԱՆ Ա.

Ձմյուռնահայ առևտուրը Լեվանտում և Եվրոպայում 175

ՄՈՒՇԵՂՅԱՆ Ա.

Ջուղահայերի հուշամեդալների պատմությունից 191

ՍՏԵՓԱՆՅԱՆ Գ.

Շամախահայերի դերը արևելյան Այսրկովկասի առևտրատն-
տեսական հարաբերություններում

198

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԱԼԲԵՐՏ

Հայերը Մետաքսի ճանապարհին 219

ԿՈՒՅՈՒՄՋՅԱՆ Տ.

Զինական վիշապները և փյունիկները հայերի մոտ
(XIII–XIV դդ.)

227

ԿՈՐՆԻԼՈՎ Ա.

Ժամանակակից ռուս-հայկական հարաբերությունների
աշխարհաքաղաքականությունը և նրա ազդեցությունը «Նոր
Մեծ Մետաքսի ճանապարհ» նախագծի վրա

254

ՄՈՒՐԱՂՅԱՆ Ի.

Մետաքսի ճանապարհը արդի փոփոխվող աշխարհաքաղա-
քական տիրույթում

270

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է.

Հայաստանի քաղաքակրթական ներդրումը Մետաքսի ճանա-
պարհի պատմության մեջ և ժամանակակից
մարտահրավերները

292

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՕՆԻԲԵՆԵ Պ.

Սոգդիական ժառանգությունը և ժամանակակից
Տաջիկստանը

313

ՊԼՈՍԿԻՆ Վ.

Միջնադարյան հայկական վանքի որոնումները Իսիկ-Կուլ լճի
ափին և ջրի տակ

323

ՊԵՏՐՈՍՅԱՆ Դ.

Չինական խեցեղենը որպես Մետաքսի ճանապարհի ցուցիչ	326
---	-----

ԱՎԱՆԵՍՈՎ Դ.

Արցախում մետաքսագործության ձևավորման հարցի շուրջ	336
--	-----

ՆԱՅԱՏԱԿՅԱՆ Ռ.

Հայերի քաղաքակրթական դերն ու կշիռը միջազգային հաղորդակցության խաչուղիներում	339
---	-----

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Թ.

Մետաքսի ճանապարհը առևտրատնտեսական և պատմամշակութային փոխառնչությունների ենթատեքստում (հայ ժողովրդական հեքիաթների հիման վրա)	344
---	-----

ԹՄՈՅԱՆ Ռ.

Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի» ձեռնարկի նշանակությունը հայ վաճառականության նոր սերնդի կրթման գործում	364
---	-----

ՍԱՆԱԶԱՐՅԱՆ Ա.

Հնդկահայ վաճառականությունը համաշխարհային առևտրատնտեսական կապերում (XVI–XVIII դարերում)	376
--	-----

ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

Սինուրգի (սիրամարգ) առասպելի դրսևորումները միջնադարյան հայ մշակույթում	398
--	-----

Ջեդինակների մասին	405
-------------------------	-----

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

МЕЛКОНЯН А.

Западная Армения в сфере торговых отношений Восток-Запад.....	4
--	---

СИМОНЯН А.

Армения и международная торговля в эпоху ранней бронзы.....	18
--	----

КАЗАРЯН Р.

Армения в сфере международной торговли в первой половине II тысячелетия до н. э.	38
--	----

ПЕТРОСЯН С., ПЕТРОСЯН Л.

Ани и Ервандиды	46
-----------------------	----

ВАРДУМЯН Г.

Религии на Шелковом пути в древности и в раннем средневековье	59
--	----

МАРГАРЯН Е.

Магистралы международных торговых путей в Приевфратской пограничной зоне	79
---	----

ЕГИАЗАРЯН А.

Шелковый путь и Армянское царство в конце IX и в начале X вв.	93
---	----

ГЕВОРКЯН З.

Торговая магистраль Айас-Тебриз на Шелковом пути (вторая половина XIII в. – первая половина XIV в.)	109
--	-----

БЕСОЛОВ В.

Великий шелковый путь как фактор развития прежних и формирования новых архитектурных морфотипов общественных зданий и инженерных сооружений	121
---	-----

БАЛАЯН К.

Шелковый путь и армянское мореплавание 152

ДУМИКЯН А.

Оценка деятельности армян в торговле по Шелковому
пути в мемуарах французских путешественников
XIII–XIX вв. 167

ХАРАТЯН А.

Армянские купцы Смирны в торговле Леванта и
Европы 175

МУШЕГЯН А.

Из истории памятных медалей армян Джуги 191

СТЕПАНЯН Г.

Роль армян Шамахи в торгово-экономических отношениях
восточного Закавказья 198

МУШЕГЯН Ал.

Армяне на Шелковом пути 219

КУЮМДЖЯН Т.

Китайские драконы и фениксы у армян (XIII–XIV вв.) 227

КОРНИЛОВ А.

Геополитика современных российско-армянских
отношений и ее влияние на проект “Новый Великий
Шелковый Путь” 254

МУРАДЯН И.

Шелковый путь в современном трансформирующемся
геополитическом пространстве 270

ДАНИЕЛЯН Э.

Цивилизационный вклад Армении в историю Шелкового
пути и современные вызовы 292

СООБЩЕНИЯ

ОНЬИБЕНЕ П.

Согдийское наследие и современный Таджикистан 313

ПЛОСКИХ В.

В поисках средневекового армянского монастыря на берегу
и под водой оз. Иссык-Куль..... 323

ПЕТРОСЯН Г.

Китайская керамика как показатель Шелкового пути
..... 326

АВАНЕСОВ О.

К вопросу формирования шелководства в Арцахе 336

НААТАКЯН Р.

Цивилизационная роль армян на международных
коммуникационных перекрестках 339

АЙРАПЕТЯН Т.

Шелковый путь в контексте торгово-экономических и
историко-культурных связей (на основе армянских
народных сказок) 334

ТМОЯН Р.

“Сокровище мер, весов и денег всего мира” Гукаса
Ванандеци – пособие для воспитания нового поколения
армянского купечества 364

САЛНАЗАРЯН А.

Армянское купечество Индии в мировых торгово-
экономических связях (XVII–XVIII вв.) 376

ОГАНИСЯН Э.

Легенда о Симурге (сирамарг-павлин) в средневековой
армянской культуре 398

Об авторах 405

CONTENT

ARTICLES

MELKONYAN A.

Western Armenia in the sphere of the East-West trade relations	4
--	---

SIMONYAN H.

Armenia and international trade in Early Bronze Age	18
---	----

GHAZARYAN R.

Armenia in the sphere of the interantional trade in the first half of II millennium B.C.	38
---	----

PETROSYAN S., PETROSYAN L.

Ani and the Ervandids	46
-----------------------------	----

VARDUMYAN G.

Religions along the Silk Road in ancient and early medieval times	59
---	----

MARGARYAN E.

The international trade routs in the Cis-Euphrate border zone ...	79
---	----

YEGHIAZARYAN A.

The Silk Road and Armenian Kingdom at the end of IX and the beginning of X centuries	93
--	----

GEVORGYAN Z.

Trade highway Ayas-Tebriz on the Silk Road (second half of XIII – first half of XIV centuries)	109
--	-----

BESOLOV V.

The Great Silk Road as a factor of the development of former architectural morphotypes of social buildings and engineering constructions and formation of new ones	121
--	-----

BALAYAN K.

The Silk Road and the Armenian navigation	152
---	-----

DUMIKYAN A.

Assessment of the Armenian's activities in the Silk Road trade in the memoirs of French travelers of XIII-XIX centuries	167
---	-----

KHARATYAN A.

Armenian merchants of Zmyurnia in the Levant and European trade	175
---	-----

MOUSHEGHYAN A.

From the history of the Jugha Armenians' service medals	191
---	-----

STEPANYAN G.

The role of the Armenians of Shamakhi in the eastern Transcaucasia's trade-economic relations	198
---	-----

MOUSHEGHYAN A.

Armenians on the Silk Road	219
----------------------------------	-----

KOUYMJIAN D.

Chinese dragons and phoenixes among the Armenians (XIII-XIV cc.)	227
--	-----

KORNILOV A.

The geopolitics of contemporary Russian-Armenian relations and its influence on "the New Great Silk Road" project"	254
--	-----

MOURADYAN I.

The Silk Road in modern transforming geopolitical space	270
---	-----

DANIELYAN E.

Civilizational contribution of Armenia to the history of the Silk Road and contemporary challenges	292
--	-----

REPORTS

OGNIBENE P.

The Sogdian heritage and contemporary Tajikistan	313
--	-----

PLOSKIKH V.

In search of the medieval Armenian monastery on the shore and under waters of Issyk-Kul lake	323
--	-----

PETROSYAN H.

The Chinese ceramics as an indicator of the Silk Road	326
---	-----

AVANESOV H.

To the question of formation of sericulture in Artsakh	336
--	-----

NAHATAKYAN R.

Civilizational role of Armenians in the international communicational crossroads	339
--	-----

HAYRAPETYAN T.

The Silk Road in the context of commercial-economic and historical-cultural relations (on the basis of Armenian folktales)	344
--	-----

TMOYAN R.

The work of Ghukas Vanandetsi "Treasure of measure, weight, number, and the money of the whole world" - a manual for education of the new generation of the Armenian merchant class	364
---	-----

SALNAZARYAN A.


The Armenian merchants of India in the world commercial-economic relations (XVII–XVIII cc.)	376
---	-----

HOVHANNISYAN E.


The myth about Simurgh (siramarg-peacock) in the medieval Armenian culture	398
--	-----

About authors	405
----------------------------	-----


ՄԵՏԱՔԱՆԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱՆԻ ՄԱՍԻՆ




ШЕЛКОВЫЙ ПУТЬ В ДРЕВНОСТИ И РАННЕМ СРЕДНЕВЕКОВЬЕ




THE SILK ROAD IN ANCIENT AND EARLY MEDIEVAL TIMES



ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇՆՆ ԵՒ ՄԻՋՅՈՒՆԱԿԱՆ ԴԱՄԵՐՈՒՄ




АРМЕНИЯ В ДРЕВНИХ И СРЕДНИХ ВЕКАХ



Автор карты Э.Л. Даниелян
Образование Н.З. Даниелян

ARMENIA IN ANCIENT AND MEDIEVAL TIMES






Անի մայրաքաղաքի Սմբատաշեն պարիսպները.
Հայոց Բագրատունյաց րազմավորություն: Սեծ Հայք

Крепостные стены Смбаташен столицы Ани,
Армянское Багратидское царство. Великая Армения

Smbatashen walls of Ani.
The Armenian Bagratid kingdom. Great Armenia



Կորիկոս – քաղաք-ամրոց.
Կիլիկիայի Հայկական պետություն

Корикос – город-крепость.
Киликийское Армянское государство

Korykos – walled city.
The Armenian state of Cilicia



Գանձասարի վանքի Ս. Զովհաննեսի Աղյուսի եկեղեցին (1216-1238 թթ.) և գավիթը (1250-1260-ական թթ.), Աղյուսի. Մեծ Դավթ
 Церковь Св. Иоанна Крестителя (1216 - 1238 гг.) и притвор (1250 - 1260 гг.) Гандзасарского монастыря. Агулах, Великая Армения
 The church of St. John the Baptist (1216 -1238) and gavit (vestibule) (1250 - the 1260s) of the monastery of Gandzasar. Artsakh, Great Armenia

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆՂԸ
ՄԵՏԱՔՍԻ ԶԱՆԱՊԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ
Միջազգային գիտաժողովի նյութեր, 21–23 նոյեմբերի 2011 թ.**

**ЦИВИЛИЗАЦИОННЫЙ ВКЛАД АРМЕНИИ
В ИСТОРИЮ ШЕЛКОВОГО ПУТИ**

Материалы международной научной конференции, 21–23 ноября 2011 г.

**CIVILIZATIONAL CONTRIBUTION OF ARMENIA
IN THE HISTORY OF THE SILK ROAD**

International Scientific Conference, 21–23 November 2011

**Համակարգչային ձևավորումը՝ Ն. Աղամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան
Սրբագրիչ՝ Ռ. Գալուստյան**

**Ստորագրված է տպագրության 22.12.2012 թ.:
Տպաքանակը՝ 200 օրինակ:**

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՂԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

**ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, просп. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshall Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>**

1634.



ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԸ ԸՍՏ ԻՐԱՏՈՍԹԵՆԵՄԻ (276-194 Ք.Օ.Ա.)

КАРТА МИРА ПО ЭРАТОСФЕНУ (276-194 до Р.Х.)

WORLD MAP ACCORDING TO ERATOSTHENES (276-194 B.C.)